



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

Հ Ա Խ Հ Լ Ո Ւ Ս Փ Ո Վ Կ Ո Մ Ա Տ

ՊՐՈՖ. ՀԱԿՈԲ ՄԱՆԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԼԻԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Հ Ա Տ
ՊԵՎԱՏԻՆԳԵՐՅԱՆ ՔԱՐՏԵԶԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՑՈՆԴԻ
ՅԵՐԵՎԱՆ ԳԻՏԱՐԱԾԻ ՏՊԱՐԱՆ 1936

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՄՈՐ

ԱՆՆԱ ՄԱՆԱՆԴՅԱՆԻ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Գիտնական Տպարան
Գլավիիս № 2033
Պատվեր № 3
Տիրած 2000



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի ռազմական ու առեվտրական հին ճանապարհների ուսումնասիրության համար միակ հիմնական աղբյուրն ե հռոմեական հին քարտեզը, վորն անվանվում և այժմ Tabula Peutingeriana, այսինքն՝ «Պլատինգերյան Տախտակներ»:

Ինչպես հայտնի յէ, այդ քարտեզը գտել եր 16-րդ դարում Վիեննայի հումանիստ Conrad Celtes-ը և հանձնել Առևզսրուրգի գիտնական Peutinger-ին, վորի անունով և կոչվում ե «Պլատինգերյան»։ Պետք ե սակայն մատնանշել, վոր գրավոր այս հուշարձանը, վորն անվանվում ե նաև «Հռոմեական աշխարհաքարտեզ», իրապես, վհչ թե քարտեզ ե այժմյան իմաստով, այլ հին աշխարհի ճանապարհների մանրամասն մի նկարագրություն ե և հատուկ մի ուղցույց, վորի վրա նշանակված են առանձին գծերով ու նկարներով Բրիտանիայի, Յեկոպայի, Ասիայի և Աֆրիկայի հաղորդակցության հին ճանապարհները, այդ ճանապարհների վրա գտնվող քաղաքներն ու կայարանները և միաժամանակ—և այդ առանձնապես կարևոր ե—նաև տարածությունները յուրաքանչյուր կայարանից մինչև մյուս կայարանը, վորոնք ցույց են տրված, գլխավորապես, հռոմեական մղոններով, իսկ յերբեմն նաև այլ չափերով։

2. Հռոմեական այս ճանապարհացույց-քարտեզը վերահրատարակել ե նորերս և մանրամամն կերպով ուսումնասիրել ու մեկնել ե գերմանական գիտնական Կոնբադ Միլերն իր ընդունակ Itineraria Romana աշխատության մեջ (Itineraria Romana, Römische Reisewege an der Hand der Ta-

Իր հրատարակության առաջաբանում կ. Միլլերը, խոսելով այս քարտեղի ծագման ու ժամանակի մասին՝ կարծում է, վոր սրա հեղինակն է հոռմեական աշխարհագիր Կաստորիուսը, վորն այս Itineraria-ն կազմել է, հավանորեն, 4-րդ դարի վաթսունական թվականներին: Նրա այս հետևող թյունը, վոր հիմնված է ուշագրավ դիտողությունների և փաստական տվյալների վրա՝ միանգամայն հավանական և ու համոզիչ:

Քարտեղի վրայի նկարներից, ինչպես մատնանշել է կ. Միլլերը, պարզ յերեսում է, վոր նրա հորինման ժամանակ Հոռմը, Կոստանդնուպոլիսը և Անտիոքն յեղել են միաժամանակ կայսերական գահանիստ քաղաքներ, իսկ այս, անշուշտ, ուշագրության արժանի ու խիստ կարեւոր մի ապացույց է, վոր քարտեղը կազմված պիտի լիներ չորրորդ դարում՝ Կոստանդին Մեծից (324—337 թ.) հետո և Թեոդոսիոս Մեծից (399—395 թ.) առաջ: Քննության առնելով քարտեղի նաև մյուս մանրամասնությունները՝ կ. Միլլերը նրա հորինման ժամանակը վորոշում է կամ 365 թվին և կամ 361—363 թվականներին (տես եջ XXIX—XXXVI):

Ավելի քան հավանական են նույնպես Միլլերի դիտությունները քարտեղի հեղինակի մասին:

Մոտավորապես 670 թվին¹ այս աշխարհաքարտեղից, ինչպես ցույց է տվել Միլլերը, ոգտվել է իր աշխարհագրության մեջ Անանուն Ռավիննացին: Նա ունեցել է իր ձեռքի տակ քարտեղի նաև առաջին թերթը, վորն այժմ պակասում է, և այդ թերթի վրա նա կարող եր, բնականաբար, կարդացած լինել վերնագրում հեղինակի անունը: Միլլերի քըննության համաձայն Ռավիննացու մոտ հիշատակված են մոտ

¹ Այս կետում Մարկվարտը համաձայն չե Միլլերին և կարծում է, վոր Բավեննացու աշխարհագրությունը գրված է 734 թվից հետո (տես Das Itinerar von Artaxata nach Armastica auf der römischen Weltkarte, Wien 1928, եջ 5):

2000 տեղանուն, վորոնք քաղված են այս քարտեղից, և իբրև այդ քաղվածքների հեղինակ մատնանշված է (36 անգամ) հոռմեական աշխարհագիր Կաստորիուս՝ Romanorum Cosmographus, multotiens dictus Castorius, ipse Castorius և (տես Itineraria Romana, եջ XXVI—XXIX): Վորոշ հիմք է ունեցել, ուրեմն, Միլլերը պնդելու, վոր Պետինգերյան քարտեղը վերագրվելու յի, իրապես, հոռմեական աշխարհագիր Կաստորիուսին:

3. Կաստորիուսին վերագրված քարտեղը, ինչպես տեսնում ենք, կազմված է յեղել կայսերական Հոռմի աշխարհակալության այն շրջանում, յերբ հայերը դեռ չեն ունեցել գիր և գրականություն և յերբ Փեռագալական Հայաստանը գտնվել է դեռևս Արշակունիների իշխանության տակ: Այդ հնության պատճառով՝ նրա Հայաստանի ու հարևան յերկիրների մասը, բնականաբար, անփոխարինելի ու անգնահատելի մի աղբյուր և հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության: կ. Միլլերի կարծիքով՝ «հին աշխարհագրության համար Կաստորիուսի այս քարտեղն ավելի կարեւոր է, քան հին ժամանակի գիտական ամենանշանավոր աշխարհագրական աշխատությունը՝ Պտոլեմեոսի աշխարհագրությունը. ավելի կարեւոր է, վորովհետև Կաստորիուսի թվերն ազատ են սխալներից ու թերություններից, վորոնք հատուկ են հին աշխարհի աստղաբաշխական ու յերկրաբնագիտական հասկացողություններին» (տես Itineraria Romana, եջ XXXIX—XL):

Պետք է սակայն ի նկատի ունենալ, վոր քարտեղի առանձին մասերը և թվերը տարրեր են ըստ իրանց ճշտության ու արժեքի: Հեռավորության թվերը ստույգ են համեմատաբար և վստահելի այն ճանապարհների նկատմամբ, վորոնք չափված են յեղել և ունեցել են մղոնաքարեր, իսկ չչափված ճանապարհների նկատմամբ միջկայարանային հեռավորությունները հիմնված են, հավանորեն, ճանապարհների կամ տեղացիների հաղորդած տեղեկությունների վրա: Քարտեղի այս մասերում համապատասխան թվերը կարող են լինել, անշուշտ, մոտավոր ու վեճելի:

Իւքն ըստ ինքյան հասկանալի յե նմանապես, վոր այս քարտեղում ևս, ինչպես և հին մատենագրության գրչագիր մյուս ձեռագիրներում, կան տեղանունների ու թվերի բազմաթիվ աղավաղումներ, վորոնք վերագրվելու յեն, մեծ մասմամբ, քարտեղն ընդորինակողներին:

Այս վերջին հանգամանքը չե կարող, իհարկե, հիմք ծառայել մեծարժեք այս աշխատության վարկարեկման:

4. Քարտեղի կարևորության մասին բացասական նման կարծիք եր հայտնել, որինակ, Ա. Խաչատրյանն իր գեկուցման մեջ («Առևտրական ու ռազմական ճանապարհները Հին Հայաստանում»), վորը նա կարդացել եր Կուլտուրայի Պատմության Խնստիտուտում 1933 թվին: Իր այդ գեկուցման 11-րդ թեղիսում, վորը մեքենագրված ու հրապարակված եր՝ նա տալիս ե Պատինգերյան քարտեղի հետևյալ գունավորված ու չափազանցված բնորոշումը՝

«Հստ քննադատների—գրում ե Խաչատրյանը—այս քարտեղի վրա անունները նշանակված են բոլորովին աղճատված ձևերով. կայարանների անունները զանազան ուղեգծերի վրա գրված են ավելի կամ պակաս թվով. Նրանց հաջորդականությունը հաճախ վեր~վայր ե շրջված և դրված հեռավորության չափերը շատ անձիշտ են, ուստի և այս թերություններովը Պատինգերյան քարտեղը չի կարող վստահելի առաջնորդ լինել գտնելու հին ճանապարհները Հայաստանում, ինչպես ընդունել ե պրոֆ. Մանանդյանը»:

Խաչատրյանի այս գնահատականը, վորը նա աշխատում եր հաստատել Ռամզայի «Historical geography of Asia Minor» (1890) աշխատության վկայություններով, ինչպես կըտեսնենք, ճիշտ չե: Ինչպես նախորդ իմ ուսումնասիրությունը («Հին Հայաստանի ճանապարհները Artaxata-Satala և Artaxata-Tigranocerta ըստ Պատինգերյան քարտեղի», Յերևան 1930), նույնպես և իմ այս ընդարձակ աշխատությունը, պարզ ու վորոշ ցույց են տալիս, վոր Պատինգերյան քարտեղը (Անանուն Ռավեննացու ուղղումներով) միանգամայն

«վստահելի առաջնորդ» ե, վորի ոգնությամբ ճշտվում են վհաջ միայն Արշակունյաց Հայաստանի հին ճանապարհները, այլ և այդ ճանապարհների վրա գտնվող կայարանների մեծագույն մասը: Հայտնի յե նույնպես, վոր նույն այս քարտեղի հայկական մասը մեծարժեք առաջնորդ են համարել և ոգտագործել Աղոնցը և Մարկվարտը:

5. Հռոմեական ճանապարհացույց-քարտեղի միակ որինակը, վոր այժմ գտնվում է Վիեննայի Պետական գրադարանում, մեծ ինամքով գրված մի ընդորինակություն ե, վորի գրության ժամանակը կ. Միլլերը յենթադրում է 11—12-րդ դարում (տես Itineraria Romana, եջ XVII): Լինելով համեմատաբար ուշ ժամանակի արտագրություն՝ միակ այս ձեռագիրը չե կարող, իհարկե, լինել անթերի ու անաղճատ պատճենը քարտեղի սկզբնական բնագրի:

Սակայն Հայաստանի նկատմամբ՝ այժմյան որինակի աղավաղությունները կարելի յե, ինչպես կըտեսնենք, ուղղել մասամբ Անանուն Ռավեննացու քաղվածքների ոգնությամբ:

Ռավեննացին իր աշխարհագրության մեջ ոգտվել ե, ինչպես վերև ասացինք, հռոմեական միենույն այս քարտեղից: Բոլոր այն տեղանունները, վոր մենք քննության ենք առնելու, արտագրված են նաև նրա աշխարհագրության մեջ, և գրեթե միշտ այն հաջորդականությամբ, ինչպես նրանք նշանակված են յեղել քարտեղում: Ռավեննացու քաղվածքների համեմատությունն այժմյան քարտեղի վկայությունների հետ ցույց ե տալիս, վոր նա ունեցել ե իր ձեռքի տակ այս քարտեղի ավելի ընտիր ու ավելի լրիվ մի որինակ, քան Պատինգերյանը: Մարկվարտը յենթադրում է նույնիսկ, վոր Ռավեննացին ունեցել ե իր տրամադրության տակ միենույն այս քարտեղի վհաջ թե մեկ, այլ յերկու որինակ (տես Das Itinerar von Artaxata nach Armastica, եջ 11):

Միանգամայն հասկանալի յե, ուրեմն, վոր Արշակունյաց Հայաստանի հին ճանապարհների ուսումնասիրության համար անհրաժեշտ ու խիստ կարևոր ոժանդակ աղբյուր ե նաև Անանուն Ռավեննացու աշխարհագրությունը:

Այս աղբյուրի տպագիր հրատարակությունը (ed. Pinder et Parthey), վորն այժմ խիստ հազվագյուտ ե, դժբախտաբար, յես չեմ կարողացել ձեռք բերել ուստի և ոգտվել եմ, գլխագործապես, կ. Միլլերի Itineraria-jում մեջ բերված վկայություններից, վորոնց մեջ մատնանշված են Հայաստանում գտնվող կայարանների անուններն այն ընթերցանությամբ ու հաջորդականությամբ, ինչպես նրանք տրված են նաև Ռավեննացու մոտ:

6. Պետինգերյան քարտեզի և Ռավեննացու աշխարհագրության վկայությունների քննական ու համեմատական ուսումնասիրությամբ Արշակունյաց Հայաստանի հին ճանապարհների ընդհանուր ուղղությունը վորոշվում ե, ինչպես կտեսնենք, միանգամայն բավարար ճշտությամբ: Իսկ նոր այս տվյալները խիստ կարևոր են վհչ միայն Հայաստանի պատմական աշխարհագրության, այլ և Հայաստանի տնտեսական ու քաղաքական պատմության համար:

Սույն ուսումնասիրության ընթացքում մենք կըպարզենք, վոր հին այս ճանապարհներով եյին մեծ մասամբ կատարվել հայկական, պարթևական, հռոմեական, նաև բյուզանդական ու սասանյան զորքերի տեղաշարժումները: Սակայն պատերազմող այս զորքերի հարձակման ու նահանջի հին ճանապարհները, վորոնք անորոշ ու անցողակի կերպով հիշված են մատենագրական թե հայ և թե ոտար յերկերում, սիսալ են հաճախ լուսաբանվում պատմագիտական նորագույն անգամ յերկերում:

Հասկանալի յե, ուրեմն, վոր Պետինգերյան քարտեզում գծված հայկական ճանապարհների ճշտումը մի նոր կովան ե լինելու մատենագրական վկայությունների հավանական լուսաբանության:

Վհչ պակաս կարենոր ե նաև այս, վոր միևնույն այս ճանապարհների վորոշմամբ պարզվում ե առևտրական հին ճանապարհների ուղղությունն և, մասնավորապես, կարավանների այն համաշխարհային ճանապարհագիծը, վորը գալիս եր Զինսատանից ու Միջին Ասիայից Արտաշատ և այս տեղից գնում Սև ծովի նավահանգիստները:

7. Ներկա աշխատության մեջ, ինչպես և այս աշխատությանը կցված հատուկ քարտեզներում, հին ճանապարհներն ու կայարանատեղերը վորոշված են ուղիղ գծերով և մոտավոր միայն ճշտությամբ: Նույն ճանապարհների ճշգրիտ ու իսկական ուղղությունները, ինչպես և կայարանատեղերի հավանական հին տեղադրությունը, պետք ե, բնականաբար, վորոշեն տեղում գիտական առանձին արշավախմբերը:

Տեղաքննական այս հետազոտությունները կարող են նշանակություն ունենալ, մասնավորապես, նաև հնագիտության համար: Ավելի քան հավանական ե, վոր Արշակունյաց Հայաստանի հին ճանապարհների ուղղությամբ և Պետինգերյան քարտեզում մատնանշված գլխավոր վայրերում կըգտնվեն թերեւս հնագիտական մնացորդներ ու պատմական հուշարձաններ, վորոնք կարող են աչքաթող արված լինել հին այս ճանապարհների անհայտ լինելու պատճառով:

Մեր այս ուսումնասիրության ընթացքում մենք մատնանշելու յենք այն կարենը շրջաններն ու տեղերը, վորոնք հնագիտական տեսակետից շատ քիչ են ուսումնասիրված և արժանի յեն հնագետների հատուկ ուշադրությանը:

8. Պետինգերյան քարտեզում նշանակված են բուն Հայաստանի հինգ մեծ ճանապարհները, վորոնց միավորման ու հանդիպման կետը յեղել ե Արտաշատ քաղաքը:

Գլխավոր այդ հինգ ճանապարհներն են՝ 1. Արտաշատ-Սատաղ, 2. Արտաշատ-Տիգրանակերտ, 3. Արտաշատ-Սեբաստոպոլիս, 4. Արտաշատ-Համադան և 5. Արտաշատ-[Արմաստիկա]:

Այս ճանապարհներից հինգերորդը մանրամասն քննված ե Մարկվարտի ընդարձակ աշխատության մեջ, վորը լույս եր տեսել Վիեննայում 1928 թվին (տես Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien. Das Itinerar von Artaxata nach Armastica auf der römischen Weltkarte, Wien 1928, տես նաև «Հանդէս Ամօրեայ» 1927, № 11—12, եջ 826—866):

իսկ մեր այս ուսումնասիրության մեջ քննության են առնված միայն առաջին չորս ճանապարհները:

Վերոհիշյալ ճանապարհներից առաջինը և յերկրորդը, ինչպես և Պևտինգերի առաջին քարտեզի Hariza կայարանը, մանրամասն հետազոտված են ու լուսաբանված նաև իմ նախորդ աշխատություններում (տես «Հայաստանի հին ճանապարհները Artaxata-Satala և Artaxata-Tigranocerta ըստ Պևտինգերյան քարտեզի»¹, Տեղեկագիր Դիտ. և Արվ. Ինստիտուտի № 5, Յերևան 1931, եջ 65—89, նաև «Մանր Հետազոտություններ», Յերևան 1932, եջ 3—21): Սակայն նույն ուսումնասիրությունները մենք վերահրատարակում ենք այժմ ավելի լրիվ ու ընդարձակ բովանդակությամբ, ավելացնելով մեր նոր դիտողությունները Barantea, Cymiza, Patansana, Vastauna և այլ կայարանների մասին, վորոնց անունները մեզ չեր հաջողվել լուսաբանել վերոհիշյալ աշխատություններում:

Նոր այս հավելումները հնարավորություն են տալիս, ինչպես կըտեսնենք, Տիգրանակերտից Արտաշատ տանող ճանապարհը վորոշել հյուսիսային ուղղությամբ այժմյան ներջիկի վրայով: Մեր նախորդ քարտեզը (տես «Հայաստանի հին ճանապարհներ», եջ 88 ա) կարոտ ե, ուրեմն, սրբագրումն: Tigranocarten—Cymiza—Vastauna ճանապարհամասի ուղղությունը վորոշվում ե այժմ ավելի հաստատուն կերպով, քան նախորդ քարտեզում:

9. Սույն ուսումնասիրության վերջում՝ հատուկ հավելվածում՝ մենք մանրամասն քննել ենք նաև արարական ու հայկական աղբյուրների վկայությունները Դվին-Պարտավ ճանապարհի մասին: Այս ճանապարհը, ինչպես հայտնի յե, առևտրական կարևոր դեր է կատարել, գլխավորապես, արա-

¹ ՏԵ՛ս նաև ոռուերեն իմ աշխատությունը «Օ торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен», Эривань 1930, եջ 101—104 (§ 21. Главные пути Армении по Tabula Peutingeriana):

րական տիրապետության ու Բագրատունյաց թագավորության շրջաններում:

Համառոտ ու թուուցիկ կերպով այս գծի ուղղությունը, ինչպես և մի քանի կայարանների տեղադրությունը, փորձել են լուսաբանել ուսւարանել ուսւարանել գիտնական Ն. Ա. Կարառուլովը (տես Сборник материалов для описания местностей и племен Кавказа, XXIX, 1901, եջ 33) և Մարկվարտը (Das Itinerar von Artaxata nach Armastica, եջ 55—56): Սակայն ներկա աշխատության մեջ, վորին հիմք են ծառայել վո՞չ միայն իստախրիի, այլ և հայկական «Մղնաչափ»-ի վկայությունները՝ նույն ճանապարհի ուղղությունը, ինչպես և կայարանների անուններն ու տեղադրությունը, վորոշված են ավելի հանգամանորեն և, ինձ թվում ե, ավելի հիմնավոր կերպով, քան այդ արված եր նախկին աշխատություններում:

Մեր քննության յեզրակացությունները, վոր ստացվել են վերոհիշյալ աղբյուրների համեմատական ուսումնասիրությամբ, պետք ե, իհարկե, ստուգվեն տեղում գիտական արշավախմբերի կողմից:

10. Ավելորդ չենք համարում բնորոշել ու բացատրել ի վերջո հոռմեական քարտեզի մի քանի կարևոր առանձնահատկությունները:

Tabula Peutingeriana-յում, վորը գույնզգույն նկարված ու պատկերագրդ մի քարտեզ ե, առանձնապես հետաքրքիր են ու ուշագրավ վորոշ կայարանների մոտ գտնվող զանազանակերպ նկարները, վորոնք ունեն, ըստ յերեսույթին, հատուկ նշանակություն: Հայաստանում հատկապես՝ մի շարք կայարանների մոտ նկարված են զույգ աշտարակներ: Կ. Միլերը և Յ. Մարկվարտը կարծում են, վոր զույգ աշտարակներ ունեցող կայարանները յեղել են քաղաքներ (տես Itineraria Romana, եջ XLIV) կամ զինվորական պահականեղիներ (տես Das Itinerar von Artaxata nach Armastica, եջ 4):

Թվերը, վոր դրված են կայարանների անուններից հե-

տո, մատնացույց են անում տարածությունները մի կայա-
րանից մյուս կայարան, սովորաբար, հռոմեական մղոններով
(milia passus=1,4815 կիլոմետր), իսկ յերբեմն նաև պարս-
կական պարասամնգներով:

Tabula-ի մյուս մանրամասնությունները հասկանալի
յեն առանց բացատրության:

ARTAXATA – SATALA

ՊԵՎՏԻՆԳԵՐՅԱՆ ՔԱՐՏԵԶԻ ԳԼԽԱՎՈՐ ՑԱՆԱՄԱՐՑՆԵՐԸ
ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԱՐՏԱՇԱՏ—ԲԱԳԱՎԱՆ—ՍԱՏԱՂ

1. Արտաշատից Սատաղ տանող ճանապարհն ըստ Պեվտինգյան քարտեզի ունի հետեւյալ կայարանները՝

ARTAXATA 23 Paracata 33 Coloceia (*Իավեննացու մոտ՝ Zotozeta*) 24 Hariza 24 RAUGONIA (*Իավեննացու մոտ՝ Ragauna*) 24 Colchion 24 CHADAS 17 Armanas 12 ANDAGA (*Իավեննացու մոտ՝ Andacas*) 26 Barantea 30 Adconfluentes 10 Datamisa 20 Tharsidare 15 Autisparate 12 Calcidava (*Իավեննացու մոտ՝ Chalchidara*) 15 Sinara 22 Lucus Basaro 15 Aegea (*Իավեննացու մոտ՝ Egea*) 20 Darucinte 20 Salmalasso 20 SATALA¹.

Մեծագիր տառերով են տպված մեր բնագրում այն կայարանների անունները, վորոնց մոտ Պեվտինգյան քարտեզում նկարված են զույգ աշտարակներ։ Կայարանների անունների մոտ դրված թվերը ցույց են տալիս տարածությունները մի կայարանից մյուս կայարան հռոմեական մղոններով (=1,4815 կիլոմետր)։ Ուրեմն՝ համաձայն այս քարտեզի ամբողջ տարածությունը Արտաշատից մինչև Սատաղ ցույց ե տրված 406 հռոմեական մղոն կամ մոտավորապես 600 այժմյան կիլոմետր։

Ուշագրավ ե, վոր հեռավորության այս թիվը համա-

¹ Տես Itineraria Romana, եջ 676—677.

պատասխանում ե մոտավորապես հայկական «Մղոնաչափք»-ի թվերին (տես «Խորենացու առեղծվածի լուծումը», Յերևան 1934, եջ 85), վորի մեջ ընդհանուր տարածությունը Դվինից մինչև Կարին ցույց ե տրված կլոր թվով 200 արարական մղոն (=մոտավորապես 384 կիլոմետր), իսկ Կարինից «ի փոսադուրս» (նախ քան Սատաղ)՝ 100 արարական մղոն (=մոտավ. 191 կիլոմ.):

2. Արտաշատից Սատաղ տանող ճանապարհի վրա Պետինգերյանքարտեզում հիշատակված են, ինչպես տեսնում ենք, 21 կայարան:

Այս կայարանների անուններից վորոշ եյին սկզբում միայն յերկուսը՝ Արտաշատը և Սատաղը:

Satala հին քաղաքը, վոր այժմյան Սատաղ գյուղն ե, գտնվել ե, ինչպես հայտնի յե, Գայլ գետի մոտ (հունարեն՝ Լիկոս, այժմ՝ Կելիդի) և հոսմեական շրջանում յեղել ե մըշտական կայան հոսմեական սահմանապահ գորքի: Նրա տեղագրական ու հնագիտական նկարագրությունը, ինչպես և նրա պատմական անցյալին վերաբերվող մատենագրական կարևոր վկայությունները, մանրամասն տրված են Կյումոն յեղայինների «Ուղեւորութիւն հնախօսական հետազօտութեան ի Պոնտոս եւ ի Փոքր Հայս» աշխատության մեջ (տես «Պոնտական ուսումնասիրութիւնք», թարգմ. Հ. Տաշյանի, Վիեննա 1919, եջ 359—369):

Ինչպես այս աշխատությունից, նույնպես և Ադրնցի «Արմենիա և էպոխա Յուստինիա» ուսումնասիրությունից (СПԲ. 1905, եջ 75 էն), պարզ յերկում ե, վոր Satala-ն կարևոր հանգույց ե յեղել հին ճանապարհների և վոր հենց այստեղից ե ճյուղավորվել Բարձր Հայքից յեկող ճանապարհը դեպի Տրապիզոն, Մալաթիա և Նիկոպոլիս-Ներկեսարիա ու Նիկոպոլիս-Սերաստիա: «Մղոնաչափք»-ի վկայություններից ես դժվար չե հետեցնել, վոր արարական շրջանում, անգամ իններորդ դարում, Դվինից Պոլիս տանող հին ճանապարհի ուղղությունը պետք ե յենթագրել Երզրումի վրայով դեպի Սատաղ, այստեղից՝ Կողոնիա,

Դանդրա և Անկյուրիա, և այդտեղից՝ Պոլիս (տես «Խորենացու առեղծվածի լուծումը», Յերևան 1934, եջ 85):

Մոտավորապես հայտնի յե նույնպես Արտաշատ քաղաքի տեղը:

Ստրաբոնի և Մովսես Խորենացու վկայություններից (Str. XI, 14, 6 և Խոր. Պատմ. II, 49, եջ 176 ու Աշխարհաց., Վենետիկ 1881, եջ 34), վոր մեջ են բերված նախորդ իմ աշխատություններում (տես «Օ торговле и городах Армении», եջ 104 և «Խորենացու առեղծվածի լուծումը», եջ 53—54), կարելի յե յեղբակացնել, վոր Արտաշատ քաղաքը գտնվել ե Արաքս գետի ափին, հավանորեն, այժմյան Խոր Վիրապի շրջակայքում:

Բացի կենարոնական այս վայրերից՝ մյուս 19 կայարանների անունները մնում եյին յերկար ժամանակ մութ ու անհայտ և համեմատաբար նոր ժամանակներում միայն Յ. Մարկվարտը և Վ. Բելքը, ինչպես կըտեսնենք ներքեւ, կարողացել եյին վորոշել յերկու կայարանի թե անունները և թե տեղադրությունը՝ Raugonia (Խավենացու մոտ՝ Ragauna)=Բագավան և Paracata = Փառախոտ: Իսկ Կ. Միլերը և Ռ. Կիպերտը լուսաբանել եյին Adconfluentes, Sinara և Aegea կայարանների անունները:

Ներկա ուսումնասիրության մեջ մենք փորձել ենք պարզաբանել և վորոշել ֆիացի 16 կայարաններից իննը՝ վորոնցից յերկուսը (Coloceia և Hariza) գտնվում են Արտաշատ-Բագավան գծի վրա, իսկ մյուս յոթը (Chadas, Armanas, Andaga, Barantea, Calcidava, Lucus Basaro և Daruciente)¹ Բագավան-Սատաղ գծի վրա: Այս կայարաններից հինգը լուսաբանված եյին արդեն վերոնիշյալ իմ աշխատություններում, իսկ չորսը (Chadas, Barantea, Lucus Basaro և Daruciente) առաջին անգամ քննվելու յեն ներքեւ ընդարձակ այս ուսումնասիրության մեջ:

Հասկանալի յե, ինարկե, վոր նոր այս տվյալների ոգությամբ Արտաշատ-Սատաղ ճանապարհի ուղղությունը վո-

բոշվում ե ավելի ճշգրիտ ու ավելի հիմնավոր կերպով, քան
այդ արված ե նախկին աշխատություններում:

3. Սատաղից Արտաշատ և Տիգրանակերտից Արտաշատ
տանող ճանապարհները հանդիպում եյին իրար ըստ Պատին-
գերյան քարտեզի Raugonia (Իտավեննացու մոտ՝ Raugauna)
հանգուցային կետում և այստեղից գնում եյին Արտաշատ
միևնույն կայարաններով՝ Hariza 24 Colocacia (Իտավեննացու
մոտ՝ Zotozeta) 33 Paracata 23 Artaxata: Ուրեմն՝ այդ յեր-
կու ճանապարհների ուղղությունը վորոշելու համար անհա-
ժեշտ եր, նախ և առաջ, պարզել Raugonia կամ Raugauna
կայարանի տեղը:

Կոնրադ Միլերը վերոհիշյալ Itineraria Romana աշխա-
տության մեջ և բացատրական հատուկ իր քարտեզում Raugonia
(կամ Raugauna) կայարանի տեղը յենթադրում է այժ-
մյան Սուուկ-սու գետի ափին, վոր գտնվում ե Վանա լճի
ու Բերկրի հյուսիս-արևելյան կողմում: Իսկ ճանապարհը
Արտաշատից Սատաղ նա վորոշում ե հետեւյալ ուղղությամբ՝

Artaxata—Արտաշատ, Paracata—Բուրուլանի մոտ, Co-
loccia-Koischet Մայայի մոտ, Hariza—Արարդիզի Քի-
լիսաքենդի մոտ, Raugonia—Բայազիդաղա Սուուկուն
գետի մոտ, Colchion—Արնիս, Chadas—Աղորաֆ (Միլ-
երի մոտ՝ Aschraf), Armanas—Առին, Andaga—Աղիլիշ-
վազ, Barantea—Խլաթի ավերակները, Adconfluentes—
Յոնջալու, Datamisa - Aspendji, Tharsidarate - Unu, Autispar-
ate—Կան Երզումի մոտ, Calcidava—Իլիչա, Sinara—
Ալաջա, Lucas Basaro—Աշկալա, Aegea—Լիճ, Darucinte—
Բագասիճ, Salmalasso—Լորիլար, Satala—Սատաղ:

¹ Տես Itineraria Romana, եջ 676—677 և բացատրական քարտեզ
214, եջ 651.

Ո. Կիպերտը Փոքր Ասիայի իր ընդարձակ քարտեզում¹
(տես Atlas von Kleinasiens in 24 Blättern, 1902—1906)
Raugonia կամ Ragauna կայարանը, վորտեղ միանում եյին
Սատաղից և Տիգրանակերտից Արտաշատ տանող ճանապարհ-
ները, յենթադրում ե այժմյան Պարնաուտում, վորը գտնվում
է Արաքսից հարավ՝ Կաղզվանի և Կողրի միջև: Արտաշատից
Սատաղ տանող գիծը, նրա կարծիքով, ունեցել ե հետեւյալ
կայարանները՝

Artaxata—Արտաշատ, Paracata—Բուրուլանի մոտ, Colo-
ceia—Քյուլուկ, Hariza—Կողրի մոտ, Raugonia—Պար-
նաուտի մոտ, Colchion—Կաղզվան, Chadas—Ոլուխուի
մոտ, Armanas—Ել-Քեչմաղ, Andaga—Արիդամիշ, Ba-
rantea—Կարառուրանի մոտ, Adconfluences—Քեռփրի-
քենց, Datamisa - Aspendji, Tharsidarate - Unu, Autispar-
ate—Կան Երզումի մոտ, Calcidava—Իլիչա, Sinara—
Ալաջա, Lucas Basaro—Աշկալա, Aegea—Լիճ, Darucinte—
Բագասիճ, Salmalasso—Լորիլար, Satala—Սատաղ:

4. Կ. Միլերի և Ո. Կիպերտի յենթադրությունները
Raugonia կայարանի տեղի և վերոհիշյալ ճանապարհների
ուղղության նկատմամբ պարզուեն սխալ են: Հ, Մարկվար-
տը ցույց է տվել արդեն և շատ ուղիղ, վոր Raugonia կամ
Ragauna, ինչպես և Տաշխա՛ռան Պտողեմեռսի մոտ (V, 12, 7),
համապատասխանում են Հին Հայաստանի «Բագաւան»-ին
Բագրեանդ գավառում²:

Raugonia—Ragauna-ն Մարկվարտն ուղղում ե *Bagauna
և համարում ե R տառը B-ի փոխարեն պարզապես գրչի
սխալ: Նմանապես և Պտողեմեռսի մոտ Բագավան անվան

¹ Այս քարտեզից մենք չենք կարողացել ոգտվել և ներքեւում առաջ
բերված տեղեկությունները քաղել ենք Itineraria Romana աշխատու-
թյունից, տես եջ 676—677.

² Տես Prof Dr. J. Marquart, Die Entstehung und Wiederherstellung
der armenischen Nation, Berlin 1919, եջ 69 Ճանաթ., հմտե նաև նույն
հեղինակի՝ Südarmenien und die Tigrisquellen, Wien 1930, եջ 13*.

սխալ բնթերցվածը ծագել ե, անշուշտ, հունարեն Հ և Բ տառերի շփոթման պատճառով:

Այս պարզ ու անվիճելի բացատրությունից հետո՝ Տիգրանակերտ—Արտաշատ և Սատաղ—Արտաշատ ճանապարհների միացման կետը վորոշվում ե, ուրեմն, վհչ թե Պարնասուտում կամ Սոււռէկսու գետի մոտ, ինչպես յենթադրել են Կ. Միլերը և Ռ. Կիպերտը, այլ չին Հայաստանի Բագրեանդ գավառում, Դիաղինի հյուսիսարևմտյան կողմը, ուր այժմ գտնվում ե Ուշ-քիլիսե գյուղը:

Bagatuna=Բագավան հանգուցային կայարանի անվան ու տեղի այս ճշտումը, բնականաբար, յելակետ ե ծառայում ու հնարավորություն ե տալիս վորոշելու ճանապարհների ուղղությունը Բագավանից Արտաշատ, Բագավանից Տիգրանակերտ և Բագավանից Սատաղ:

5. Բագավանից Արտաշատ տանող գծի վրա Պետինգերյան քարտեզում, ինչես տեսանք, նշանակված են հետեւյալ կայարանները՝ RAUGONIA 24 Hariza 24 Coloceia 33 Paracata 23 և ARTAXATA (ըսդհանուր տարածությունը հավասար ե 104 հռոմեական մղոն կամ 154 կիլոմետր):

Բացի Բագավանից մատնանշված կայարաններից մեկի անունը ևս հաջող կերպով լուսաբանել ե Վ. Բելքը (տես Beiträge zur alten Geographie und Geschichte Vorderasiens, II, Leipzig 1901, եջ 83—92): Նրա կարծիքով՝ Պետինգերյան քարտեզի Paracata-ն համապատասխանում է հայկական Փառախոտին, վորը, ինչպես հայտնի յե, հիշատակված ե Սովուս Խորենացու և Անանունի պատմություններում¹: Վ. Բելքը, վոր հատուկ հետազոտություններ ե կատարել Դաշրուում գյուղի շրջակայքում, հանգել ե այն յեզրակացության, վոր հին Փառախոտը պետք ե յենթադրել այն ավերակների տեղում, վորոնք այժմ անվանվում են Բուլաղ-

Բաշ և գտնվում են Դաշրուում գյուղից 5 կիլոմետր հեռավորության վրա՝ դեպի հարավ-արևելք:

Paracata=Փառախոտի տեղադրության հաստատումն այժմյան բուլաղ-Բաշում, ինձ թվում ե, հնարավորություն ե տալիս վորոշելու նաև Coloceia (Դավենսացու մոտ՝ Zotozeta) կայարանի տեղը:

Այս կայարանի հեռավորությունը Paracata—Փառախոտից ցույց ե տրված 33 հռոմեական մղոն (= 49 կիլոմետր): Խիստ աղճատված են սակայն թե այս թե մյուս կայարաններից մեծագույն մասի անունները:

Coloceia—Zotozeta անվան ստույգ ընթերցումը պետք ե լինի, իմ կարծիքով, Zolocerta² Colo կամ Zoto= *Zolo և սեւ կամ zeta= *certa: Այս ուղղումից հետո՝ *Zolocerta-ն համապատասխան կլինի հին Հայաստանի Զողկերտին, վորը Խորենացու մոտ անվանված ե Ցոլակերտ: Հավանական կարելի յե համարել նույնպես, վոր Պտոլեմեոսի հիշատակած Σογιոχաρչ-ն, վորի տեղը ցույց ե տրված նրա մոտ Արտաշատից դեպի հարավ-արևմուտք ($77^{\circ} 15'$ յերկ. և $42^{\circ} 20'$ լայն.), տես «Südarmenien und die Tigrisquellen», Wien 1930, եջ 12*), համապատասխան պիտի լինի հենց այս *Zolocerta—Զողկերտին:

5. Հիններով Ալիշանի ցուցմունքների վրա («Այրարատ», Վենետիկ 1890, եջ 123—124): իմ «Հայաստանի հին ճանապարհները» աշխատության մեջ (Տեղեկագիր Գիտ. և Արվ. ինստիտուտի, № 5) Զողկերտ—Ցոլակերտի տեղը յես վորոշել եյի Սուրմալի գյուղից դեպի հարավ-արևելք՝ այժմյան կարակալեյի ավերակների վայրում: Սակայն այդ յենթադրությունը, ինչպես մանրամասն բացատրել եմ իմ «Մանր Հետազոտություններ»-ում (Ցերեան 1932), ճիշտ չե:

Ինստիտուտի № 5 Տեղեկագիրը լույս տեմնելուց հետո՝ մեր հայտնի գյուղատնտես Ստեփան Կամսարականը, վորը մոտ ծանոթ ե ճանապարհների տեղադրությանը Գայլատու ծովակի արևելյան կողմում, մատնացույց եր արել ինձ, վոր Արտաշատ-Բագավան գծի ուղղությունը կարակալեյի վրայով վիճելի յե ու անհավանական:

¹ Տես «Մովսիսի Խորենացու, Պատմութիւն Հայոց», Տփղիս 1913, եջ 40 (I, 12), նաև «Պատմութիւն Սերէսսի եպիսկոպոսի ի Հերակլին», Ա.-Պետերսուրգ 1879, եջ 7 (Դպրութ. Ա.):

Ստեփան Կամսարականի առարկություններն ու նոր գիտողությունները հիշյալ գծի ուղղության մասին թվում են ինձ հիմնավոր:

Նրա կարծիքով՝ դժվար ե այս գծի ուղղությունը յենթադրել Կարակալբյի վրայով, վորովհետև ճանապարհը Բուլլադիմաշից Կարակալե անհարմար ե ու ճահճային և, բացի այդ, ճանապարհն այս ուղղությամբ շեղվում ե չափազանց դեպի հուսիս-արևմուտք, ուստի և անհավանական ե իր այդ վոլորապտույտ հեռավորության պատճառով:

Հիմք ընդունելով իր այս դիտողությունները, ինչպես և այժմյան մյուս ճանապարհների տեղադրությունը, Կամսարականը տրամադիր ե կարծելու, վոր Պեվտիխնգերյան քարտեզի հին ճանապարհի ուղղությունը կարելի յե յենթադրել այժմյան Կարգանսարայի վրայով և Կարգանսարայի կամ Կուչաղի լեռնանցքով (=7245 վոտնաչափ, տես Ռուսական հին շտաբի տասը վերստանոց քարտեզը, թերթ 99), վորն ամենահարմար ու դյուրամատչելի լեռնանցքն ե Գայլատու ծովակի արևելյան կողմերում և անցանելի յե նաև ձմեռվա ամիսների ընթացքում:

Մյուս յերկու լեռնանցքները, վորոնցից մեկը (Արաս-գյոլի լեռնանցքը) գտնվում ե Գայլատու ծովակի արևելյան ափերի մոտ, իսկ մյուսը (Ասլանլուի լեռնանցքը) սրանից մի փոքր դեպի արևելք՝ անհամեմատ ավելի բարձր են ու անհարմար և անանցանելի յեն ձմեռվա ամիսների ընթացքում:

Ուշագրավ ե նաև այն, վոր այժմյան Կարավանսարայի մոտ կան այժմ յերկու հին ավերակներ, վորոնցից մեկը Կամսարականը համարում է յերթեեկող կարավանների հին իջևան: Կուչաղի լեռնանցքի մոտ ևս պահպանվել են մեծ բերդերի ավերակներ:

Կամսարականի մատնանշած իջևանի ավերակներն այն քարվանսարայի ավերակներն են, անշուշտ, վոր լուսանկարել ու հրատարակել ե Հրիստոնեական Վոստօք-ի յերրորդ հատորում Աշխարհեղ Քալանթարը (տ. III, վայ. I, Պետ-

րոգրադ 1914 թ.): Միջնադարյան այս քարվանսարայը, վոր գտնվում ե բաց և լայն դաշտում՝ Զորից 15—20 վերստ դեպի հյուսիս-արևմուտք, Աշխարհական թագավորության կառավագած պիտի լինի 13-րդ դարից վեչ ուշ: Աշխարհեղի գտած միակ արձանագրության մեջ հիշատակված ե, վոր քարվանսարայը կառուցել ե Աշոտը:

6. Կամսարականի վերոհիշյալ ցուցումներին ծանոթանալուց հետո՝ Ալիշանի յենթադրությունը Զողկերտ-Յոլակերտի տեղադրության մասին պետք ե համարել ըստ իս միանգամայն անհաջող:

Ցեթե ընդունելու լինենք Արտաշատ-Բագավան գծի ուղղությունը Կուչաղի լեռնանցքի վրայով՝ այդ դեպքում, բնականաբար, կասկածելի կը լինի այդ գծի շեղումը դեպի Կարակալե:

Իսկ վոր հոռմեական շրջանի հին այս ճանապարհն անցել ե, իբրոք, հենց այս հարմար լեռնանցքով՝ այդ հաստատվում ե, ինչպես ցույց ենք տվել մեր «Մանր Հետազոտություններում» (եջ 6—7), Խարիզա կայարանի տեղադրությամբ, վորը հաջողվել եր ինձ գտնել ուստական հին շտաբի տասը վերստանոց քարտեզի վրա:

Ըստարձակ այս քարտեզի վրա Կարավանսարայի կամ Կուչաղի լեռնանցքի հարավում (տասը վերստանոց քարտեզի վրա լեռնանցքն անվանված ե՝ Կարանսարայ) Կարանսարայի պետական գյուղից մի քանի կիլոմետր դեպի արևմուտք՝ նշանակված ե Բալըխ-Զայ գետի ափին Ճրուդյու գյուղը: Հենց նույն այս Արուճ գյուղը հիշատակված ե, իմ կարծեցով, Ղեռնդի պատմության վկայություններից մեկում, վորի մեջ առանձապես ուշագրավ ե նաև այն, վոր Դվին-Բագավան հին ճանապարհն անվանված ե «պողոտայն արքունիք»

Նկարագրելով 774 թվի նախարարական ապստամբությունը և արարական հարկահավաքների սպանությունը կումայրիում և Բագրեանդում, Ղեռնդը շարունակում ե՝ «Եւ իբրև այս լուր աղետի հասանել ի քաղաքն

Դուին առ գօրավարն իսմայելի Մահմետ՝ յամենայն կողմանց տագնապ մեծ յառնէր ի վերայ նորա. և գումարեալ զգօրս քաղաքին Դունայ՝ տայր ի ձեռս գօրագլխի միում, որում անուն էր Ապունձիպ, եւանել ի խնդիր վրիժու արեան սպանելոցն: Եւ առեալ գօրավարին այնմիկ զընտիրսն հեծելոց իրբկ արս ՏՇ ուշ եղեալ ընդ պողոտայն արքունի՝ հասանէր ի գաւառն Բագրեանդ ի գիւղն Բագաւան: Անդ ի վերայ հասանէր նոցա Մուշեղ և ընդ նմա արք իրբկ Մ. և մարտուցեալք ընդ միմիանս՝ օգնություն ի տեառնէ վաղվաղակի հասանէր ի թիկունս գնդին Մուշեղայ. և բազում հարուածս հարեալ սատակէին ի գօրացն իսմայելի, և զմնացեալն ի փախուստ դարձուցեալ՝ հետամուտ լինէին մինչև յաւանն Արում, և զրագումս ճռաքաղ առնէին, մինչև գնոյն ինքն զգօրագլուխն հարեալ սատակէին: Եւ մեծաւ յաղթութեամբ դարձեալ ի հետոց նոցա՝ ընուին բազում աւարաւ յաւարէ թշնամեացն» (տես «Պատմութիւն Ղենգեայ մեծի վարդապետի Հայոց», Ս.-Պետերբ. 1889, գլ. ՂԻ, եջ 140—141):

Այս Արումը, անշուշտ, վոչ թե Արագածոտն, այլ Կոգումիտ գավառի Արումն ե, վորը գտնվել ե Դվին-Բագավան «արքունի պողոտայ»-ի մոտ: Միանգամայն անհավանական կը լինի ըստ իս յենթադրել, վոր Մուշեղ Մամիկոնյանը, հալածելով փախստականներին, կարող եր հասած լինել մինչև մյուս Արում, վորը գտնվում եր վերոհիշյալ ճանապարհից հեռու՝ Արաքս գետի հյուսիսային կողմերում:

Արում գյուղի հին անունը յեղել ե, ըստ յերևույթին, ինչպես կարելի յե հետևյան Պետինգերյան քարտեղի համապատասխան Հարիզա անունից, Հառիճ:

Այդ յերկու անունների նույնացումը հաստատվում ե նրանով, վոր Հարիզա կայարանի հեռավորությունը Բագավանից ցույց ե տրված Պետինգերյան քարտեղում 24 հոռմեական մղոն կամ մոտ 36 կիլոմետր: Յեվ ուշագրավ ե, վոր հենց այս տարածության վրա յե գտնվում այժմյան Ուչքի-

լիսե-Բագավանից և «արքունի պողոտայի» մոտ վերոհիշյալ Արումը:

Ուրեմն՝ Hariza կայարանը վոչ միայն ըստ իր անվան, այլ նաև ըստ այդ տարածության՝ ճշտիվ համապատասխանում ե *Հառիճ—Արումին:

7. Hariza-յի անվան և տեղի այս լուսաբանությունը կարևոր մի կովան և նաև Colocenia (=*Zolocerta) կայարանի տեղադրության վորոշման համար:

Պետինգերյան քարտեղից հայտնի յե, վոր Բագավանից Արտաշատ տանող ճանապարհի վրա Colocenia կայարանը գտնվել է Hariza-յից 24 հոռմեական մղոն կամ մոտ 36 կիլոմետր հեռավորության վրա: Արդ՝ ոռուսական հին շտարի տասը վերստանոց քարտեղի վրա Արումը գտնվում ե Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքից մոտ 10 կիլոմետր դեպի հարավ: Պարզ, ե, ուրեմն, վոր Պետինգերյան քարտեղում մատնանշված տարածության համաձայն Colocenia կայարանի կամ հին Զողկերտ-Ցոլակերտի տեղը յենթադըր վելու յե Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքից մոտ 26 կիլոմետր դեպի հյուսիս:

Դժվար չե նաև յեղակացնել, վոր ըստ այդ հեռավորության Colocenia-*Zolocerta-յի տեղը պետք ե յենթադըրի վոչ թե այժմյան Կարակալեյի ավերակների վայրում, այլ Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքից Ն. Զարուխի կամ Խոշ-Խաբար իջոնդ ճանապարհների վրա (տես Ռուսական հին շտարի տասը վերստանոց քարտեղի վրա՝ Ա. Կարսկի և Խաշ-Խաբար),

Վոր այս հետեւությունը ևս հիմնավոր ե ու հավանական՝ այդ, ինչպես կը տեսնենք, յերևում ե նաև Խորենացու կարևոր մի վկայությունից Ցոլակերտի մասին:

8. Զողկերտ-Ցոլակերտի և Colocenia-Zotozeta-յի նույնացումը, ինչպես այդ կայարանի տեղադրությունը, աշխարհագրական այնքան կարենը խնդիրներ են, վոր ավելորդ չեմ համարում մանրամասն մեջ բերել այստեղ Խորենացու և Յեղիշեյի վկայությունները Ցոլակերտի մասին:

Խորենացին, հիշելով Ամասիայի վորդիներին՝ Փառուխին և Ցողակին՝ մեջ ե բերում Փառախոտի ու Ցողակերտի մասին հետեւյալ ավանդությունը՝

«Ամասիա բնակեալ յԱրմաւիր՝ յետ ամաց ծնանի զԳեղամ, և յետ Գեղամայ զՓառոխ արի և զՑողակ: Եւ յետ ծնանելոյ զսոսա՝ անցանէ զգետովն մերձ ի լեառնն հարաւոյ, և շնէ անդ առ խորշիւք լեռնոտինն մեծապէս ծախիւք երկուս տունս, զմին յարելս կոյս, մօտ յակունս աղբերցն, որ առ ստորոտով լերինն ելանեն. իսկ զմիւն յարևմուս կոյս նորին տանն, բացագույն իբր մեծօր հասարակ աւուր միոյ հետեւակագնացի առն ճանապարհի: Եւ ետ զնոսա ի ժառանգութիւն երկուց որդւոց իւրոց, արւոյն Փառոխի և կայտառին Ցողակայ. յորս բնակեալ՝ յիւրեանց անուն զտեղինն կոչեցին, ի Փառոխայ՝ Փառախոտ, և ի Ցողակայ՝ Ցողակերտ: Բայց զլեառնն Ամասիա անուանէ իւրով անուամբ Մասիս. և ինքն դարձեալ յԱրմաւիր՝ եկաց ամս սակաւս, և մեռաւ» (տես «Մովսեսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց», Տփղիս 1913, I, ԺԲ, եջ 40):

Իսկ Ցեղիշեն հիշում ե Զողկերտը, թվելով այն տեղերը, վոր ավերել եր Վասակ Սյունին.

«և աւերեալ բազում տեղիս Հայոց աշխարհին, մասաւանդ զձմերոցս արքունի, որ կայեանք զօրացն էին, զԳառնին և զԵրամօնս և զԴրսհանակերտն՝ զմեծ դաստակերտն, զՎարդանաշատն և զամուրն Օշական, զՓառախոտն, զԱրդեանսն, զՉողկերտն աւան և զբերդն Արմաւիր, զԿուաշն աւան, զԱրուճն, զԱշնակն և զամենայն ոտն Արագածու, և զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին գլխովին, և զամենայն գեօղս և զաւանս, որ շուրջ զնովաւ էին, առեալ աւերեալ և հրձիգ արարեալ» («Եղիշէի վարդապետի, Վասն Վարդանաց և Հայոց պատերազմին», Վենետիկ 1864, եջ 135):

9. Ի նկատի ունենալով, վոր Ցեղիշեյի պատմության Մոսկայի տպագրությունը, վոր հասարակված ե ըստ

«Անձնացեաց» որինակի, Զողկերտի փոխարեն ունի Ցողակերտ (տես «Եղիշէի պատմության Վարդանաց ըստ Անձնացեաց օրինակի», հրատ. Խ. Հովհաննիսյանցի, Մոսկվա 1892, եջ 72), նաև ուշադրության առնելով, վոր Չողկերտը, ինչպես և Ցողակերտը, գտնվել են հին կենտրոնավայր Արմավիրի շրջանում՝ կարելի յե, անշուշտ, յեզրակացնել, վոր Չողկերտը և Ցողակերտը միևնույն ավանի անունն են: Այս ուղիղ հետեւությունն արել են Հյուբշմանը և Բելքը (տես Հ. Հյուբշման, «Հին Հայոց տեղւոյ անունները», թարգմ. Բ. Պիլէզիկձեանի, Վիեննա 1907, եջ 373, 418 և Belck, Beiträge, II, եջ 86):

Հիմնվելով վերոհիշյալ վկայությունների վրա՝ անհավանական չի լինի նաև յենթադրել վոր վերոհիշյալ ավանի իսկական անունը պետք ե յեղած լինի Չողկերտ կամ *Չողակերտ, իսկ Խորենացու Ցողակերտն արդյունք ե, հավանութեն, նրա ստուգաբանական մեկնության՝ Չողկերտ=Ցողակի կերտ=Ցողակերտ:

Խորենացու վերև առաջ բերված վկայությունն առանձնապես կարեւոր ե, վորովհետև այդ վկայության մեջ մատնանշված ե Ցողակերտի հեռավորությունը Փառախոտից՝ «իբր մեծօր հասարակ աւուր միոյ հետեւակագնացի առն ճանապարհի»:

Խորենացու այս նախադասությունը Մ. Եմինը թարգմանել ե՝ «на расстоянии полуудневной ходьбы мужа пешехода» (տես «История Армении Моисея Хоренского», Москва 1893, եջ 21), իսկ Խորեն Ստեփանեն՝ «հետեւակ մարդի մեկ որվան ճանապարհի չափ հեռի» (տես նրա աշխարհաբար թարգմանությունը, Ս. Պետերբ. 1889, եջ 36):¹

¹ Հատուկ ծանոթության մեջ (եջ 39) Ստեփանեն Վենետիկի տպագրության բնագիրը՝ «բացագոյն իբր մեծօր հասարակօրոյ միոյ հետեւակագնացի առն ճանապարհի» համարում ե աղավաղված: Ինը թարգմանել ե ներսես Լամբրոնացու որինակից, վորի բնագիրը տարբեր է՝ «իբր մեծ հասարակ աւուր միոյ հետեւակագնացի առն ճանապարհորդի»:

Վ. Բելքը, վոր Խորենացու այս հատվածը հասկացել են համապատասխան Եմինի թարգմանության՝ Ցոլակերտի տեղը վորոշել են Դաշըռուռուն գյուղից մոտ 7 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք և Բուլաղ-Բաշից (=Փառախոտ) 12—14 կիլոմետր դեպի արևմուտք (տես *Beiträge*, II, եջ 87 և 91): Բելքի այս յեղբակացությունը մեջ են բերված նաև Հյուրշամանի «Հին Հայոց տեղւոյ անունները» աշխատության մեջ (տես *Թթված* Պիետիկայանի, Վիեննա 1907, եջ 418):

Իմ կարծիքով, վերոհիշյալ թարգմանությունները, ինչպես և Բելքի յենթադրությունը, ճիշտ չեն:

Պետինգնյան քարտեզի *Hariza* կայարանի տեղադրության վերոհիշյալ վորոշումը, ինչպես և նույն քարտեզում մատնանշված հեռավորությունը *Փառախոտից* (=Paracata) Ցոլակերտ (=Colocetia), վորոշակի ցույց են տալիս, վոր Խորենացու վկայությունը կարելի յե և պետք են մեկնել այլ կերպ: «Իբր մեծօր հասարակ աւուր միոյ հետեակագնացի առն ճանապարհի» նշանակում են պարզապես՝ «Իբր մեծօր [եւ] հասարակ աւուր միոյ հետեակագնացի առն ճանապարհի», այսինքն՝ «հետեակ մարդու մեկ մեծ որվա և կես որվա ճանապարհի չափ»:

Խորենացու վկայության այս նոր լուսաբանությամբ, ինչպես տեսնում ենք, հաստատվում են Պետինգերյան քարտեզում մատնանշված հեռավորությունը, իսկ քարտեզի հեռավորությունը (33 հոռմեական մղոն կամ մոտ 49 կիլոմետր) կովան են ծառայում իր հերթին Խորենացու վկայության ճշտության:

Պարզվում են, ուրեմն, վոր Զողկերտ-Ցոլակերտը գտնվել են, իրոք, *Փառախոտից* մոտ 49 կիլոմետր հեռավորության վրա՝ վհչ շատ հեռու Կարվանսարայի այժմյան ավերակների վայրից:

10. Այս յեղբակացության դեմ կարող են սակայն լինել առարկություններ¹:

¹ Ա. Խաչատրյանը Կուլտուրայի Պատմության Խոստիտուտում Հայաստանի առերական ու առաջարական ճանապարհների մասին կարդացած

ինչպես վերև տեսանք, Խորենացու նույն վկայության մեջ վհչ միայն մատնանշված են Ցոլակերտի հեռավորությունը *Փառախոտից*, այլև նրա տեղադրությունը «մերձ իլեռան հարաւոյ... առ խորշիւք լեռնոտինն»:

Հիմնվելով հենց այս վերջին վկայության վրա՝ Ցոլակերտի տեղը վորոշել են Բելքը և Հյուրշամանը *Մեծ Մասիսի հայուսիսային* զարդիթափին վրա»:

Արդ ճիշտ ե արդյոք, վոր Խորենացու մոտ *Մասիսը*, վորն անվանված ե «Լեառն հարաւոյ», պետք ել լինի անպայման *Մեծ Մասիսը*, ինչպես սովորաբար յենթադրում են:

Իսձ թվում ե, վոր տիրող ու ընդհանրացած այս կարծիքը վհչ միայն վիճելի յե, այլև անհավանական: Ինչպես դժվար չեն հետեւնել համապատասխան վկայություններից, Խորենացին և հայ մատենագիրները «Մասիս» են անվանել վհչ միայն *Մեծ Մասիս»-ը, այլև յերբեմն նաև Աղբի-դաղլեռնաշղթայի մի մասը:*

Ի նկատի ունենալով այս խնդրի կարեռությունը՝ մեջ ենք բերում մատենագրական բոլոր ուշագրավ վկայությունները՝

1. Ագաթանգեղոս, *Տփղիս 1909, ձԶ, եջ 398*

«Եւ եկն թագաւորն [Տրդատ], ինդրեաց հրաժեշտ ի սրբոյն Դրիգորէ եօթնօրեայ ճանապարհ կալեալ ի վեր ի բարձր լեառն ի Մասիս».

2. *Սեբեոս (Անանուն)*, *Ս.-Պետերբ, 1879, I, եջ 6—7*

«Ի Դամասկոսէ ասեն գնացեալ զՄարսեակն զընդոծինն Աբրահամու փախստական լեալ յիսահակայ, և

իր գեկուցման մեջ փորձում եր, ի միջի այլոց, հիմնավորել իր հետեւյալ թեղիսը՝ Ալբաղատ-Բագավան գծի վրա ընկ. Մանանդյանի՝ Ցոլակերտի զետեղումը նախ Կարակալայում և ապա Խոշ-Խորաբի մոտ՝ բոլորվին հակասում ե Ցոլակերտի համար Խորենացու նշանակած տեղին, ուստի և չի կարող ընդունվել»: Վոր Խորենացու վկայության նրա ավանդական հին մեկնությունը հաստատում ու հիմնավոր չե՝ այդ կըտեսնենք մենք ներքեւ:

- եկեալ բնակեցաւ առ ոտամբ երկուց լերանցն որ հային հանդէպ մեծի դաշտին Արայի, յԱրագած կատար և ի Գեղ լեառն: Եւ անուանէ զերինս յանուն իւր. որում Ազատն կոչեն լեառն».
3. Խորենացի, Տփղիս 1913, I, ԱԱ, եջ 84¹
 «Եւ արդ՝ ոչ արդեօք առաւել աստանօր զարմացիս ի վերայ մերոյ ճշմարտապատմութեանս, թէ որպէս յայտնեցաք զանհայտ իրս վիշապաց, որք են յԱզատն ի վեր ի Մասիս».
4. Նույնը, II, ԽԸ, եջ 175¹
 «Յայնժամ Սմբատայ զծառայսն Երուազայ, զոր գերեացն ի Բագարանէ, տարեալ բնակեցուցանէ ի թիւկանց Մասեաց, ի նոյն անուն Բագարան կոչելով զծեռակերտն».
5. Նույնը, II, ԽԹ, եջ 176¹
 «Եւ իրը տրփանք Սաթինկան ընդ Վիշապազունսն՝ առասպելաբար, այս ինքն ընդ զարմս Աժդահակայ, որ ունին զամենայն առ ստորոտովն Մասեաց».
6. Նույնը, II, ԾԲ, եջ 182¹
 «Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարևելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշական գաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն Արտապ».
7. Նույնը, II, ԿԱ, եջ 192¹
 «Վասն որոյ անիծեալ զնա Արտաշիսի՝ ասաց այսպէս. «Եթե դու յորս յեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս. զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատն ի վեր ի Մասիս. անդ կայցես, և զոյս մի տեսցես».
8. Նույնը, III, ԻԳ, եջ 283¹
 «Ազա ելանէ արքայ զթիկամբք Մասեաց առնել որսս յիւրում սիրեցեալ գաւառին ի կոգայովտի».
9. Նույնը, III ԻԷ, եջ 288¹
 «Ի թիկանց կուսէ լերինն Մասեաց շինեաց [Արշակ] ձեռակերտ [Արշակաւան]».
10. Նույնը, I, Լ, եջ 83¹
 «Բնակեցուցանէ [զԱնոյշ] յարևելեայ ուսոյ մեծի լերինն մինչեւ ի սահմանս Գողթան».
11. Նույնը, I, ԺԲ, եջ 39¹
 «Այլ հարաւայինն արեգակնածեմ լեառն, սպիտակաւ վասո ունելով գագաթն, ուղղորդ յերկրէ բուսեալ... ծեր ոմն արդարեւ լեառն ի մէջ երիտասարդացեալ լերանցն».
12. «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյց», հրտր. Սուքըրյանի, Վենետիկ 1881, եջ 32¹
 «գԴառնանի մինչեւ ցգաւառն կոգովիտ՝ որ յոտինն Ազատ Մասեաց».
13. Նույնը, եջ 34¹
 «զինքն իսկ լեռնագագաթ Մասիս ի հարաւ թողու Երասիս. յորոյ թիկանց տարածեալ կոգովիտ գաւառ».
14. Թովմա Արծրունի, Ս. Պետերբ. 1887, I, Լ, եջ 52¹
 «Ընդգէմ նայեցածն ունելով զմեծ լեառնն Մասիք կոչելով բարձրագագաթն ձիւնալիր սպիտակափառ, իրը զթագաւոր մեծավայելուչ պատուական ալեօք զուարձացեալ ի մէջ ճոխն նախարարութեանց».
15. Նույնը, III, ԻԹ, եջ 254¹
 «Ընդգէմ նայելով լերանցն Այրարատեան Ազատն Մասեաց, ուր Արտաւազոյն Արտաշէսեան քարավիժեալ խոհանայր ի կոշտն կոհակին»:
- Այս վկայություններից հինգը (1, 10, 11, 13 և 14), վորոնց մեջ Մասինս անվանված ե «բարձր», «մեծ», «բարձրագագաթ», «եառնագագաթ», «ծեր», «վերաբերվում են, անշուշտ, Մեծ Մասիսին: Յերկու (5 և 6) վկայություններից կարելի յե հետեցնել, վոր Մասիսն այդ վկայություններում կարող ե դարձյալ լինել Մեծ Մասիսը: Մակայն մյուս վկայությունները պարզ չեն և կարոտ են հատուկ քննության:
- Բացատրության կարոտ ե հատկապես՝ թե ինչպես պետք ե հասկանալ Մասիսի Ազատ անունը:
- Խորենացու պատմության թարգմանիչներն «Ազատ»-ը

թարգմանել են «ազատ» (Ստեփանե), «СВОБОДНЫЙ» (Եմին), «noble, аզыр» (Ֆլորիվալ): Նույն այս բառը մանրամասն քննված ե Ֆր. Մուրադի «Ararat und Masis» ուսումնասիրության մեջ (Heidelberg 1901, եջ 52—54) և մեկնված ե իր «վեհ, պաշտելի, սրբազն»:

Սակայն միանգամայն տարբեր ե այս բացատրություններից ֆետտերի լուսաբանությունը (տես «Հայկական աշխատասիրութիւնք հայագէտ Պ. Ֆէթթէրի», թրգմ. Հ. Տաշյանի, Վիեննա 1895, եջ 141):

Հիմնվելով վերև մեջ բերված Կեղծ-Սեբեռոսի վկայության վրա՝ ֆետտերը յենթադրում ե, վոր «Ազատ»-ը վերադիր ածական չե, այլ «Ազատ» ե անվանվել նախագույն ժամանակներում «Մասեաց մէկ մասն, անշուշտ հիւսիսային, երասխահովտին մերձակայ յառաջալերինքը»:

Վոր ֆետտերի այս մեկնությունը հաջող ե ու հարմար՝ այդ ապացուցանում են ըստ իս վհչ միայն Կեղծ-Սեբեռոսի, այլ նաև Թովմա Արծրունու և «Աշխարհացոյց»-ի վերոհիյալ 12-րդ և 15-րդ վկայությունները:

Կեղծ-Սեբեռոսի մոտ (տես վերև վկ. 2) պարզ ասված ե, վոր Մարսյակը «անուանէ զլերինս յանուն իւր, որում Ազատն կոչեն լեառն»: Թովմա Արծրունին ևս վկայում է (վկ. 15), վոր Գագիկ Արծրունին «ի ձուաշուտ ի Գետս աւան շինէ ... զվայելչական տեղի խրախից» «ընդգէմ լերանցն Այրարատեան Ազատն Մասեաց»: Այս վկայություններում, ինչպես տեսնում ենք, «Ազատ» կամ «Ազատ Մասիս» կոչվում են, իրոք, Այրարատյան լեռները: Յեզ հետեւար՝ «Աշխարհացոյց»-ի վկայության մեջ ևս (վկ. 12) «յոտինն Ազատ Մասեաց» հավանական ե մեկնել այն իմաստով, վոր Կոգովիտ գավառը գտնվել ե «Ազատ Մասիս»-ի, այսինքն՝ «Այրարատեան լեռանց» թիկունքում:

Նույն այս մեկնության ապացույց կարող ե լինել նաև վերոհիշյալ չորրորդ վկայությունը: Բագավան ձեռակերտը, ուր բնակեցրել եր Սմբատը «զծառայմն Երուազայ», գտնվել ե իսկապես վհչ թե անմիջապես Մեծ Մասիսի, այլ «Ազատ

Մասիս»-ի կամ «Այրարատեան լեռանց» թիկունքում: Խորենացու այս վկայության մեջ «Մասիս» ե անվանված պարզապես «Ազատ Մասիս»-ը:

Բոլոր այս դիտողությունները ցույց են տալիս, վոր նաև «լեառն հարաւոյ», վորն Ամասիան յուր անվամբ կոչչել եր «Մասիս»՝ կարող ե հասկացվել համապատասխան Կեղծ-Սեբեռոսի վկայության «Ազատ Մասիս» լեռնաշղթայի իմաստով:

Վոր մեր այս յեզրակացությունը միանգամայն ուղիղ ե և հավանական՝ այդ ապացուցվում ե այժմ Պետինգերյան քարտեզի Բագավան-Ցոլակերտ գծի լուսաբանությամբ:

Ցոլակերտը, վորի հեռավորությունը Բագավանից ցույց ե տրված քարտեզում 48 հոռմեական մղոն կամ մոտ 72 կիլոմետր, իսկ Hariza-Արուճից 24 հոռմեական մղոն կամ մոտ 36 կիլոմետր, գտնվել ե պարզապես «առ խորշիւք լեռնոտին» վհչ թե Մեծ Մասիսի, այլ Մասիս լեռնաշղթայի: Յեզ կարևոր այս փաստը զորավոր մի ապացույց ե, անշուշտ, վոր Խորենացու վկայությունը Ցոլակերտի մասին սխալ ե յեղել մեկնված նախորդ ուսումնասիրություններում:

Խորենացու վկայության նոր լուսաբանությունը, ինչպես և Hariza կայարանի նույնացումն այժմյան Արուճի հետ, պարզ ու հաստատուն ցուցումներ են, վոր հնարավորություն են ընձեռում զիտական արշավախմբերին հետախուզումներ կատարելու վերև մատնանշված շրջանում և վերջնականապես ճշտելու Զողկերտ-Ցոլակերտի տեղը:

11. Ցոլակերտի տեղադրության նոր մեկնությամբ և Hariza-յի նույնացմամբ այժմյան Արուճի հետ վերջնականապես վորոշվում ե այն լեռնանցքը և այն մեծ ճանապարհը, վորով շարժվել են դեպի Արտաշատ հոռմեական, բյուզանդական և այլ ոտար զորքերը: Պարզվում ե, ուրեմն, վոր հոռմեական լեռեռնները Պոմպեյոսի, Կորբուլոնի և Ստատիուս Պրիսկոսի առաջնորդությամբ իջել են Արարատյան դաշտ, հավանորեն, Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքով:

Նույն պատմական գծով և Կարվանսարայի լեռնանցքի վրայով պետք է յենթադրել նաև խալդական շրջանում հին Արմավիրի կազը Արածանի գետի հովիտների և խալդական Տուշպա-Ծոսպ մայրաքաղաքի հետ: Ուշագրավ ե այդ տեսակետից, վոր Hariza կայարանի անունը (=*Հառիճ) համարվում է խալդական (հմտե Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien 1930, եջ 51*, ծանոթ. 1), ուստի և այժմյան Արուճը, հավանորեն, գեռես հսագույն շրջանում կարող եր գոյություն ունեցած լինել իբրև խալդական բնակավայր: Աճառյան իր «Հայերէն արմատական բառարանի» մեջ յենթադրում ե, վոր «առիճ», «առինճ» կամ Հառիճ նշանակում ե «գյուղ», սակայն նրա մոտ այդ բառը ստուգաբանված չե և նշանակության կուհումը վիճելի յե և կարոտ ստուգաբանական հիմնավորման¹:

Թուսերեն իմ աշխատության մեջ («Օ торговле и городах Армении», Эривань 1930) մանրամասն յես քննել եյի Հայաստանի առևտրական հին ճանապարհների ուղղությունը զանազան դարաշրջաններում և հանգել եյի այն յեղակացության, վոր հոռմեական շրջանի կարավանների մեծ ճանապարհը, վոր գալիս եր Զինաստանից ու Միջին Ասիայից Եկրատանա և այստեղից Արտաշատ, անցել ե Բագավանի և այժմյան Քեռփրիքեռյի վրայով դեպի Սև ծովի նավահանգիստները: Hariza-յի տեղադրության վորոշմամբ պարզվում ե այժմ, վոր միջազգային նշանակություն ունեցող այդ ճանապարհն ևս իջել ե Բագավան Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքով:

Նույն աշխատության մեջ մենք մատնացույց եյինք արել, վոր Հին Հայաստանի մեծ ու նշանավոր քաղաքները

¹ Ներքի մենք կտեսնենք, վոր Ստրաբոնի հիշած Յաշուածքը՝ ամրությունը Մարկվարտ համապատասխան և համարում մատենագրական հայ աղբյուրների ընթացառիժան: Մարկվարտի այս յենթադրությունից, վոր ինձ հավանական ե թվում, կարելի յե հետեւնել, վոր «հառիճ» կամ «յառիճ» ի նշանակությունը կարող եր լինել վհչ թե «գյուղ», այլ «ամրություն» կամ «բերդ»:

հիմնված են յեղել առևտրական ճանապարհների մոտ: Հին Բագավանի մոտ, ինչպես հայտնի յե Փավստոսի վկայությունից (V, ԽԴ), գտնվել ե Զարեհավան քաղաքը, *Tsumentso-Ծումբ կայարանից հարավ՝ Արծեղ տանող ճանապարհի մոտ՝ Զարիշատը, իսկ Բագավանից Սատաղ գնացող գծի մոտ՝ հին Թեոդոսուալիսը: Այս քաղաքների առևտրական հաղորդակցությունն Արարատյան գաշտի և Արտաշատի հետ վորոշվում ե, գլխավորապես, վերոհիշյալ մեծ ճանապարհով:

*Zolocerta - Hariza գծի հետ միանում եր, հավանորեն, նաև Յերվանդաշատից Բագավան տանող ճանապարհը: Կամսարականի կարծիքով՝ վոր ծանոթ ե այժմյան Սուրմալուի տեղադրական պայմաններին՝ այս ճանապարհը Կարակալեյի ու Կարվանսարայի վրայով ավելի հարմար ե, քան մյուս ճանապարհներն Արասպյոլի և Ասլանլուի լեռնանցքներով: Հավանական ե ըստ այսմ, վոր Յերվանդաշատի ճանապարհը ևս անցել ե Չողկերտ-Ցոլակերտի վրայով Hariza և այստեղից Բագավան: Յերվանդաշատից կա և մի ուրիշ ճանապարհ, վոր գալիս ե Կողը և այժմյան Ղաթրլու գյուղի վրայով բարձրանում Կարվանսարայի լեռնանցքը: Սակայն խիստ կասկածելի յե, վոր այս գծվարամատչելի գիծը լիներ կարավանների մշտական ու բանուկ ճանապարհ:

12. Բագավանից Ցոլակերտ գնացող ճանապարհի ճշշտումը, ինչպես մանրամասն ցույց ենք տալու մի ուրիշ աշխատության մեջ, հասարակություն ե տալիս լուարանելու նաև Քսենոֆոնի ու նահանջող հույների ուղեգիծը:

Մինչև այժմ, ինչպես հայտնի յե, Քսենոֆոնի ու նրա հետ նահանջող հույն զորքերի ճանապարհը վիճաբանության առարկա յե և վերջնականապես դեռ չե պարզված:

Հստ Քսենոֆոնի՝ նահանջող հելեն զորքը մտել եր Արմենիա՝ անցնելով Կենտրիտես գետը (այժմյան Բոհտանսուն): Այստեղից նրանք գնացել են վեց որ, 30 փարսախ, և Տավրոսյան լեռներով իջել են Մշո գաշտն ու հասել մինչև Տելեբոսա գետը (ըստ Մարկվարտի՝ = Մեղ, այժմ՝ Կարասու, տես Untersuchungen zur Geschichte von Eran, Philo-

logus X, erstes Heft, № 237, հմմտե նաև «Հանդէս Ամսօւրեայ» 1906, փետր., № 43): Եարունակելով իրանց ճանապարհը Տելեբռաս գետի մոտից, նրանք գնացել են դարձյալ վեց որվա ճանապարհ, 30 փարսախ, և հասել Յեփրատ գետը, վորն անցել են թրչվելով մինչև պորտ: Հույները լած են յեղել, վոր հեռու չեն այդ տեղից Յեփրատի ակունքները:

Գերմանական գիտնականները, վոր մանրամասն ուսումնասիրել են հույն զորքի նահանջի ճանապարհը, յենթադրել են վոր Քսենոֆոնի մոտ հիշատակված Յեփրատն (Anabasis, IV, 5, 2) Արևելյան Յեփրատն ե՝ հին Արածանին: Դիտնականների մի մասի կարծիքով, Մշո դաշտից հույները շարունակել են իրանց ճանապարհը դեպի հյուսիս կամ հյուսիսարևելք և, անցնելով Յեփրատ-Արածանին, ուղղվել են դեպի Խոնուի դաշտը, իսկ մյուս մասի կարծիքով՝ հույները Մշո դաշտից մտել են Մանազկերտի շրջանը, գնացել այստեղից դեպի հյուսիս և Յեփրատ-Արածանին անցել են այժմյան Ղարաբիլսեյի մոտ ու դուրս յեկել Ալաշկերտի դաշտը:

Պատինգերյան քարտեզի ուսումնասիրությունը, ինձ թվում ե, կարող ե հիմք ծառայել Տասը հազարի նահանջի ճանապարհը յենթադրելու մի նոր ուղղությամբ, վորն ուշադրության չե առնված գիտական նախորդ աշխատություններում:

Ի նկատի առնելով Քսենոֆոնի վերոհիշյալ վկայությունը, վոր հույները Յեփրատն անցել են նրա ակունքների մոտ, նաև նրա այն կարեոր տեղեկությունը, վոր Յեփրատն անցնելուց հետո նրանք շարունակել են ճանապարհը հանքային ջրի մոտով (Anabasis, IV, 5, 15): Կարելի յե հավանական համարել, վոր նահանջող զորքը դուրս ե յեկել դաշտ Բագավան-Դիադիմի շրջանում, ըստ յերեսույթին, այն հին ճանապարհով, վորը մատնամշված ե Պատինգերյան քարտեզում Տիգրանակերտից Բագավան տանող ճանապարհագծում (տես սույն ուսումնասիրության հաջորդ գլուխը): Ուշագրավ ե, վոր հենց այս ուղղությամբ հույներին կարող եր իրոք հանդիպել հանքային ջրի այն աղբյուրը, վոր հի-

շատակված ե Քսենոֆոնի մոտ: Այդ աղբյուրը, հավանողին, հին Ծաղկեռուն գավառում՝ այժմյան Դիադիմի մոտ գտնվող այն հոչակավոր ջերմուկն ե, վորը Փարապեցու մոտ անվանված ե «Վարշակի ջերմուկ» (տես III, ՀԳ, Տփղիս, 1904, № 132):

Վոր նահանջի ճանապարհի այս նոր լուսաբանությունն ավելի ընդունելի յե քան նախորդ յենթադրությունները՝ այդ յերեսում ե նաև Քսենոֆոնի հետագա վկայություններից: Քսենոֆոնի պատմելով՝ հանքային ջրի մոտ գտնվող գյուղերից հույները գյուղապետի առաջնորդությամբ գնացել են յերեք որվա ճանապարհ (մոտ 15 փարսախ կամ 80 կիլոմետր) և հասել Ֆազիս գետի մոտ և ապա յոթը որ շարունակել են իրանց ճանապարհն այդ գետի յերկարությամբ և անցել 35 փարսախ կամ մոտ 185 կիլոմետր (Anabasis, IV, 6, 1-5):

Արդ՝ այս վերջին վկայությունները միանգամայն հասկանալի յեն դառնում, յեթե նահանջի ճանապարհն ընդունենք Պատինգերյան քարտեզի Բագավան-Ցոլակերտ գծով մինչև Արաքս գետը և այսուհետև Արաքս գետի ափերով դեպի արևմուտք: Քսենոֆոնի հիշած Ֆազիս գետը, ինչպես շատ ճիշտ վորոշել են գերմանական գիտնականները (տես H. Kiepert, Lehrbuch der alten Geographie, Berlin, 1878, № 81, նաև Fr. Segl, Vom Kentrites bis Trapezus. Eine Bestimmung des Weges der Zehntausend durch Armenien, Erlangen, № 35), Ռիոնը չե, այլ այժմյան Արաքսը:

Հ. Կիպերտը մատնանիշ ե անում, վոր Արաքսի վերին հոսանքը (չին Հայաստանի Մուրցը, կինչի քարտեզի վրա՝ Եգրի կամ Արագ) այժմ ել կոչվում ե Պասին-սու: Նրա, Սեղլի ու մի քանի ուրիշ գիտնականների յենթադրությամբ՝ հույները Խնուսի դաշտից բարձրացել են Կուլի (Կուլի, Կյոլլի) և այդտեղից Արաքսի յերկարությամբ գնացել են ՄՃնկերտ:

Վերոհիշյալ նոր լուսաբանությամբ՝ Քսենոֆոնյան ճանապարհը վորոշվում ե դաշտայալ Արաքս գետի ափերով,

սակայն այժմյան կուջաղի լեռնանցքով ու Խոշ-Խաբարի մոտով գեղի Արաքս և այնուհետև Ֆազիս-Արաքսի յերկարությամբ գեղի արեմուտք: Իմ նախկին յենթադրությունը¹, վոր հույսերը Բագավան-Դիաղինի շրջանից գնացած պիտի լինեն գեղի Արաքս այժմյան կողի մոտով՝ թվում ե ինձ այժմ անհավանական, վորովհետև Bagauana-*Zolocerta գիծը ճշտիվ վորոշվում ե, ինչպես տեսանք, նոր ուղղությամբ՝ Կարգանարայի կամ Կուջաղի լեռնանցքով:

Քսենոփոնի վկայության մեջ առանձնապես կարեոր ե, վոր Յեֆրատ-Արածանիի դաշտային մասում գտնվող գյուղերից մինչև Ֆազիս-Արաքս գետը հեռավորությունը ցույց է տրված յերեք որվա ճանապարհ, վոր անում ե մոտ 15 ժարասախ կամ 80 կիլոմետր: Այդ հեռավորությունը համապատասխանում է իրապես այժմյան տարածությանը Bagauana-Hariza-*Zolocerta գծով մինչև Խոշ-Խաբարի մոտ և այստեղից մինչև Արաքս:

13. Գայլատու թի արևելյան կողմում գտնվող լեռնաստանը, ինչպես պարզ յերեվում ե Պետինգերյան քարտեզի մեր ուսումնասիրությունից, պատմական առաջնակարգ նշանակություն ունեցող մի շրջան ե, վորն Արաբատյան դաշտի պաշտպանության համար յեղել ե, ըստ յերեսույթին, բնական մի պատվար: Այս շրջանի ուղղմական ու ստրատեգական բացառիկ կարեռությանը պետք ե վերագրել, վոր այստեղ գրեթե յուրաքանչյուր քայլափոխում հանդիպում են բերդերի ու այլ կառուցվածքների բազմաթիվ ավերակներ, վորոնք սակայն կարու են դեռ պատմական ու հնագիտական լուրջ ուսումնասիրության:

Թե վնրքան հետաքրքիր են ու կարեոր այս կողմերում գտնվող հսությունները՝ այդ յերեսում ե Ս. Հայկունու մի քանի համառոտ ու թռուցիկ տեղեկություններից նրա «Բագրեսանդ ջրաբաշխ գավառ» աշխատության մեջ, վոր ներքեւ

¹ Տես «Հայաստանի հին ճանապարհները», Տեղեկագիր Գիտ. և Արվ. Խստիուտի № 5 (1930), եջ 73:

բերում ենք ամբողջությամբ (Վաղարշապատ 1894, եջ 363—364):

«Կուլար գիւղին ½ քիլոմետր հիւսիս կայ Նորելուկ ուխտատեղին. նաև 1 ժամ յարևելա Ղաթրու գիւղն և որոյ մօտ գտնուած մի ողի վերան թուխ Մանուկ, ուր միշտ ուխտի կը գնան, իսկ համբարձման մեծ բազմութեամբ: Այս ուխտատեղին քիչ բարձր կայ հինաւուրց մի բերդ հսկայ և կոշտ քարերէ շինուած: որ ուսի մէջը մօտ 200 տան աւերակ, իւրաքանչիւր տան մօտ հորեր, միջավայրն մի տափարակ սալայատակուած վայր: Սորա կողերու վերան գտնուած են քանի տեսակ նետի սլաք և հին դրամ:

Այս գիւղի ½ ժամ հարաւն ևս կայ Աշխինիւսէին անունով Եղտի բնակ գիւղն, որոյ մօտ գտնուած բլուրի գագաթն ևս աւելի մեծ բերդ և աւերակներ կան. բերդի յարևելս՝ ստորոտին մօտ մի արտի մէջ գտնուած էր բազմաթիւ պղնձեայ հին դրամներ, տեսակ տեսակ, որոց ոմանք կլայեկուած էին: Այս դրամներն որպէս այլ դրամներ ամփոփած էի, և մտադիր էի այստեղ որոց պատկերն ներկայացներ, դժբախտաբար այս ամրան կողպատեցին:

Այս կողմերն այս տեսակ հին բերդօրայք շատ կան, մանաւանդ երկու Գանձակներու, Ագարակի և Ղուրու-Աղածի միջավայրն, Սինէկայ ջրի աջ բարձրութեան վերայ եղած Փարչիսի գիւղն, որոյ վերևն կայ մի անհպելի հին և կոշտ քարերէ շինուած բերդ, ուր կապաստանէին, կասեն, կողբայ և շրջակայ գիւղօրայքն գըտնուած թուրք և հայ հասարակութիւնը՝ երբ լեզկիներու յարձակումը կը լինէր այս երկրի վերան»:

14. Հայկունու նկարագրած բերդերի այս շրջանում՝ կուջաղի լեռնային ճանապարհի շրջապատում՝ կարելի յենթադրել ըստ իս Տակիտոսի հիշատակած Volandum ամբոցի տեղը:

Այս յենթադրությունը հավանական և դառնում այժմ,

Վորովիետե Կորբուլոնի 58 թվի արշավանքը դեպի Արտաշատ վորովիում և համաձայն Պատինգերյան քարտեղի մեր նոր լուսաբանության վհչ թե «Դիաղինի և Բայզիդի կիրճերէն», ինչպես մինչ այժմ յենթադրել են (հմտե Դր. Վելներ Շուր, «Ներոն կայսեր արևելյան քաղաքականությունը», թրգմ. Հ. Մ. Հապողյանի, Վիեննա 1930, եջ 27), այլ Վագասա—Hariza—*Zolocerta գծով և Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքով:

Վոլանդ ամրոցը (castellum Volandum), ինչպես կարծում են¹, նույն այն վայրն ե, վորը Ստրաբոնի մոտ (XI, 14, 6) անվանված ե Ոլանե ('Օլանդ'):

Ավելորդ չեմ համարում մանրամասն մեջ բերել այս ամրության մասին Տակիտոսի և Ստրաբոնի կարեւոր վկայությունները, վոր սխալ են հաճախ հասկացված պատմագիտական յերկերում²:

1. Tacitus, Annales, XIII, 39:

«Յեկ Կորբուլոնը, վորպես զի կոփս իզուր չձգձգվի և վորպես զի հարկադրե հայերին պաշտպանելու այն, ինչ վոր իրանցն եր՝ վորոշում և վոչչացնել նրանց ամրությունները: Իսքը վերապահում ե իրան ամրություններից ամենազորեցն այս շրջանում, վոր անվանվում եր Վոլանդ. իսկ ավելի փոքրերը հանձնարարում ե վոր գրավեն լեզար Կորնելիուս Ֆլակուսը և բանակատեղիի պրեֆեկտ Խոստեյուս Կապիտոնը: Յերեք ամրությունները միևնույն որը նվաճելուց հետո՝ մյուսներն անձնատուր են լինում բնակչության ահարեկման պատճառով և վոմանք հոժարակամ: Այնուհետև Կորբուլոնը լիահույս եր, վոր կարողանալու յե հարձակվիլ Ար-

¹ Հմտե Ածոն, Արմենիա և էպոխա Յուստինիանա, СПБ. 1908, եջ 16, Վ. Շուր, «Ներոն կայսեր արևելյան քաղաքականությունը», եջ 28 և այլք:

² Տես, որինակ, Dolens et Khatch, Histoire des anciens Arméniens, Genève 1907, եջ 171, վորի մեջ մատնանշված ե, վոր Կորբուլոնն Արաքս գետն անցել և Արտաշատ քաղաքի պարիսպների մոտ (?!):

տաշատի վրա, վորը յերկրի մայրաքաղաքն եր: Բայց սակայն նա լեզենները չի տանում ամենամոտ ճանապարհով: Վորովիետե՝ յեթե նրանք Արաքս գետը, վորը վողողում եր քաղաքի պարիսպները, անցնելու լինելին կամուրջով՝ կընկնելին թշնամու հարվածի տակ. ուստի և անցնում են գետը հեռվում՝ լայն ու ընդարձակ ծանծաղուտով»:

2. Strabo, Geographica, XI, 14, 6:

«և վհչ շատ հեռու քաղաքից [Արտաշատից] գտնվում են Տիգրանի և Արտավազի գանձերի պահեստատեղերը, վոր բնական ամրություններ եյին՝ Բարիւրանն (Յաթօրչա)¹ և Ոլանեն ('Օլանդ'): Կային և ուրիշ նման տեղեր Յեփրատ գետի վրա»:

Այս վկայությունից պարզ յերեսում ե, վոր Վոլանդ ամրության տեղը պետք ե յենթադրել «վհչ շատ հեռու» Արտաշատ քաղաքից և այնպիսի մի շրջանում, վորտեղ իրար մոտ են գտնվել մի շարք ամրություններ:

Վոլանդի այս տեղադրությանը պարզապես հակասում են Գաթըրճյանի և Աղոնցի յենթադրությունները: Գաթըրճյանը, ինչպես հայտնի յե, Volandum-ը նույնացրել եր Վանանդի հետ (տես «Տիեզերական պատմութիւն», հատոր Բ, Վիեննա 1852, եջ 113), իսկ Աղոնցը՝ Մամիկոնյանների Ողական բերդի հետ, վորը գտնվում եր Տարոնում Յեփրատ-Արածանու վրա (տես Արմենիա և էպոխա Յուստինիանա, եջ 16, ծանոթ. 2)²: Նրանք ի նկատի յեն ունեցել, ըստ յերեւյթին, Վանանդ, Ողական և Վոլանդ, Ոլանե տեղանունների հնչյունական նմանությունները, վոր միանգամայն կասկածելի յեն և, անշուշտ, պատահական:

¹ Ստրաբոնի այս Յաթօրչա-ն կարող ե համապատասխան լինել Պառլեմեյոսի Յաթօրչ-յին, վորը նրա մոտ գտնվում ե վհչ շատ հեռու Ծայսառա-ռա-յից (= Բագավան) և Ծոյռա՛ք-յից (= Ջողկերտ), տես Z. Khanzadian, Atlas historique, Paris 1920, carte № 8,

² Աղոնցից առաջ նույն այ կարծիքը հայտնել են նույնպես Դիլենսը և Խաչը «Histoire des anciens Arméniens» աշխատության մեջ (տես եջ 170, ծան. 3):

Վերոհիշյալ կարծիքներն անընդունելի յեն նաև այն պատճառով, վոր Կորրուլոնի արշավանքի ճանապարհը հաշվանական և յենթադրել վհչ թե Վանանդի կամ Տարոնի միջով, այլ Բարձր Հայքից դեպի Ալաշկերտի գաշտը (տես Վ. Շուր, «Ներսն կայսեր արևելյան քաղաքականությունը», եջ 27 և, մասնավորապես, ծան. 22) և այնուհետև Bagauda—*Zolocerta ուղեգծով¹:

Արդ՝ ի նկատի ունենալով նրա ճանապարհի այս ուղղությունը՝ կարելի յե, բնականաբար, յենթադրել, վոր Կորրուլոնը՝ առաջ քան Արտաշատի վրա հարձակվելը՝ պետք և նախապես նվաճեր Գայլատու լճի արևելյան կողմերում գտնվող այն ամրությունները, վորոնք ստրատեգական և պաշտպանողական կարևոր գիրքեր եյին Արարատյան դաշտի և Արտաշատի թիկունքում: Վ. Շուրի յենթադրությունը, վոր Volandum-ը և մյուս «յառաջաբերդերը գտնվել են իգտիրի մոտ» (տես եջ 28)¹ ըստ իս վիճելի յե ու անհավանական: Հոռմայեցիների գրաված ամրոցների տեղերը, վորոնք գտնվել են իրար մոտ և յեղել են բնական ամրություններ, կարելի յե յենթադրել, ամենայն հավանականությամբ, Կարգանսարայի կամ Կուշաղի լեռնային դժվարամատչելի շրջանում, վորտեղ այժմ ևս կան բերդերի բազմաթիվ ավերակներ:

Հենց այստեղ, հավանորեն, այս ամրացրած փակ ու ապահով լեռնաստանում կարող եյին լինել և Ստրաբոնի

¹ Սիսալ ե ըստ այսմ նմանապես Ա. Խաչատրյանի վերոհիշյալ զեկուցման հետեւյալ թեզիսը՝ «Կորրուլոնը մտել ե Հայաստան — դրում է Խաչատրյանն իր թ-րդ թեզիսում — ամենայն հավանականությամբ Մելիտենեյից, վորը կայանն եր հոսմեական լեզեռնի նա Արածանա հովտով բարձրացավ Տարոն, ուր գրավեց Վոլանդ (Ողական) բերդը և առաջացավ Բագավան — Դիագին, վորտեղից նա կարող եր Դուշաղի լեռնացքով կամ Արծափ-Որդովի վրայով, վորով 7-րդ դարուն անցան արաբները, իջնել Այրարատ և դիմել Արտաշատի վրա Արաքսի աջ կողմից»:

Հիշատակած Արշակունիների գանձապահ ամրությունները (ՂՃ.օչյ.հ.շ.ւ.):

Վոլանդը և մյուս ամրոցները նվաճելուց հետո՝ Կորրուլոնի առջև բաց եր «արքունի պողոտայն» մինչև Արտաշատ:

Սակայն նա, ինչպես վկայում է Տակիտոսը, վտանգավոր եր համարում անցնել Արաքսը Արտաշատի մոտ գտնվող կամուրջով. ուստի և՝ փոխանակ ուղիղ ճանապարհով գնալու Արտաշատ՝ անցնում ե գետը հենվում լայն ու ընդարձակ ծանծաղուտով» և Արտաշատի վրա հարձակվում ե վհչ թե Արաքսի աջ կողմից, ինչպես վոմանք յենթադրել են, այլ պարզապես ձախ կողմից:

Արաքսի անցանելի այս հունը չպետք ե, իհարկե, յենթադրել Արտաշատի պարիսպների մոտ, ինչպես Տակիտոսի վկայությունից սխալ յեղբակացրել են Դոլենսը և Խաչը (տես վերև եջ 42, ծան. 2), այլ այդ հունը, հավանորեն, Վարդանակերտ ավանի մոտ գտնվող այն ծանծաղուտն ե, վոր հիշատակված ե նաև հայկական աղբյուրների վկայություններում:

Այդ հիշատակություններից կարևոր են, մանավանդ, Սեբեոսի և Ղեոնդի հետևյալ տեղեկությունները՝

1. Սեբեոս, Ա. Պետերբուրգ 1879, Գլ. հԶ, եջ 94՝

«Յայնժամ առեալ Երակի զզաւրս իւր՝ դարձաւ յերկիրն Հայոց, անցեալ ընդ Շիրակ հասանէ ի հուն գետոյն Երասխայ, և անց ընդ գետամն առ Վարդանակերտաւն աւանաւ, երթեալ թափեցաւ ի Գոգովիտ գաւառ»:

2. Ղեոնդ, Ա. Պետերբուրգ 1887, Գլ. Ը, եջ 24՝

«Եւ նոքա [նախարարք Հայոց] գնացեալ ընդ եզր գետոյն Երասխայ՝ անցանէին ընդ սահմանս Ուղայէոյ և հասանէին ի մեծ աւանն Ակոռի: Խոկ զօրքն իսմայելի, որ էին ի Նախջաւան քաղաքի՝ յարձակեցան զկնի նոցա և ոչ մեկնեցան ի հետոց նոցա. քանզի էին աւելի քան ԵՌ, և կամէին կենդանւոյն կլանել զնոսա: Եւ իրու ազդ եղե զօրուն Հայոց վասն հինին, որ զարթուցեալ գայր ի վերայ նոցա՝ յարուցեալ անցին ընդ

գետն Երասխ, և բանակեցան ի Վարդանակերտն աւանի. և զօրն Տաճկաց պնդեալ գայր զինի նոցա»:

Հմմտե նաև Հովհաննես Դրասխանակերտցի, Թիֆլիս 1912, էջ 95. Ասողիկ, Ս. Պետերբուրգ 1885, II, գլ. Բ, էջ 101 և գլ. Դ. 123—124. Վարդան, Վենետիկ 1862, էջ 71 և Կիրակոս Գանձակեցի, Թիֆլիս 1910, էջ 62:

Կորրուլոնի 58 թվի արշավանքի մատնանշած այս ճանապարհը, ինչպես և Վոլանդ ամրոցի վերոհիշյալ տեղադրությունը, թվում են ինձ ավելի հիմնավոր ու հավանական, քան մինչ այժմ առաջարկված մյուս բացատրությունները:

15. Պետինգերյան քարտեղի մանրախույզ քննությամբ ճշտվում են, ինչպես տեսնում ենք, Artaxata—Bagauna գծի վրա գտնվող բոլոր կայարանները՝ Artaxata=Արտաշատ, Paracata=Փառախոտ, Colocenia (Ռավեննացու մոտ՝ Zotozeta)=Չողկերտ, Ցոլակերտ, Hariza=Արուճ, * Հառիճ և Rau-gonia (Ռավեննացու մոտ՝ Ragauna)=Բագաւան:


Մեր քննությունից յերկում ե նույնպես, զոր ճիշտ պիտի լինեն, ընդհանուր առմամբ, նաև քարտեզում մատնանշված տարածությունները:

Մութ ե մնում սակայն Չողկերտ-Ցոլակերտի տեղադրության ինդիքը կուջաղի լեռնանցքի ճանապարհում, ուստի անհրաժեշտ ե հետագայում ուղարկել մեր մատնանշած շրջանը գիտական հատուկ արշավախումբ և ուսումնասիրել ու ճշտել տեղում թե այս ինդիքը և թե, ընդհանրապես, այն վայրերն ու ճանապարհները, վորոնք կարող են վերջնականացնել պարզել այս ին ճանապարհի ուղղությունը:

Մացնենք այժմ այս գծի շարունակությանը:

16. Bagauna-Բագավան հանգուցային կայարանից, ինչպես վերև ասվեց, մի առանձին գծի գնում եր Սատաղ:

Այդ գծի ուղղությունը, ինչպես տեսանք, կոնրադ Միլչերը յենթադրել ե Սուուկ-առ գետի մոտից այժմյան Աղելշեվազ—Խլաթ—Աղվերան—Սընկառիջ—Աշկալայի վրայով, իսկ Բ. Կիպերտը՝ այժմյան Պարնաստից կաղզվան—



Սարիդամիշ — Կարառուրգան — Քեռփրիքեռյ — Իլիջա — Բագաս-
ռիճի վրայով:

Այդ յերկու ուղղությունն ել չեն կարող, բնականաբար,
ճիշտ լինել վորովհետև Միլիերի ու Կիպերտի մոտ սխալ ե
վորոշված Bagauua-Բագավանի տեղը:

Bagauua հանգուցային կայարանը, ինչպես վերև տե-
սանք, գտնվել ե այժմյան Ուչքիլիսեյում, ուստի այս ճա-
նապարհի ուղղությունը վորոշվում ե Բագավանից դեպի
արևմուտք Հայկական Պար կամ Աղբի-դաղ լեռնաշղթայի հա-
րավային կողմով: Ինչպես հայտնի յե, այժմ ել հենց այդ
ուղղությամբ՝ Բագավանի ու Դիադինի վրայով անցնում ե
կարավանների մեծ ճանապարհը, վոր Տրապիզոնից ու Եր-
քրումից գնում ե Պարսկաստան:

Բացի Bagauua-Բագավանից և Satala-Սատաղից վերև
հիշված կայարաններից մինչև այժմ վորոշված ե յեղել այս
գծի վրա միմիրայն Adconfluente կայարանը, վորի հեռավո-
րությունը Սատաղից յեղել ե ըստ Պետինգերյան քարտեզի
169 հոռմեական մղոն կամ մոտ 250 կիլոմետր, իսկ Բագա-
վանից՝ 133 հոռմեական մղոն կամ մոտ 197 կիլոմետր:

Ավելորդ չի լինի այստեղ մատնանշել, վոր Adconflu-
entes լատիներեն բառը նշանակում ե «գեպի գետախառնուրդ»
կամ «գետախառնուրդի մոտ», և վոր Պետինգերյան քարտե-
զում Adconfluente և Barantea կայարանների միջև նկար-
ված ե իրոք մի գետ, վորը գալիս ե հյուսիսից և անցնում
Barantea-յի մոտով գեպի հարավ:

Ռ. Կիպերտի կարծիքով՝ Adconfluente կայարանը գըտ-
նվել ե այժմյան Քեռփրիքեռյում, ուր իրար են խառնվում
ին Մուրցը և Արաքսը: Յեզ իրոք՝ յեթե ի նկատի առնենք
վերև առաջ բերված տարածությունները Սատաղից և Բա-
գավանից մինչև Adconfluente՝ այս կայարանի տեղը հա-
մաձայն Պետինգերյան քարտեզի նկարի կընկնի թեև վհչ
Քեռփրիքեռյում, սակայն մոտավորապես Երզրումի և Քեռփ-
րիքեռյի միջև: Վոր Ռ. Կիպերտի յենթագրությունը մոտա-
վորապես ճիշտ ե՝ այդ պարզ ցույց են տալիս, ինչպես

ներքե կըտեսնենք, նաև մեր դիտողությունները, վոր վե-
րաբերվում են Calcidava (Ծավինսացու մոտ՝ Chalchidara) և
Armanas կայարանների տեղադրության:

17. Արտաշատից Սատաղ տանող ճանապարհին Բագա-
վանից մինչև Adconfluente նշանակված են Պետինգերյան
քարտեզում հետևյալ կայարանները՝ RAUGONIA (Ծավինսա-
ցու մոտ՝ Ragauna=Բագավան) 24 Colchion 24 CHADAS
17 Armanas 12 ANDAGA 26 Barantea 30 Adconfluente:

Այս կայաններից Chadas-ը, վորի մոտ նկարված են զույգ
աշտարակներ, գտնվել ե, ինչպես տեսնում ենք, Բագավա-
նից 48 հոռմեական մղոն կամ մոտ 71 կիլոմետրի վրա: Ու-
րեմն՝ միանգամայն պարզ ե, վոր Ուչքիլիսեյից Քեռփրի-
քեռյ գնացող ճանապարհի վրա Chadas-ի տեղը լինելու յեր
այժմյան Ալաշկերտի դաշտում: Իսկ նրա մոտ նկարված
զույգ աշտարակները ցույց են տալիս պարզապես, վոր Chada-
s-ը յեղել ե այս դաշտում կենտրոնական ու կարևոր մի
վայր:

Պետինգերյան քարտեզի հենց այս ցուցումները կարող
են, իմ կարծիքով, կովան ծառայել վորոշելու Chadas-ի
տեղադրությունը համոզի հավանականությամբ:

Աշխարհագրական հարկանցի իսկ քննությամբ դժվար
չե պարզել վոր պատմական հնագույն շրջանում նշանափոր
կենտրոնատեղի յե յեղել Ալաշկերտի դաշտում այժմյան
Խաստուր գյուղը, վորը ոռուական տասը վերստանոց քար-
տեզի վրա անվանված ե Խանզիր, իսկ Լեման-Հառուպտի մոտ՝
Chazdar (տես «Արմենիայի պատմություն» 1931, եջ 742):

Լեման-Հառուպտի կարծիքով՝ Chazdar գյուղը, վորի մոտ
գտնված ե Մենուասի խարդական արձանագրությունը, հա-
մարվելու յե Ալաշկերտի շրջանի հնագույն քաղաքը: Վոր
նրա այս յենթագրությունն ավելի քան հավանական ե՝ այդ
յերեսում ե Խաստուր գյուղի մասին Հայկունու հաղորդած
տեղեկություններից:

, Կարևոր այս վկայություններից ավելորդ չեմ համա-

բում քաղվածորեն մեջ բերել մի քանի հատվածներ, վորոնք հաստատում են Լեման-Հառուպտի կարծիքը.

Տես «Բագրևանդ Ջրաբաշխ գաւառ», Վաղարշապատ, 1894.

1. «Ալաշկերտի դաշտային մասն, որ մօտ 100 գիւղերէ կը բաղկանայ ոչ մի վայր բերդի հետք չերեկիր, բաց ի Խաստուր գիւղէ, որ դաշտիս արևմտեան կողմն բարձր դաշտային վայր մի գրաւած է, ուր կերեին հին բերդի հետքեր և մէջը գտնուած է բնեռագրով քառակուսի մի քար» (եջ 17).
2. «Գիւղիս շրջականերն տասնի չափ ջրաղացքներ կան, որոց շուրջն նաև առուներու եղրն ուռի և բարտի ծառեր բարձրացած են, բազմաթիւ պարտէզներ և բանաջարանոցներ գիւղիս շուրջն կան՝ ցանկով պատաժ։ Մի մեծ ջրուղի հանուած է Շեռեանայ գլխից, որով արտօրայք կոռոգուին։ Այս ջրուղին շատ հին է, $2\frac{1}{2}$ ժամ գիւղէս բարձր Շեռեանայ ձախ ափէն ջուրը հանուած է դեպի արևելք» (եջ 179).
3. «Ըստ աւանդութեան գիւղս ի հսումն քաղաքի մի տարածութիւն ունէր, վորպէս տեղ տեղ նշաններ կերեին» (եջ 180).
4. «Նաև ծերք կը պատմեն թէ եկեղեցւոյ խորանից [Ս. Աստուածածին] դեպի հիւսիսային յարելս մի կամար կար և թէ այս կամարը 150 մեթր երկայնք ունէր, որոյ վերայէն ևս ճանապարհ կար՝ գիւղացիք իրենց գործին գնալու համար. կամարի տակ ևս երկաթեայ դռներ կային զինուորաց երթևեկութեան համար։ Այս կամարը բռնած էր իր պարիսպներու շարունակութիւնով գիւղիս հիւսին։

Այս կամարի հարաւ արևմուտք, այժմեան գիւղի միջավայրը 5—6 տարի առաջ կը տեսնուէր մի աշտարակ «Խանըմի քօշք» անուամբ. նաև սորա շուրջն գըտնուած են ներկարարի կարամներ, ամբարներ և կրպակի հետքեր. շուկայն Խանըմի քօշքից մինչև երկաթեայ դռներուն մօտ տարածուած էր.

Նաև այս քօշքի մօտ այգան (դահլիճ) մի կար, որ 6—700 մարդ կը պարունակէր, և գեռ 1880—85 թուականներուն կիսականգուն էր։ Նոյն աշտարակն հայ կաթողիկք քանդեցին ու տեղը եկեղեցի շինեցին, որուն արդէն ականսատես եղած եմ։

Այս աշտարակի տեղն գտնուած է մի բնեռագիր արձանագրութիւն, մի հատ ևս Թուխ Մանուկից¹ բերուած էր, որոնց մէկն անյայտացած էր, միւսն Թ. գալէի վարժարանի որմի մէջ հիւսել տուած եմ» (եջ 184—185).

Բոլոր այս վկայություններն ապացուցում են, անշուշտ, վոր Խաստուրը կամ Chazdar-ը, վորը գտնվում ե կարավանների այժմյան մեծ ճանապարհի մոտ, նշանավոր հին կինտրոնավայր և և բնակելի յե յեղել ըստ յերեւելթին, անգամ խալբական շրջանում։

Chadas կայարանի տեղադրությունն այժմյան Խաստուրում ապացուցվում ե, բացի այդ, նրանով, վոր Պետինգերյան քարտեզում մատնանշված հեռավորությունը Bagaua կայարանից մինչև Chadas ճշտիվ համապատասխանում ե այժմյան տարածությանն Ուչշքիլիսեյից մինչև Խաստուր։

Միակ առարկությունը մեր նույնացման դեմ կարող ե, իհարկե, այն լինել, վոր Chadas տեղանունը դժվար ե լեզվաբանորեն համապատասխան ընդունել այժմյան Խաստուր, Խանզիր, Chazdar նոր անուններին։ Սակայն այս հանգամանքն առանձին մի խոչընդուռ չե, վորովհետև մատնանշված տեղերի նույնացման համար միանգամայն բավարար են վերոհիշյալ ապացույցները։

Chadas կայարանի անվան նկատմամբ անհրաժեշտ ե նաև մատնանշել, վոր Մարկվարտի նորերս լույս տեսած ուսումնասիրության մեջ («Die Entstehung der armenischen Bistümer», hrsgg. von Joseph Messina, Հռոմ 1932, տես P.

¹ Թուխ-Մանուկը գտնվում ե Խաստուր գյուղի հարավում՝ Արա գյուղի մոտ և Խաստուրից մոտ 4—5 կիլոմետր հեռավորության վրա։

Peeters-ի գրախոսականն Աnalecta Bollandiana-jում, T. LI,
Fasc. 1 և 2. Bruxelles 1933, եջ 149—151) հետաքրքիր մի
կարծիք ե հայտնված, վոր Պետինգերյան քարտեզի Chadas
տեղանունը կապ ունի Փավստոսի մոտ հիշատակված «Բագր-
րաւանդայ և Արշարունեաց» Խաղ յեղիսկոպոսի անվան հետ¹:

Մարկվարտի այս լուսաբանությունը, վոր միանգամայն
հավանական ե՝ ցույց ե տալիս, վոր Chadas ընթերցվածը
կարող ե Պետինգերյան քարտեզում աղավաղված չինել և
հայերենում նույն տեղի անունը կարող ե յեղած լինել
«Խաղայ» (տես Ներքե՞՝ Armanas=Արամանայ):

Ավելորդ չի լինի նմանապես մատնանշել, վոր Խորենացու
պատմության մեջ Խաղ անունը բազմաթիվ ձեռագրերում գըր-
ված ե «Խաղդ» (տես Խորենացու պատմության Արեդյանի և
Հարությունյանի հրատարակությունը, Տփղիս 1913, եջ 279,
294 և 296՝ «Խաղդ» և «Խաղդեայ»): Եթե ճիշտ լինեն
այս ընթերցվածները՝ այդ դեպքում Chadas-ի հին անունը
կարելի յե յենթադրել հայերենում նաև «Խաղդայ»:

Մեր նոր դիտողությունները Chadas-ի տեղադրության
մասին ուշագրավ են առանձնապես այն տեսակետից, վոր
Պետինգերյան քարտեզում մատնանշված կայարանները, ինչ-
պես կըտեսնենք այդ նաև այս ուսումնասիրության շարու-
նակության մեջ, վորոշվում են հաճախ այնպիսի տեղերում,
վորոնք պատմական հին վայրեր են և բնակելի յեն յեղել,
հավանորեն, խալդական տիրապետության հնագույն շրջա-
նում:

18. Chadas-ից 17 հոռմեական մղոն կամ մոտ 25 կիլո-
մետր հեռավորության վրա Պետինգերյան քարտեզում նշա-
նակված ե Armanas կայարանը:

Աներկբայելի յե, իհարկե, վոր Armanas կայարանը կա-

¹ Ա. Խաչատրյանը Կուլտուրայի Պատմության Խոստիտուտում կար-
դացված իր գեկուցման մեջ (թեղիս 14) Chadas-ը նույնացրել ե այժ-
մյան Զադ գյուղի հետ: Սակայն այս յենթադրությունը հիմնավորված
չէ տեղագրական և լեզվական ապացույցներով, ուստի և չե կարող ըն-
դունվել:

տարելապես համապատասխանում ե Հին Հայաստանի «Արա-
մանայ» գյուղին, վորը հիշվում ե Ղազար Փարպեցու պատ-
մության մեջ¹:

Ղազար Փարպեցին պատմում ե, վոր Վարդան Մամի-
կոնյանն ուզեցել ե ապստամբությունից առաջ անցնել Բյու-
զանդական կայսրության կողմերը:

«Եւ եկեալ հասանէին — ասում ե նա — ի գիւղ մի,
որոյ անունն էր Արամանայ, ի նահանգին Բագրաւան-
դայ, մերձակայ սահմանակից Բասենոյ և Տուարծատա-
փու. ուր և սակաւ ինչ աւուրս կամեցեալ հանգչել, և
զուշ եղեալ ճանապարհն գնալ պատրաստէին ստիպով»
(տես «Ղազարայ Փարպեցոյ, Պատմութիւն Հայոց»,
Տփղիս 1904, II, գլ. I, եջ 57):

Փարպեցու այս վկայությունը պարզ յերեսում ե, վոր
«Արամանայ» գյուղը գտնվել ե այն հին ճանապարհի վրա,
վորը Հայկական Պար կամ Աղբի-դաղ լեռների հարավային
կողմերով գնում եր Հունահայաստան: Փարպեցու վկայու-
թյան մեջ կարեոր ե նաև այն, վոր «Արամանայ» գյուղի
տեղը ցույց ե տրված Բագրեանդ գավառի արևմտյան ծայ-
րում՝ Բասենի ու Տուարծատափի սահմանների մոտ:

Արդ՝ ի նկատի առնելով Փարպեցու, ինչպես և Պետին-
գերյան քարտեզի ցուցումները՝ դժվար չե յեղրակացնել,
վոր Armanas—Արամանայի տեղը լինելու յեր այժմյան Խալ-
յագում և Շեոյան գետի ձախ կողմում՝ Chadas—Խաստուրից
դեպի հյուսիս-արևեմուտք գնացող մեծ ճանապարհի շրջա-
կայքում:

Բացի այդ, նույն աղբյուրների վկայություններից պարզ
ու վորոշ հետևում ե, վոր հին Տուարծատափը գտնվել ե

¹ Վոր Armanas կայարանը համապատասխանում ե «Արամանայ»
գիւղին՝ այդ ակնարկված ե նաև պրոֆ. Մարկվարտի «Le berceau
des Arméniens» հոդվածում (անս Revue des études arméniennes, Paris
1928, VIII, fasc. 2, եջ 227), վորը ստացվել եր Յերևանում իմ «Հայա-
ստանի հին ճանապարհները» տպագրության հանձնվելուց հետո (տես
ընդարձակ իմ ծանոթությունը Գիտ. և Արվ. Ինստիտուտի Տեղեկագրում,
№ 5, եջ 83):

թե այժմյան Անդավում, ինչպես յենթադրել ե Հայկունին (տես «Բագրեանդ ջրաբաշխ գաւառ», եջ 303), այլ այժմյան Շեռյան լեռների և Մերգեմիրի լեռնանցքի հարաւային կողմերում (տես Լինչի և Ծուսական հին շտաբի տասը վերստանոց քարտեզները):

Տուարածատափ գավառի նույն այս տեղադրությունը հաստատվում ե նաև Արիստակես Լաստիվերտցու ուշագրավ մի վկայությամբ:

Նկարագրելով Տուղրու սուլտանի արշավանքը Մանաղկերտից գեպի Բասեն՝ Լաստիվերտցին ևս վկայում ե, վոր Տուարածատափի տեղը գտնվել ե Բասենից և «Աւնիկ» ամրոցից գեպի հարավ-արևելք, այսինքն՝ վերոհիշյալ Շեռյան լեռների հարավային կողմերում:

«Յետ երից աւուրց—պատմում ե Լաստիվերտցին—շարժեալ [Սուլտանն] ամենայն բանակաւն, խաղայ իջանէ ի Տուարածոյ տափ, և անտի իջանէ յընդարձակ դաշտն Բասենոյ առ անառ ամրոցաւն որ կոչի Աւնիկ» (տես «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Թիֆլիս 1912, եջ 100):


Վերև մատնանշված մեր նոր յեղրակացությունները, ինձ թվում ե, հնարավորություն են ընձեռելու գիտական արշավախմբերին ճշտելու տեղում թե Արմանաս—«Արամանայի» և թե Տուարածատափի տեղադրությունը:

19. Armanas կայարանից 12 հոռմեական մղոն կամ մոտ

18 կիլոմետր հեռավորության վրա գտնվել ե ըստ Պետինգերյան քարտեզի Andaga (Ռավեննացու մոտ՝ Andacas) կայարանը, վորի մոտ նկարված են զույգ աշտարակներ:

Այս կայարանի վորոշման համար հետաքրքիր ե և ուշադրության արժանի, վոր ոռուսական հին շտաբի տասը վերստանոց քարտեզում այժմյան Կարագերքենտի լեռնանցքից մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա նշանակված ե Թնդեկ գյուղը, վորի անունը նման ե Andaga կամ Andacas կայարանի անվան:

Նույն այս գյուղն Ալիշանն իր «Այրարատ»-ում անվա-



նում և Անդուկ (եջ 30 և 31), իսկ նրա հին անունը համարում է «Անտաք» (եջ 52):

«Նախ Սամուէլ կամրջաձորեցի—ասում է Ալիշանը—ի սմին գաւառէ ի սկիզբն ԺԱ դարու, յիշէ [զիսւարաձորն] առանց նշանակելոյ զվիճակն, բայց զի աստբնակեցան առ ժամանակ մի մեծ վարդապետքն Պետրոս և Անանիա, և յետո գնացին ի նարեկ, իսկ առաջին տեղի բնակության նոցա Անտաք, զոր մարթ էր և զԱնտիռք քաղաք կարծել, ճահագոյն թուի ինձ Անդուկն գեղ յիշեալ ի Հաւումիս» («Այրարատ», եջ 52): Andaga կամ Andacas և վերոհիշյալ Թնդեկ, Անդուկ, Անտաք անունների ակներե նմանությունը պարզ ու փորոշ մի ակնարկ ե, անշուշտ, զոր Բասենի արեվելյան այս շրջանում կարող եր, իրապես, յեղած լինել հնագույն ժամանակներում «Անդակ» անունով մի մեծ կենտրոնավայր կամ զինվորական պահակատեղի:

Սակայն հնագույն այդ «Անդակ»-ի տեղադրությունը դժվար է ըստ իս յենթագրել այժմյան Թնդեկ գյուղում, զորովհետև Պետինգերյան քարտեզում նշանակված տարածությունների համաձայն Andaga կամ Andacas կայարանն ավելի մոտ եր լինելու Արամանային, ինչպես և Բագավանին, քան այժմյան Թնդեկ-ը:

Քարտեզի համապատասխան տարածությունը, ինձ թվում ե, անհամանական կը լինի մերժել կամ սրբագրել, զորովհետև վերոհիշյալ մղոնաթվերի ուշադիր քննությունը ցույց է տալիս, զոր Պետինգերյան քարտեզի մեջ նշանակված տարածությունները, հատկապես Artaxata—Satala ճանապարհագծում, համապատասխանում են գրեթե ճշտիվ այժմյան իրական տարածություններին:

Սույն ուսումնասիրության ընթացքում մենք ստացել ենք նույնիսկ այն տպավորությունը, զոր Հին Հայաստանի այս ճանապարհը, հավանուեն, չափված ե յեղել և ունեցել ե մղոնաքարեր:

20. Andaga (Ռավեննացու մոտ՝ Andacas) կայարանից

և ետո Պետինգերյան քարտեզում նշանակված և Barantea կայարանը, զորի հեռավորությունն Անդագ-յից ցույց է տրված 26 հոռմեական մղոն կամ մոտ 38 կիլոմետր:

Barantea-յի անվան մեր նոր մեկնությունը խիստ կարևոր ե, ինչպես կը տեսնենք, Հին Հայաստանի պատմական աշխարհագրության համար, ուստի և այս խնդիրը անհրաժեշտ է լուսաբանել մանրամասն ու ընդարձակ քննությամբ:

Barantea կայարանի անունը յես առաջարկում եմ սըրբագրել և կարդալ *Banantea: Այս պարզ ու ընդունելի ուղղումից հետո Պետինգերյան քարտեզի Barantea-յին համապատասխան կը լինի, անշուշտ, հայկական վանանդը կամ «Վանանտեա»¹:

Այս լուսաբանությանը չե կարող արգելք լինել *Banantea-յի եա կամ եա վերջավորությունը, զորովհետև Պետինգերյան քարտեզը հայկական տեղանունները տալիս ե գրեթե միշտ հին գրաբարի թեք հոլովների վերջավորությամբ, որինակ՝ Artaxata=Արտաշատա(յ), Bagauna=Բագաւանա(յ), *Tsumbo=Ծումբո(յ) ևն: Պարզ ե ուրեմն, թե ինչու հին Վանանդի անունը ևս հիշատակված է քարտեզում իրեւ *Banantea կամ «Վանանտեա(յ)»:

Լեզվական այս հետաքրքիր փաստը, զորի վրա հրավիրում եմ մասնագետ լեզվաբանների ուշադրությունը, կարու ե, իհարկե, հատուկ քննության:

*Banantea և Վանանդ տեղանունների նույնացումը կարող ե, ինչպես կը տեսնենք, յելակետ ծառայել նաև պատմական-աշխարհագրական կարևորագույն պրոբլեմների լուսաբանության:

21. Խորենացին իր պատմության մեջ ունի, ինչպես հայտնի յե, Վանանդ գավառի հնագույն տեղադրության, նաև «Վանանդ» տեղանվան ծագման մասին, հետեւյալ վկայությունը՝

¹ Ինձինայնի վկայությամբ Վանանդ գավառի անունը «ուրեք ուրեք զրի Վանանդ, որպէս առ Յովհաննու կաթողիկոսի», (տես «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց», Վենետիկ 1822, եջ 491):

«Եւ ինքն [Վաղարշակ] արձակեալ զարևմտեայ բազմութիւն՝ իջանէ ի տեղիս խոտաւէտս մերձ ի սահմանն Շարայի. զոր հինքն Անփայտ և վերին Բասեան կոչէին. իսկ յետո վասն հատուածի Վղընդուր Բուլղարայ Վնդայ, բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորա անուանեցւ Վանանդ. և անուանք շինիցն յանուն եղբարց և զարմից նորա անուանեալ կոչին մինչեւ ցայժմ» (տես II, Զ, եջ 109):

Խորենացու այս վկայության մեջ միանգամայն անհավանական ե, անշուշտ, վսր իբր թե վերոհիշյալ գավառն անվանվել ե Վանանդ բուլղարների առաջնորդ Վունդի անունով: Պատմագիտական նորագույն ուսումնասիրություններից հայտնի յեւ, վոր բուլղար գաղթականներ կարող ելին բնակեցված լինել Լազիկայում կամ թերևս նաև Բարձր Հայքում միայն վեցերորդ գարում, մինչդեռ Վանանդ գավառի անունը հիշատակված ե հայ աղբյունների մեջ հինգերորդ գարում (հմմտե Խալատյանց, Արմանիք Արշակիդա, Մոսկվա 1903, եջ 29—33 և 376):

Նույն վկայության մեջ ուշագրավ ե սակայն Վանանդի մասին Խորենացու մյուս կարեոր տեղեկությունը:

Խորենացին, ինչպես վերև տեսանք, վկայում ե միաժամանակ, վոր հսագույն ժամանակներում Վանանդ ե անվանվել «անփայտ և վերին Բասենը», այսինքն՝ Բասենի հենց այն շրջանը, վորի միջով անցել ե Արտաշատից Սատաղ տանող հին ճանապարհը: Իսկ այս վերջին վկայությունից, վորը վհչ մի հիմք չունենք համարելու անստույդ կամ անարժանահավատ՝ ինքնին արդեն հետևում ե, վոր Պատինգերյան քարտեզի *Banantea կամ «Վանանտեա» կայարանը գտնվել ե վերին այս Բասենում, վորը հսագույն ժամանակներում կարող եր անվանված լինել Վանանդ հնույն այս «Վանանտեա»-ի անունով:

22. Ուշագրավ ե վոր Խորենացու հիշած նույն այս շրջանը վերին Բասեն ե անվանվում հայ և ոտար մատենագրության նաև հետնագույն ժամանակի յերկերում:

Հակոբ Կարնեցին վկայում ե, որինակ, վոր

«ունի սինոռ Բասենս այս վերին մինչեւ ի Զարափիսանան և ի Կաղզուան և ի Թարգմանն» (տես «Տեղագիր վերին Հայոց», հրտրկ. Կ. Կոստանյանցի, Վաղարշապատ 1903, եջ 20):

Նմանապես և քուրդ պատմիչ Շերեֆեդդինը (տես «Այրարատ», եջ 16) հիշում ե նույն վերին Բասենում ծիճագրակ գյուղի վիճակը (տես Ռուսական հին շաարի տասը վերստանոց քարտեզում՝ Կաջարեկ), վորը գտնվում ե Աւլաշկերտի դաշտից երգրում գնացող արքունի այժմյան ճանապարհի վրա՝ Խորասանից դեպի հարավ:

Հենց այս ծիճագրակ գյուղից վհչ շատ հեռու կարելի յեւ յենթալրել *Banantea կամ «Վանանտեա» կայարանի տեղը, վորի հեռավորությունը Adconfluentes կայարանից Պատինգերյան քարտեզում ցույց ե տրված 30 հոռմեական մղոն կամ մոտ 44 կիլոմետր, իսկ Andaga-ից՝ 26 հոռմեական մղոն կամ մոտ 38 կիլոմետր:

23. Վերին Բասենի սահմանները յեղել են, ըստ յերեսութիւն, տարբեր զանազան դարաշրջաններում:

Արիստակես Լաստիվերտցու վկայություններից յերեսում ե, վոր 11-րդ գարում նրա սահմանները համարվել են հյուսիսում վհչ թե վերօհիշյալ «Զարափիսանան, Կաղզուանը և Թարգմանն», այլ Սալքորան: Իսկ այս Սալքորայի մոտ գտնվող հարեան գավառն անվանվել ե Վանանդ կամ Փորակ:

Ուշագրավ են այդ մասին Լաստիվերտցու հետևյալ վկայությունները.

1. «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Թիֆլիս 1912, գլ. Բ, եջ 12:

«Իսկ թագաւորն [Վասիլ] անցեալ ի Բասեան, երկուս և երիս պատգամաւորս առաքէ, և ինքն դէմ եղեալ անցանէ ընդ Բասեանն, և հասանէ ի Վանանդ կամ ի Փորակ»:

2. Նույնը, գլ. Գ, եջ 21—22:

«Ցետ այսորիկ իջանէ թագաւորն [Վասիլ] դօրօք.

Հընդարձակ դաշտն Բասենոյ, և առաքէ հեծեալս ի հ-ե թանոսական զօրացն կալանաւորս ապստամբին Փերսի. և ինքն խաղացեալ հասանէ ի սպառուածն Բասենոյ, ի տեղւո՞ն որ կոչի Սալքորա, և խոր փոսիւ պատնէշ արարեալ շուրջ զրանական՝ դադարէ անդ ամսական աւուրբք կամ ևս առաւելագունիւք»:

Այս վկայություններից յերկորդի մեջ հիշատակված Սալքորան պարզապես այժմյան Սալքորին ե, վորը գտնվում ե Արաքսի ափի մոտ՝ Խորասանից դեպի հյուսիս-արևելք և Մծնկերտից դեպի հարավ-արևմուտք¹ (տես Ռուսական հին շտարի տասը վերստանոց քարտեզի վրա՝ Սալքոր). Իսկ առաջին վկայության մեջ մատնանշված Վանանդը կամ Փուրակը մոտ եր լինելու, անշուշտ, վերոհիշյալ Սալքորային:

Ցեթե Լաստիվերտցու հիշած Փորակը հնարավոր լինի նույնացնել այժմյան Փուրիկի հետ, վորը գտնվում ե Դելի-բարայի հյուսիս-արևելյան կողմերում (տես տասը վերստանոց քարտեզում՝ Պորտ), այդ դեպքում՝ Վանանդ-Փորակը, վորը նույնացվում ե հաճախ հայ մատենագրության մեջ հիշատակված Փոքր Վանանդի հետ², կընկնի այժմյան Քեռվերեցոյ գնացող արքունի ճանապարհից դեպի հյուսիս-արևելք, այսինքն՝ այն շրջանի մոտ, վորտեղ գտնվելու յեր *

*Banantea կամ «Վանանտեա» կայարանը:

Համեմատելով միմյանց հետ Լաստիվերտցու և Խորենացու վերոհիշյալ վկայությունները՝ դժվար չե նաև յեղակացնել, վոր ինը ժամանակներում Վանանդ գավառն ունեցել ե, ըստ յերեսութիւն, ընդարձակ սահմաններ և նրա մեջ ե յեղել, հավանորեն, բացի Վանանդ-Փորակից նաև «անփայտ և վերին Բասենի» հարեւան շրջանը:

24. Barantea-ից հետո Պետինգերյան քարտեզում նշանակված և Adconfluentes կայարանը, վորի հեռավորությունը

¹ Հմմտե Ալիշան, Այրարատ, եջ 36:

² Տես Խնձիճյան, «Ստորագրութիւն Հին Հայաստանեաց», եջ 432, Ալիշան, «Այրարատ», եջ 75—76 և Հյուքման, «Հին Հայոց տեղւոյ անունները», թրգմ. Գիւեղիկճյանի, եջ 419.

Calcidaea-ից (Ռավեննացու մոտ՝ Chalchidara=Գաղտառին) ցույց ե տրված 57 հռոմեական մղոն կամ մոտ 84—85 կիլոմետր:

Ցեղակես ունենալով այս տարածությունը, ինձ թվում ե, կարող ենք Adconfluentes կայարանի տեղը վորոշել ավելի հիմնավոր կերպով, քան այդ արել ե Ծ. Կիպերտը:

Adconfluentes-ի տեղադրությունը վորոշելիս պետք ե, իմ կարծիքով, ուշադրության առնել նաև Պետինգերյան քարտեզի նկարը, վորն Արաքս գետը նշանակել ե Barantea և Adconfluentes կայարանների միջև և վերջին այս կայարանը մատնանշել ե իրոք գետի արևմտյան կողմում գտնվող նախընթաց կայարան՝ Barantea-ից 30 հռոմեական մղոն կամ մոտ 44 կիլոմետր հեռավորության վրա:

Արդ՝ խիստ ուշագրավ ե ու հետաքրքիր, վոր վերոհիշյալ 84—85 կիլոմետր տարածության համեմատ, այժմյան Գաղտառինից Քեռվիթքեռյ գնացող ճանապարհի վրա, Adconfluentes կայարանի տեղը վորոշվում ե իրոք վհչ թե գետախառնուրդի մոտ, ինչպես յենթաղբել ե Ծ. Կիպերտը, այլ քարտեզի նկարի համաձայն՝ իրոք նախընթաց կայարան:

Ի նկատի ունենալով, բացի այդ, վոր վերոհիշյալ տարածությունը Calcidaea-ից մինչև Adconfluentes (=57 հռոմ. մղոն կամ մոտ 84—85 կիլոմետր) համապատասխանում ե այժմյան իրական տարածությանը Գաղտառինից մինչև Հասանդալա՝ անհավանական չի լինի ըստ իս յենթաղբել վոր Adconfluentes կայարանի տեղը կարող եր լինել այժմյան Հասանդալայում:

Տարածությունների վերաբերյալ իմ հաշիվն անհրաժեշտ եմ համարում մեջ բերել ընդարձակորեն:

Այժմյան տարածությունը Աշկալայից մինչև Երզրում կինչի մոտ ցույց ե տրված (տես «Արմենիա», Տիֆլիս 1910, եջ 287) 49^{3/4} վերստ կամ մոտ 53 կիլոմետր: Վորովհետեւ այժմյան հեռավորությունը Գաղտառինից ու Աշկալայի միջև մոտավորապես 7 կիլոմետր ե, ուստի և այժմյան տարածությունը Գաղտառինից մինչև Երզրում լինելու յե 46 կիլո-

մետր։ Հայտնի յե նույնպես, վոր այժմյան տարածությունը երզումից մինչև Հասանղալա 37 վերստ ե, այսինքն՝ մոտ 39 կիլոմետր (տես Ելիզե Ռեկլյու, «Խուսական Հայաստան կամ Արաքսի աւազանը», թրգմ. Միքարանի, Վաղարշապատ 1891, եջ 82): Պարզ ե, ուրեմն, վոր այժմյան հեռավորությունը Գաղտառիձից մինչև Հասանղալա, վոր ընդամենը մոտ 85 կիլոմետր ե, համապատասխանում ե վերոհիշյալ հեռավորության Calcidava-ից մինչև Adconfluente ($= 57$ հոռմ. մղոն կամ մոտ 84–85 կիլոմետր):

25. Adconfluente կայարանից մինչև Calcidava Պետինգերյան քարտեզում նշանակված են հետեւյալ կայարանները՝ Adconfluente 10 Datamisa 20 Tharsidare 15 Autisparate 12 Calcidava (Ռավենացու մոտ՝ Chalchidara):

Այս կայարաններից ճշտիվ վորոշվում ե բացի Adconfluente-ից նաև Calcidava կայարանը¹:

Սատաղից Բագավան տանող ճանապարհին Պետինգերյան քարտեզում նշանակված են յերկու գետ՝ մեկն Արաքս գետն ե — Adconfluente և Barantea կայարանների միջև՝ վորի ուղղությունը սխալ ե ցույց տրված, իսկ մյուսը՝ Յեփրատ գետն ե (այժմյան Կարասոսն), վորն անցնում է Calcidava կայարանի մոտով:

Կոնրադ Միլերը, անտես առնելով այդ գետերի դասավորությունը, վոր բավտկանաչափ պարզ ե և վորոշ, Barantea-ի և Adconfluente-ի միջև անցնող գետը համարում ե Յեփրատ—Արածանին, իսկ Calcidava-ի մոտ հոսող գետը՝ հին Մուրցը, այժմյան Եզրի—Արազը (տես Itineraria Romana, եջ 745–746, նաև նրա բացատրական քարտեզը № 242):

¹ Ա. Խաչատրյանը Կուլտուրայի Պատմության Խնստիտուտում կարգացած իր զեկուցման մեջ (թեզիս 14) վերոհիշյալ Tharsidare կայարանը համապատասխան ե յենթարքում այժմյան «Թասմանը»-ին, վորը գտնվում է Երզումից դեպի հյուսիս-արևելք: Նման համեմատությունները, վոր հիմնավորված չեն լեզվաբանորեն և հակասում են միաժամանակ Պետինգերյան քարտեզում մատնանշված տարածություններին, չեն կարող, ինարկե, ճիշտ լինել ուստի և ակներեաբար անընդունելի յեն:

Սակայն Պետինգերյան քարտեզի նկարից յերեսում ե, վոր Յեփրատ (Կարասոս) գետն անցնելիս են յեղել Calcidava կայարանի մոտ, վորը գտնվել ե այդ գետի աջ ափին, իսկ Արաքսը Barantea և Adconfluente կայարանների միջև, վորոնք նշանակված են Արաքսի աջ և ձախ կողմերում:

Calcidava-ի տեղադրության վերաբերյալ քարտեզի արժեքավոր այս ցուցումը Միլերը և Կիպերտը միանգամայն աշխատող են արեւ, մինչդեռ այդ ցուցման ոգնությամբ պարզ վորոշվում ե Calcidava-ի թե անունը և թե տեղը:

Սատաղից Քեռիկիքեոյ տանող ճանապարհի վրա՝ Արևմտյան Յեփրատի աջ ափին և հենց գետի անցքի մոտ, ինչպես մատնացույց ե արված Պետինգերյան քարտեզում, այժմ իսկ գտնվում ե Գաղտառիձ գյուղը¹, վորը համապատասխանում է Calcidava կամ Chalchidara կայարանին: Ռավենացի Անանուն աշխարհագրի մոտ այս կայարանի անունն ավելի քիչ ե աղավաղված, քան Պետինգերյան քարտեզում:

Calcidava և Chalchidara սխալ ընթերցումները յես առաջակաւմ եմ ուղղել *Chalchdiara կամ *Chalchdiaris և այսպարզ ու հավանական սրբագրությունից հետո՝ *Chalchdiaris-ը², ինչպես տեսնում ենք, թե անունով և թե իր տեղադրությամբ կատարելապես համապատասխան կը լինի Հին Հայաստանի Խաղողյ առիճին, այժմյան Գաղտառիձ գյուղին:

Պետք ե ասել, վոր այժմյան ընդարձակ քարտեզների վրա կան նշանակված իրարից վհչ շատ հեռու յերկու Գաղտառիձ գյուղ (Լինչի քարտեզի վրա՝ Kagdarich, ոռւսական հին շտարի տասը վերստանոց քարտեզի վրա՝ Կյացարի և Կյացարիչ B.): *Chalchdiaris կայարանը մեր կարծիքով, արևմտյան Գաղտառիձն ե, վորը գտնվում ե Յեփրատ գետի,

¹ Տես հնձիճյան Հ. Ղ., «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի», Մասն Ա, Վենետիկ, 1806, եջ 79.

² Ուշագրագ ե, վոր *Chalchdiaris-ի մեջ դ բաղաձայնը տառադարձվել ե Ich: Ռավենացու Chalchidara կարեսը ու հետաքրքիր լնթերցածի վրա հրավիրում ենք մասնագետ լեզվաբանների ուշագրությունը:

այժմյան Կարասուլյի, հյուսիսակողմը և Սերչեմեսուի
արևմտակողմը՝ այժմյան Աշկալայից մոտ 7 կիլոմետր գեղի
հյուսիս-արևելք։ Նույն տեղում գտնվել ե, անշուշտ, և հին
Խաղտոյ առիճը, վորը յեղել ե նշանավոր բերդ։

Խաղտոյ առիճի մասին կարեոր են, գլխավորապես, մա-
տենագրական հայ աղբյուրների հետեւյալ վկայությունները.

1. «Պատմութիւն Արխտակեայ վարդապետի Լաստիվերտ-
ցւոյ», Թիֆլիս 1912, գլ. Գ, եջ 22։

«Իսկ առաքեալքն ի թագաւորէն [Վասիլ] կալեալ
զՓերս և զԱնդրոնիկէ զնորուն փեսայն, որ էր համա-
խորհ նորին, և ածեալ մինչև յամաւըն որ կոչի Խաղտոյ
առիճ ի սպառուածն Կարնոյ, և հասեալ յագարակն՝ որ
հայի ընդդէմ ամրոցին. իջևանս արարեալ, և յառաջ
ածեալ զՓերմն և զԱնդրոնիկոնն՝ հատին զգլուխս նոցա»։

2. Նույնը, գլ. Ժ, եջ 64։

«Քանզի մինչդեռ ճաշաժամուն ի սեղանն էին, հա-
սին կալանաւորք և առին զնա [զհայրապետն Պետրոս],
տարան եղին ի բերդն՝ որ կոչի Խաղտոյ առիճ»։


3. «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիե-
զերական», Ա. Պետերբուրգ 1885, III, ԺԵ, եջ 192։

«և խոստանայ տալ նմա [Կիւրոպաղատին Դաւթի]
զԽաղտոյ-առիճ կղէսուրաւն, զՉորմայրի և զԿարին,
զԲասեան և զՍեւուկ բերդակ, որ է Մարդաղի, զՀարք և
զԱպահունիս, (զորս և ետ իսկ), որպէս զի զօր առա-
քեացէ յօգնականութիւն նմա»։

4. Նույնը, III, ԽԳ, եջ 278։

«Եւ գարձաւ նա [թագաւորն Վասիլ] ընդ Կարին
ընդ Խաղտոյառիճ ի կոստանդնուպոլիս»։

Մեջ բերված վկայություններից առաջինում պարզ աս-
ված ե, վոր «ամուրն որ կոչի Խաղտոյ առիճ» գտնվում էր
«ի սպառուածն Կարնոյ», այսինքն՝ Կարին գալառի սահմա-
նում։ Հիմնվելով այս վկայության վրա՝ Ն. Աղոնցը միան-
գամայն ճիշտ վորոշել ե, վոր հին Խաղտոյ առիճի մոտով
անցել ե Կարին և Դերջան գավառների սահմանը (տես «Ար-



Պատինգերյան քարտեզ—5

мения в эпоху Юстиниана», № 52): *հակ վոր Խաղառյան առիճը գտնվել է Երզրումից դեպի Պոնտոս և Փոքր Ասիա գնացող ճանապարհի վրա՝ այդ ևս պարզ ու վորոշ վկայում ե Ասովիկ պատմիչը վերոհիշյալ չորրորդ վկայության մեջ: Նրա ասելով՝ բյուզանդական Վասիլ Բ. կայսրը Տայքից վերադարձել է Պոլիս «ընդ Կարլին» և «ընդ Խաղառյանին»:*

*Քննության առնված *Chalchdiaris կայարանի անվան ու տեղի ճշտությամբ վորոշվում ե վհաճ միայն Սատաղից Բագավան գնացող ճանապարհի ուղղությունը, այլև լուսարանվում ե, ինչպես կըտեսնենք, պատմական նշանավոր վայրեր՝ Ելեփիայի և Սինորիայի տեղադրության կարևոր խճնդիրը, վորը մինչեւ այժմ համարվել ե վիճելի ու անորոշ:*

26. *Պետինգերյան քարտեզում Խաղառյան առիճից Սատաղ գնացող ճանապարհի վրա մատնանշված են հետեւյալ կայարանները՝ Calcidava 15 Sinara 22 Lucas Basaro 15 Aegea (Մալինացու մոտ՝ Egea) 20 Darucinte 20 Salmalasso 20 SATALA:*

Կոնրադ Միլերը մատնացույց ե արել արդեն, վոր հիշյալ կայարաններից Sinara-ն այն հայտնի Sinoria ամրությունն ե, վորը հիշատակված ե Ստրաբոնի և ուրիշ հույն ու հոռմայեցի հեղինակների մոտ¹:

Sinoria-ն կամ Sinara-ն, ինչպես վկայում են Ստրաբոնը և Պտոլեմեոսը, գտնվել ե Յեփրատ (=Կարասու) գետի ափին: Յեփ իրավ, Պետինգերյան քարտեզի Sinara կայարանը, վորը գտնվել ե * Chalchdiaris-ից 15 հոռմեական մղոն կամ մոտ 22 կիլոմետր հեռավորության վրա, ըստ այս տարածության, ընկնում ե այժմյան Գաղտառիճից Սատաղ տանող ճանապարհի վրա՝ ճիշտ և ճիշտ Յեփրատ գետի մոտ՝ Աշկարայից մոտ 15 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք:

Վորոշվում ե այսպիսով այն մոտավոր վայրը, վորտեղ

¹ Հմտե՛ Սւնաք (Ptol.), Սւնօք (Plut.), Սւնօք (Strab.), Synhorium (Amm. Marc.) և ուրիշ տես Itineraria Romana, № 677 և Th. Reinach, Mithridate Eupator, Paris 1890, № 387.

հնագետները պետք ե հետախուզումներ կատարեն և վորոնեն հին Սինորիայի տեղը:

*Պետք ե ասել, վոր այս յեզրակացությունը ևս տարբեր ե Կ. Միլերի և Ո. Կիպերսի յենթադրություններից: Միլերը Սինարայի տեղը յենթադրում ե այժմյան Սընկառինում, իսկ Կիպերսին այժմյան Ալաջայում: Մեր առաջարկած բացատրությունը թվում ե ավելի ստույգ ու հիմնավոր, վորովհետեւ այդ բացատրությանը յելակետ ե ծառայել Calcidava (= *Chalchdiaris) կայարանի վերև ճշտված տեղադրությունը:*

Sinara կայարանի նույնացումը հին հեղինակների Տւշքա, Տւնօքա, Տւնօքի և Synhorium նշանավոր ամրության հետ, ինչպես և նրա տեղադրության մոտավոր վորոշվումը, լուսաբանում են մի քանի մութ միացած տեղագրական հարցեր, վոր վերաբերվում են Միհրդատի և Տիգրանի պատմական շրջանին:

Պլուտարքոսի վկայությունից (Pompeius XXXII) գիտենք, վոր Միհրդատը, պարտութիւն կրելով Պոմպեոսից, ապավինում ե Տւնօքա ամրությունը, ուր պահվում ելին նրա գանձերը, և այստեղից փախչում կոլիսիդա: Միհրդատի փախուստի այս ճանապարհը, ինչպես անսնում ենք, վորոշվում ե վերոհիշեալ բացատրությամբ այժմյան Աշկարայի վրայով ու Երզրումի և Տայքի ուղղությամբ:

Սինորիայի մասին ավելի կարևոր ե ու եական Ստրաբոնի վկայությունը: Համաձայն Ստրաբոնի Սինորիան նշանաւոր մի ամրություն ե յեղել Միհրդատի թագաւորության մեջ և գտնվել ե Պոնտոսի և Մեծ Հայքի սահմանում (XII, 3, 28.): «Հենց այդ պատճառով ասում ե Ստրաբոնը—Թեոփանն անվանել ե այդ ամրութիւնը Ըսնօքի առաջին ամրությամբ¹:

Հիմնվելով կարևոր այս տեղեկության վրա՝ կարող ենք, ուրեմն, հաստատ կերպով յեղրակացնել, վոր Տիգրան

¹ Տսնօքոս հունարեն նշանակում ե «սահմանակից», իսկ Տսնօքի ասահմանակցությունն ինչպես հայտնի յե, հայերենում ես «սահման» նշանակությամբ գործածական ե այժմ «սինոս» բառը:

Մեծի ժամանակ Հայաստանի հարավ-արևմտյան սահմանը համուռ եր մինչև այժմյան Կոպ-Դաղի լեռները, որոնց հարավ-արևելյան ստորոտներում, Յեփրատ գետի մոտ, գտնվել ե Սինորիա նշանավոր ամրությունը՝ Պետինգերյան քարտեղի Sinara կայարանը:

27. Մեր այս եզրակացությունները Sinara կայարանի, ինչպես և Հայաստանի հարավ-արևմտեան սահմանի մասին Տիգրան Մեծի ժամանակ, կտրականապես ժխտում ե սակայն Ա. Խաչատրյանը կուլտուրայի Պատմության Խնստիւտում կարգացած իր վերոհիշյալ զեկուցման մեջ («Առևտըրական և ռազմական ճանապարհները Հին Հայաստանում»):

Այս զեկուցման 18-րդ և 19-րդ թեղինները, վոր արդեն հրապարակված են, մեջ եմ բերում անփոփոխ (տես զեկուցման մեքենագրված թեղինները, եջ 4):

1. «Sinara կայարանի նույնացումը Ստրաբոնի հիշած Sinoria-ի հետ Փոքր-Հայքում հիմնված և մատենագրի տված նկարագրի սխալ բացատրության վրա, ուստի և կարելի չե ընդունել».

2. «Նախընթաց անունների նույնացումից հետեւ ըստ աշխատական խիստ կարենոր» արդյունքը, վոր իբր թե Տիգրան Մեծի ժամանակ Հայաստանի սահմանը հասնում եր մինչև Կոփ լեռան հարավային ստորոտը՝ Աշկալու-Շողանի ձոր, միանդամայն զուրկ ե պատմական ու աշխարհագրական հիմունքներից»:

Վորովինետե Խաչատրյանի այս սխալ պնդումները կարող են թյուրիմացությունների առիթ ծառայել, մասնավորապես այն ընթերցողների շրջաններում, վորոնք ծանոթ չեն դասական հեղինակների հաղորդած տեղեկություններին՝ անհըսրածեցտ ե, անշուշտ, նույն այս խնդիրների վրա կանգ առնել հանգամանորեն և մեջ բերել Ստրաբոնի և Պլուտարքոսի համապատասխան վկայություններն ընդարձակ բովանդակությամբ:

Նպատակահարմար կը լինի, իհարկե, տալ այդ վկա-

յությունների բառացի թարգմանությունը հունարենից, վոր կարող ե տարրեր լինել ֆրանսերեն կամ գերմաներեն այն թարգմանություններից, վորոնցից ոգտվել ե Խաչատրյանը:

1. Strabo, Geographica, ed. A. Meineke, Vol. II, Lipsiae 1915, XII, 3, 28¹

«Յերբ զորեղացավ Միհրդատ Եվպատորը՝ նա տիրեց Կոլլսիդային և այն բոլոր յերկիրներին, վոր նրան հանձնել եր Սիսիպատորը՝ Սիսիդի վորդին: Նա այնքան հոգս եր քաշում այդ տեղերի մասին, վոր կառուցել եր նրանց մեջ յոթանասուն և հինգ ամրություններ, վորոնց մեջ դրել եր իր գանձերի մեծագույն մասը: Դըրանցից ամենանշանավորներն եյին Հիգարան, Բասգոյդարիզան, նաև Սինորիան, վորը սահմանակից եր Մեծ Հայքին. և հենց այդ պատճառով Թեոփանն անվանել ե այդ տեղը Սինորիա [Ըստօքա]: Իսկ Պարիադրեսի ամբողջ լեռնային շրջանը, լինելով ջրառատ և անտառաշատ և անջատված լինելով զանազան կողմերից թեք ձորերով և սեպ լեռնագագաթներով՝ այնպիսի մեծ հարմարութիւններ ունի, վոր այնտեղ եր հենց շինել Միհրդատը գանձերի պահեստատեղերի մեծագույն մասը. և, իրապես, վերջ ի վերջո, ինքը ևս, յերբ նրան հետապնդում եր Պոմպեյոսը, ապավինեց Պոնտական թագավորության այս հեռավոր կողմերը. և գրավելով Դաստեյրայի մոտ Ակիլիսեների ջրառատ լեռը (մոտ եր նաև Ցեփրատը, վորը բաժանում եր Ակիլիսենեն Փոքր Հայքից)² մնաց այստեղ, մինչև վոր նա, պաշարված լինելով, հարկադրված յեղավ փախչել լեռներով կոլիսիդա և այնտեղից Բոսպոր: Իսկ Պոմպեյոսը այս տեղի մոտ հիմնեց Փոքր Հայքում Նիկոպոլիս քաղաքը, վորը մնում ե մինչև այժմ և շատ լաւ բնակված ե»:

2. Plut., Rompeius XXXII³

«Վերջապես նրանք (փախչելիս) հասան Սինորա ամրությունը, որը լեփեցում եր թագավորական փողերով և թանգարժեք իրերով.... Այստեղից նա (Միհր-

դատը) շարժվեց Տիգրանի մոտ Հայաստան, սակայն յերբ սա մերժեց և նրա զլխի համար հայտարարեց հարյուր տաղանդ վարձատրություն՝ նա անցավ Յեփրատի ակունքների մոտով և փախավ Կոլխիդայի միջով։

Անտես առնելով այս վկայություններից յերկրորդը և հիմնվելով առաջին միայն վկայության վրա՝ Խաչատրյանը կարծում է, վոր Սիսորիան պետք և գտնվեր Դաստեյրայի ու Նիկոպոլիսի մոտ։ Նրա այս պնդումը, վորը չե հետեւմ բնավ Ստրաբոնի վկայությունից և հակասում ե դասական մյուս աղյուսակի հաղորդած տեղեկություններին՝ ակներև մի խեղաթյուրումն ե, անշուշտ, պատմական իրական փաստերի։

Դասական հեղինակների վկայություններից հայտնի յե, վոր Պոմպեյոսի 66 թվի (նախ քան Քր.) արշավանքը Միհրդատի գեմ ունեցել ե հետեւյալ ընթացքը։ Միհրդատը պաշարված լինելով Դաստեյրայի մոտ, ստիպված ե յեղել թողնել Ստրաբոնի վերև հիշած շրջանը և նահանջել մի այլ շրջան։ Սակայն Պոմպեյոսը հետամտելով նրան՝ հասնում ե յերրորդ որը հետևից և շրջապատում նրան նորից մի նեղ կիրճում։ Յեկ հետևյալ գիշերը տեղի յե ունենում այդտեղ Միհրդատի արյունահեղ պարտությունը։ Վերջին այս կովկից հետո Միհրդատին հաջողվել եր, ինչպես մանրամասն հաղորդում ե Պլուտարքոսը, փախչել նախ Սինորիա և ապա Յեփրատի ակունքների մոտով Կոլխիդա և Կոլխիդայից Բոսֆոր։

28. Մի կողմ թողնելով Խաչատրյանի բացատրությունը Սինորիայի մասին, վորն ակներև մի սխալ ե՝ Ստրաբոնի վերոհիշեալ վկայության մեջ վիճելի յե համարվում Դաստեյրայի տեղադրությունը։

Պրոֆ. Մարկվարտն իր վերջին աշխատություններից մեկում («Die Genealogie der Bagratiden und das Zeitalter des Mar Abas und Ps. Moses Chorenathsi», տես Caucasica, Fasc. 6, 2 Teil, Leipzig 1930, եջ 59—63) մի նոր կարծիք ե հայտնել վոր Դաստեյրայի տեղը Ստրաբոնի վկայության

համաձայն կարելի յե յենթանդրել Նիկոպոլիսի մոտ, իսկ գիշերային կոփվը և Միհրդատի վերջնական պարտությունը՝ Յեկեղեց գավառում։

Մարկվարտը Ստրաբոնի տպագրված ընագրի տես Akili-sênes... oros ուղղումը կարդում ե ձեռագրի համաձայն տես Aggolisênes... oros և Aggolisêne համապատասխան ե համարում Պտղիմենոսի հիշած (V, 6, 18) Aitulanê գավառին, վորի մեջ, նրա կարծիքով, գտնվել ե Նիկոպոլիսը։

Մարկվարտի այս յենթադրությունը հակասում ե սակայն թե Ստրաբոնի և թե Կասսիուս Դիոնի վկայություններին։

Ստրաբոնը, ինչպես վերև տեսանք, պարզ վկայում է, վոր Դաստեյրայի մոտ ե գտնվել «Յեփրատ գետը, վորը Աւկիլսենեն բաժանում եր Փոքր-Հայքից», իսկ Կասսիուս Դիոնը հաղորդում է (36, 50, 3), վոր Նիկոպոլիս քաղաքը հիմնված ե կովի այն վայրում, ուր Պոմպեյոսը հաղթել եր Միհրդատին։

Դաստեյրայի տեղադրության մասին հաւանական ե թվում ինձ ոչ թե Մակվարտի, այլ Աղոնցի յենթադրությունը։

Աղոնցի կարծիքով (տես Արմենիա և էպոխ Յուստինիան, եջ 54): Ստրաբոնի հիշած Դաստեյրան համապատասխանում ե այժմյան Դոստալին, վորը գտնվում ե Կամախի և Ակնի միջև։ ուրեմն՝ հենց համաձայն Ստրաբոնի վկայության՝ թե Յեփրատ գետի մոտ և թե Փոքր-Հայքի ու Ակիլսենեյի սահմանում։ Պետք ե ի նկատի ունենալ, վոր Միհրդատի ժամանակ Ակիլսենեն յեղել ե, ինչպես միանգամայն ճիշտ յենթադրում ե Աղոնցը, խիստ ընդարձակ մի շրջան և բովանդակել ե իր մեջ վնչ միայն հին Հայաստանի Յեկեղեց գավառը, այլ հավանորեն, նաև Դարանաղին, Մանանաղին, Աղոնը և Մզուրը (տես նույնը, եջ 54—55):

Վոր Դաստեյրայի ու այժմյան Դոստալի նույնացումը կարելի ե հաջող և ընդունելի համարել՝ այդ ցույց են տա-

լիս նաև ներքեւ մեջ բերված մեր դիտողությունները Դաստերայի հեռավորության մասին Նիկոպոլիսից:

Կարեոր ե նախ մատնանշել, վոր այժմեան Դոստալը հիշատակված ե նաև Տայլորի մոտ Զիմարայից մոտ 10—12 կիլոմետր հեռավորության վրա և այժմյան Պյուրկից (= Nicopolis) Զիմարա (= Zimara) տանող ճանապարհի վրա, վորը մանրամասն նկարագրված ե նրա «Journal of a tour in Armenia» աշխատության մեջ¹: Տայլորի նկարագրած այս ճանապարհը պարզապես Պևտինգերյան քարտեզի Nicopolis—Zimara ճանապարհագիծն ե, վորի ուղղությունը ճիշտ և վորշված թե Արմանի մոտ (տես Արմենիա Յունանական ազգական պատմությունը, եջ 79—80) և թե Կոմրադ Միլերի բացատրական քարտեզում (տես Itineraria Romana, 679—680):

Պևտինգերյան քարտեզում Նիկոպոլիսի հեռավորությունը Զիմարայից ցույց ե տրված 75 հոռմեական մղոն կամ մոտ 111 կիլոմետր: Պարզ ե, ուրեմն, վոր տարածությունն այժմյան Դոստալից մինչև Նիկոպոլիս—Պյուրկ պետք ե լիներ մոտավորապես 100 կիլոմետր:

Այս տարածությունը մի նոր ապացույց ե դարձյալ Դաստեյրայի ու Դոստալի նույնության:

Պոմպեյոսը, հետամտելով Միհրդատին, վորը նահանջելու յեր, բնականաբար, արագացրած յերթով, կարող եր հասնել Դոստալից Պյուրկ ճիշտ և ճիշտ միայն «յերբորդուը», ինչպես այդ վկայում են հին հեղինակները:

Ճիշտ պետք ե համարել ըստ այսմ և կասսիուս Դիոնի հաղորդած տեղեկությունը, վոր Նիկոպոլիսը հիմնված ե յեղել վհաջ թե Դաստեյրայում, ինչպես յենթադրում ե Մարկվարտը, այլ Պոմպեյոսի հաղթության և Միհրդատի վերջնական պարտության վայրում, այսինքն Դաստեյրայից մոտ

¹ Տես Journal of the Royal Geographical Society, vol. 38, London 1868, նաև նույն աշխատության Աստաֆյեվ-ի ուղերեն թարգմանությունը՝ „Материалы для географии Азиятской Турции“, Տիֆլիս 1874, приложение II к тому II „Изв. Кавк. Отд. Рус. Геогр. Общества“.

100 կիլոմետր հեռավորության վրա գտնվող այժմյան Պյուրկում:

Միանգամայն հասկանալի յե նույնպես, վոր Ստրաբոնի հիշած Սինորիան, ուր Միհրդատը փախել եր Նիկոպոլիս—Պյուրկից, չեր կարող լինել վհաջ Դաստեյրայի, վհաջ ել Նիկոպոլիսի մոտ, այլ պետք ե գտնվեր Մեծ Հայաստանի և Փոքր Հայքի սահմանում՝ վերև վորոշված տեղում:

Վոր մեր յեզրակացությունը Սինորիայի տեղադրության մասին ստոյգ ե ու անվիճելի՝ այդ հաստատում են Մարկվարտի նոր դիտողությունները, վոր մեջ են բերված նրա վերոհիշյալ աշխատության մեջ (տես «Die Genealogie der Bagratiden», եջ 63):

Մարկվարտը ևս հանգել ե այժմ նոր յեզրակացության, վոր Տիգրան Մեծի ժամանակ Դիրջան գավառը պատկանել ե, հավանորեն, Միհրդատին, իսկ սրա վերջնական պարտությունից հետո, «Ակիլիսենն և Դիրջանը և թերևս նաև Կարենիսիսը» կցվել են Հայաստանին:

Նրա յենթադրությունը հավանական չե, ինչպես տեսանում ենք, Կարենիսիս գավառի նկատմամբ, վորն ըստ մեր յեզրակացության պատկանել ե Տիգրան Մեծին:

Հակառակ, ուրեմն, Խաչատրյանի պնդումներին՝ մեր խիստ կարեոր յեզրակացությունը, վոր Տիգրան Մեծի ժամանակ Հայաստանի հարավ-արևմտյան սահմանն անցնում եր Sinara — Սինորիայի մոտ և հասնում մինչեւ այժմյան Կոպ-Դաղի լեռները՝ զուրկ չե վհաջ պատմական, վհաջ ել աշխարհագրական հիմունքներից: Ընդհակառակը՝ այս յեզրակացությամբ պարզպում ե միաժամանակ և Միհրդատի փախուստի ամբողջ ճանապարհը:

29. Sinara կայարանից 22 հոռմեական մղոն կամ մոտ 33 կիլոմետր հեռավորության վրա Պևտինգերեան քարտեզում մատնացույց ե արված Lucas Basaro կայարանը:

Lucus լատիներեն նշանակում ե «պուրակ» կամ «անտառակ», ուրեմն Lucas Basaro կարելի յե հասկանալ իբրև մի անտառակատեղի, վորն անվանվել ե Basaro:

Այս Basaro տեղանվան նկատմամբ յես առաջարկում եմ հավանական մի լուսաբանություն։ Basaro անվան ուղիղ ընթերցվածը հնարաւոր ե, իմ կարծիքով, յենթադրել *Bagara։ Իսկ այս սրբագրությունից յետո *Bagara-ն կարող ե ըստ իս համապատասխան լինել հին «Բագառիճ»ին¹, վորը գտնվել ե, ինչպես և Sinara-ն, միենույն Դերջան գավառում։

Կոմրատ Միլլերն իր Itineraria Romana աշխատության մեջ առանձնապես մասնանշել ե, վոր Պետինգերեան քարտեզում սովորական են G & S տառերի շփոթումները (տես եջ LII)։ Նման աղճատումներ մատնացույց են արված նաև Մարկվարտի «Südarmenien und die Tigrisquellen» ուսումնասիրության մեջ։ որինակ Պտոլիմեոսի АРТАГИГАРТА-ն և Ռավեննացու ԵТАԱՐԱՐՏԱ-ն կարող են, նրա կարծիքով, աղավաղումն լինել *ԱՐԳԱՇԱՐՏԱ-յի (տես եջ 33-37)։

Վոր *Bagara-յի նաև արա վերջավորությունը համապատասխան ե լինելու «առիճ»-ին՝ այդ ևս հավանական ե, վորովհետև, ինչպես վերև տեսանք, հին «Խաղողյառիճին» համապատասխանում են Պետենգերեան քարտեզի և Ռավեննացու Calcidava (= *Calcid-ara) և Chalchidara ընթերցվածները։

Basaro տեղանվան նույնացումով Բագառիճի հետ չե վորոշվում նրա տեղը համանուն այժմյան գյուղում։ Lucus Basaro-ն (= *Bagara) գտնվել ե, ինչպես վերև ասացինք, վհաջ թե Բագառիճ գյուղում, այլ նույն այդ անունը կրող անտառակում և, հավանորեն, Յեփրատ գետի արևմտակողմը տարածվող «Բագառճյ» դաշտավում, վորը հիշատակված ե Ասողիկի մոտ։

Ասողիկ, Ս. Պետերբուրգը 1885, III, հէ, եջ 251։

¹Տես Ազաթանգեղոս, Տփղիս, 1909 ձժ, եջ 412 «Բագայառիճ» (մի քանի ձեռագիրներում «Բագառիճ» և «Բագառիջ»), Խորենացի, Տփղիս 1913, II, ԺԴ, եջ 127 «Բագայառիջ» (մի քանի ձեռագիրներում նաև «Բագառինջ»), Ասողիկ, 1885, III, հէ եջ 251 «Բագառիճ»։

«Յորոյ վերայ [Չորտուանելի]»—վկայում ե Ասողիկը—առաքէ թագաւորն Վասիլ զժամն պատրիկ, որ և Պոռտեզ կոչեւր։ Որ եկեալ պատերազմեցաւ միանգամ։ և յերկրորդումն սպան զնա ի դաշտին Բագառճոյ, ի Դերջան գաւառի, ի Նլիթ թուականին»։

Ի նպաստ վերոհիշյալ յենթադրության վորոշ կովան ե ծառայում այն, վոր Sinara-Lucus Basaro ճանապարհի ուղղությունը, ինչպես կարելի ե կուահել W. Stecker-ի տեղագրական նկարագրություններից¹, պետք ե լիներ Շողանի ձորի և Յեփրատ գետի աջ կողմով և, հավանորեն, Յեփրատի նույն կողմում գտնվող Ասողիկի հիշած դաշտով։

Վոր հին այս ճանապարհը չե անցել այժմյան Մամախաթունի մոտով, ինչպես յենթադրել ե Ծ. Կիպերտը, այդ պարզ յերևում ե Շտրեկերի հետեւյալ կարևոր վկայությունից։

«Երզրումից դեպի Յերզնկա—ասում ե Շտրեկերը—գոյություն ունի նույնպես և ուրիշ, մի փոքր ավելի կարձ ճանապարհ, վորը առաջ գործածվել ե մեծ չափով, վորովհետև յեղել ե մասամբ կարավանների առաջվագիւավոր ճանապարհագծի վրա Երզրումից դեպի Պոլիս (այս վերջինի ու Տրապիզոնի միջև շոգենավային հաղորդակցություն կազմակերպելուց հետո նա այժմ անտեսված ե)։ Այս ճանապարհը գնում ե իլիջայի վրայով Աշկալա... Աշկալայից 1½ ժամ հեռավորության վրա մկանը են Շողանի խաները, վորոնք գտնվում են մոտ յերկու ժամ տարածության վրա Յեփրատի աջ ափի յերկարությամբ» (տես «Մատերիալ», եջ 12-13)։ Հենց այս հին ճանապարհով և Յեփրատի աջ կողմով վո-

¹Տես «Topographische Mittheilungen über Hoch-Armenien», Berlin 1861, ոռուերեն թարգմանությունը՝ «Материалы для географии Азиатской Турции», Тифлис 1874, приложение к тому III, «Изв. Кавк. Отд. Рус. Геогр. Общества».

բոշվում ե պարզապես նաև Պետինգերյան քարտեզի ճանապարհ՝ սկսած Calcidava-ից մինչև Lucus-Basaro¹:

Բագառին-*Bagara-ի մասին հետաքրքիր ե Մարկվարտի կարելոր նոր դիտողությունը նրա «Die Genealogie der Bagratiden» ուսումնասիրության մեջ (եջ 63, ծանոթ. 2):

Մարկվարտի կարծիքով՝ Ստրաբոնի հիշած (XII, 3, 28) Վաշունչ' ուշ նշանավոր ամրությունը, վորը գտնվում եր Փոքր Հայքում և վորի մեջ պահպում ելին Միհրդատի գանձերը՝ համապատասխանում ե Դերջան գավառի վերոհիշյալ «Բագայառին»-ին: Յենթադրելով, վոր Վաշունչ' ուշ ուղիղ ընթերցվածը պետք ե լինի *Վաշունչ' ուշ՝ Մարկվարտը մատնացուց ե անում, վոր այս խնդրի մանրամասն հիմնավորումը նա տալու յե իր մյուս աշխատություններում:

Յեթե ընդունելի համարվի Մարկվարտի այս յենթադրությունը՝ այդ գեպքում Պետինգերյան քարտեզի Basaro առավազված ընթերցվածը կարող ե առաջացած լինել վոչ միայն G և S տառերի շփոթումից, այսինքն՝ Basaro= *Bagara, այլ նաև Վաշունչ' ուշ-յի G տառի հապավմամբ, այսինքն՝ Basaro= *Bas[gl]ara:

Այս վերջն զեպքում պետք ե, բնականաբար, քննության առնել և վորոշել Վաշունչ' ուշ—Բագայառին-ի իսկական ըստույզ անունը:

30. Lucus Basaro-յից 15 հոռմեական մղոն կամ մոտ 22 կիլոմետր հեռավորության վրա Պետինգերյան քարտեզում նշանակված ե Aegea (Թավեննացու մոտ՝ Egea) կայարանը,

Ա. Խաչատրյանը կուլտուրայի Պատմության ինստիտուտում կարցած վերոհիշյալ իր զեկուցման 14-րդ թեզիսում Lucus Basaro-ն համապատասխան ե համարում Յերզնկայի մոտ գտնվող «Վազկերտ կամ Վասակակերտ» գյուղին: Նրա այս համեմատությունը չե կարող ճիշտ լինել վորովհետև հակասում է Պետինգերյան քարտեզի տարածություններին և բռնազրութիւն կամայական ե նաև լեզվական տեսակետից: Բացի այդ, քարտեզի ցուցությունը միանգամայն պարզ ե, վոր Artaxata-Satala ճանապարհ՝ ուղղությունն անհնարին ե յենթադրել Յերզնկայի ու Միպիկորի լեռնանցքի վրայով:

Վորը կոնրադ Միլլերի մոտ համեմատված ե Պտոլեմեոսի Elegia-յի հետ (տես Ptol. V, 12, 5):

Կասսիոս Դիոնիսի վկայությունից հայտնի ե, վոր Elegeia-յում 115 թվին Հայաստանի Պարթամասիր թագավորը տեսակցություն եր ունեցել Տրայանոս կայսեր հետ, վորը յեկել եր Ելեգեյա Սատաղից (տես Kass. Dion. 68, 19, 2, Bd. III, ed. Boissevain): Նույն Ելեգեյայի մոտ, հոռմեական աղբյուրների վկայությամբ, 161 թվին ծանր պարտություն ելին կրել հոռմեական զորքերը և սպանել եր իրան Սեվերիանոս զորավարը:

Հայ պատմաբաններից շատերը՝ Գարագաշյանը, Սանտարճյանը և ուրիշները՝ այս Elegeia-ն համապատասխան են համարել Հին Հայաստանի «Եկեղեց» գավառին¹: Հայոնի յեսակայն, վոր գասական մատենագիրները հին «Եկեղեց» գավառն անվանում ելին վոչ թե Elegeia կամ Elegia, այլ 'Առևլացրոց' (Strab., Ptol.) կամ հետագայում՝ 'Եռձեւոց' (Procop.):

Պարզ ե, ուրեմն, վոր Elegeia-յի նոյնացումը «Եկեղեց» գավառի հետ անհաջող մի յենթադրություն ե, վորը պետք ե, անտարակույս, մերժել: Այդ յենթադրությունը չե կարող ճիշտ լինել վորովհետև Elegeia-ն վոչ թե գավառի, այլ պարզապես կենտրոնավայրի անուն ե, վորը գտնվել ե Տաթալա—Artaxata ճանապարհագծի վրա:

Մեր նախորդ «Հին Հայաստանի ճանապարհները» աշխատության մեջ (Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի, Յերեվան 1930, № 5, եջ 85) Պտոլեմեոսի Elegia-յի և հոռմեական աղբյուրների Elegeia-յի հետ մենք հասրավոր ելինք համարել նույնացնելու Պետինգերյան քարտեզի Արեգա-ն (Թավեննացու մոտ՝ Egea):

Այս յենթադրությունը ևս, վոր մենք արել ելինք հա-

¹Տես Ա. Մ. Գարագաշյան, «Քննական Պատմութիւն Հայոց», Բ. Թիֆլիս 1895, եջ 256. J. Sandalian, Histoire documentaire de l'Arménie, II, Rome 1917, եջ 561 և ուրիշները:

մածայն կոնրադ Միլերի ցուցման, թվում և ինձ այժմ անհավանական:


Մանրամասն ծանոթանալով դասական աղբյուրների վը-կայություններին՝ գժվար չե համոզվել, վոր ճիշտ պետք ե լինի Յ. Յուստիի և Գ. Խալաթիսի կարծիքը, վորը մենք մերժել եյինք նախորդ մեր աշխատության մեջ:

Յ. Յուստին և Գ. Խալաթյանը վերոհիշյալ Elegeia-ն նույնացրել են, ինչպես հայտնի յե, Երզրումի մոտ գտնվող այժմյան Իլիջայի հետ¹, վորը գտնվում է, ինչպես և Aegea-ն Սատարից Արտաշատ գնացող ճանապարհի վրա:

Ուշագրավ այս հետեւթյունը ստացվում է, իրոք, Սե-վերիանոսի արշավանքի վերաբերյալ դասական մատենա-գըրության վկայություններից: Այս վկայությունները պարզ ու վորոշ մատնամշում են, վոր Սեվերիանոս զորավարը, անցնելով Յեփրատ գետը, յեկել և ելեզեյա և կորիզը պար-թեների հետ տեղի յե ունեցել այստեղ Յեփրատ գետի ա-կունքների մոտ (տես Tournebize, Histoire politique et re-ligieuse de l'Arménie, Paris 1910, էջ 796, հմմտե Lucian, Hist. conser. 21 և 25): Յեկ հենց տեղագրական այս ման-րամասնություններից ինքնին հետեւում է, վոր հին Ելեզե-յան, վորի մոտ Սեվերիանոսի զորքերը կրել եյին ծանր պարտություն և ուր Տրայանոսն ընդունել եր Պարթամա-սիրին, պետք ե գտնվեր Calcidava—Գաղտառիձի մոտ գտնը-վող Յեփրատի գետանցքից դեպի արևելք՝ այժմյան Իլիջա-յում:

Արդ՝ ի նկատի ունենալով Ելեզեյայի հավանական այս տեղադրությունը՝ կարելի յե, անշուշտ, յեզրակացնել, վոր Aegea և Elegeia անունների նմանությունը պետք ե համա-րել միանգամայն պատհական: Ուրեմն և Պետինգերյան քար-տեզի Aegea (Պավեննացու մոտ՝ Egea) կայարանի անունը, ինչպես և տեղը, մեռմ են դեռևս մութ և անորոշ:

¹ Ferd. Justi, Geschichte Irans, Grundriss der iranischen Philologie, Bd. II, Strassburg 1904, էջ 508, Г. А. Халатъянц, Очерк истории Армении, Москва 1910, էջ 302.



31. Aegea կայարանից մինչև Satala Պետինգերյան քարտեզում նշանակված են հետևյալ կայարանները՝ Aegea (Ռավինացու մոտ՝ Egea) 20 Darucinte 20 Salmalasso 20 SATALA:

Այս կայարաններից Darucinte-ի նկատմամբ յես թույլ եմ տալիս ինձ առաջարկելու հասրավոր մի լուսարանություն, վորը կարող ե սակայն հատուկ քննության մասնագետ լեզվաբանների կողմէց:

Ի նկատի ունենալով, վոր Պետինգերյան քարտեզի այս ճանապարհագիծն անցել ե ինչ Դերջան գավառի միջով՝ կարելի յե յենթադրել, վորոշ ինարկե վերապահությամբ, վոր Darucinte-ն Դերջան տեղանվան աղճատումն ե, վորից ծագել ե, հավանորեն, գավառի անունը:

Դերջան գավառը, ինչպես հայտնի յե, Ստրաբոնի աշխարհագրության մեջ անվանվում ե Եզրէշ'նη (տես Geographica XI, 14, 5), իսկ Պիլինիուսի մոտ՝ Dercxene (Nat. Hist. V, 20, 1, տես. ed. Littré, T. I, Paris 1883, եջ 123): Վերոհիշյալ Xerxene-ն կարդալու յե, անշուշտ, համաձայն Պիլինիուսի Dercxene;

Արդ՝ հասրավոր չե արդյոք Darucinte-ն աղավաղումն համարել հենց այս Dercxene անվան:

Ինձ թվում ե, վոր նման յենթադրությունը թեև առաջին հայացքից կարող ե թվալ համարձակ, սակայն անհնարին չե և արժանի յե վորոշ ուշադրության:

Կոնրադ Միլերի աշխատության առաջարանում (Itineraria Romana, եջ LII) մանրամասն մեջ են բերված Պետինգերյան քարտեզի հին տառերի հատուկ նմուշները, վորոնց հարեւանցի իսկ քննությամբ կարելի յե կռահել տեղանունների հավանական աղճատումներն այդ քարտեզում: Այդ տառածերից յերեւմ ե ըստ իս, վոր Darucinte անվան ԱՀ տառերը կարող են աղճատված լինել նախնական X տառից:

Ուրեմն Darucinte-ն հասրավոր ե ուղղել *Darcinte, վորի տե վերջավորությունը կամ լատիներեն բացառական հուզվ ե և կամ, ինչպես մատնացույց ե արել Մարկվարտը,

Խալդական հատուկ ածանց ե, վորը դրվում եր տեղանունների վերջում, որինակ՝ Enzi—Enzite, Sareba—Sarbat, Mana—Մանւաչ' (տես Südarmenien und die Tigrisquellen, եջ 336, 431 և 432): Նույն այս վերջավորությունն ուշադրության արժանի յե ըստ իս նաև Պետինգերյան քարտեզի վերջիշյալ Tharsidarate և Autisparate տեղանունների վերջում:

Ցեթե մեր այս լուսարանությունը ճիշտ համարվի՝ այդ գեպքում *Darcinte-ն կարող ե, ինչպես տեսնում ենք, կապ ունենալ Dercxene կամ Դերջան անվան հետ:

Այս ինդրի ավելի հաստատուն և ավելի հիմնավորված պարզաբանումը կըտան թերևս լեզվաբան մասնագետները:

32. Պետինգերյան քարտեզի մանրախույզ քննությամբ ճշտվում են, ինչպես տեսնում ենք, Artaxata—Satala գծի վրա գտնվող կայարանների մեծագույն մասը՝

Artaxata=Արտաշատ,

Paracata=Փառախոտ,

Coloceia (Ռավինացու մոտ՝ Zotozeta) = *Zolocerta
= Զողկերտ կամ Ցոլակերտ,

Hariza = *Հառիճ, Արուճ,

Raugonia (Ռավինացու մոտ՝ Ragauna)= *Bagauna=Բագաւան,

Colchion- մնում ե անորոշ,

Chadas=Խաստուր, Chazdar,

Armanas=Արամանայ,

Andaga (Ռավինացու մոտ՝ Andacas)= Թնգեկ, Անդուկ, Անտաք,

Barantea= *Banantea= «Վանանտեա», Վանանդ,

Adconfluentes= գետնախառնությն այժմյան Քեռփերքոյի մոտ,

Datamisa- մնում ե անորոշ,

Tharsidarate- մնում ե անորոշ,

Autisparate- մնում ե անորոշ,

Calcidava (*Խաղեննացու մոտ*³ Chalchidara) = *Chalch-diara կամ *Chalchdiaris = *Խաղողառիճ*,

Sinara = Sinora (Ptol.), Sinoria (Str.) և Synhorium (Amm.),
Lucus Basaro = Lucus *Bagara կամ Lucus *Basgara =
Անտառակ Բագառիճ, Յշշուծք'րէչ,

Aegea (*Խաղեննացու մոտ*³ Egea)- մնում եւ անորոշ,
Darucinte = *Darxinte = Derkene, *Դերջան* (?),

Salmalasso- մնում եւ անորոշ,
Satala — *Սատաղ*:

Վերոհիշյալ 21 կայարաններից անորոշ են մնում, գլխաւորապես, վեցը՝ Colchion, Datamisa, Tharsidare, Autisparate, Aegea և Salmalasso: Այս կայարանների տեղադրությունը ևս հնարավոր կը լինի, անշուշտ, վորոշել, ի նկատի առնելով մյուս կայարանների տեղերը և Պետինգերյան քարտեղում մատնանշված տարածությունները: Կարևոր այս աշխատանքը կարող են անել գիտական արշավախմբերը:

Անհրաժեշտ ե, ուրեմն, ճշգել տեղում վնչ միայն բոլոր մութու վիճելի խնդիրները, այլ և վորոշել վերջնականապես հին այս ճանապարհությունը տեղագրական իր բոլոր մանրամասնություններով:

ARTAXATA—TIGRANOCERTA

2. ԱՐՏԱՇԱՏ–ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

1. Արտաշատից Տիգրանակերտ գնացող ճանապարհն ուշնեցել ե ըստ Պլոտինզերյան քարտեզի հետևյալ կայարանները՝

ARTAXATA 23 Paracata 33 Coloceia (*Ուավեննացումոտ*¹ Zotozeta) 24 Hariza 24 RAUGONIA (*Ուավեննացումոտ*¹ Ragauna) [39 Catispi 27 Sorue 24 Anteba 24 Nasabi 17] ISUMBO 15 Flegoana 15 Dagnevana (*Ուավեննացումոտ*¹ Dognavana) 26 Molchia 32 Vastauna (*Ուավեննացումոտ*¹ Bastavena) 26 Patansana (*Ուավեննացումոտ*¹ Patransana) 27 Dyzanas (*Ուավեննացումոտ*¹ Dizanas) 22 Cymiza 20 Zanserio (*Ուավեննացումոտ*¹ Zancerion) 30 TIGRANOCARTEN¹.

Մեծագիր տառերով են տպված վերև այն կայարանների անունները, վորոնց մոտ Պլոտինզերյան քարտեզում նշեկարված են զույգ աշտարակների կայարանների անունների մոտ դրված թվերը ցույց են տալիս տարածությունները մի կայարանից մյուս կայարան հոռմեական մղոններով (= 1,4815 կիլոմետր): Ամբողջ տարածությունը Արտաշատից մինչև Տիգրանակերտ կազմում ե ըստ վերոհիշյալ թվերի 448 հռոմեական մղոն կամ մոտ 663 կիլոմետր, սակայն տարածության այդ ընդհանուր գումարը սխալ ե, վորովինեակայունավոր փակագծերի մեջ դրված կայարանները և թվերը վերաբերվում են, ինչպես ներքև կըտեսնենք, Արտաշատից Եկրատանա տանող ճանապարհն և արտագրված են սխալմամբ հարևան գծից: Ուավեննացին, վոր ոգտվել ե, ըստ երևույթին,

¹ՏՀԱ 184 Itineraria Romana, եջ 745-748.

հոռմեական նույն քարտեզի մի այլ որինակից, հիշում ե իր աշխարհագրության մեջ Didyma, Indua և Arachia կայարանները, բայց տարածությունները մեկ կայարանից մյուս կայարան չի տալիս:

2. Տիգրանակերտից Արտաշատ տանող ճանապարհը, ինչպես վերև տեսանք, միանում եր Սատաղ—Արտաշատ ճանապարհագծին Բագավանում և այստեղից գնում Արտաշատ վերոհիշյալ Hariza—*Zolocerta — Paracata կայարաններով, վորոնց անունները և տեղերը վորոշված են արդեն սույն ուսումնասիրության նախորդ գլխում:

Անհրաժեշտ ե, ուրեմն, լուսաբանել այժմ վերոհիշյալ հին կայարանների անունները Բագավանի ու Տիգրանակերտի միջև, վորոնց թիվը՝ չաշշվելով Ռավեննացու հիշած Didyma, Indua, Arachia տեղանունները՝ ընդամենը տասն ե:

Այս տասը կայարանների անուններից վորոշ ե յեղել միայն Տիգրանակերտը:

Գիտական մանրագնին հետախուզումներից հետո, վոր Լեմանը և Բելքը կատարել եին այժմյան Սղերդի և Ֆարկինի շրջաններում, Տիգրանակերտի տեղը՝ Նրանք յենթադրել են, համաձայն Փավստոսի վկայության, Նվրկերտ-Մայաֆարկինում¹, վոր այժմ անվանվում է Ֆարկին։ Նոր այս յենթադրությունը համարում են հավանական յեվրոպական գրեթե բոլոր հայագետները։

Ներկա ուսումնասիրության մեջ մենք փորձել ենք վորոշել մնացած ինը կայարաններից յոթը, վորոնցից յերեք՝ Isumbo, Flegoana և Dagnevana լուսաբանված եին արդեն «Հին Հայաստանի ճանապարհները» նախորդ իմ աշխատության մեջ, իսկ չորսը Zanserio, Vastauna, Patansana և

¹ W. Beleck, Majafarkin und Tigranokerta, Zeitschrift für Ethnologie, 1899, № 263—275. C. Lehmann, Ueber Tigranokerta, Verhandl. der 46 Versammlung deutscher Schulmänner und Philologen in Strassburg Leipzig 1904, № 25-34, Kliv VIII. 1908, № 497-520 և ուրիշ պարբերական հրատարակություններում, հմտե նաև Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, Bd. I, № 381—429.

Cymiza՝ առաջին անգամ քննվելու յեն մեր այս ուսումնասիրության մեջ։

Մատնանշված այս յոթը կայարանների վորոշմամբ վերոհիշյալ ճանապարհի վերաբերյալ վիճելի ինդիրները ստանում են, ինչպես կըտեսնենք, նոր լուսաբանություն և գծի ուղղությունը պարզվում ե ավելի հաստատուն ու ավելի ճշգրիտ կերպով, քան այդ արված ե նախկին ուսումնասիրություններում։

3. Կոնրադ Միլերը, վորը Raugonia կամ Ragauna կայարանի տեղը յենթադրում ե այժմյան Սուուկ-սու գետի ափին և կամ Պարնասուտում, իսկ Տիգրանակերտի տեղը՝ Արգնում, Tigranocerta—*Bagauna ճանապարհագիծը վորոշում ե կամ Բիթլիս—Մուշ—Մանզկերտի և կամ Բիթլիս—Վոստան—Վանի ուղղությամբ և մատնանշում ե նաև կայարանների տեղերը հետեւյալ հաջորդականությամբ։

Tigranocarten—այժմ. Արգն, Zanserio—այժմ Ridjlek ավերակները Բիթլիս-սուի մոտ, Cymiza—այժմյան ավերակները Բիթլիսի հարավակողմում, Dyzanas—այժմ. Ertwan, այստեղից գիծը գնում եր ըստ Միլերի կամ Վանա լիի հարավային կողմերով կամ Մուշի վրայով, ուստի նա մատնանիշ ե անում տարբեր կայարաներ՝ ձախ կամ աջ ուղղությամբ՝ Patansana—այժմ. Alti-Bajezid կամ Almaly, Vastauna—այժմ. Մուշ կամ Pingan, Molchia—Kjum-ից հյուսիս կամ Norkjug, Dagnevana—այժմ. Ondschalu կամ Wastan, Flegoana—Rustamgedlük-ի մոտ կամ Ischchani, Isumbo—այժմ. Melazgerd և Վան կամ շրջակայքը, մյուս կայարանները մինչև Raugonia անորոշ։

Միլերի այս յենթադրությունները չեն կարող, իհարկե, ընդունելի համարվել հենց այն պարզ պատճառով, վոր նրա աշխատության մեջ սիալ են լուսաբանված Raugonia և Tigranocerta կայարանների տեղերը։ Տիգրանակերտը, ինչպես

¹ Տե՛ս Itineraria Romana, № 745—748.

վերև ասվեց, գտնվել ե վհչ թե հին Արդին քաղաքի, այլ այժմյան Ֆարկինի տեղում: Եթե վորոշված այս ճանապարհազիմ թե սկզբի և թե ծայրի կետը՝ միանգամայն հասկանալի յե, վոր չեն կարող նրա մոտ ճիշտ լինելնաև մյուս կայարանների՝ ըստ համապատասխան հեռավորության ու հաջորդաբար նշանակված կետերը:

4. Գերմանական գիտնականների ուսումնասիրություններում կա, իմ կարծիքով, և մի ուրիշ սխալ յենթադրություն, վոր իբր թե Պետինգերյան քարտեզի Dagnavana (Ռավենացու մոտ՝ Dognavana) և Vastauna (Ռավենացու մոտ՝ Bastavena) կայարանները համապատասխանում են Բզմունիք գավառի «Դատուան աւան»-ին և Ռշտունյաց գավառի «Ոստան աւան»-ին (տես K. Miller, Itineraria Romana, եջ 745 և Markwart, Südarmenien und die Tigrisquellen, եջ 61):

Այդ նույնացումները, ինչպես շատ ուղիղ նկատել ե Կ. Միլերը, միանգամայն հակասում են Պետինգերյան քարտեզի վկայություններին, վորովհետև չեն հարմարվում քարտեզում մատնանշված հեռավորություններին:

Տարածությունը Տիգրանակերտից մինչև Dagnavana ցույց ե տրված քարտեզում 183 հոռմեական մղոն կամ մոտ 271 կիլոմետր, իսկ Տիգրանակերտից մինչև Vastauna՝ 125 հոռմեական մղոն կամ մոտ 185 կիլոմետր: Սակայն, իրապես, մեզ հայտնի յե, վոր Dagnavana-յի հետ համադրվող Դատուանը, վոր գտնվում եր Վանա լճի հարավ-արևմտյան ափին, ավելի մոտ եր Տիգրանակերտին, քան Vastauna-յի հետ համադրվող Վոստանը, վորը գտնվում եր Վանա լճի հարավ-արևելյան ափին, Ալիթամար կղզու դիմաց:

Կարելի յե, ուրեմն, վատահորեն յեզրակացնել, վոր Dagnavana-Դատուան և Vastauna-Վոստան անունների նմանությունը, վոր յենթադրել են գերմանական գիտնականները, միանգամայն պատահական ե և Տիգրանակերտ-Բագավան

գծի ուղղության վորոշման համար չունի վորեւ նշանակություն:

Գիտնականների թե վերոհիշյալ և թե նման յենթադրություններն են յեղել ըստ իս գլխավոր պատճառը, վոր Պետինգերյան քարտեզի քննադատներից վոմանք համարել են այս քարտեզը խեղաթյուրված ու աղավաղված և կայարանների հաջորդականությունը յենթադրել են վեր-վայր շրջած:

Վոր այս չիմնավորված գնահատականը խիստ չափազանցված ե Հին Հայաստանի ճանապարհների նկատմամբ՝ այդ քայլ առ քայլ կըպարզենք մենք սույն ուսումնասիրության ընթացքում:

5. Բացի վերոհիշյալ չորս կայարաններից (Catispi, Sorgue, Anteba և Nasabi), վորոնք սխալմամբ արտագրված են հարեւան գծից, Պետինգերյան քարտեզում, ինչպես տեսանք, Տիգրանակերտից մինչև Isumbo նշանակված են տասը կայարան և ամբողջ տարածությունը մինչև Isumbo ցույց ե տրված 213 հոռմեական մղոն կամ մոտ 316 կիլոմետր:

Այս հեռավորությունը կարելի ե ըստ իս մոտավորապես ճիշտ համարել, ինչպես և վերոհիշյալ տարածությունն Արտաշատից Սատաղ: Եթե ե. Կ. Միլերի մոտ¹ միջկայարանային հեռավորությունները չեն համապատասխանում այժմյան իրական տարածություններին՝ դրա պատճառն, անշուշտ, այն ե, վոր նրա մոտ սխալ եր վորոշված թե Տիգրանակերտի տեղը և թե ճանապարհի ուղղությունը:

Տիգրանակերտի նույնացմամբ այժմյան Ֆարկինի հետ վորոշվում ե, ինչպես ներքեւ ցույց կրտանք, Տիգրանակերտից Բագավան տանող այս գծի հավանական ուղղությունը, սակայն բոլորովին այլ ուղղությամբ, քան յենթադրել ե Կ. Միլերը:

«Հին Հայաստանի ճանապարհները» նախորդ մեր ուսումնասիրության մեջ (տես Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինս-

¹Տես Itineraria Romana, եջ 746.

տիտուտի № 5, եջ 75) այս հին ճանապարհը մենք ևս չեյինք կարողացել ճատիվ վորոշել և յենթաղրել եյինք, վոր այս գիծն անցել ե, հավանորեն, կամ այժմյան Ներջիկ-Շենիկի վրայով և կամ այժմյան Իլիջայի և հոչակավոր հին Կլեսուրի¹ մոտով դեպի Յեփրատ-Արածանի և այնտեղից հին հայկական Տարոն, Հարք և Ապահունիք գավառների միջով գընացել ե Բագավան։

Նույն ճանապարհը հաջողվում ե սակայն ճշտել այժմ ավելի հաստատուն կերպով, քան այդ արված եր նախորդ իմ ուսումնասիրության մեջ։

6. Պետինգերյան քարտեզում Տիգրանակերտից 50 հոռմեական մղոն կամ մոտ 74 կիլոմետր հեռավորության վրա նշանակված ե Cymiza կայարանը՝ Tigranocarten 30 Zanserio (Ռավեննացու մոտ՝ Zancerion) 20 Cymisa։

Cymiza կայարանի անունը, վորն աղճատված ե, ըստ յերկույթին, M և ΛΔ տառերի շփոթման պատճառով, կարելի յե, իմ կարծիքով, ուղղել *CYLADIZA: Յեզ այս պարզ ու ընդունելի սրբագրությունից հետո *Cyldiza-ն, ինչպես տեսնում ենք, համապատասխան կը լինի այժմյան Իլլորիկին (տես Ռուսական հին շտաբի տասը վերստանոց քարտեզում՝ Կիլյաձ), վորը գտնվում ե Ֆարկինից Շենիկ գնացող ճանապարհի վրա, այժմյան Ներջիկից դեպի հյուսիս՝ մոտավորապես այն հեռավորության վրա, վորը ցույց ե տրված Պետինգերյան քարտեզում։

Ուրեմն՝ հավանական այս յենթաղրությամբ Տիգրանակերտ-Բագավան ճանապարհը վորոշվում ե վհչ թե Իլիջայի ու հին Կլեսուրի մոտով, այլ Ներջիկ-Շենիկի² վրայով։

¹ Κλεισուրա՝ Իլլորից կամ Haloras, Տես «Südarmenien und die Tigrisquellen», եջ 58, 74, 238, 289.

² Ավելորդ չե լինի այստեղ նկատել, վոր գերմանական գիտնական կարքեն Տասը հազարի նահանջի ճանապարհը յենթաղրել ե նույնպես այժմյան Ներջիկի վրայով դեպի Մշո դաշտը և այնտեղից Մանազկերտի մոտով դեպի հյուսիս (տես H. Karbe, Der Marsch der Zehntausend von Zapates bis Phasis-Araxes, Wissen. Beilage zum Jahresbericht des Kō-

Նոր այս յեղրակացությանը նեցուկ կարող ե ծառայել հենց Պետինգերյան քարտեզում մատնանշված վերոհիշյալ տարածությունը, վորովհետև իլիջայի և Կլեսուրի վրայով հեռավորությունը Տիգրանակերտից մինչև Isumbo, վորը, ինչպես կը տեսնենք, Ասողիկի մոտ հիշատակված Շումերն ե, կը լիներ վհչ թե 213 հոռմեական մղոն կամ մոտ 316 կիլոմետր, այլ անհամեմատ ավելի։

Ուշագրավ այս յեղրակացությունը կարեռ ե առանձնապես այն տեսակետից, վոր Cymiza-յի ու Կիլլիկի նույնացմամբ պարզվում ե վերջնականապես, վոր հին Տիգրանակերտի տեղը պետք ե յեղած լիներ, իրապես, այժմյան Ֆարկինում, ինչպես այդ տեղագրական մանրամասն քննությամբ յեղրակացրել են Բելքը և Լեմանը։

7. Tigranocarten և *Cyldiza¹ կայարանների միջև, Տիգրանակերտից 30 հոռմեական մղոն կամ մոտ 44 կիլոմետր հեռավորության վրա, Պետինգերյան քարտեզում նշանակված ե Zanserio (Ռավեննացու մոտ՝ Zancerion) կայարանը։

Այս կայարանի անվան ու տեղադրության նկատմամբ ավելորդ չեմ համարում մի քանի դիտողություններ անել, վորոնք կարու են սակայն դրական հաստատուն ապացույցների։

Մարկվարտի «Südarmenien und die Tigrisquellen» ուսումնասիրության մեջ (եջ 100) բերված ե Բարեհերենուսի վկայությունը Zonīqart-ում գտնվող մի վանքի մասին, վորը վերանորոգել եր բժիշկ Շմագնունը։ Համաձայն այդ վկայության՝ Zonīqart-ը գտնվում եր Hesnâ de-Zâjîd-ի յերկրամա-

нигсшատիական Gymnasiums zu Berlin, Ostern 1898), Նահանջող հույների ճանապարհը Ներջիկ-Շենիկի վրայով մանրամասն նկարագրված ե Լեմանի վերջերս լույս տեսած աշխատության մեջ (տես Lehmann-Haupt Armenia einst und jetzt, Bd. II, Erste Hälfte, Berlin, եջ 432)։

¹ Ա. Խաչատրյանը Կուլտուրայի Պատմության հնատիտուսամ կարգացած վերոհիշյալ գեկուցման մեջ (թեր. 15-րդ) Cymiza կայարանը համապատասխան ե յենթաղրել այժմյան Զմշկածագին։ Այս նույնացումը ինարկե, պարզապես սխալ ե միանգամայն անհնարին։

սում, ուր իրար եյն խառնվում Dêbâ և Arsînos գետերը (տես Chron. eccles., vol. II, եջ 615-616, ed. Abbeloos et Lamy):

Մարկվարտը կարծում ե, վոր Zonîcart-ի տեղը լինելու յեր այժմյան Պիստեկի հանդեպ Արածանի գետի մոտ:

Չե կարելի արդյոք յենթադրել, վոր վերոհիշյալ Arsînos գետը վհչ թե Արածանին ե, վորն ասորերենում անվանվում եր Arsanâs, այլ Arzanene—Աղճնիքում (ասոր. Arzôن) գտնվող Խուլփ գետը, վորի հին անունը՝ համաձայն Arzôն յերկրանվան՝ կարող եր լինել Arsînos:

Եեթե մատենագրական աղբյուրներում գտնվի համապատասխան մի վկայություն կամ ակնարկ՝ այդ դեպքում վերոհիշյալ Zonîcart-ը հնարավոր կըլինի նույնացնել Պետինգերյան քարտեզի Zanserio կամ Zancerion կայարանի հետ, վորի անունը հավանական կըլինի ուղղել *Zancerta կամ ասորերեն համապատասխան վերջավորությամբ՝ *Zancarten (հմտե վերև Tigranocarten):

Մարկվարտը յենթադրում ե, վոր ասորերեն Zonîcart-ը համապատասխանում ե, հավանորեն, հայերեն «Զիւնկերտ»ին, վորը հիշատակված ե Հովհան Մամիկոնյանի մոտ մի ուրիշ տեղ Տարոնում (տես «Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ 1832, եջ 30, 58): Նույն այս յենթադրությունը հավանական ե, անշուշտ, նաև Zanserio կամ Zancerion կայարանի նկատմամբ (*Zancerta=Զիւնկերտ, տես վերև՝ *Zolocerta=Զողկերտ):

Վերջնական յեղրակացության դժվար ե սակայն հանգիւ, վորովհետև Zonîcart-ի, «Զիւնկերտ»-ի և *Zancerta-ի տեղադրությունները վորովում են, ինչպես տեսանք, տարբեր տեղերում: Ուստի և Zanserio կամ Zancerion կայարանի խնդիրը մնում ե դեռևս մութ ու անորոշ և կարոտ ավելի համոզիչ լուսաբանության:

8. Վերոհիշյալ Cymiza (=*Cyldiza) կայարանից հետո Պետինգերյան քարտեզում նշանակված են հետեւյալ կայարանները՝ Cymiza 22 Dyzanas (Ռավեննացու մոտ՝ Dizanas)

27 Patansana (Ռավեննացու մոտ՝ Patransana) 26 Vastauna (Ռավեննացու մոտ՝ Bastavena): Տարածությունը Cymiza-ից մինչև Vastauna ցույց ե տրված 75 հոռմեական մղոն կամ մոտ 111 կիլոմետր:

Յեւակես ունենալով այս տարածությունը, ինձ թվում ե, վոր Vastauna կամ Bastavena կայարանի տեղը մենք կարող ենք վորովել Տարոնում գտնվող այժմյան Բոստաքենդում, վորի հեռավորությունը Cymiza-կիղիզից հավասար ե մոտավորապես վերոհիշյալ տարածության:

Բոստաքենդ գյուղը (տես Ռուսական հին շտարի տասը վերստանոց քարտեզի վրա՝ Բոստակենդ) գտնվում ե հենց Տարոնից Հարք, Ապահունիք և Բագավան գնացող ճանապարհի վրա՝ այժմյան Ցրոնքից մոտ 25 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք: Նրա հին անունը հավանական ե ըստ իսյենթադրել Բաստաքան, և այս հին անվանը համապատասխանում ե պարզապես Vastauna կամ Bastavena կայարանի անունը, վորի ուղիղ ընթերցվածը պետք ե լինի, հավանութեն, *Bastauna կամ *Bastavana (հմտե վերև Ragauna= *Bagauna= Բագավան):

Դժվար չենակ կուահել, վոր Vastauna-ից 26 հոռմեական մղոն կամ մոտ 39 կիլոմետր հեռավորության վրա գտնվող նախորդ Patansana կամ Patransana կայարանը (= *Patransana) համապատասխանում ե հայերեն «Պատրանս աւան» տեղանվան, վորի մոտավոր տեղադրությունը պետք ե լիներ ըստ վերոհիշյալ տարածության, հավանորեն, Մուշ քաղաքի մոտ, ըստ յերկույթին, սրանից գետի հյուսիս-արևելք:

Վոր մատնանշված այս յերկու կայարանների անունները համապատասխանում են, իրոք, Հին Հայաստանի «Բաստաւան» և «Պատրանս աւան» տեղանուններին՝ այդ միանգամայն հավանական ե, վորովհետև «Բաստ» և «Պատրան» գյուղանուններն այժմ իսկ կան այժմյան Սպառկերտ գավառակում, վորը գտնվում ե Մոկսի ու Խիզանի միջև (տես Ա-Դօ, «Վանի, Բիթլիսի և Երզրումի վիլայէթները», Յերևան 1912, եջ 94):

Թե ինչու Տարոն գավառի հին «Բաստաւան»-ը և «Պատրանս աւան»-ը գտնվում են այժմ իրար մոտ նաև այժմյան Սպառկերտ գավառակում այդ դժվար չե լացատրել:


Պևինսկերյան քարտեզում մատնանշված վերոհիշյալ գյուղերը, վորոնք գտնվում եյին ռազմական հին ճանապարհի վրա՝ յենթակա յին յեղել բնականաբար, մշտական հարձակումների և ավերածության: Միանգամայն հավանական ե, ուրեմն, վոր Սպառկերտի այժմյան «Բաստ»-ը և «Պատրանս»-ը կարող եյին հիմնած լինել Տարոնի համանուն գյուղից փախած հայերը, վորոնք հարկադրված են յեղել գաղթել լեռնային հարևան այս շրջանը:

9. Vastauna կամ Bastavena կայարանից հետո Պևինսկերյան քարտեզում նշանակված են հետեւյալ կայարանները՝ Vastauna (Ռավեննացու մոտ՝ Bastavena) 32 Molchia 26 Dagnevana (Ռավեննացու մոտ՝ Dognavana) 15 Flegoana 15 Isumbo: Տարածությունը Vastauna-յից մինչև Isumbo ցույց է տրված 88 հոռոմեական մղոն կամ մոտ 130 կիլոմետր:

Յենթաղրելով Vastauna-յի տեղն այժմյան Բոստաքենուում այս ճանապարհագիծը ևս, ինչպես կըտեսնենք, վորոշվում ե ճշտիվ առանց դժվարության:

Վոր այս գծի ուղղությունը պետք ե յենթաղրել ինչպես վերև ասացինք, չին Հայաստանի Հարք և Ապահովնիք գավառների միջով՝ այդ պարզ յերեսում ե ներքեւ առաջ բերված մեր նոր լուսաբանություններից, վոր վերաբերվում են յերեք իրար հաջորդող կայարաններին՝ Dagnevana (Ռավեննացու մոտ՝ Dognavana) 15 Flegoana 15 Isumbo:

Ուշագրավ ե նախ, վոր այդ յերեք կետը՝ Պևինսկերյան քարտեզում նշանակված միջկայարանային հեռավորությունների համեմատ (Տիգրանակերտից մինչև Dagnevana = 183 հոռոմեական մղոն կամ 271 կիլոմետր), ընկնում են Տիգրանակերտ-Կիլդիդ-Բագավան գծի վրա ճիշտ և ճիշտ չին Հայաստանի Հարք և սրան կից Ապահովնիք գավառներում, ուր համաձայն հայ աղբյուրների գտնվում եյին «Դոնեվանք», «Եղեգական» և «Ծումբ» գյուղերը:



Դոնեվանք գյուղը, ինչպես վկայում ե Հ. Ղ. Ինձիճյանը, հիշատակված ե 94Ե (=1316) թվին գրված ավետարանի հիշատակարանի հետևյալ հատվածում՝

«Արդ՝ գրեցաւ ի գաւառիս Հարքայ, ի գեղս որ կոչի Դոնեվանք՝ ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածնիս» (տես «Ստորագրութիւն Հին Հայաստանի», Վենետիկ 1822, եջ 120, նաև «Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց մատենագարանին Միխթարեանց ի Վենետիկ», Հատոր Ա, Վենետիկ 1914, եջ 466. ձեռագիր ավետարանի թվահամարն ե 104¹ հին թիվ 1626):

Եղեգականի մասին կա վորոշ հիշատակություն Ասողիկի հետևյալ վկայության մեջ՝

«Եւ յետ նորա [Տէր Մուշէի] Տէր Սահակ ի գաւառէն Հարքայ ի գեղջէն Եղեգականայ՝¹ ամս ե» (տես «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ս.-Պետերբուրգ 1885, II, գլ. Բ, եջ 81). Իսկ յերրորդ գյուղը՝ Ծումբը հիշվում ե նույնապես Ասողիկի պատմության մեջ։ Նկարագրելով Ատրպատականի Մամլան ամիրայի կոփին ընդդեմ հայ-վրացական միացյալ զորքերի՝ Ասողիկը պատմում ե, վոր այդ կովի վայրն երբ բարձրագանդակ ամուր մի տեղ Ապահունիք գավառում Ծումբ գյուղի մոտ։

«Առ որ միարան հասանէին—վկայում ե Ասողիկը— զօրքն հայոց և վրաց, և չուեալ երթան ի գաւառն Ապահունեաց. բանակին յանդիման բանակին Մամլանայ ի բարձրաւանդակ ամրագոյն տեղւոջ մի, ի սահմանա գեղջն Ծմբոյ, և բազում աւուրս ի նմին տեղւոջ օթևանս կալեալ. Զի ի սաստկութենէ սպային Պարսից զարհուրեալք էին, ոչ իշխելով քան զանձաւ տեղի բանակին արտաքս ելանել. այլ միայն աղօթիւք պաղատանս առ

¹ Հովհաննես կաթողիկոսի պատմության մեջ Սահակ Բ-ի ծննդավայրն անվանվում ե «Յղուկ»։ «Եւ զինի սորա—վկայում ե Հովհաննես կաթողիկոսը—զՄահակ ի գաւառէն Հարքայ՝ Յղկայ գեղջէ կացուցանեն ի հայրապետական աթոռն» (Թիֆլիս 1912, եջ 63).

Աստուած վերառաքէին» (Ս.-Պետերբուրգ 1885, III, գլ. ԽԱ, եջ 271):

10. Վերոհիշյալ գյուղերից Դոնեվանքը համապատասխանում ե, ինչպես տեսնում ենք, Պևտինգերյան քարտեզի Dagnevana (Ռավեննացու մոտ՝ Dognavana) կայարանին, ուստի և այդ կայարանի լատիներեն ուղիղ ընթերցվածը պետք ե յենթադրել վնչ թե Dagnevana կամ Dognavana, այլ *Do[g]nevana։ Դոնեվանք անվան վանք վերջավորությունը նշանակում ե, հավանորեն, վրչ թե վանք այժմյան իմաստով, այլ ոթևան, իջևան, կայան կամ բնակարան, ինչպես այդ բառը գործ ե ածված Հին և Նոր Կոտակարանի գրաբար թարգմանություններում, նաև հին մատենագիրների յերկերում (տես «Նոր բառզիրք հայկագեան լեզուի», նաև Հյուրշման, «Հին հայոց տեղուոյ անունները», թարգմ. Հ. Բ. Պեղպիճյանի, Վենենա 1907, եջ 285):

*Dagnevana կայարանը գտնվում եր ըստ Պևտինգերյան քարտեզի Vastauna կայարանից 58 հոռմեական մղոն կամ մոտ 86 կիլոմետր հեռավորության վրա։

Արդ՝ ի նկատի ունենալով, վոր Պևտինգերյան քարտեզի միջկայարանային հեռավորությունները ճշտվում ու հաստատվում եյին վերև ինչպես Արտաշատ-Սալա, նույնպես և այս ճանապարհագծում՝ կարելի յե հավանական համարել վոր Վերոհիշյալ հեռավորությունը ևս մոտավորապես ստույգ ե և համապատասխան այժմյան իրական աւարձության Բոստաքենդից մինչև Դոնեվանքը։ Ըստ այսմ՝ *Dagnevana-Դոնեվանքը, վորի տեղագրությունն ավետարանի վերոհիշյալ հիշատակարանում ցույց ե տրված Հարք գավառում, պետք ե գտնվեր Բոստաքենդից մոտ 86 կիլոմետր դեպի հյուսիսարևելք, հավանորեն, այժմյան Մանազկերտի դաշտում։

Իսկ այս յեղբակացությունից ինքնին արդեն հետևում ե, վոր Հարք գավառուի արևելյան մի մասն ե կազմել Մանազկերտի գաշտային շրջանը, վորը գտնվում եր նեխ Մասիքի կամ Սիփանի հյուսիսակողմում։

11. Հարք և առանձնապես մատնահել, վոր Հին Հայաւանի Հարք և Ապահունիք զավառների տեղադրության խնդիրը Հայաստանի պատմական աշխարհագրության մութու վիճելի հարցերից մեկն ե, վոր կարու և գեռ հատուկ քննության: Այս զավառներում են գոնվել, ինչպես վերև տեսանք, նաև հին «Եղեգական»-ը և «Ծումր»-ը: Այս տեղերի, ինչպես և համապատասխան զավառների ճշտումը՝ խիստ կարեոր ե, ինչպես կրտեսնենք, նաև Ռավեննացու մոտ հիշատակված Արագիա կայարանի վորոշման համար:

Ուստի ավելորդ չենք համարում մեջ բերել այստեղ մատենագրական հին աղյուրների կարևորագույն վկայությունները, վորոնք վերաբերվում են Հարք և Ապահունիք զավառներին:

1. *Փաւստոս, III, ի, եջ 52 (Վենետիկ 1889)*

«Այլ յերկրին Ապահունեաց, յոտինն մեծի լերինն Մասեաց, տեղին զայն որսացուք. տեղւոյն՝ որում անոն կոչի քաղաք Ալիորսք»:

2. *Նույնը, III, ի, եջ 53*

«Եւ կալեալ կապեալ զոտս և զձեռս նորա [Տիրանայ] ի կապս երկաթիս, և զրանակն՝ զոր գտանէլ՝ աւար հարկանէր. և զգանձս և զստացուածս զկին և զորդիս թագաւորին, զոր գտին ի բանակին, խաղացուցին յերկրէն Ապահունեաց: Իրրև եկին հասին ի գեւդ մի, որում անուն Դալարիս կոչէին, յորժամ եկն եմուտ զօրավարն Պարսից [Շապուհ Վարազն] ի ներքս ի գեւդն Դալարիս, ածէր կապեալ զարքայն Տիրան ընդ իւր»:

3. *Կեղծ-Սերէոս, Ս.-Պետերբուրգ 1879, I, եջ 2*

«Եւ ինքն [Հայկ] չուեաց գնաց անտի ևս [յերկրէն Արարադայ կադմեայ] ի հիւսիսակողմն և չոքաւ բնակեցաւ ի բարձրաւանդակ դաշտավայրի միոջ. և կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հարք, յանուն Հարցն»:

Հմմտե Խորենացի, Տփղիս 1913, I, Փ, եջ 33:

4. *Սերէոս, Ս.-Պետերբուրգ 1879, գլ. իջ, եջ 93*

«Հասանէ Երակլոս ի Բագրեանդ և անցանէ յԱպահունիս, և բանակի ի գեւդն՝ որ կոչի Հրձմունք»:
Տես նույնը՝ Ասողիկ, II, գլ. Գ, եջ 116 [«որ կոչի Խրձմոնք»]:

5. *Ղառդ, Ս.-Պետերբուրգ 1887, գլ. Լի, եջ 147—148*

«Քանզի նոյնժամայն շունչ կեւալք՝ զարձեալ յարձակէին, ուշ եղեալ ելանել յառաջին պղղոտայն արքունի ընդ գաւառն Ապահունիս: Հասանէին ի գաւառն Բագրեանդ ի գիւղն Արձնի»:

6. *Խորենացի, Աշխարհացոյց, հրտր. Սուքրյանի, Վենետիկ 1881, եջ 31*

«Յելից Մարդարոյ է Գաստովոր գաւառ. և նորայելից Տուարածատափ. նորա յելից Թալառ. և ի հարաւոյ նոցա Հարք և Վամնունիք, մինչև ցԱրածանի, որ իջանէ յԱպահունեաց»:

7. *Խորենացի, Պատմութիւն, I, ԺԲ, եջ 38*

«Իսկ նորա [Արամենակայ] թողեալ զերկուս յեղբարց իւրոց, զԽոռ և զՄանաւազ, ամենայն աղխիւն իւրեանց ի կոչեցեան Հարք, և զորդի Մանաւազայ զԲազ. յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք, իսկ որդի նորա Բազ՝ յարեմտից հիւսիսոյ զեզր ծովուն աղւոյ, և զգաւառն և զծովս անուանէ իւրով անուամբ»:

8. *Նույնը, II, Ը, եջ 115—116*

«Այլ և զնախարարութիւնն Ապահունեաց և զՄանաւագեանն և զԲնունականն ի նոյն զաւակացն Հայկայ. ի բնակչացն զտեալ [Վաղարշակ] զպերձագոյնս՝ տեարս կարգէ, յանուն շինից և գաւառաց կոչելով»:

9. *Թովմա Արծրունի, Ս.-Պետերբուրգ 1887, III, ի, եջ 224*

«Եւ զի էր պաշարեալ նորա [Աշոտի] յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին»....

10. *Ասողիկ, Ս.-Պետերբուրգ 1885, II, գլ. Բ, եջ 80—81*

«Յայսմ ժամանակի Մամբրէ եղբայր Մովսիսի, որոմէ ասեն երկրորդ գտեալ ի փիլիսոփայս՝ դառնայր ի Հայ»:

և Դաւիթ աշակերտ Մովսիսի ի Հարք գաւառէ ի Հերեն գեղջէ»:

11. Նույնը, III, գլ. ԽԳ, եջ 277¹

«Եւ ինքն [թագաւորն Վասիլ] չուժալ անցանէ ի գաւառն Հարք ի Մանազկերտ քաղաք, և անդուստ ի Բագրեմանդ»:

12. Նույնը, II, գլ. Ա, եջ 73¹

«Իսկ Պապ՝ կաթողիկոս կացոյց Հայոց զՇահակ ոմն ի գաւառէ Ապահունեաց¹ առանց հրամանի մետրապօլիքն կեսարու, ի Մանազկերտ գեղջէ»:

13. Նույնը, III, գլ. Ը, եջ 183¹

«Եւ ի Նժէ թուականին Վարդ եղբօրորդի Նիկիփոռայ զօրու ծանու գայ յԱպահունիս, պաշարէ զՄանազկերտ քաղաք»:

14. Գիրք թղթոց, Թիֆլիս 1901, եջ 223 («Սակս ժողովոց ի Հայք»):

«Արդ՝ չնորհիւ կամաց բարձրելոյն և ամենաջողակ սիրոյ Հոգուն սրբոյ չնորհեցաւ ինձ Յովհաննէսի կաթուղիկոսի առնել Երրորդ ժողովի ի Մանազկերտ գեւաղի սահմանագլուխ վիճակին Հարքայ՝ բազմաւրեայ ժամանակաւ միատեղայք համաժողովք։ Այս եղև ի ՃՀԵ թուականիս հայոց, յի. Տրէ ամսոյ, որոյ ժողովեալ ի մի վայր յԱպահունեաց գաւառ ի գեղն Մանազկերտ...»։ Հմտեն նաև Ասողիկ, II, գլ. Բ, եջ 103։

15. Արիստակես Լաստիվերտոցի, Թիֆլիս 1912, գլ. Ա, եջ 5¹
«և ինքն [Վասիլ] երթեալ անցանէ ընդ Հարք և ընդ Մանազկերտ»։

16. Նույնը, գլ. ԺԷ, եջ 110¹

«Գիշերագնաց եղեալ զօրք անօրինացն և եկեալ ի քաղաքագիւղն Հարքայ որ կոչի Մանկան գոմ...»։

¹ Կիրակոս Գանձակեցին և Սամուել Անեցին Շահակ կաթողիկոսի ծննդավայրը դնում են, ինչպես հայտնի յե, Հարքում՝ «ի Հարքայ ի Մանազկերտոյ» (տես Կիրակոս Գանձակեցի, Թիֆլիս 1910, եջ 26 և Սամուել Անեցի, Վաղարշապատ 1893, եջ 67)։

17. Նույնը, գլ. ԻԲ, եջ 142¹

«Վասն Հար աղանդին Թոնդրակեցւոց որ երևեցաւ ի գաւառն Հարքայ, և զբազում խոռվեաց»։

18. Նույնը, գլ. ԺԶ, եջ 93¹

«Զանց արարեալ զԱրճիշաւ և զԲերկրաւ Եկեալ [Սուլտան] բանակեցաւ շուրջ զքաղաքաւն, որ կոչի Մանազկերտ, ի գաւառին Ապահունեաց...»։

19. Նույնը, գլ. ԻԲ, եջ 150¹

«Եւ իբրև չյացողեցաւ նմա այս, ելեալ գայ անցանէ ի գաւառն Ապահունեաց ի բնակարան սատանայի, յաստուածուրաց ժողովն և ի զազանաց գառագիղն, որ կոչի Թոնդրակս»։

12. Հարք և Ապահունիք գավառների մասին վերտիշյալ աղբյուրների վկայությունները, ինչպես տեսնում ենք, բավական խառնաշփոթ են և չեն տալիս նրանց սահմանների մասին պարզ ու վորոշ զաղափար։

Առանձնապես կարևոր ե, անշուշտ, Հովհանն Ոճնեցու ցուցումը, վորը պարզ վկայում ե (տես վերև վկ. 14), վոր Մանազկերտը գտնվել ե «ի սահմանագլուխ վիճակին Հարքայ»։ Յեվ համաձայն հենց այս տեղեկության Մանազկերտը դրված ե՝ անգամ միևնույն հեղինակների վկայություններում՝ յերբեմն Ապահունիքում (տես վերև վկ. 9, 13, 14, 18) և յերբեմն Հարքում (տես վերև վկ. 11, 14, 15)։

Ուշագրավ ե նմանապես, վոր «Թոնդրակս» գյուղը, վորը գտնվում ե և այժմ Մանազկերտից դեպի հարավ-արևմուտք՝ Արիստակես Լաստիվերտին յենթագրում ե Ապահունիքում (տես վերև վկ. 19), սակայն միաժամանակ վկայում ե, վոր Թոնդրակեցւոց աղանդը «երևեցաւ ի գաւառն Հարքայ» (տես վկ. 17)։

Համաձայն թե այս և թե Խորենացու «Աշխարհացոյց»-ի վկայության (տես վերև վկ. 6)¹ Հարք գավառի տեղը, ինչպես հայտնի յե, ցույց ե արվում սովորաբար Ապահունիք գավառի արևմտակողմում՝ կամ այժմյան Խոռությունը շրջանում (տես Լեռ, Հայոց պատմություն, Թիֆլիս 1917,

եջ 176) և կամ, գլխավորապես, այժմյան Բուլանըում (տես «Südarmenien und die Tigrisquellen», եջ 15):

Վոր Հարք գավառի հյուսիս-արևմտյան սահմանը յենթաղրվելու յե, իրոք, Մանազկերտից արևմուտք՝ Արածանի գետի աջ կողմում՝ այդ յերեւում ե վերոհիշյալ 11-րդ և 15-րդ վկայություններից: Այդ վկայությունների մեջ պարզ կերպով մատնանշված ե, վոր Վասիլ Բ. կայսրը, վորը յեկել եր Մանազկերտ հյուսիս-արևմուտքից, անցել եր նախապես Հարք գավառի միջով:

Պետք ե սակայն ի նկատի ունենալ, վոր քննության առնված բոլոր այս վկայությունները վերաբերվում են Հարք գավառի տեղադրության արաբական և Բագրատունյաց շրջաններում:

Նույն գավառը, ինչպես մատնացույց ե արել Մարկվարտը, ունեցել եր իր մեջ հնագույն ժամանակներում Մանազկերտի ամբողջ շրջանը (տես Südarmenien und die Tigrisquellen, եջ 15): Յեկ իրավի, Կեղծ-Սերեսուի և Խորենացու վերոհիշյալ վկայություններից (տես վերև վկ. 3, 7 և 8), ինչպես և Փավստոսի հաղորդած մանրամասն տեղեկություններից (տես III, գլ. Դ, եջ 10), պարզ յերեւում ե, վոր «Մանաւազեան» նախարարական տոհմին, վորը ժառանգել եր Հարքը, պատկանել ե վոհ միայն Մանազկերտը, վորն այդ տոհմի «բուն գանոյից գեւդն» եր, այլ և Մանազկերտի շուրջը գտնվող յերկիրները:

Լուսաբանելով նույն այս հին վկայությունները՝ Աղոնցը յենթադրում ե նույնիսկ, վոր հնագույն Հարքը, վորի կենդրունն եր Մանազկերտը, նախնական ժամանակներում բովանդակել եր մեջ նաև Ապահուսիքը, Խորխոսուսիքը և Բըզնուսիքը, վորոնք հետագայում միայն անջատվել են նրանից՝ իրրև համանուն նախարարությունների գավառներ (տես «Արմենիա և արևոտնական աշխարհ» և «Արմենիա և արևադարձական աշխարհ»՝ եջ 312):

Հարք գավառի հնագույն տեղադրության ինդիրը հետաքրիր ե առանձնապես այն տեսակետից, վոր այդտեղ ե գտնվել ըստ հայկական ավանդության հին Հարքը, ուր Հայկ

նահապետը բնակություն եր հաստատել «բարձրաւանդակ գաշտավայրում» (տես վերև վկ. 3, 7, 8): Մանրամասն քըննելով հին այս ավանդությունը, վորը մեջ ե բերված Մարասի և Խորենացու պատմական յերկերում, Մարկվարտը հանգել ե միանգամայն ճիշտ յեղակացության, վոր հայրի հնագույն գաղթավայրերը ցույց են տրված նրանց հին զըրույցներում յերեք մեծ լեռների ստորոտներում, վորոնք համարվել են հին ժամանակներում նոյի տապանի լեռներ: Այս լեռներն են ըստ Մարկվարտի Քարդու-Արարագը, Նեխ Մասիսը և Մեծ Մասիսը (տես «Südarmenien und die Tigrisquellen», եջ 202—232):

Ադրնցի և Մարկվարտի ուշագրավ վերոհիշյալ յենթադրությունները հաստատվում են, ինչպես կըտեսնենք, նաև Պետինգերյան քարտեզի մեր այս ուսումնասիրությամբ:

Մենք ցույց կըտանք ներքեւ, վոր նախնական Հարքը, վորը գտնվում եր, գլխավորապես, այժմյան Սիփանի, Նեխ Մասիսի շրջանում, մեծ ու ընդարձակ այս յերկիրի աշխարհագրական հին անունն ե, վորը հիշատակված ե նաև Ռավենանացու աշխարհագրության մեջ:

13. *Dognevana—Դոնեվանք կայարանից հետո Պետինգերյան քանտեզում նշանակված են, ինչպես վերև ասացինք, Flegoana և Isumbo կայարանները:

Flegoana կայարանի անունը Մարկվարտը կարդում ե Flegosana և առաջարկում ե Flegosana-ն¹ սրբագրել *Elegosine: Այս վերջին անունը նա համեմատում ե հայերեն «Եղէգնաշն» կամ «Եղեգնածին» բառերի հետ:

Վորովինետու Մարկվարտը Dognevana կայարանը համապատասխան ե համարել այժմյան Դաշտավանին, ուստի և *Ele-

14. Միլլերի վկայությամբ (Itineraria Romana, եջ 747, ծան. 2)¹ Flegoana անվան օ և ա տառերի միջև Պետինգերյան քարտեզի մագաղթն ունի ճեղքվածք: Կարելի յե յենթադրեք, վոր օ տառից հետո յեղել ե մի տառ ևս, վոր այժմ չի կարդացվում: Ըստ յերեւյթին, Մարկվարտն ի նկատի ունի այդ ճեղքվածքը և այդ նկատառումով ե, վոր նա Flegoana անունը կարդում ե Flego[s]ana և ուղղում ե *Elegosine:

gosine-ի տեղը նա յենթադրել ե Դատվանից 15 հոռմեական մղն կամ մոտ 22 կիլոմետր հեռավորության վրա՝ Վանա լի հյուսիսային կողմում (տես «Südarmenien und die Tigrisquellen», եջ 61):

Flegoana անվան ուղիղ ընթերցվածը, ինձ թվում ե, պետք ե համարել վոչ թե *Elegosine, ինչպես յենթադրել ե Մարկվարտը, այլ *Elegacana: Ե և F լատինական տառերի շփոթություններն այնքան սովորական են, վոր Մարկվարտի սրբագրությունը միանգամայն համոզիչ ե և ընդունելի: Սակայն քարտեղի մագաղաթի ճեղքվածքի տեղում Տ տառի փոխարեն մնաք կարդում ենք օ: Նախապատվությունը պետք ե տալ, անշուշտ, *Elegacana ընթերցվածին, վորովհետև Հարք գավառում, ինչպես վերև տեսանք, իրոք վոր հիշվում ե «Եղեգական» գյուղը, վորը կատարելապես համապատասխանում ե Պետինգերյան քարտեղի Flegoana= *Elegacana ընթերցվածին:

Պետինգերյան քարտեղի մյուս Isumbo կայարանը, վոր ավելի մոտ եր Բագավանին քան Dagnevana-ն (= *Dognenvana) և Flegoana-ն (= *Elegacana), իմ կարծիքով, վերև հիշված Ծումբն ե, վորը գտնվում եր Ապահովութում: Isumbo-ի անվան ուղիղ ընթերցումը պետք ե լինի *Tsumbo և միանգամայն պարզ ե, վոր այդ կարեոր կայարանի անունն աղճատված ե քարտեղում I և T տառերի շփոթման պատճողով:

Isumbo կայարանի տեղադրությունը վորոշելու համար կարեոր ե, անշուշտ, Ասողիկի վերոհիշյալ վկայությունը: Ասողիկը, ինչպես վերև տեսանք, վկայում ե, վոր հայ-վրացական զորքերը կովից առաջ իջևանել ելին «յանդիման բանակին Մամլանայ ի բարձրաւանդակ ամրագոյն տեղւոջ մի, ի սահմանս Ծմբոյ»: Կովի մանրամասն նկարագրությունից ևս պարզ յերեսում ե, վոր Ծումբը գտնվել ե բարձր ու դժվարամատչելի տեղում:

Ասողիկի այս վկայություններն ուշադրության արժանի են, վորովհետև Isumbo-ի մոտ Պետինգերյան քարտեղում

նշանակված են զույգ աշտարակներ, վորոնք, հավանորեն, ցույց են տալիս, վոր այդ կայարանը յեղել ե կարեոր մի ամրություն և բերդապահ զորքի կայան:

Ուրեմն՝ ինչպես տեսնում ենք, Isumbo-ն (= *Tsumbo) վոչ միայն իր անվան նմանությամբ, այլ և տեղագրական տեսակետից կատարելապես համապատասխանում ե Ծումբ գյուղին:

14. Դոնեվանքի, Եղեգականի և Ծումբի տեղերը վորոշ չեն: Պետինգերյան քարտեղի վկայությունից կարող ենք միայն հետեցնել, վոր Տիգրամանակերտից Բագավան տաճող ճանապահնի վրա նրանք դասավորված են յեղել հետեւյալ հաջորդականությամբ՝ նախ Դոնեվանքը, նրանից 15 հոռմեական մղն կամ մոտ 22 կիլոմետր հեռավորության վրա՝ Եղեգականը և ապա գարձյալ 15 հոռմեական մղն հեռավորության վրա՝ Ծումբը:

Tigranocerta—Bagauna գծի ուղղությունը վորոշելու համար կարեոր ե միայն այն, վոր այդ գյուղերի տեղերը ցույց են տրված չին Հայաստանի Հարք և Ապահունիք գավառներում: Յեկ վորովհետև Դոնեվանքի տեղը լինելու յեր, ինչպես վերև ասացինք, այժմյան Մանազկերտի դաշտում՝ դրժվար չե, ուրեմն, կուահել, վոր Tigranocerta—Bagauna ճանապարհն անցել ե Մանազկերտի շրջանով և «Եղեգական»ի ու «Ծումբ»ի տեղերը պետք ե վորոնել Մանազկերտի արևելակողմում:

Հենց նույն այս յեղրակացությունը ստացվում ե նաև Ասողիկի վկայություններից, վոր վերաբերվում են Ծումբ գյուղի մոտ տեղի ունեցած վերոհիշյալ կովին:

Ասողիկը վկայում ե, վոր Ասողիկանի Մամլան ամիրայի զորքերը՝ Ծումբ գյուղի մոտ պարտվելուց հետո՝ փախչում են Արձեշի ուղղությամբ:

«Որոց հետամուտ եղեալ—պատմում ե Ասողիկը— Հայոց և Վրաց զօրուն՝ սաստիկ հարուածովք հարկանէին, ի սուր սուսերի մաշելով զնոսա մինչև ի մուտս արևուն, մինչեւ ի գուռն Արձէշ քաղաքին» (տես «Պատմութիւն տիեզերական», III, գլ. ԽԱ, եջ 273):

Արդ՝ ի նկատի առնելով, վոր թշնամուն հետապնդել են հեծելազորքը՝ կարելի յենթադրել, վոր մոտավոր տարածությունը Ծումբից մինչև Արձեղ՝ պետք ել լիներ վնչ պահան 50 կիլոմետր։ Այս հեռավորությունը Ծումբի և Արձեղի միջև կարենոր մի ցուցում ե, վոր վորոշ չափով լուսաբանում ե Isumbo—*Tsumbo կայարանի տեղադրությունը։

Իսձ թվում ե, վոր հիմք ընդունելով այս ցուցումը, ինչպես և այն իրողությունը, վոր Ծումբը գտնվել ե Հարք գավառի արևելյան սահմանի մոտակա շրջանում՝ ճշմարտության բավական մոտ կը լինենք, յեթե Tsumbo—Ծումբի տեղը յենթադրենք Մանազկերտից դեպի հյուսիսարևելք՝ մոտավորապես այժմյան Բաղնոց—Զոմըկի շրջանում։

15. Տիգրանակերտ—Բագավան գծի և *Dognevana ու *Elegacana ու *Tsumbo կայարանների տեղադրության նոր այս լուսաբանությամբ վորոշվում ե, իմ կարծիքով, հոռմեական զորավար Կորբուլոնի ճանապարհն Արտաշատից Տարոն (տես Tacit. Ann. XIV, 23 և 24), վոր մինչև այժմ համարվել ե վիճելի ու անորոշ։

Գիտնականների մեծագույն մասը յենթադրել են, վոր Կորբուլոնը՝ Արտաշատի կողմերից Տարոն անցնելու ժամանակ՝ յենթարկվել ե մարդերի հարձակման Մարդաստանում, վորը գտնվում եր Վանա լճից դեպի արևելք (հմմտե Հյուրշման, «Հին Հայոց տեղույ անունները», եջ 60, ծան. 1, նաև Ածոնց, Արմենիա և էպոխ Յուտինանա, եջ 417)։

Այս ուղղությամբ՝ Կորբուլոնի ճանապարհն Արտաշատից Տարոն և այնտեղից Տիգրանակերտ պետք ել յենթադրել Բերկիի, Վաստանի վրայով և Վանա լճի հարավային ափերով, ուրեմն՝ մոտավորապես այն գծով, վոր բացատրական իր քարտեզում մատնանշել ե Կոնրադ Միլերը, վորպես հավանական ուղի Պատինգերյան քարտեզի Արտաշատ—Տիգրանակերտ գծի (տես Itineraria Romana, եջ 745—746)։

Հայավանորեն, հենց այս ճանապարհի վրա, Աղեղիս գավառում, գրտնել ե հին Զարբշատ քաղաքը, վորն Արշակունյաց ժամանակ յեղել ե

Պրոֆ. Մարկվարտը Կորբուլոնի ճանապարհի այդ խիստ հեռավոր ու վոլորապտույտ ուղղությունը համարում ե անհավանական ու անընդունելի և կարծում ե ինքը, վոր մարդերի յերկիրը, վորի միջով անցել ե Կորբուլոնը, գտնվել ե Տարոնից գեպի հյուսիսարևելք (տես «Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, եջ 23»)։

Մարկվարտի այս յենթադրությունը¹ ճամապատասխանում ե, ինչպես տեսնում ենք, մեր յեղակացություններին Արտաշատ—Տիգրանակերտ գծի ուղղության մասին և կարելի յեթ իրոք հավաստի համարել, վոր Տակիտոսի մոտ հիշատակված մարդերի բնակության շրջանը պետք ե վորոնել Պատինգերյան քարտեզի Արտաշատից Տիգրանակերտ իջնող ճանապարհի վրա, հավանորեն, Արածանիի հովտի լեռնային վերին շրջաններում։ Պետք ե ասել, վոր ըստ այս բացատրության մարդերի բնակության շրջանը չի կարող լինել հին Մարդարդի գավառը, վորովհետև այս գավառը, վորը գտնըվում եր այժմյան Բինգեռլի հյուսիսակողմում՝ հեռու յերշատ մեր վորոշած Արտաշատ—Տիգրանակերտ գծից։

16. Isumbo կայարանից հետո Պատինգերյան քարտեզում մատնանշված են Nasabi, Anteba, Sorue և Catispi կայարանները, վորոնք նշանակված են նույնպես և Artaxata—Ecbatana ճանապարհագծում։

Պատինգերյան քարտեզի այս պարզ ու անվիճելի սխալը ուղղվում ե սակայն առանց գժվարության Ռավեննացու

¹Ա. Խաչատրյանը վերոհիշյալ իր զեկուցման 10-րդ թեզիում Կորբուլոնի այս ճանապարհը յենթադրում ե հետեւյալ ուղղությամբ՝ «Կորբուլոնի գարձողին—ասում ե նա—ամենայն հավանակությամբ յեղել ե Դուշալի լեռնանցքով գեպի Դիագին ու Եթիրատի ակունք. այս տեղից իջել ե Արձեղ Ախլաթ, Տարոն, Խարբերդ, ուր Քիարեկ գյուղում գտնված իր արձանագրությունը միանգամայն հաստատում ե նրա ներկայությունը, և այս տեղից Տիգրանակերտ։ Հեռավոր այս ճանապարհը Դիագին—Արձեղով միանգամայն անհավանական ե, իսկ նույն ճանապարհը Խարբերդի վրայի պարզապես սխալ ե. Խաչատրյանն ուշադրության չե առել վոր Կորբուլոնի վերապարձը Արտաշատից տեղի յեր ունեցել 58 թվին, իսկ Կազրիկ-ի արձանագրությունը գրված ե 64 թվին։

աշխարհագրության ոգնությամբ, վորի մեջ հիշյալ կայա-
րանների փոխարեն հիշատակված են Arachia, Indua և Didy-
տա կայարանները: Ինչպես վերև ասացինք, այս յերեք կա-
յարանների անունները Ըստինացին արտագրել ե հոռմեա-
կան միենույն քարտեզի հին և ավելի ընտիր մի որինակից:

Պարզգում ե, ուրեմն, վոր *Tsumbo-յից հետո մինչև
*Bagauna հաջորդ կայարաններն են յեղել Arachia-ն, Indua-ն
և Didyma-ն:

Այս կայարաններից Arachia-յի հիշատակությունը Ռա-
վեննացու մոտ խիստ ուշագրավ մի վկայություն ե, վորի
լուսաբանությամբ լուծվում ե, ինչպես կըտեսնեմք, Հայաս-
տանի պատմական աշխարհագրության կարևորագոյն խըն-
դիրներից մեկը:

Arachia-ն վորոշ կապ ունի, իմ կարծիքով, Պլինիուսի
մոտ հիշատակված Archene-յի հետ, վորից ծագել ե, հավա-
նորեն, հենց վերոհիշեալ Հարք գավառի անունը:

Մեր այս յենթադրությունը հիմնաւորելուց առաջ ան-
հրաժեշտ ե նախ թարգմանաբար մեջ բերել Պլինիուսի վը-
կայությունն Archene-յի մասին:

Plin., Hist. Nat. VI, 31, 1—3 (տես T. I, ed. Littré,
Paris 1883, էջ 260—261):

«Սակայն հարկավոր ե խոսել և իրան Տիգրիսի մա-
սին: Սա սկիզբ ե առնում Մեծ Հայաստանի յերկրում
մի աղբյուրից, վորը նկատելի յե հարթավայրում: Տե-
ղի անունն ե Ելեգոսինե [Elegosine, Elosine, Elegos].
Այստեղ ուր նա ավելի դանդաղ ե հոսում՝ գետի անունն
ե Դիլիլո [Diglito], իսկ ուր նրա ընթացքն արագա-
նում ե՝ նա անվանվում ե արագության պատճառով
Տիգրիս: Այսպես են անվանում մեղերը նետը:
Նա թափվում ե Արետիսսա լիձը [Aretissa, Arethusa¹],

¹ Լիտտրեյի հրատարակության մեջ տպված ե Arethusa, սակայն Mayhoff-ի 1906 թվի հրատարակությունն ունի Aretissa (տես «Հյու-
մենի և Տիգրիսի աղբյուրներ»), էջ 20):

վորի մեջ վերև են բարձրանում բոլոր մեջը ձգվող ծանր
իրերը և վորն արտաթորում ե բորակային միացություն-
ների գոլորշիներ: Լճի մեջ կան միայն մի տեսակ ձըկ-
ներ, վորոնք չեն թափանցում նրա միջով հոսող գետի
մեջ: Նմանապես և Տիգրիսի ձկները չեն մտնում լճի
մեջ: Ասում են, վոր գետն իր հոսանքով ու գույնով
տարբերվում ե լճից:

Լիճն անցնելուց հետո՝ Տիգրիսը հանդիպում ե Տավրոս
լեռան, անհետանում ե մի խորշի մեջ և, հոսելով գետ-
նի տակ՝ գուրս ե գալիս հանկարծ լեռան մյուս կող-
մում: Յելքի այս տեղն անվանվում ե Զորոանդա [Zor-
roanda, Zoroande, Zoaranda]: Վոր այս միենույն գետն
ե, այդ պարզ երեսում ե նրանից, վոր նրա մեջն ընկած
իրերը գուրս են գալիս լեռան մյուս կողմում:

Տիգրիսը հոսում ե հետո մի ուրիշ լճի միջով, վորն ան-
վանվում ե Թոսպիտես [Thospites, Thespites]: Յեկ նո-
րից նա մտնում ե ստորյերկրյա խորշեր և մոտ 25 մը-
ղոնից հետո յերեան ե գալիս Նիմֆեումի մոտ [Nym-
pheum]:

Կլավդիուս Կեսարը վկայում ե, վոր Archene¹ յերկ-
րում Տիգրիսն այնքան մոտ ե հոսում Արսանիաս [Ar-
sanias] գետից, վոր յերբ այդ գետերն ափերից գուրս
են գալիս՝ նրանք միանում են, բայց չեն խառնվում
իրար հետ: Արսանիասը, վորն ավելի թեթև ջուր ունի՝
յերեան ե բարձրանում և հոսում վերելից մոտ 4 մղոն
տարածություն: Սակայն շուտով նա բաժանվում ե
Տիգրիսից և թափվում Յեփրատ գետը:

Տիգրիսի արևելյան ճյուղի մասին նման տեղեկություն-
ներ, վոր հիմնված են, անշուշտ, տեղական հին զրոյցների
վրա, հաղորդում ե մի փոքր տարբեր բովանդակությամբ և
ավելի համառոտ խմբագրությամբ նաև Ստրաբոնը (տես Ge-

¹ Littré-ի հրատարակության մեջ տպված ե Arrhene, վորը յեն-
թագրական մի սբրագրություն ե van Gelen-ի (տես «Հյու-
մենի և Տիգրիսի աղբյուրներ»), էջ 76):

ographica, XI, 14,8 և XVI, 1, 21), վորը վկայում ե սակայն վոր Տիգրիսը գալիս ե նպատ [Նոշշահան] լեռներից և անցնում այնուհետև Արսենի [Արշակունակ] լճի միջով, վորն անվանվում ե նաև Թոպիտիս [Թօպիտէս]:

17. Պլինիուսի և Ստրաբոնի վերոհիշյալ վկայությունները մանրամասն քննված են վերջերս Մարկվարտի «Տիգրամեն և աղյատության մեջ»: Այսեղ մեզ հետաքրքրում են, բնականաբար, միայն նրա այն դիտողությունները, վոր վերաբերվում են Պլինիուսի հիշատակած Archene յերկրին:

Այս Archene-յի նկատմամբ Մարկվարտն առաջարկել ե յերկու տարբեր մեկնություններ:

Նա անհարին չե համարում նախ, վոր Կլավդիուս Կեսարի վերոհիշյալ վկայությունը կարող ե վերաբերվել Տիգրիս գետի արևմտյան ճյուղին: Յեկ այս գեպքում, նրա կարծիքով, Archene-ն՝ իրոք աղճատումն *Anthene ընթերցվածի՝ կարող ե թերևս համապատասխան լինել Enzi-Anzit գավառի անվան:

Սակայն իր ուսումնասիրության շարունակության մեջ Մարկվարտը հսարավոր ե համարում նույնպես, վոր Կլավդիուս Կեսարի վկայությունը վերաբերվում ե ավելի շուտ Արսանիա Արածանի գետի ակունքներին, վորոնք գտնվել են վանա լճից դեպի հյուսիս-արևելք՝ հին Ծաղկոտն գավառում: Այստեղ հենց, ինչպես ուղիղ նկատում ե Մարկվարտը, Արածանի գետը մոտ կըլիներ, իրապես, արևելյան Տիգրիս գետին, վորի ակունքը ևս յենթագրվել ե հին ժամանակներում նպատ կամ այժմյան Աւաղաղ լեռն ստորոտներում:

Ինչպես մատնանշում ե Մարկվարտը, van Gelen-ը՝ հիմնը վերջին այս յենթագրության վրա՝ Archene-ն ուղղել ե *Arrhene և ընդունել վոր այս տեղանունը համապատասխանում ե Ստրաբոնի՝ Արշակունակ և հին Արճեշլին: Համաձայն այս մեկնության *Arrhene կամ Արշակ՝ յե անվանվել վահայն Արճեշի մոտակա լիճը, այլ և յերկրը:

Այս բացատրությունը Մարկվարտն առարկելի յե համարում, վորովհետև Ստրաբոնի վկայության՝ Արշակունակ (ըստ = Մարկվարտի *Արշակունակ) Պլինիուսի մոտ համապատասխանում ե վոհ թե Archene-ն, այլ Aretissa-ն:

Մարկվարտի կարծիքով՝ յեթե Կլավդիուս Կեսարի վկայությունը վերաբերվում ե, իրոք, արևելյան Տիգրիսին՝ Archene-ն կարող ե նույնացվել միմիայն Հարք գավառի անվան հետ, վորը հիշատակված ե Մար Արասի մոտ իրը և հայերի հսագույն գաղթավայրը: «Այս վերջին գեպքում — ասում ե Մարկվարտը — մենք հարկադրված կըլինենք ընդունելու, վոր հին ժամանակներում Archene յերկիրն ունեցել ե իր մեջ վահայն բուն Հարք գավառը Բուլանըղի հարթավայրի հետ միասին, այլ և հետագայում ինքնուրույն Ապահովնիք, Աղոփիտ և Ծաղկոտն գավառները և գուցե նաև Բագրեանդ գավառի արևելյան մասը» (եջ 77):

Մեջ բերված յերկու տարբեր մեկնություններից հավանական ե, անշուշտ, յերկրորդը:

Մարկվարտի և յեփրոպական գիտնականների ուշադրությունից վրեապել ե, գժրաղղարար, Ռավիննացու աշխարհագրության մեջ հիշատակված Arachia կայարանի անունը, վորը նոր ու կարեոր մի ապացույց ե Archene-յի տեղադրության վանա լճի հյուսիսակողմում:

Ուսպեննացու այս Archacia-ն կարող ե, իմ կարծիքով, համապատասխան լինել հենց Պլինիուսի վկայության վերջայի արևելյան:

Այս յերկու տեղանունների —ia և —ene տարբեր վերջավորությունները միանգամայն հասկանալի յեն դառնում, յեթե ի նկատի ունենանք, վոր հայոց Պապ թագավորին վերագրված Ֆարկինի հունարեն արձանագրության մեջ հին Kommagene, Melitene և Matiene տեղանուններն անվանված են նաև Kommagia, Melitia, և Matia (տես Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, Bd. I, եջ 416): Ուրեմն Arachia և Archene տեղանունների արմատն ե պարզապես Arach- (հուն. Ἀράχη-) կամ Arch- (հուն. Αράχη-), վորը կարող եր, իհարկե, հայերենում ստացած լինել «Հարք» ձեր:


Անհաղթահարելի մի դժվարություն չե ըստ իսկակ այն հանգամանքը, վոր Archene-ն յերկրի անուն ե, իսկ Arachnia-ն կայարանի Վերև մենք տեսանք արդեն, վոր *Bantea — «Վանանտեա» կայարանի անունը համապատասխանում ե Հին Հայաստանի Վանանդ գավառի անվան: Կարելի յե, ուրեմն, յենթադրել վոր Arachnia-ն հին Archene յերկրի այն կենդրուավայրն ե, վորի անունով կոչվել ե այդ յերկրը և Archene կամ Հարք:

Մեր այս մանրամասն քննությամբ պարզվում է նույնպես, վոր Arachnia կայարանը գտնվելու յեր այժմյան Բաղրանցի հյուսիսակողմում: Իսկ այս յեղքակացությամբ հաստատվում ե, ինչպես տեսնում ենք, Մարկվարտի վերոհիշեալ յենթադրությունը, վոր հին Archene-ն համարվելու յե ավելի մեծ ու ընդարձակ յերկիր, քան նախարարական Հայաստանի համանուն Հարք գավառը: Հսագույն ժամանակներում, ըստ յերեսութին, հին Archene յերկրի մեջ են յեղել նաև Խորհնացու աշխարհագրության հարևան գավառները, վորոնք հետագայում անջատվել են, հավանորեն, Archene-ից և դառել նախարարական ինքնուրույն շրջաններ:

Archene և Arachnia տեղանունների այս նոր լուսաբանությամբ, վոր ինձ հավանական ե թվում, պարզվում ե, ինչպես տեսնում ենք, Հայաստանի պատմական աշխարհագրության մութ ու հետաքրքիր ինդիբներից մեկը, վորը վերաբերվում ե հայերի հին գաղթավայր համարված Հարք գավառին:

Բացի Arachnia յից Ռավիննացու աշխարհագրության մեջ հիշատակված են, ինչպես վերև ասացինք, նաև Indua և Didyma կայարանները:

Ա. Խաչատրյանը կուլտուրայի Պատմության Խստիտուտում կարդացած վերոհիշյալ իր զեկուցման մեջ Ռավիննացու Didyma-ն համապատասխան ե յենթադրում այժմյան Դիդեմ գյուղին, վորը գտնվում ե Արածանի գետի ձախ ափի մոտ՝ Բագավանից մոտ 15—20 կիլոմետր դեպի հյուսիսարեմուտք: Այս յենթադրությունը կարող ե հավանական լի-



ներ, վորովհետև Դիդեմը, վորն իր անվամբ նման է Didyma-ին, ընկնում է, իրոք, Բագավանից Տիգրանակերտ տառող ճանապարհի շրջանում:

18.- Մերայս մանրախոյզ ուսումնասիրությամբ ճշտվում են, ինչպես տեսնում ենք, վոչ միայն Tigranocarten-*Bagauna -Artaxata գծի ուղղությունը, այլ և նրա վրա գտնվող կայարանների մեծագույն մասը՝

Tigranocarten = Տիգրանակերտ, այժմյան Ֆարկինը.

Zanserio (*Իավեննացու մոտ*՝ Zancerion) = Հավանորեն Zôniqart, Զինկերտ.

Cymiza = *Cyldiza = Կիլդիզ.

Dyzanas (*Իավեննացու մոտ*՝ Dizanas) = *Arzanas = Arzan, syr. Arzôn.

Patansana (*Իավեննացու մոտ*՝ Patransana) = *Patransauna = «Պատրանսաւան».

Vastauna (*Իավեննացու մոտ*՝ Bastavena) = *Bastau-na կամ *Bastavana = «Բաստաւան», այժմ. Բոստաքենդ. Molchia — մնում ե անորոշ.

Dagnevana (*Իավեննացու մոտ*՝ Dognavana) = * Dog-nevana = Դոնեկանք.

Flegoana = *Elegacana = Եղեգական.

Isumbo = *Tsumbo = Ծումբ.

Arachia (*ըստ Իավեննացու*), հմմտէ Archene (Plin.) = Հարք.

Indua (*ըստ Իավեննացու*) — մնում ե անորոշ.

Didyma (*ըստ Իավեննացու*) = Դիդիմ.

Raugonia (*Իավեննացու մոտ*՝ Ragauna) = *Bagauna = Բագաւան:

Մյուս կայարանները մինչև Արտաշատ մատնանշված և քննված են Artaxata—Satala նախորդ ճանապարհագծում:

Բոլոր այս կայարանների տեղադրությունը, ինչպես և ամբողջ ճանապարհագծի վերջնական ու ճշգրիտ ուղղությունը, պետք ե հետագայում քննեն ու ստուգեն, անշուշտ, տեղում գիտական հատուկ արշավախմբերը:

ARTAXATA - SEBASTOPOLIS

Յ. ԱՐՏԱՀԱՏԻ ՍԵԲԱՍՏՈՊՈԼԻՍ

1. Արտահատից Սեբաստոպոլիս գնացող ճանապարհն ունեցել ե ըստ Պևտինգերյան քարտեզի և Ռավեննացու աշխարհագրության հետեւյալ կայարանները՝

ARTAXATA 30 Strangira (*Ռավեննացու աշխարհագրությունն ունի civitas Stranguriana և Stranguria, վորից հետո հիշատակված ե նրա մոտ նաև Janio կայարանը*) 14 Condeso (*Ռավեննացին այս կայարանից հետո ունի նաև Gavala*) 10 Misium (*Ռավեննացին Misium-ից հետո ունի Savatinum*) 14 Gaulita (*Ռավեննացու մոտ՝ նաև Tendava*) 40 Pagas 7 Apulum (*Ռավեննացու մոտ՝ Apolum*) 5 CASPIAE (*Ռավեննացին ունի Ermu*) 35 Ad fontem felicem (*Ռավեննացու մոտ՝ Fontfelice*) 60 SEASTOPLIS (*Ռավեննացու մոտ՝ Sevantopoli և Sevastolis¹*): Վերոհիշյալ թվերը ցույց են տալիս տարածությունները մի կայարանից մյուս կայարան հոռմեական մղոններով (milia passus=1,4815 կիլոմետր): Մեծագիր տառերով են տպված այն կայարանների անունները (Artaxata, Caspiae և Sebastopolis), վորոնց մոտ Պևտինգերյան քարտեզն ունի նշած զույգ աշտարակներ: Աշտարակները ցույց են տալիս, վոր այդ տեղերը յեղել են նշանավոր կենտրոնավայրեր կամ զինվորական պահակատեղիներ:

2. Կոնրադ Միլերը իր Itineraria Romana աշխատության մեջ (եջ 653—654), նաև բացատրական հատուկ իր

¹ Տես Itineraria Romana, եջ 653—654.

քարտեղում (տես նույնը, եջ 649—650 և 651—652), հիմ
այս ճանապարհի ուղղությունը յենթադրում է այժմյան
Արդաշարից Արմավիրի, Յերվանդաշատի և Ղարսի մոտով
դեպի Արդահան և այսուհետև Կորլիանի մոտով և Զեկառի
լեռնանցքով դեպի Ռիոն և Ռիոնից Սեբաստոպոլիս, այսինքն՝
այժմյան հսկութիւն:

Կայարանների տեղերը մանրամասն ցույց են տրված
նրա մոտ հետեւյալ հաջորդականությամբ՝

Artaxata—Արդաշար, Strangira—այժմյան Արմավիրում կամ նրա մոտ, Condeso Կարակալայի մոտ գըտնավող ավերակները, Misium այժմ Յերվանդաշատի և նրա մոտ գտնվող ավերակները, Gaulita—այժմ Կյօրօցիլու Kalessi-ի ավերակները, Caspiae—այժմ. Արդահան, Ad Mercurium—այժմ. Կորլիան, Ad fontem felicem—այժմ. Ռիոն գետի մոտ, Sebastopolis—այժմ. հսկութիւն:

Մենք կըտեսնենք ներքեւ, վոր Կոնրադ Միլերի վորոշած ճանապարհի այս ուղղությունը և, բնականաբար, նաև կայարանների տեղերը Artaxata-ից մինչև Ad fontem felicem, վհչ միայն վիճելի յեն, այլ պարզապես անընդունելի:

Ավելի հաջող են, իմ կարծիքով, Ռ. Կիպերտի և Տոմաշեկի յենթադրությունները Condeso, Pagas, Apulum և Caspiae կայարանների տեղադրության մասին (տես R. Kiepert, Atlas von Kleinasiens in 24 Blättern, 1902—1906 և Tomashesek, Pauly Wissowa Realencykl. «Caspiae» տեղանունը):

Ուշադիր քննությամբ, ինչպես կըտեսնենք, վնչ միայն հաստատվում են Կիպերտի ու Տոմաշեկի կուահումները, այլ և հաստատուն կերպով վորոշվում են թե ճանապարհի ամբողջ ուղղությունը և թե կարևորագույն մյուս կայարանները:

3. Արտաշատից 30 հոռմեական մղոն կամ 45 կիլոմետր հեռավորության վրա մատնանշված է Պևտինգերյան քարտեղում Strangira կայարանը:

Նույն կայարանը Ռավեննացու աշխարհագրության մեջ

անվանված է Stranguria, իսկ յերկիրը՝ civitas Stranguriana, այսինքն՝ «տերություն Stranguriana»: Յեկ վորովհետեւ Պետենգերյան քարտեղը կազմված է չորրորդ դարի յերրորդ քառորդում հայ Արշակունիների տիրապետության ժամանակ՝ դժվար չել կուահեր վոր Strangira կամ Stranguria կայարանը կենցրոն է յեղել հատուկ մի նախարարության, վորը Ռավեննացին անվանում է civitas, այսինքն՝ «տերություն»:

Կոնրադ Միլերի կարծիքը, վոր այս կայարանի տեղը կարելի յե յենթագրել Արմավիրում՝ հակասում է, ինչպես կըտեսնենք, Artaxata—Sebastopolis ճանապարհի այն նոր ուղղության, վոր վորոշվում է ճշգրիտ կերպով այժմյան Արարանի ճանապարհով դեպի Մարմաշեն-Ղանլիճա ($=$ Gaulita):

Արդ՝ ուշագրավ ե ու հետաքրքիր, վոր հենց այս ճանապարհի վրա և Արտաշատից մոտ 45 կիլոմետր հեռավորության վրա գտնվում է այժմ Աշտարակ գյուղը, վորն, ինչպես կարծում են, նշանավոր կենցրոնավայր և յեղել հնագույն ժամանակներում: Յեկ ինձ թվում ե, վոր անհավանական չի լինի յենթագրել վոր Strangira կամ Stranguria տեղանվան մեջ կարող ե պահանջնաված լինել գուցե և աղճատված ձևով, այժմյան Աշտարակ գյուղի հին անունը, վորը, դժբախտաբար, հիշատակված չե մատենագրական հնագույն յերկերում:

Առաջին անգամ Աշտարակ գյուղը, ինչպես հայտնի յե, հիշված է ութերորդ դարից հետո, իբրև հայրենիք Գևորգ Ա. կաթողիկոսի (տես Ասողիկ, III, 2, եջ 106):

«Թէպէտ և առ մնացեալ պատմիչս մեր ասում ե Ալիշանը ոչ յառաջ քան զիններորդ դար յիշի Աշտարակ, իբրև հայրենիք Գէորգայ Ա. կաթողիկոսի, այլ հարկ է ամենայնիւ եթէ ոչ միայն իբրև զայլս ոմանս ի գիւղից և աւանաց Արագածոտան բարգաւաճ եղեալ իցէ՝ կանխագոյն և ժամանակօք, այլ և քան զյոգունս՝ թէ ոչ քան զբնաւս՝ երկելի և շինաշատ» (տես «Այրարատ», Վենետիկ 1890, եջ 185):

Ն. Մառը կարծում ե նույնիսկ, վոր նախաքրիստոնեական շրջանում Աշտարակը յեղել ե վիշապների պաշտաման վայր և վոր այստեղ բասիլիկ ձևի հին յեկեղեցին կառուցված ե վիշապների հեթանոսական սրբավայրի ավերակների տեղում (տես „Լեгенды об основании Куара в Армении и Киева на Руси“, Известия ГАИМК, т. III, Ленинград 1924, էջ 278):

Ըստունելով ըստ այսմ, վոր Աշտարակ գյուղը համարվելու յե մեծ ու նշանավոր հին կենդրոնավայր և ի նկատի ունենալով Strangira կամ Stranguria կայարանի վերոհիշյալ հեռավորությունն Արտաշատից՝ հնարավոր ու հավանական կարելի յե համարել ըստ իս, վոր Պետինգերյան քարտեզի և Ռավինացու աշխարհագրության վկայությունները վերաբերվում են, իրոք, Արշակունյաց շրջանի հին Աշտարակին, վորի այժմյան անունը ծագել ե, հավանողեն, նրա նախայկական նման անունից, ըստ յերեսույթին, ժողովրդական ստուգարանությամբ:

Ուշագրավ ե առանձնապես, վոր Strangira կամ Stranguria կայարանի անվան օրա կամ ավելի ճիշտ՝ uria վերջավորությունը, ըստ յերեսույթին, նախահայկական ե և համապատասխանում ե այժմյան Արմավիրի հին անվան վերջավորության՝ հուն.՝ Αρτασտարակ. 1901 թ., էջ 941) և Արաշուրք: Կարելի յե, ուրեմն, յենթադրել վոր Strangira-ն կամ Stranguria-ն, ինչպես և Արմավիրը, խալդական շրջանի տեղանուններ են, վորոնց՝ օրա կամ uria վերջածանցը կարոտ ե լեզվագիտական հատուկ մեկնության: Այդ կարող են, իհարկե, անել, գլխավորապես, խալդագետ լեզվարանները:

Անտարակուսելի յե սակայն, վոր Artaxata-Sebastopolis ճամսապարհն անցել ե, ինչպես կըտեսնենք, վհչ թե Արմավիրի, այլ այժմյան Աշտարակի մոտով:

4. Strangira կամ Stranguria կայարանից 14 հոռմեական մղոն կամ մոտ 21 կիլոմետր հեռավորության վրա Պետինգերյան քարտեզում նշանակված ե Condeso կայարանը:

Սակայն Ռավինացու աշխարհագրությունն ունի Condeso-յից առաջ նաև Janio կայարանը:

Այս վերջին վկայությունից դժվար չե հետևյալ, վոր հոռմեական քարտեզի ավելի ստույգ և ավելի լրիվ որինակում, վորից ուղարկել եր Ռավինացին, մատնանշված ե յեղել վհչ միայն Janio կայարանը, այլ և տարածությունը Artaxata-յից մինչև Janio: Ուրեմն՝ Condeso-յի հեռավորությունը Strangira-յից պետք ե լիներ վհչ թե 14 հոռմեական մղոն, այլ ավելի:

Վերոհիշյալ յերկու կայարանների թե անունները և թե հավանական տեղադրությունը հնարավոր ե, իմ կարծիքով, վորոշել Աշտարակից Կոնդախսազ տանող ճանապարհի վրա:

Հենց այս Կոնդախսազ գյուղը, ինչպես ճիշտ նկատել ե Ռ. Կիպերսը (տես Atlas von Kleinasien), համապատասխանում ե Condeso կայարանին: Կոնդախսազ անվան թուրքական նոր ձևը չպետք ե մեզ շփոթեցնե: Հայաստանի աշխարհագրության ուշադիր քննությունը ցույց ե տալիս, վոր հայկական հին տեղանունները պահպանվել են հաճախ, կրելով վորոշ փոփոխություններ թուրքերենի ազդեցությամբ:

Որինակ՝ Վայոց ձորում գտնվող այժմյան Սելիմի լեռնանցքի անունը համապատասխանում ե, անտարակույս, Սուլլիմաձոր անվան (տես Ալիշան, Սիսական, Վենետիկ 1893, էջ 163—164): Բասենում գտնվող այժմյան ենդեկ գյուղը (ոռոսական հին շտապի տասը վերստանոց քարտեզի վրա՝ ԹԻԴԷԿ), վորի արտասանությունը թուրքական ե, համապատասխանում ե դարձյալ, ինչպես վիրե տեսանք, Պետինգերյան քարտեզի Andaga (Ռավինացու մոտ՝ Andacas) կայարանին:

Ուրեմն՝ ավելի քան հավանական ե, վոր այժմյան Կոնդախսազը, վորի անունը թուրքերեն ե թվում, կարելի յե յենթադրել ծագումով հին հայկական տեղանուն և նույնացնել Condeso-յի հետ:

5. Աշտարակից Կոնդախսազ գնացող ճանապարհի վրա

պետք ելիներ ըստ այսմ և Ռազմանացու հիշատակած յամա կայարանը։ Սրա անվան մասին մենք տալիս ենք ներքե հնարավոր մի բացատրություն, սակայն վորոշ վերապահությամբ։

յանօ կայարանի անունը կարող ե աղճատված լինել ըստ իս յ և Տ ու ի և տառերի շփոթման պատճառով։ Այս տեղանվան ուղիղ ընթերցվածք հնարավոր ե, ուրեմն, յենթադրել *Tanco կամ *Tanc(c)io։ Իսկ այս վերջին անունը կարող ե, ինչպես կըտեսնենք, համապատասխան լինել հայերեն ձանկի տեղանվան, վորոշ վհչ միայն գյուղերի, այլ և լեռան ու գետի անուն ե, գլխավորապես, Արարանի ցրջանում (տես Ալիշան, «Այրարատ», եջ 249 և «Երակ», եջ 157, հմմտե նաև «Զամբո», Վաղարշապատ 1873, եջ 125 և 289)։

Ուշագրավ ե առանձնապես Ալիշանի հաղորդած տեղեկությունը Գյուլլուջայի մոտ գտնվող ավերակ կարավանատան մասին, վոր նա անվանում ե ձանկի կամ ձանդու։

«Որպէս և ահա գրեալդ Վարդարլուր ասում ե Ալիշանը թերեւս իցէ կոչեցեան Քիւլիւճա (իրը Կիւլիւճէ), գիւղատեղի ամայի ի վերնակողման վիճակիս, յաջմէ կամ յարեմտից գետակին՝ զոր մարթ է սկիզբն համարել Քասաղայ, և հուպ յելից կուսէ՝ ձանկի-թեփէ լեռնաբլոյ, յոր անուն կայ և հանգրուան ի չը. Քիւլիճայ և գրեաթէ կից նմին, ձանկի կամ ձանդու անուն, ուր և աւերակ կարաւանատան» (տես «Այրարատ», եջ 249)։

Առկանի թողնելով յանօ [*Tanco կամ *Tanc(c)io] կայարանի տեղադրության խնդիրը՝ մենք հավանական ենք համարում, վոր այդ տեղանվան նույնացումը ձանկի անվան հետ հնարավոր ե։

Վոր այս կայարանի առաջին Տ տառը կարող ե համապատասխան լինել հայերեն ճ տառին՝ այդ ցույց են տալիս տառադարձության նաև հետեյալ նման որինակները՝ Արձեշ = լատ. Aretissa (Plin.), հին պրսկ. ձիշպիշ = հուն. Τει' շուշի,

հին պրսկ. ձիթրառշուա = հուն. Τειρաս' շուշի (տես Markwart, Südarmenien und die Tigrisquellen, եջ 21)։

Դժվար չե նաև բացատրել յանօ [*Tanco կամ *Tancio] տեղանվան նաև — ու կամ ու վերջավորությունը։ Հայտնի յեմեղ արդեն, վոր Պետինգերյան քարտեզի *Tsumbo կայարանը համապատասխանում ե Ծումբ-Ծումբո գյուղին։ Հասկանալի յե, ուրեմն, վոր *Tanco կամ *Tancio տեղանունը կարող ե նույնպես համապատասխան լինել հին հայերեն ձանկի-ձանկի, ձանկո տեղանվան։

Տարածությունն Աշտարակից մինչև Կոնդախսակ այժմ մոտ 50 կիլոմետր եւ Յեթե Պետինգերյան քարտեզում տարածությունը Strangira-յից մինչև Condeso ցույց ե արված 14 հոռմեական մղոն կամ 21 կիլոմետր՝ այդ բացատրվում ե, ինչպես ասացինք, նրանով, վոր քարտեզի արտագրողը չե նշանակել յանօ [*Tanco կամ *Tancio] կայարանը։ Ուրեմն՝ Անանուն Ռավեննացու վկայության ողնությամբ քարտեզի սկրնական բնագիրը կարելի յե յենթադրել հետեյալ բովանդակությամբ՝ Strangira [?] յանօ (հավանողեն՝ *Tanco կամ *Tancio) XIV Condeso։

6. Artaxata—Sebastopolis ճանապարհի ուղղությունը պետք ե յենթադրել այսուհետեւ, հավանորեն, այժմյան Ղուլիջանի վրայով գեպի Ղանլիճա-Մարմաշեն։

Մենք տեսանք վերև, վոր Պետինգերյան քարտեզի հին ճանապարհներն անցել են, զիխավորապես, խալդական շըրջանի պատմական հին կենդրունավայրերի մոտով, վորոնց մեջ գտնվում են այժմ խալդական արձանագրություններ։ Յեկ հետո այժմյան Ղուլիջանում գտնված ե, ինչպես հայտնի յե, Արգիշտի 1-ի կարեոր արձանագրությունը (տես Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, Bd. II, Zweite Hälfte, Berlin 1931, եջ XVIII), հավանական ե ըստ այսմ, վոր հին այս ճանապարհի ուղղությունը կարելի յե յենթադրել, իրոք, Կոնդախսակից դեպի արևեմուտք՝ Ղուլիջան գյուղի մոտով։

Այս գծի վրա Պետինգերյան քարտեզում նշանակված

Ին հետեւյալ կայարանները՝ Condeso 10 Misium 14 Gaulita, իսկ Ռավիննացու աշխարհագրության մեջ՝ Condeso, Gavala, Misium, Savatinum, Gaulitia:

Ուղիղ ե, իմ կարծիքով, դարձյալ Ռավիննացու վկայությունը, վորն իր ձեռքի տակ ունեցել ե հռոմեական նույն քարտեզի ավելի ընտիր մի ձեռագիր։ Այժմյան քարտեզի արտագրողը չե նշանակել, ինչպես այդ յերեսում ե քարտեզի նկարից (տես Itineraria Romana, եջ 637—638), Gaula և Savatinum կայարանները և համապատասխան տարածությունները, ըստ յերեսութիւն, տեղի սղության պատճուղ։

Այս յենթադրությունը թվում ե ինձ միանգամայն հիմնավոր, վորովհետև այժմյան տարածությունը Condeso—Կոնդախսազից մինչև *Ganlita—Գանլիճա վոչ թե 24 հռոմեական մղոն ե (մոտ 35 կիլոմետր), ինչպես ունի Պետինգերյան քարտեզը, այլ մոտ 60 կիլոմետր։

Վերոհիշյալ կայարաններից Misium-ը Կոնդադ Միլերը համարում է Ախուրյան գետը Յերվանդաշատի մոտ։ Misium-ը նա համապատասխան է յենթադրում Usis կամ Musis գետին, վորը հիշատակված է Պիխիուսի մոտ (տես edit. Littré, t. I, Paris 1883, VI, 10, 1, եջ 242)։ Այս յենթադրությունը, իհարկե, ճիշտ չե, վորովհետև Artaxata—Sebastopolis ճանապարհը վորոշվում ե, ինչպես տեսանք, տարբերողությամբ։

7. Վոր Պետինգերյան քարտեզի այս ճանապարհագիծն անցել ե, իրոք, վերև մատնանշված հին ճանապարհով, վորը Միմեռն կաթողիկոսի «Ճամբռ»-ում անվանված է «Վրացանու ճանապարհ» (տես եջ 125)։ այդ պարզ յերեսում ե Gaulita կայարանի տեղադրության ձշումից, վոր մինք համարում ենք անվիճելի։

Վերոհիշյալ Gaulita-ն (Ռավիննացու մոտ՝ Gaulitia) թե իր անունով և թե իր տեղադրությամբ համապատասխանում ե, անտարակույս, այժմյան Ղանլիճա գյուղին, վորի հին անունը պետք ե յենթադրել վոչ թե Ղանլիճա, այլ, հավա-

նորեն, Գանլիճա, Պետինգերյան քարտեզում Gaulita-ի անունն աղճատված ե ակներեաբար լատինական և և ո տառերի շփոթման պատճառով, ուստի և այս անվան ուղիղ ընթերցվածը պետք ե ընդունել *Ganlita։ Իսկ *Ganlita-ն ձշտիվ համապատասխանում ե «Գանլիճա» տեղանվան, վորովհետև, ինչպես վերև տեսանք, հայերեն և տառի տառադարձումը լատինական ու հռոմեական և կամ և տառերով սովորական և եղգաբանորեն միանգամայն որինաչափ։

Գանլիճան, ինչպես տեսնում ենք, գոյություն ե ունեցել Արշակունյաց թագավորության ժամանակ և գտնվել ե Հայաստանից Վրաստան և Կողքիս տահող հին ճանապարհի վրա։

Վոր այս գյուղը բնակելի ու կարևոր վայր ե յեղել հնագույն իսկ խալդական շրջանում՝ այդ ևս վորոշ ե, վորովհետև այդտեղ գտնված ե խալդական արձանագրություն, վորից մենք գիտենք, վոր Արգիշտի I-ը (778—750 թ. ն. քան մեր դարաշրջանը) նվաճել ե Երիախի յերկիրը և իրդանուինի քաղաքը։

Գտնվելով ուազմական ու առետրական մեծ ճանապարհի վրա՝ Գանլիճան, բնականաբար, յենթարկվել ե հաճախ ավերածության և անգամ բնաջինջ կործանման։

Մատենագրական հայ աղբյուրներում Գանլիճան, վորքան ինձ հայտնի յե, բնավ չե հիշատակված։ Առաջին անգամ, Բագրատունյաց միայն շրջանում, Ասողիկի ու նաև ավելի ուշ շրջանի մատենագրական յերկիրում հիշվում ե Գանլիճայում գտնվող Մարմաշն վանքը, վորը կառուցել եր Վահրամ Պահլավունին 986—1029 թ. (տես Օրбели, Надписы Мармашена, Петроград, 1914)։ Ալիշանի յենթարկությամբ (տես «Եփրակ», եջ 153)՝ նույն այս Գանլիճայում պետք ե յենթադրել նույնպես Վահրամ Պահլավունու կառուցած ամրապատ և աշտարակագարդ դղյակը և պարիսպները, վորոնց մասին Սանահնեցիներին գրած իր թըղթում Գրիգոր Մագիստրոսն ունի հետեւյալ վկայությունը՝

«Եւ զդղեկաց սքանչելի և ամրապատ պարսպօք և

աշտարակօք յարամանեաւ, որ և ի ասհարձանաց ոք այժմ եթէ հայեսցի՝ ոչ ի բնավ բնակության Արամեան գտցէ ոք այսպիսի» (տես Կ. Կոստանեանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ 1910, եջ 141): Գանլիճա-Մարմաշենի մասին ուշագրավ տեղեկություններ և հաղորդում, բացի այդ, իրն ալ Աթիրը, վորը նկարագրել և Մարմաշենի նվաճումը 1064 թվին Սեղուկյան զոլքերի կողմից Աղքասլանի վորդու Սեղիքշահի առաջնորդությամբ: Իրն ալ Աթիրի վկայությամբ՝ «Մարյամ-Նիշին»-ը յեղել և հոյակապ մի քաղաք, ունեցել և ամրապատպարհապներ և պաշտպանված և յեղել մի մեծ գետով: Թուրքերը մոտեցել են պարխապներին նավակների ոգնությամբ և կարողացել են գրավել քաղաքը համառ կոփսերից հետո: Ներս խուժելով քաղաք՝ Սեղուկյան զորքերը վնչ միայն կոտորել են բնակչությունը, այլ և հրդեհել են ու քանդել քաղաքի շինությունները¹:

Մարմաշենի վերանորոգումը, ինչպես հայտնի յե կաթողիկե յեկեղեցու ընդարձակ արձանագրությունից, տեղի յե ունեցել իվանե աթարեգի և Զաքարի սպասալարի վորդու Շահնշահի հրամանով 1225 թվին «ի ձեռն որդւոյ Ապուդամիրի Մագիստրոսի Տէր Գրիգորոյ արհիեպիսկոպոսի և հարազատի...Խարքին» թոռանց Վահրամա իշխանաց իշխանին» (տես Հաճուս Մարմաշեն, եջ 2):

Իրն ալ Աթիրի Սեղուկյան արշավանքներին վերաբերյալ մանրամասն վկայություններն ուշագրավ են ու հետաքրքիր այն տեսակետից, վոր նրանք պարզ ու վորոշ ցույց են տալիս, վոր Գանլիճա-Մարմաշենի մոտով և անցել, իրոք, հին ճանապարհը դեպի Ախուլքալաք, Վրաստան և Ափիսպը:

8. Պատինգերյան քարտեղի Artaxata-Sebastopolis գծի ուղղությունն այժմյան Արարանով և Գանլիճա—*Ganlita-ի

¹ Տէս Ալիշան, Շիրակ, եջ 153-154, Saint-Martin, Mémoires II, Paris 1819, եջ 226-227 և Markwart, Das Itinerar von Artaxata nach Armastica, Wien 1928, եջ 39-40.

մոտով կարող ե, ինչպես տեսնում էնք, յելակետ ծառայել հայ և ոտար զորքերի սսվորական ու հավանական ճանապարհի վորոշման Արտաշատից դեպի Շիրակ և Շիրակից դեպի Վրաստան ու Ափիսպը:

Դանլիճայից գեպի հյուսիս գնացող հենց այս գծի վորոշմասը մատենագրական հայ աղբյուրներում անվանված ել ըստ իս «Ճանապարհ Աշոցաց» կամ «պողոտայ կողմանցն Աշոցաց»¹:

Վոր Պատինգերյան քարտեղի վերոհիշյալ հին ճանապարհով եյին գնում արշավող զորքերը Արտաշատից կամ Դվինից Կումայրի և այստեղից Վրաստան ու Ափիսպը՝ այդ յերեսում ե, որինակ, Ղևոնդի, Ասողիկի և Սերեսուի հետևյալ վկայություններից²:

1. «Պատմութիւն Ղեղնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ա.-Պետերը. 1887, գլ. 17, եջ 138³

«Եւ սկիզբն բանիս այսորիկ լինէր ի ձեռն Արտաւագդայ, որ էր ի տանէ Մամիկոնէից. որոյ երթեալ ի մայրաքաղաքն Դուին՝ կազմութիւն մեծ առնէր զօրաց իւրոց. և ստանայր անդ գէնս և անօթս պատերազմի, և վառէր զինքն զրահիւք և սաղավարտիւք և ամենայն սպառազինութեամբք, և մտերիմ զինքն երեցուցանէր զօրացն իսմայելի, իրը թէ մարտնչել ընդ թշնամիս նոցա կազմիցի: Եւ որոշեալ զինքն ի միաբանութենէ նոցա՝ հասանէր ի գաւառն Շիրակ ի գիւղն Կումայրի, և սպաննէր զիրամանատար հարկին: Եւ որ ինչ գտանէր ի ձեռին նորա առեալ համբանայր ամենայն տամբ իւրով, զնայր ի կողմանս Վրաց աշխարհին, և ըսդ նմա ամենայն

¹ Տէս «Համառոտ պատմութիւն Վրաց, ընծայեալ Զուանշէրի պատմչի», Վենետիկ 1884, եջ 33 և «Յովհաննու կաթողիկոսի Դրասիանակերտեցւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912, եջ 195: Հմմտե նաև Լեռնատի Մրովելու հետեւալ վկայությունը՝ «Իսկ իրենք Վրաց (Քարթիի) թագավորները Մցկեթից ուղղվում եյին զեպի Հայք (Սոմիթի) Աշոցքի ճանապարհով», տես Պրոֆ. Դր. Լ. Մելքոնեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հատոր Ա, Եթերքան 1934, եջ 157—158:

նախարարք աշխարհիս: Եւ հասեալ համբաւ ի քաղաքն Դուին, եթէ այս ոճիրք դառն գործեցան յորդւոցն Հմայեկի՝ վաղվաղակի առնոյր զօր բազում Մահմետն, և զՍմբատ որդի Աշոտայ զսպարապետն Հայոց և զայլ նախարարն, և հետամուտ լինէր զինի նոցա. հասանէր յաշխարհին Վրաց ի գաւառին որ կոչի Սամցիէ. և կալեալ զկիրճն՝ թափէր ապուռ ինչ յաւարէն. և զնոսա վարեալ փախստական առնէր յաշխարհէս Հայոց»:

2. «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ա.-Պետերբուրգ 1885, կջ 252—253:

«Յայսմ պատճառէ որդին Գուրգենայ թագաւոր Ափխազց խաղայ զօրօք բազմօք ի Սարմատացւոց աշխարհէն ի վերայ կիւրապաղատին Դաւթի և հաւուն իւրոյ Բագարատայ, յայսկույս անցեալ ընդ կովկասային լերինսն՝ գայ բանակի յեզերս Կուրն կոչեցեալ զետոյ:

Եւ կիւրապաղատն Տայոց Դաւթի և թագաւորն Վրաց Բագարատ առաքեն առ թագաւորն Հայոց Սմբատ՝ կոչել յօդնականութիւն իւրեանց: Եւ նորա առեալ զամենայն զօրս Հայոց և զԴագիկ զեղբայր իւր՝ գնաց առ նոսա ի գաւառն Զաւախաց. և բանակին ի գիւղն, որ կոչի Դիլիկեկն, և մանուկն Աբաս թագաւորն Կարուց զկարմրազգեստ զգունդն իւր ունելով: Եւ ամենայն զօրն Վրաց և Վասպուրականի, Սիւնեաց և Աղուանից իշխանքն միահաւաք լինէին ընդդէմ Ափխազաց զօրուն: Որոց երկուցեալ զխաղաղութիւն ինդրեն և սէր հաստատեն առ միմեանս»:

3. «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակն», Ա. Պետերբուրգ 1879, գլ. ի՞ի, եջ 80:

«Արդ՝ զսա [զՓիլիպիկոս] բռնադատեալ Հերակլի, կարգէ զաւրավար և արձակէ ի կողմանս արևելից զաւրու մեծաւ: Եւ նորա զիմեալ ընդ կեսարիա Կապաղով կացւոց, երթեալ հասանէր ի Հայաստան երկիր՝ ի գաւառն Այրարատայ, և բանակի ի դաշտին Վաղարշապատ քաղաքի: Հապճեպ սոտիպով ի ձեռն թեթելնթաց երա-

գոտն սուրհանդակաց հրաման թագաւորին հասաւ. մեծաւ վտանգաւ ստիպէր զզաւրս իւր հասանել զետնորա, և անյիշատակ ի միջոյ ի բաց բանալ զզաւրն: Եւ նոքա երթեալ մեծաւ ստիպով հասին ի գաւառն Այրարատայ և բանակեցան ի վերայ գետեզերն երասխայ, կամեցեալ առ վաղին խմբել զգործ պատերազմին: Ի նմին ժամու ի գիշերին գնացեալ ի վերայ Փիլիպոսի ի նիգ գաւառի և պատեալ զթիկամբք լերինն Արագածայ, երթեալ անցանէ ընդ Շիրակ և ընդ Վանանդ մերձ քաղաքաւն Կարնոյ և երթեալ հասանէ ի սահմանս իւր»:

Այս վկայություններից առաջինի համաձայն Արտավազդ Սամիկոնյանի ճանապարհը պետք ե յենթադրել Դիլիկից Արարանի վրայով Կումայրի և այստեղից Գանլիճայի մոտով և Աշոցք ու Զավախիք գավառների միջով Սամցիւե: Յերրորդ վկայության մեջ ճանապարհամասն Աշտարակից մինչև Շիրակ համապատասխանում ե դարձյալ Պետինգերյան քարտեզի ճանապարհագծին՝ «Վաղարշապատ քաղաքի դաշտ»-ից Աշտարակի մոտով և նիգ գավառի միջով դեպի Շիրակ և այսուհետև Կարսի ու Կարինի մոտով «ի սահմանս իւր»: Յերկրորդ վկայության մեջ ևս զորքերի տեղաշարժումները վորոշվում են դարձյալ Պետինգերյան քարտեզի այն ճանապարհամասով, վորի ուղղությունը ներքև լուսաբանելու յենք: Ափխազաց թագավորի զորքերը յեկել եյին Կուր գետի յեղերքը, հավանորեն, այժմյան Ռիոնի, Զելառոփ լեռնանցքի և Արասթումանի վրայով, իսկ Դավիթ կյուրապաղատի և Հայոց Սմբատ թագավորի զորքերը՝ գալով Զավախիք Գանլիճի մոտով՝ բանակել եյին այստեղ Դիլիկել զյուղում, վորը, հավանորեն, Ախալքալաքի հարավակողմում գտնվող այժմյան Դիլիք զյուղն ե:

9. Գանլիճայից հետո Պետինգերյան քարտեզում նշանակված են հետեւյալ կայարանները՝ *Ganlita 40 Pagas 7 Apulum 5 CASPIAE, իսկ Ռազմիննացու աշխարհագրության մեջ՝ Gaulitia, Tendava, Pagas, Apolum և Caspi.

Այս կայարաններից ճիշտ են վորոշված, ինչպես վերև

ասացինք, Pagas, Apulum (*Խավենսացում մոտ՝ Apolum*) և Caspiae (*Խավենսացում մոտ՝ Caspiae և Caspi*), վորոնց անունները Տոմաշեկը համապատասխան են համարել այժմյան Փողային Փարվանա թի մոտ և Փողայից դեպի արևմուտք գտնվող Աբուլին և Խոսպիային (տես Pauly-Wissowa Realencykl.): Այս յերեք կայարանների հնագույն տեղադրությունն անհրաժեշտ է, անշուշտ, ճշտել տեղում:

Խոսպիայի մոտ, վոր գտնվում է Ախալքալաքից մի քանի կիլոմետր դեպի հարավ, Պետինգերյան քարտեզում նկարված են զույգ աշտարակներ: Կարելի յե ըստ այսմ յենթադրել վոր հին Զավախքում կարեռը կենդրոնավայր և յեղել վհչ թե այժմյան Ախալքալաքը, այսինքն՝ Նոր քաղաքը (վրց. ախալի քալաքի = Նոր քաղաք), այլ հնագույն Խոսպիան:

Տարածությունը *Ganlita-ից մինչև Pagas Պետինգերյան քարտեզում ցույց ե տրված 40 հոռմեական մղոն կամ մոտ 60 կիլոմետր, մինչդեռ այժմյան հեռավորությունը Գանլիճա - Մարմաշենից մինչև Փարվանա լինը մոտավորապես 80—85 կիլոմետր ե:

Այս հակասությունը բացատրվում է, իմ կարծիքով, նրանով, վոր Պետինգերյան այժմյան քարտեզի ընդորինակողը բաց և թողել դարձյալ Tendava կայարանը և տարածությունը *Ganlita-ից մինչև Tendava, վոր նշանակված են յեղել հոռմեական այն քարտեզում, վորից ոգտվել ե Անանուն Խավենսացին: Tendava-ի տեղը պետք ե յենթադրել, հնավանորեն, *Ganlita - Գանլիճայից մոտ 20—25 կիլոմետր դեպի հյուսիս:

Պետինգերյան քարտեզի սկզբնական հին բնագիրը հնարավոր ե ըստ այսմ մոտավորապես վերականգնել հետեւյալ բովանդակությամբ *Ganlita? (մոտ 20—25 կիլոմետր) Tendava 40 Pagas 7 Apulum 5 Caspiae:

10. Խոսպիայից հետո ճանապարհի ուղղությունը վորոշվում ե միանգամայն հաստատում կերպով և առանց վորեւ դժվարության:

Պետինգերյան քարտեզում Caspiae կայարանից 45 հոռ-

մեական մղոն կամ մոտ 67 կիլոմետր հեռավորության վրա նշանակված ե Ad Mercurium կայարանը: Կոնրադ Միլլերը, վորը Caspiae կայարանի տեղը վորոշել ե այժմյան Արդահանից բարձրացող ճանապարհի վրա՝ այժմյան Կորլիան գետի մոտ: Իսկ Տոմաշեկը, վորը Caspiae կայարանի անունը համապատասխան ե համարել այժմյան Խոսպիային, Ad Mercurium-ի տեղը յենթադրում ե, հակառակ հոռմեական քարտեզում ցույց տված տարածության, Ախալքալաքից Ախալցխա տանող ճանապարհի վրա՝ այժմյան Ասպինջայում:

Այս յերկու յենթադրությունն ել ըստ իս անընդունելի յեն: Ad Mercurium-ը, անտարակույս, Կուրի այն գետանցքն ե, վորը գտնվում ե այժմյան Ախալցխայի մոտ: Ad Mercurium, այսինքն՝ «Mercurium-ի քով» նշանակում ե վհչ այլինչ, քան «Կուրի գետանցքի մոտ»:

Mercurium-ը չե կարող, իհարկե, վորևէ կապ ունենալ Ցուպիտերի վորու Mercurius-ի հետ: Այս անվան մեջ ստուլատինական վերջավորություն ե, իսկ Mercuri-, վոր պետք ե ըստ իս ուղղել *Metcuri-, համապատասխանում ե, անտարակույս, Կուր գետի վրացական Mtkvari անվան:

Վոր այս մեկնությունը հիմնավոր ե և անվիճելի՝ այդ պարզ ցույց ե տալիս Պետինգերյան քարտեզում մատնանըշված 45 հոռմեական մղոն կամ մոտ 67 կիլոմետր տարածությունը Caspiae կայարանից մինչև Ad *Metcurium: Հենց ձիշտ և ձիշտ այդ տարածության վրա յե գտնվում այժմյան Խոսպիայից Կուր գետի անցքը Ախալքալաք-Ախալցխա ճանապարհի վրա՝ մոտ 8 կիլոմետր Ախալցխայից դեպի հարավ-արևելք:

Միանգամայն պարզ ե, ուրեմն, վոր Ad *Metcurium-ը թե ըստ իր անվան և թե ըստ վերոհիշյալ տարածության համապատասխանում ե ճշտիվ Mtkvari- Կուրի գետանցքին:

11. Ad *Metcurium կայարանից հետո Artaxata-Sebastopolis հին ճանապարհի ուղղությունը վորոշվում ե այժմյան

Աբասթումանի ու Զեկառի լեռնանցքի վրայով դեպի Ռիոն
և Ռիոնից գետի Սերաստոպոլիս:

Ճանապարհի այս գծի վրա Պլատինգերյան քարտեզում
ցույց են տրված հետևյալ կայսրանները՝ Ad *Metcurium 35
Ad fontem felicem 60 Sebastopolis, իսկ Ռավեննացու աշխար-
հագրության մեջ՝ Ermu, Fontfelice և Sevantopoli կամ Se-
vastolis.


Տոմաշելը, վորը Ad Mercurium-ի տեղը մատնացույց ե
արել, ինչպես տեսանք, այժմյան Ասպինջայում՝ Ad fontem
felicem-ի տեղը յենթադրում ե այժմյան Ազղորում։ Իսկ
Կոնդադ Միլերը, վորն Ad Mercurium-ի տեղը վորոշել ե
Կորլիան գետի մատնական և համարում, վոր Ad fontem
felicem-ի տեղը պետք ե լինել Ռիոն գետի մոտ։

Այս վերջին կարծիքը թվում ե ինձ հավանական, վո-
րովհետև այս կայսանը ևս, ինչպես յերեսում ե նրա անունից
(հմմտե Ad confluentes, Ad *Metcurium ևն), պետք ե լինել
գետանցքի մոտ։

Անհրաժեշտ ե սակայն մատնանշել, վոր այս յենթա-
դրությունը չե համապատասխանում Պլատինգերյան քարտե-
զում ցույց տրված հռոավորության։ Այժմյան այդ քարտեզի
մեջ տարածությունն Ad *Metcurium-ից մինչև Ad fontem
felicem ցույց ե տրված 35 հռոմեական մղոն կամ մոտ 52
կիլոմետր, իսկ, իրապես, տարածությունը Ռիոն գետից մին-
չև Կուր գետը (այժմյան Ախալցխայի մոտ) մոտավորապես
110 կիլոմետր ե։

Լինչի մոտ, վորը մանրամասն նկարագրել ե այս ճանա-
պարհը, տարածությունը Թութայիսից մինչև Ախալցխա
ցույց ե տրված 113 վերստ, այսինքն՝ 120 կիլոմետր (տես
Արմենիա, թ. I, Տիֆլիս 1910, էջ 65—73)։

Դժվար չե սակայն բացատրել, թե ինչո՞ւ Պլատինգերյան
քարտեզի վերոհիշյալ հռոավորությունը չե համապատաս-
խանում այժմյան իրական տարածության։ Քննելով Պլատին-
գերյան քարտեզի և Ռավեննացու աշխարհագրության վկա-
յությունները՝ վերև մնաք արդեն տեսանք, վոր հռոմեական



այժմյան քարտեզի բնդորինակողը չե արտագրել մի շարք կայարանների անուններ և նրանց մոտ նշանակված մղոնաթվեր, վորոնք յեղել են Ռավեննացու ավելի հին ու ավելի ընտիր որինակում:

Կարելի յե, ուրեմն, յենթագրել, վոր ճանապարհի այս գծում ևս Պետինգերյան քարտեզում չեն նշանակված Ad *Meturium-ից հետո Ermu կայարանը, նաև համապատասխան տարածությունը, վոր հիշված են յեղել, հավանորեն, Ռավեննացու ձեռագրում:

12. Ad fontem felicem կայարանից հետո Պետինգերյան քարտեզում նշանակված ե, ինչպես ասացինք, Sebastopolis կայարանը, վորի հեռավորությունն Ad fontem felicem-ից ցույց ե տրված 60 հոռմեական մղոն կամ մոտ 90 կիլոմետր: Արդ՝ հետաքրքիր ե և ուշագրության արժանի, վոր ուղիղ այս հեռավորության վրա գտնվում ե Ռիոնի գետանցքի մոտից (=Ad fontem felicem) վհչ թե Խոկուրիա-Սեբաստոպոլիսը, այլ այժմյան Փոթին, վորը, ինչպես հայսնի յե, Տրայանոս կայսեր ժամանակվանից սկսած (98—117 թ. Ք.ր. հ.) անվանվել ե նույնպես Sebastopolis (տես H. Kiepert, Handbuch der alten Geographie, Berlin 1878, եջ 88):

Թեև Պետինգերյան քարտեզի նկարից և վորոշ ցուցումներից յեզրակացնում են սովորաբար, վոր նրա մեջ հիշատակված Sebastopolis-ը այժմյան Խոկուրիան ե, սակայն տարածությունը, ինչպես տեսնում ենք, ցույց ե տրված դեպի Phasis-Sebastopolis, այսինքն՝ դեպի այժմյան Փոթի:

Այս լուսաբանությունը կարևոր ե, վորովհետև նոր այս նույնացումը կարող ե յելակետ ծառայել Պետինգերյան քարտեզի այն խառնաշփոթ տեղեկությունների բացատրության, վորոնք վերաբերվում են Սեբաստոպոլիսից դեպի Տրապիզոն տանող ծովեզրյա ճանապարհին:

Մեր այս ուսումնասիրության մեջ թեև կան յենթադրական վորոշ դիտողություններ, վորոնք կարող են վիճելի համարվել սակայն առարկություններն այդ կետերի նկատմամբ չեն կարող բնավ խախտել հիմնական մեր ստացած

յեղակացությունն Artaxata-Sebastopolis ճանապարհի ուղղության մասին, վորը լուսաբանված ե նաև հատուկ քարտեզում:

Վերոհիշյալ *Ganlita-յի (=Գանլիճա) և Ad *Metecuriūm-ի (=Մտկուարի) ճշգրիտ վորոշմամբ հին այս ճանապարհի ուղղությունը ստացվում ե, անտարակույս, վհչ թե Արմավիրի, Կարսի և Արդահանի վրայով, ինչպես յենթադրել ե Կոնրադ Միլլերը, այլ հյուսիսային գծով՝ այժմյան Աշտարակի, Կոնդախսազի, Ղանլիճայի ու Խոսպիայի մոտով դեպի Ախալցխայի մոտ գտնվող Կուր գետի անցքը և այնուհետև Զեկառի լեռնանցքով դեպի Ռիոն գետը և այնտեղից դեպի Սեբաստոպոլիս:

ԳԵՎՏԻՆԴԵՐՅԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՏԱՐԵՐԻ ՆՄՈՒԾՆԵՐ¹

a - ձձձ, ա	ի - ի , ի	ւ - ւ ւ, ւ ւ
ե - թ ն . ե	ի - լ լ , լ լ	ս - ս ս, ս
շ - շ շ . շ	ո - մ մ օ , ո օ օ	ո - օ օ , օ օ
դ - դ դ , դ դ	ո - հ հ , ո հ	ո - ո օ , օ օ
ե - ւ է է , է	օ - օ	չ - չ չ , չ չ
ֆ - ֆ ֆ ֆ	թ - թ թ թ , թ թ թ	յ - յ յ , յ յ
շ - շ շ , շ շ	զ - զ զ զ , զ զ զ	շ - շ շ , շ շ
հ - հ հ , հ հ	ր - ր ր ր ր , ր ր ր ր	ձ - ձ ձ , ձ ձ
ի - ի , ի	տ - տ տ տ , տ տ տ	ն - ն ն , ն ն
	ս - ս ս ս , ս ս ս	

¹Տես K. Miller, Itineraria Romana, եջ LII.

ARTAXATA—GOBDI—PARESACA

4. ԱՐՏԱՇԱՏ – ԽՈՅ – ՊԱՐԵՍԱԿԱ.

1. Պետինգերյան քարտեզում նշանակված են նաև Արտաշատից Պարսկաստան (Ecbatanis) գնացող հին ճանապարհը, վորի մի մասը մինչև Paresaca քննության ենք առնելու ներքեւ:

Արտաշատից մինչև Paresaca ցույց են տրված քարտեզում հետեւյալ կայարանները՝ ARTAXATA 39 Catispi 27 Sorvae [24] Anteba 24 Nasabi 17 Gobdi (Ռավեննացու մոտ՝ Gobdie) 24 Filadelfia 20 Tris peda (Ռավեննացու մոտ՝ Tarspedo) 45 Paresaca¹:

Գլխագիր տառերով տրված են մեր բնագրում այն կայարանների անունները, վորոնց մոտ Պետինգերյան քարտեզում նկարված են զույգ աշտարակներ. Թվերը ցույց են տալիս տարածությունները մի կայարանից մյուս կայարան հռոմեական մղոններով (milia passus=1,4815 կիլոմետր):

Catispi, Sorue, Anteba և Nasabi կայարանները և նրանց մոտ նշանակված մղոնաթվերը սխալմամբ արտագրված են, ինչպես վերև տեսանք, նաև Բագավանից Ծումբ գնացող ճանապարհագծում: Հարեւան այս ճանապարհագծում նշանակված ե «Sorue»-ից հետո նաև վերև անկյունավոր փակագծում դրված տարածությունը մինչև Anteba, վորը սխալմամբ բաց ե թողնված այս ճանապարհում:

Հատուկ ուշադրության են արժանի նաև Պետինգերյան քարտեզի մի քանի մանրամամությունները: Artaxata և Catispi կայարանների միջև նկարված ե քարտեզում, ըստ

¹ Տես Itineraria Romana, եջ 781—782.

յերևույթին, այժմյան Աղբի-դադ լեռնաշղթան, սակայն այդ յերկու կայարաններ չեն միացված սովորական նկարագծով: Բացի այդ, հետաքրքիր ե և, ինչպես կըտեսնենք, առանձնապես կարեռ, վոր տարածություններն Արտաշատ-յից մինչև Paresaca ցույց են տրված հռոմեական մղոններով, իսկ Paresaca-յից սկսած մինչև Ecbatanis պարասանզներով:

2. Կոնրադ Միլերն իր Itineraria Romana աշխատության մեջ (Եջ 781—782) և բացատրական հատուկ իր քարտեզում (տես նույնը, Եջ 783—784) այս ճանապարհի ուղղությունը յենթադրում ե այժմյան Արդաշարից Խոյի և Մարանդի մոտով դեպի Թավրիզ և կայարանների տեղերը լուսաբանում հետևյալ հաջորդականությամբ՝

Artaxata—Արդաշար, Catispi այժմ Achachmet (տես ուսուական հին շտաբի տասը վերստանոց քարտեզի վրա՝ Ար-Ախմետ Սադարակի և Բաշնորաշենի միջե) կամ Kuzchana, Sorvae—այժմ. Մակվա գետի կամ Meszur-ի մոտ, Anteba—այժմ Perchik Isai-ի մոտ, Nasabi այժմ Tschoros (Kyrys), Gobdi—այժմյան Խոյի շրջանում, Filadelfia—այժմ. Խոյի և Մարանդի միջև, Tris peda—այժմ. Մարանդի մոտ, Paresaca—այժմ. Թավրիզի շրջանում: Մարկվարտի կարծիքով՝ հռոմեական սկզբնական քարտեզի վրա մի առանձին գիծ ե յեղել Isumbo-յից Gobdi, վորը Պետինգերյան քարտեզում նշանակված ե սխալմամբ Artaxata—Ecbatanis ճանապարհի վրա (տես Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin 1919, Եջ 69)¹: Իսկ կարև Մյուլերը, ընդունելով վոր վերոհիշյալ Sorue-Sorvae-ն կարող ե համապատասխան լինել Պտուեմյուսի Տերա-յին, ճանապարհագծի ուղղությունը յենթադրում ե

¹ Մարկվարտի այս յենթադրությունը, վորը յես հավանական ելի համարել Հայաստանի հին ճանապարհները՝ նախորդ իմ աշխատության մեջ (տես Տեղեկագիր Դիտ. և Արք. Խստիստություն 5, Յերեան 1930, Եջ 78, ծան. 1), չե հաստատվում այն նոր տվյալներով, վոր քննության են առնվելու սույն ուսումնասիրության մեջ.

Նախիջևանի վրայով (տես Մարկվարտի «Das Itinerar von Artaxata nach Armastica», Tafel III):

Իմ կարծիքով, Հայաստանի հին այս ճանապարհի վերոհիշյալ ուղղությունները, վոր մատնանշված են յեվրոպական գիտնականների ուսումնասիրություններում, միանգամայն անհավանական են ու անընդունելի: Ճիշտ կարելի յենամարել նրանց կարծիքը միայն Gobdi կայարանի անվանություններում և այսպիսի մասին, վոր նրանք համապատասխան են յենթադրում այժմյան Խոյին:

Իրապես, ճանապարհագծի ուղղությունն Արտաշատ-յից մինչև Gobdi վորոշվում ե այն հին ճանապարհով, վորը պարզ կերպով մատնանշված ե մատենագրական հայ աղբյուրներում և վորն ուշադրության չե առնված վերոհիշյալ աշխատություններում:

3. Արտաշատից դեպի Պարսկաստան գոյություն են ունեցել ինչպես հայտնի յե հայկական աղբյուրների վկայություններից, յերկու հին ճանապարհներ, մեկը՝ Նախիջևանի վրայով, իսկ մյուսը՝ հին Կոգովիտ գավառի միջով:

Յերկրորդ այս ճանապարհագիծը, վորն Արտաշատից գնում եր Հեր ու Զարեանդ գավառներ՝ ունեցել ե Կոգովիտից մինչև Խոյ մի քանի ճյուղեր տարբեր ուղղությամբ: Կոգովիտից կարելի յեր գնալ Ատրպատական և Պարսկաստան կամ Բերկրիի և Կոտորի վրայով, վոր յերկար, իհարկե, ու հեռավոր ճանապարհ եր, և կամ ուղիղ ու կարճ գծով, վորն իջնում եր Խոյ հին Արտազ գավառի միջով:

Պետինգերյան քարտեզի ճանապարհագիծը, ինչպես պարզ յերեւմ ե քարտեզի նկարից, անցել ե Կոգովիտի միջով: Քարտեզի նկարում միանգամայն ճիշտ մատնացույց ե արված, վոր Արտաշատ-ն գտնվել ե Արարատյան լեռների հյուսիսակողմում, իսկ Catispi-ն հարավակողմում: Դժվար չե նաև համոզվել, վոր Կոգովիտից այդ գիծը՝ համաձայն քարտեզում մատնանշված միջկայարանային հեռավորությունների՝ հավանական ե յենթադրել վերոհիշյալ կարճ ճանապարհով և Արտազ գավառի միջով:

Հատկապես այս ճանապարհը հիշատակված է, որինակ, մատենագրական հայ աղբյուրների հետեւյալ վկայություններում՝

1. Հազար Փարպեցի, II, 1է (Տփղիս 1904, եջ 69):

«Զոր լուեալ երանելոյ սպարապետին Հայոց [Վարդանայ] և որ ընդ նմայն էին՝ ևս առաւել ճեպէին երթալ ընդդէմ նոցա. նախ՝ վասն վաղվաղակի պատահելոյ նոցա ժամու մարտիրոսութեան. քանզի անձանձրոյթ աղօթէին հանապազ ի տուէ և ի գիշերի, լինել արժանի այնպիսի մասին երկնաւորի. և երկրորդ՝ ասէին, թէպէտ անդէն ի տեղուջն ի Հեր և ի Զարևանդ գաւառին վճարին ելք գործոյն պատերազմին, և ոչ ոք լինէր արգել զօրուն Պարսից հասանել յաշխարհն Հայոց սպանութեամբ և զերելով յարձակել և ֆլասել: Եւ սոցա թէպէտ և ածեալ զայսպիսի ինչ զմտաւ կամէին փութալ՝ սակայն ևս առաւել ստիպով եկեալ հասանէին գունդն Պարսից ի գաւառն Արտազ, հուպ ի գեօդն որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին, զոր ընտրեաց յաղագս երկիւղի զօրացն հայոց. ամուր ապաստանի անձանց համարէին պատշաճ, և ի միջի նորա ածեալ զակիշ բանակէին»:

2. Նույնը, III, ՀԱ, եջ 128:

«Եւ անցուցեալ զաւուրս դառնաշունչ ձմերայնույ ցրտոյն՝ հասանէին գարնանային ժամանակի օդոյն բարեխառնութեան. լսէին, թէ զօր բազում խաղացեալ գայ ի Պարսից. եկեալ հասեալ են ի սահմանս Հերայ և Զարաւանդ դաւառի բազում զօրավուխք. Փութացաւ և զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, առեալ ընդ իւր և զուրբ հայրապետն Հայոց զտէր Յոհան, յուսալով յաղօթս առնն, թէ ամենայն ինչ ըստ նորա կամելոյ կատարի յԱստուծոյ, և գումարեալ զզօրսն Հայոց՝ ճեպէր հարկանել նոցա ի դիմի անդէն զայն տեղեօք. «Թերևս ոչ, ասէր, լիցի անցանել բազմութեանն Պարսից ի միջոց կողմն աշխարհիս Հայոց»: Եւ առեալ

ընդ իւր զնախարարսն և զազատս և զայլ ամենայն ուամիկն, որք կամաւոր խնդութեամբ երթային ի գործ պատերազմին, և չուեալք ի Դունայ զօրքն Հայոց՝ ըստ աւուրս օթևանացն երթեալ հասանէին ի գաւառն յԱրտազ, և մօտեալք ի գունդն Պարսից՝ բանակէին ի գիւղմի, որում անուն էր Ներսէնապատ»:

3. Սերէսոս, գլ. ԻԶ (Ս. Պետերբուրգ 1879, եջ 94):

«Յայնժամ առեալ երակլի զզաւրս իւր՝ դարձաւ յերկիրն Հայոց, անցեալ ընդ Շիրակ հասանէ ի հուն գետոյն Երասխայ, և անց ընդ գետաւն առ Վարդանակերտաւն աւանաւ, երթեալ թափեցաւ ի Գոգովիտ գաւառու: Եւ Ռոճիկ Վահանայ և զաւրուն Պարսից կարծեցեալ զնոսա փախստական զնալ: Խսկ նորա ճանապարհ կալեալ ի Հեր և ի Զարևանդ գաւառ, դէպուղիղ ի Տիգրոն ի վերայ Խոսրովու»:

4. Կոնդ, գլ. Բ. եջ 7 (Ս. Պետերբուրգ 1887):

«Եւ մեծ մասն զօրուն [Խսմայելացւոց] հատեալ ասպատակէին յաշխարհն Հայոց ընդ կողմն Պարսից, և առնուին ի գերութիւն զաւանս Մարաց և զգաւառն Գողթն և զդաստակերտն Նախջաւանու. և զբազումն յարանց ընդ սուր անցուցանէին, և զայլս գերի վարեալ կանամքք և մանկտեալ՝ անցուցանէին ընդ գետն Երասխ ընդ հունն Զուղայոյ: Եւ ընդ երկուս բաժանեալ զօրքն՝ ոմանք զգերեալն դարձուցանէին յաշխարհն իւրեանց: Եւ գունդ մի հատեալ ասպատակէին ընդ գաւառն Արտազ ի վերայ զօրավարին Յունաց, որում անուն էր Պռկոպ, որ էր բանակեալ ի գաւառին կողովատի ի սահմանս Բագուձորոյ և Մարդուցայից, որում իրազեկ եղեալ իշխանն Թէոդորոս, որ էր յազգէն Ռշտունեաց՝ աղդէր զօրավարին Պոոկոպայ, «Եթէ զօր հինին Խսմայելի զարթուցեալ գայ ի վերայ մեր»:

Վոր նույն այս կարճ գծով և վորոշվում Պետինգերյան քարտեղի հին ճանապարհը՝ այդ ապացուցվում ե, ինչպես կըտենմենք, հենց այդ քարտեզում մատնանշված կայարանների անունների քննությամբ:

4. Artaxata-ից 39 հռոմեական մղոն կամ մոտ 58 կիլո-
մետր հեռավորության վրա Պետինգերյան քարտեզում նշա-
նակված ե Catispi կայարանը:

Այս կայարանի անունը, ինչպես ուղիղ յենթադրել ե
Միութենական Ակադեմիայի Անդրկովկասյան բաժանմունքի
ասպիրանտ Ս. Յերեմյանը¹, համապատասխանում ե Սեբեռ-
սի մոտ հիշատակված «Որդսպու»-ին: Այս յենթադրությու-
նը միանգամայն հավանական է, վրովինտե Catispi կայա-
րանի անունը կարող է, իրոք, աղճատված լինել Ը և Օ լա-
տինական տառերի շփոթման պատճառով: Ուղիղ ընթերցու-
մը պետք ե լինի ըստ այս Օրտիսպի կամ *Ortispu:

Որդսպու տեղանունը հիշվում է, ինչպես հայտնի յե,
միմիայն Սեբեռուի մոտ հետեւյալ վկայություններում՝

1. Սեբեռու, Ս. Պետերբուրգ 1879, գլ. I, եջ 108:

«Եւ ել զաւը ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ
ճանապարհս Զորոյ յաշխարհն Տարօնոյ. առին զնա և
զի՞նունիս և զԱղեռվիտ: Եւ ճանապարհ կալեալ ի Բեր-
կրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ՝ թափեցան
յԱյրարատ: Եւ ոչ ոք կարաց ի զաւրացն Հայոց ար-
կանել գոյժ ի Դըւին աւան»:

2. Նույնը, գլ. I, եջ 116:

«Եւ եղել ի զալ միւսում ամի եկն զաւրն իսմայէլի
յԱսորպատական, և բաժանեցան յերիս: Առաջ մի յԱյ-
րարատ, և առաջ մի ի սեփիական գնդին կողմանս, և
առաջ մի յԱղուանս: Արդ՝ որք ի կողմանս սեփիական
գնդին, արշաւեալ սփոեցան և հարեալ զամենայն կող-
մանս զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգե-
րութիւն: Եւ եկին ժողովեցան ի յերեան՝ և մատեան
ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ: Եկին ի յՈրդսպու,
և ոչ նմա ինչ կարացին առնել: Գնացին անտի և բա-
նակեցան յԱրծափս՝ հանդէպ բերդին առ ջրով»:

¹ Տես նրա հրատարակած քարտեզը „Տորգովые путьи Юго-Кав-
каза в конце IV-го века“ (на правах рукописи):

Սեբեռու այս վկայությունները, ինչպես մանրամասն
ցույց ե տրված իմ «Մանր հետազոտություններ»-ում (Յե-
րևան 1932), վերաբերվում են արաբական 640 և 650 թվա-
կանների արշավանքներին:

Արաբները 640 թվին, մտնելով Հայաստան Միջագետքի
կողմից, նվաճել եյին, ինչպես հայտնի յե, Չորրորդ Հայքը,
Տարօնը, Բգնունիքը ու Աղիովիտը և այնուհետև անցել եյին
Բերկրիի ձորով և Որդսպույի մոտով Կոգովիտ և հասել մին-
չև Դվին:

Որդսպուն գտնվել է, ուրեմն, ըստ առաջին վկայության
Բերկրիի ձորով Կոգովիտ տանող ճանապարհին:

Ուշագրավ ե սակայն, վոր նաև ըստ յերկրորդ վկայու-
թյան արաբները, վորոնք 650 թվին մտել եյին Հայաստան
Ատրապատականի կողմից, յեկել եյին դարձյալ Որդսպու և
այստեղից գնացել Արծափ:

Արդ՝ վորովհետև յերկու դեպքումն ել արաբական ար-
շավանքների ճանապարհը ցույց ե տրված Որդսպուի մո-
տով՝ ստացվում է, իհարկե, այն տպավորությունը, վոր
արաբները 650 թվին ևս յեկած պիտի լինեյին Կոգովիտ,
ինչպես յենթադրում ե Թ. Ավդալբեգյանը (տես նրա «Բա-
նասէրի օրագրից» հոդվածը՝ «Հանդէս Ամօրեայ» 1926, թ.
11-12, եջ 587—590), միևնույն Բերկրիի ձորով և վերոհի-
շյալ միենալուն ճանապարհով:

Ճիշտ ե արդյոք այս յենթադրությունը, վորն անտա-
րակուաելի յե համարել Ավդալբեգյանը:

Իմ կարծիքով, վհչ միայն նրա այս յենթադրությունը,
այլ և նրա յեղակացությունը վերոհիշյալ յերկրորդ հատ-
վածում հիշատակված «Երևան»-ի տեղադրության մասին՝
ավելի քան վիճելի յեն և միանգամայն անհավանական:

5. Արաբական 650 թվի արշավանքի ճանապարհը հա-
վանական ե յենթադրել վհչ թե Բերկրիի ձորով, վորը, ինչ-
պես տեսանք, չե հիշատակված Սեբեռուի յերկրորդ հատվա-
ծում, այլ Ատրապատականից Հեր կամ այժմյան Խոյ և այդ-

տեղից Պևինգերյան քարտեղի կարճ ու ուղիղ գծով և Որդսպու Կատիսպի մոտով դեպի Արծափ:

Թեև Սեբեռոսի վկայություններում արարական զորաշարժերի միջին հանգույցը յերկու դեպքումն ել Որդսպուս ե, սակայն այդ զուգադիպումը բացատրվում ե, ինչպես կըտեսնենք, նրանով, վոր Որդսպուն գտնվել ե թե Բերկրիի ձորից և թե Խոյից Կոգովիտ տանող ճանապարհագծերի միացման շրջանում:

Արարական զորքերը, գալով Ատրպատականից և այժմյան Խոյից «ի կողմանս Սեփհական գնդին», ինչպես վկայում ե Սեբեռոսը՝

«արշաւեալ սփոեցան և հարեալ զամենայն կողմանսն զայսոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն»:

Միանգամայն բնական ու հասկանալի յե. վոր ցրված զորախմբերը չեյին կարող շարունակել արշավանքը, ունենալով իրենց հետ ավար և գերիներ, այլ նրանք հետ եյին դառնալու նորից և հավաքվելու վրոշ կենդրոնավայրում:

«Եւ եկին ժողովեցան ասում ե Սեբեռոս—ի յերեան՝ և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ»:

Թ. Ավգալբեգյանը կարծում ե, վոր «Երեան»-ը այս հատկածում հայտնի հին Առեստն ե կամ «Առեստաւան»-ը և վոր իր թե «ի կողմն Սեփհական գնդին արշավող արարական զորախմումը յուր հարձակումն սկսել ե Առեստավանից» (տես եջ 590):

Նրա այս յենթադրությունը, ինչպես և նրա լեզվաքըննական ու հնագրական բացատրությունը, վորի համաձայն «Երեան»-ը պետք է սրբագրել և կարդալ «Առեստաւան» կամ «Երաստաւան»՝ սխալ ե, անտարակույց, և անընդունելի:

«Երեան»-ը պարզ մի աղճատումն ե, անշուշտ, վերոհիշյալ հատվածում, սակայն վհչ թե «Առեստաւան» կամ «Երաստաւան», այլ «Հերաւան» տեղանվան:

Արարական զորքերը, վորոնք Ատրպատականից և այժմյան Խոյից շրջանից արշավել եյին Սեփհական գնդի կողմերը, վերագառնալով նորից Խոյ—«Հերաւան», գնացած պի-

տի լինեյին այնուհետև վհչ թե սրի ու ավերածության մատնված Սեփհական գնդի միկնույն շրջանները, այլ, հավանորեն, կարճ ու ուղիղ գծով դեպի Որդսպու, վորը գտնվել ե, ինչպես կըտեսնենք, Կոգովիտ գավառի հարավակողմում:

6. Հին այս ճանապարհը կարավանների այն բանուկ ու այժմյան հայտնի ճանապարհն ե Արաբ-Ղիզիյի, Կարս-Եյնեյի և Զեյվայի վրայով, վորը նկարագրված ե գեներալ Գարդանի և Զեյմս Մորիերի ուղեգրություններում (տես Հ. Հակոբյան, «Ուղեգրություններ», Հատ. Զ, Յերևան 1934, եջ 106—108 և 260—268) և վորը՝ իրու իտալական առեստրի հին ճանապարհ՝ հիշատակված ե 14-րդ դարի սկզբաներում նաև Բալդուչչի Պեգոլոտիի մոտ (տես իմ աշխատությունը „Օ տօրցու և գործադրությունը“ Երևան 1930, եջ 196 198):

Համաձայն Պեգոլոտիի ճանապարհացուցակի հին այս գիծը Ղարաքենտից մինչեւ Խոյ ունեցել ե հետեւյալ կայարանները՝ Scaracanti (=Ղարաքենտ), Locche, Piana di Falconieri¹ (հավանորեն, այժմյան Տայ-Զավար գաշտը), li Camuzoni, Piana del Fiume rosso (Կարմիր գետի կամ այժմյան Կիզիլ-չայի հովիտը) և Condro² (=Խոյ):

Այս ճանապարհագծի վրա Պևինգերյան քարտեղի Կատիսպի կայարանի տեղը կարելի յե, ինձ թվում ե, մոտավորապես վորոշել:

¹ Piana di Falconieri նշանակում ե իտալերեն բազեավորսի գաշտ, Համաձայն վերոհիշյալ կայարանների հաջորդական դասավորության Piana di Falconieri կարող ե համապատասխան լինել ուռսական տասը վերստանոց քարտեզում մատնաշված Տայ-Զավար գետահովիտին. Զեյմս Մորիերը վկայում ե, իրոք վոր այս գաշտի հյուսիսային ծայրամասում գկա մի ճահճ, վորի ջրերի յերեսին կային անթվելի բաղեր և այլ վայրի թռչուններ» (տես «Ուղեգրություններ», Զ, եջ 266):

² Ծուսերեն իմ աշխատության մեջ այս Condro կայարանը յես նույնացրել ելի հին Կոտորի և այժմյան Ղոթուրի հետ (տես „Օ տօրցու և գործադրությունը“ եջ 198), Սակայն ուշադիր ու մանրամասն քննությամբ պարզվում ե այժմ, վոր Condro-ն համապատասխանում ե, հավանորեն, այժմյան Խոյին (=Gobdi):

Ի նկատի ունենալով, վոր Որդսպու բերդը գտնվել է թե Բերկրիի ձորից և թե Խոյից Կոգովիտ տաճող ճանապարհների միացման շրջանում՝ Որդսպուի տեղը հավանական ե յենթադրել Scaracanti-Ղարաքենտից դեպի հարավարևելք՝ այժմյան Տապարիդ գյուղի մոտ: Այստեղ հենց, Կոգովիտ գավառի հարավակողմում, գտնվում են այժմ յերկու հին ու անառիկ բերդերի ավերակներ, վորոնց մասին Ալիշանը տալիս ե իր «Այրարատ»-ում (եջ 508) կարևոր տեղեկություններ, վոր նա քաղել ե, ըստ յերևույթին, Texier-ի ուղեգրությունից:

«Առ երի գեղջս [Թէփէրիզի]—հաղորդում ե Ալիշանը— ամբառնայ լեռնակ մի պասալտեան, և անծանօթ ի պատմութենէ կամ անյիշատակ ամրոց վաղեմի՝ ի տափարակի գագաթան նորին, որոյ ստորոտք պարսպացն մնան մեծամեծ պասալտիկ կարկառօք անշաղախ կուտակեալք, և շուրջ պատ առեալ բաց յարեելից կողմանէ (ուր ցցուեալ ժայռք են), և ի հարաւոյ կուսէ խոնարհին ընդ երեսս լերինն, անկիւնաձև գործելով ի ներքուստ, և ի գլուխ անդ հարաւակողմանն կայ աշտարակ մի. և այլ աշտարակք բոլորչիք ի կարգի պարսպացն, որոց երկայնութիւն է իրը 250 Զ. ի նմին ի հարաւակողման տակաւին չորք կամ հինգք կարգք քարանց անեղծ կան, և թուի յայսմ կողմանէ լինել մտից բերդին. Նոյնպէս և յարեմտից կողմանէ առաւելագոյն ևս կան մնացուածք պարսպաց: Ի քարաժեռի ուրեմն լեռնակին երկի կիսեղծ արձանագիր, որ և հայերէն թուեցաւ անհայր էտ քննողին՝ Դեսիէի, այլ վէմք արձանին խորտակեալ են և ի վայր անկեալք: Ի ստորոտէ քարաժեռին բղիսն աղբերք դառն և աղէհամ ջուրց, թուի՝ օժանդակք անանուն գետոյն՝ զոր ինձէ ուռ համարեցաք կոչիլ—Յետ Դարօնից և Արծափայ՝ այս տեղի է արժանաւոր քննութեան ի ծանօթիցն մեզ վայրուց Կոգովիտ: Շուրջ զեռնակամն և զգեղիւն ամբառնան սրակատար բլրակք պասալտեանք, արգասիք հրա-

մուղ ժայթմանց, այլ որձաքար (տրաքիդ) չերկի աստ: Ի Հր. Թէփէրիզայ մերձ ի լերինս անջրպետս երկոցուն գետոցն մեծամեծաց, ցուցամնեն Եղիտիք կողմանցն զաւերակս բերդիք՝ հզօրի միոյ նախնոյ իւրեանց, առ Սուլդան Մուրադաւ ի սկիզբն կոյս Ժէ դարու, Տիւլղազին կոչեցելոյ, որ հինահարութեամբ տառապեցուցնէր զամենայն գաւառն. վասն որոյ հրամանաւ սուլտաննին փաշայն Վանայ եկն պաշարել զբերդն ամուր, և դէպք յաջողեցին նմա. քանզի ի բուռն սասանութենէ երկրի, ասեն, ինքնին կործանեցաւ և հիմնայտակ եղեւ, և այնու դադարեաց հարստահարութիւն բռնաւորինս:

Վոր անանուն այս բերդերից մեկը կարող ե լինել հին Որդսպուն՝ այդ հավանական ե, վորովհիտև հենց այս լուսաբանությամբ հասկանալի յեն դառնում թե Սեբեոսի վերոհիշյալ վկայությունները և թե Պետինգերյան քարտեզում նշանակված մյուս կայարանների տեղադրությունը ու համապատասխան հեռավորությունները:

Գլխավոր առարկությունը մեր այս յենթագրության դեմ, անշուշտ, այն ե լինելու, վոր Catispi կայարանի հեռավորությունն Artaxata-ից Պետինգերյան քարտեզում ցույց ե տրված 39 հռոմեական մղոն կամ մոտ 58 կիլոմետր: Սակայն այս դժվարությունն անհաղթահարելի չե, վորովհիտև Artaxata-ն, ինչպես վերև տեսանք, միացված չե նկարագծով Catispi-ի հետ: Միացման գծի այս բացակայությունը բացատրվում ե, ըստ յերևույթին, նրանով, վոր քարտեզում, ինչպես պարզ յերեւում ե նրա նկարից, հնարավոր չե յեղել տեղագրությալ Artaxata-ից Catispi տաճող ճանապարհգիծը և նրա վրա գտնվող կայարանների անուններն ու համապատասխան մղոնաթվերը:

7. Catispi—Որդսպու կայարանի տեղադրության վորոշմամբ հասկանալի յե դառնում Պետինգերյան քարտեզում նշանակված տարածությունը Catispi-ից մինչև Gobdi—Խոյ, ընդամենը՝ 92 հռոմեական մղոն կամ մոտ 136 կիլոմետր:

Նույն տարածությունը Խոյից մինչև Որդսպուի մոտ գտնվող Կերդեկ (Kerdek) գյուղը Զեյմս Մորիերը հաշվում ե ավելիքան 80 անգլիական մղոն կամ մոտ 130 կիլոմետր (տես «Աւղեգլություններ», հատ. Զ, էջ 261—269):


Ուրեմն, ինչպես տեսնում ենք, Պետինգերյան քարտեզի այս հեռավորությունը ևս, ինչպես և նրա մատնանշած տարածությունները վերոհիշյալ մյուս ճանապարհագծերում, միանգամայն հավանական ե և իրական:

Catispi-ից հետո Պետինգերյան քարտեզում նշանակված են Sorvae և Anteba կայարանները՝ Catispi 27 Sorvae [24] Anteba: Հեռավորությունը՝ Catispi-ից մինչև Anteba ցույց ե տրված, ինչպես տեսնում ենք, 51 հոռմեական մղոն կամ մոտ 76 կիլոմետր: Յեզ ըստ այս հեռավորության Անտեբի տեղադրությունը վորոշվում ե պարզ կերպով հին Արտազ գավառում:

Անտեba կայարանի անունը, իմ կարծիքով, խիստ աղձատված ե, ինչպես և մյուս կայարանների մեծագույն մասի վերոհիշյալ անունները: Ուղիղ ընթերցումը պետք ե լինի ըստ իս *Artaza:

Լատինական ե և տառերը, ինչպես հայտնի յե, այնքան նման են իրար Պետինգերյան քարտեզում (տես Itineraria Romana, էջ LII), վոր նրանք սխալ են հաճախ կարդացված ու տպված հին քարտեզների գանազան հրատարակություններում: Որինակ, Խանզադյանի «Atlas historique» հրատարակության մեջ (Paris 1920) Hariza և Dyzanas կայարանների վերոհիշյալ անունները արտագրված են 17-րդ դարի քարտեզում Hariba և Dybanas (տես carte № 9, planche V): Սովորական են նմանապես լատինական ու և բառերի շփոթումները: Ուրեմն, ինչպես տեսնում ենք, Անտեba կայարանի անունը հսարապոր ե և հավանական ե սրբագրել ու կարդալ *Artaza:

Իսկ այս նույնացումից ինքնին հետևում ե, վոր Անտեba



— *Artaza-ն¹ և, ինչպես և *Banantea-ն (=Վանանտ) և Arachia-ն (=Հարք), յեղել ե մի մեծ շրջանի հին կենդրուավայրը, վորի անունով գավառն անվանվել ե Արտազ: Բացի այդ, պարզվում ե միաժամանակ, վոր *Artaza-ն, վորի հեռավորությունը Տապարիզի մոտ գտնվող Catispi—Ռդուպուց ցույց ե տրված մոտ 76 կիլոմետր, գտնվել ե, հավանորեն, այժմյան Կարա-Եյսեյից Զուրավա տանող ճանապարհագծի մասում:

Առեւա անվան մեր առաջարկած այս լուսաբանությամբ, ինչպես և Artaxata-Gobdi ճանապարհի ուղղության ճշտմամբ, պարզվում են, ինչպես կըտեսնենք, Հայաստանի պատմական աշխարհագրության մի քանի պրոբլեմները, վորոնք մնացել են մինչև այժմ մութ և անորոշ: Աշխարհագրական այդ կարեւոր ինդիքները, վոր ներքև մանրամասն քննելու յենք, վերաբերվում են «Աւարայրի դաշտ»-ի, «Բազուձոր»-ի, «Մարդուցայք»-ի և «Եղբարք սարակ»-ի տեղադրության:

8. Վարդանանց պատերազմի տեղը, ինչպես հայտնի յե, մինչև այժմ վորոշված չե հաստատուն կերպով: Փարպեցու և Յեղիշեյի վկայություններից մենք գիտենք միայն, վոր պատերազմը յեղել ե Արտազ գավառում և ընդարձակ մի դաշտում, ուր առաջին անգամ և հենց այս պատերազմի առթիվ հիշատակված են նրանց մոտ «Աւարայր»-ը և «Տղմուռ»-ը:

Մեջ ենք բերում Փարպեցու և Յեղիշեյի կարեւոր այդ հատվածները:

1. Ղազար Փարպեցի, II, էջ, եջ 69 (Տփղիս 1904):

«Գոր լուեալ երանելոյ սպարապետին Հայոց [Վարդանայ] և որ ընդ Նմայն էին՝ ևս առաւել ճեպէին եր-

¹ Ա. Խաչատրյանը նույտուրայի Պատմության Խստիտուտում կարգացած իր գեկուցման մեջ (թեզիս 15-րդ) Anteba կայարանը համապատասխան ե համարել Անթափին: Այս յենթադրությունը սխալ ե և անբնունելի, վորովհետև Anteba կայարանը գտնվել ե Artaxata-Gobdi ճանապարհագծում և չե կարելի, ինարկե, նույն կայարանը քմահաճառար փոխադրել մի ուրիշ գիծ:

թալ ընդդէմ նոցա, նախ՝ վասն վաղվաղակի պատահելոյ նոցա ժամու մարտիրոսութեան. քանզի անձանձրույթ աղօթէին հանապազ ի տուէ և ի գիշերի, լինել արժանի ախալիսի մասին երկնաւորի. և երկրորդ՝ ասէին, թերևս անդէն ի տեղւոցն ի Հեր և ի Զարևանդ գաւառին վճարին ելք գործոյն պատերազմին, և ոչ ոք լինէր արգել զօրուն Պարսից հասանել յաշխարհն Հայոց սպանութեամբ և գերելով յարձակել և մնասել Եւ սոցա թէպէտ և ածեալ զայսպիսի ինչ զմտաւ կամէին փութալ՝ սակայն ևս առաւել ստիպով եկեալ հասանէին գունդն Պարսից ի գաւառն Արտազ, հուպ ի գեօղն որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին, զոր ընտրեաց յաղազս երկիւզի զօրացն Հայոց. ամուր ապաստանի անձանց համարէին պատշաճ, և ի միջի նորածհալ դակից բանակէին»:

2. Եղիշէ, Վենետիկ 1852, Զ, եջ 204—205:

«Կարգէր և կազմէր [Վարդան] զարգատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին դէմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ գետոյն»:

3. Նույնը, եջ 334 (Ը):

«Նովաւ և դաշտն Աւարայրի պայծառացեալ ծաղկալից լինի, ոչ յանձեւաբեր ամպոց, այլ ի սուրբ և յարինաբուխ վկայից ցանեալ և ցրուեալք սպիտակութիւնք սուրբ ուկերացն»:

Վարդանանց պատերազմի տեղը, ինչպես տեսնում ենք այս վկայություններից, ցույց է տրված մի շրջափակ գետագածում, վորն Ավարայր գյուղի և Տղմուտ գետի անուններով կոչվել ե «Տղմուտ դաշտ» կամ «Աւարայրի դաշտ»:

Այս դաշտի տեղը կարելի յե, իմ կարծիքով, վորոշել ավելի հիմնավոր կերպով, քան այդ արված և աշխարհագրական նախորդ ուսումնասիրություններում:

Մեր նոր բացատրության յելակետ ե ծառայում պատերազմող զորքերի յերթուղին, վորը վորոշվում ե այժմ Արտաշատ-Gobdi ճանապարհագծի լուսաբանությամբ:


Ավելի քան հավանական է, անշուշտ, վոր պարսկական զորքը յեկած պիտի լիներ Հեր և Զարեանդից Արտազ Պետինգերյան քարտեզի այն հին ռազմուղիով, վորը սովորական ու բնական ճանապարհն եր զորքերի տեղաշարժումների համար։ Վոր միևնույն կարճ ու ուղիղ գծով գնացած պիտի լիներ Արտաշատից նաև հայկական զորաբանակը՝ այդ հավանական և հենց Փարաբեցու վկայությունից, վորը պարզ հաղորդում է, վոր հայոց զորքը Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ շտապում եր արագ յերթով հասնել Հեր և Զարեանդ, վորպեսզի պատերազմը տեղի ունենա սահմանագիծում և Հայաստանի սահմանամերձ շրջանը չմատնվի ավերածության։

Իսկ այս դիտողություններից ինքնին հետևում է, վոր Վարդանանց պատերազմի տեղը պետք է լիներ Արտազ գավառի այն արեմտյան մասում, վորի միջով վորոշվում է Պետինգերյան քարտեզի վերոհիշյալ ճանապարհը։

Այստեղ հենց գտնվում է, իրապես, այն շրջափակ ու ընդարձակ գետաղաջոր, այժմյան Տայ-զավարի տասը վերստանոց քարտեզում՝ Տայ-զավար, վորը նկարագրված ե Ձեյմս Մորիերի ուղեգրության մեջ և վորը Պեղոլոտտիի մոտ անվանված ե Piana di Falconieri։

Վոր այս գետաղաջոր գտնվում եր հին Արտազ գավառում՝ այդ պարզ յերեւում և նրանից, վոր այդ դաշտի մոտ ե այժմ Թաղես առաջյալի վանքը։ Ուշագրավ ե առանձնապես, վոր նույն այս գետաղաջտի հարավակողմում և այժմյան Շիվարեց լեռների ստորոտներում (հմմտե հին «Շաւարշան» և «Շաւարշական» տեղանունները) գտնվում ե այժմ Թեղնուտ գյուղը (տես ռուսական տասը վերստանոց քարտեզի վրա՝ Տեղնակ), վորի անունով այժմյան Կարա-Բուլաղ գետը կարող եր անվանված լինել «Ծղնուտ» (= թերես «Ծղմուտ»)։

Ավարայրի դաշտի այս տեղադրությունը Պետինգերյան քարտեզի Artaxata-Gobdi ճանապարհագծի վրա միանգամայն



հավանական եւ և վերոհիշյալ բացատրությունն ուշադրության արժանի, վորովհետև նախորդ ուսումնասիրություններում անտես եւ արփած այն կարեոր հանգամանքը, վոր Ավարայրի դաշտի տեղը չե կարելի յենթադրել բնական այս ռազմաճանապարհից հեռու գտնվող զարտուղի և դժվարանց վայրերում:

Միանգամայն անընդունելի յե այս տեսակետից Բասմանի յենթադրությունը, վորն իր «Հսկական պատմութիւն Հայոց» աշխատության մեջ հատուկ քարտեզում (Կ. Պոլիս 1919, եջ 247) Ավարայրի դաշտի տեղը մատնացույց եւ արել այժմյան Քիլիսեքնդի հարավ-արևելակողմում: Նրա մատնանշած այդ վայրը, վորն ընկնում եւ այժմյան Մարանդ գյուղի հյուսիսակողմում, պարզապես լեռնային մի շրջան եւ, վորը գտնվում եւ բնական ռազմաճանապարհից հեռու:

Սխալ եւ, անտարակույս, և Կոստանյանցի կարծիքը, վոր իր թե Ավարայրը գտնվել եւ չեր գավառի արևելյան-հյուսային սահմանի վրա՝ այժմյան Մարիքենդի արևմտակողմում գտնվող Զորսի դաշտում (տես «Հիւսուածք», գիրք յերրորդ, Վիեննա 1887, եջ 116—121): Այս յենթադրությունը ևս չե կարող ճիշտ լինել, վորովհետև այժմյան Մարիքենդը, վորը հին «Մառական աւան»-ն եւ, գտնվել եւ, ինչպես պարզ վկայում եւ թովմա Արծրունին, վոչ թե Արտազ, այլ Ճուաշ գավառում (տես Թովմա Արծրունի, Ս.-Պետերբուրգ 1887, III, ի, եջ 225 և III, իթ, եջ 264, հմմտե նաև Ածոնց, Արմենիա և էպօխ Յուստինիանա, եջ 317 և Markwart, Südarmenien und die Tigrisquellen, եջ 208):

9. Artaxata-Gobdi ճանապարհագծի մեր նոր լուսաբանությունը յելակետ եւ ծառայում, բացի Ավարայրի դաշտից, նաև «Բազուձոր»-ի, «Մարդուցայք»-ի և «Եղբարք սարակ»-ի տեղադրությունների հավանական վորոշման:

Հայաստանի պատմական աշխարհագրության այս վայրերը հիշատակված են Ղեռնդի պատմության մի հատվածում, վորն անհրաժեշտ եւ մեջ բերել առանց կրնատումների:

Տես «Պատմութիւն Ղեռնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս.-Պետերբուրգ 1887, գլ. Բ, եջ 7—8:

«Եւ մեծ մասն զօրուն [Խսմայելացոց] հատեալ ասպատակէին յաշխարհս Հայոց ընդ կողմն Պարսից. և առնուին ի գերութիւն զաւանս Մարաց և զգաւառն Գողթն և զդաստակերտն նախջաւանու. և զբազումն յարանց ընդ սուր անցուցանէին, և զայլս գերի վարեալ կանամքք և մանկտեալ՝ անցուցանէին ընդ գետն Երասխ ընդ հունն Զուղայոյ: Եւ ընդ երկուս բաժանեալ զօրքն՝ ոմանք զգերեալն դարձուցանէին յաշխարհն իւրեանց: Եւ գունդ մի հատեալ ասպատակէին ընդ գաւառն Արտազ ի վերայ զօրավարին Յունաց, որում անումն էր Պոկոպ, որ էր բանակեալ ի գաւառին Կողովտի ի սահմանս Բազուձորոյ և Մարդուցայք: որում իրազեկ եղեալ իշխանն Թէոդորոս, որ էր յազգէն Խշունեաց՝ ազդէր զօրավարին Պոռկոպայ, «Եթէ զօր հինին Խսմայելի վարթուցեալ զայ ի վերայ մեր»:

Իսկ նա ի բազմութիւն զօրացն ապաստանեալ և ոչ յԱստուած, որ յաշողէ զպատերազմ՝ ոչ ինչ գրէր զբանս իշխանին Հայոց: Եւ նա մորմոքեալ ընդ կորուստ աշխարհիս Հայոց և ընդ ծուլութիւն զօրավարին՝ ոչ ունէր ժոյժ, այլ մտեալ երկրորդէր և երրորդէր զբանն: Եւ բարկացեալ զօրավարին ի վերայ իշխանին՝ ձգէր զվարզն որ ի ձեռին զհետ նորա: Եւ սրտմտեալ Թէոդորոս՝ ելանէր յերեսաց նորա, և նոյնժամայն հրամայէր զօրացն, որ ընդ իւրով իշխանութեամբն էին, «վառեցարուք, ասէ, և ելէք ընդդէմ Խսմայելիս: Եւ նոքա հեծեալ յերիվարս իւրեանց՝ դարանամուտ եղին ի սարակն, որում եղբարսն կոչէին. և կալեալ զառաջս կրծիցն՝ զբազումն ի նոցանէ սատակէին. և առեալ զկապւտ անկելոցն՝ հարուածեալ ի զօրավարէն զնացին ի գաւառն Գառնիք: Այս վկայությունը, ինչպես պարզել ենք մեր «Մանր Հետազոտություններ» ուսումնասիրության մեջ (Յերևան

1932, եջ 40—47), վերաբերվում ե արաբական 642/643 թ. յերկրորդ արշավանքին Ատրպատականի կողմից:

Արաբները, ինչպես վկայում ե Ղեռնդը, ասպատակել և ավերածության եյին մատնել նախ «զաւանս Մարաց և զգաւառն Գողթն» և զդաստակերտն Նախջաւանու» և ապա արաբական զորքի մի մասը, շարունակելով արշավանքն Արտազ գավառի միջով՝ հարձակվել եր Պոոկոպ զորավարի և բյուզանդական զորքերի վրա, վորոնց հանճարարված եր Բյուզանդական Հայաստանի պաշտպանությունը «ի գաւառին կոգովտի ի սահմանս Բազուձորոյ և Մարդուցայից»:

Ղեռնդի վկայությունից դժվար չե կոահել վոր Բազուձորը և Մարդուցայքը կոգովտի մոտ գտնվող սահմանամերձ այն շրջաններն են, վորոնց միջով կարող եյին մտնել կոգովիտ թշնամի զորքերը։ Նրանց տեղադրությունը հավանական ե, ուրեմն, յենթադրել վհչ թե կոգովիտ գավառի մեջ, ինչպես կարծում ե Ալիշանը (տես «Այրարատ», եջ 491 և 508), այլ Ատրպատականից կոգովիտ տանող այն յերկու հին ճանապարհների մոտ, վորոնցով արաբական զորքերը կարող եյին ներս խուժել կոգովիտ և անցնել մյուս գավառները։

Այս ճանապարհներից մեկը գալիս եր, ինչպես վերև տեսանք, Խոյից Արտազի միջով, իսկ մյուսը՝ Խոյից Սեպհական գնդի կողմերով և այժմյան Արադայի դաշտի վրայով։

Յեզ հենց այս յերկու ճանապարհագծերի վրա վորոշվում են, իրապես, հավանական տեղադրությունները թե Մարդուցայքի և թե Բազուձորի։

Մարդուցայքը, ինչպես մատնացույց ե արել Աղոնցը (տես Արմենիա և էպոխ Յօստինիանա, եջ 417 և 319), հին Մարդաստանն ե կամ Սեպհական գնդի յերկիրը, վորը՝ գտնվելով Արտազի արևմտակողմում՝ 642/643 թ. սահմանամերձ գավառն եր Բյուզանդական Հայաստանի արևելակողմում։ Նրա միջով եր անցնում, իրոք, Խոյից կոգովիտ տանող ուազմական վերոհիշյալ ճանապարհներից մեկը, վորն այժմյան Արադայի միջով բարձրանում եր կոգովիտ։ Հասկանալի յե,

ուրեմն, վոր «ի սահմանս Մարդուցայից» Ղեռնդի վկայությունը կարող ե վերաբերվել Մարդաստանին։

Իսկ Բազուձորը գտնվել է, իմ կարծիքով, Արտազից Կոգովիտ տանող արևելյան կողմի մյուս ճանապարհի վրա և, հավանորեն, Piana di Falconieri, այսինքն՝ «բազեավորսի դաշտ»-ի մոտ, վորը հիշում ե, ինչպես տեսանք, Պեգոլոտին:

Ուշագրավ ե ու հետաքրքիր, վոր «Անանուն ժամանակագրութեան» մեջ (Վենետիկ 1904, եջ 37) Թագեսու առաքյալի սպանության տեղը ցույց ե տրված Արտազ գավառի Բազրուտ գյուղում։ Վոր այս գյուղը ևս գտնվելու յեր դարձյալ վերոհիշյալ դաշտի շրջակայքում՝ այդ ավելի քան հավանական ե նույնպես, վորովհետև այդ դաշտի մոտ եր, ինչպես տեսանք, Թագեսու առաքյալի վանքը։

Մարկվարտը մատնացույց ե արել արդեն, վոր Բազրուտ հիշեցնում ե Ղեռնդի վկայության Բազուձորը և վոր իբր թե այդ տեղերը գտնվել են ակներևաբար Կոգովիտ գավառի արևելյան սահմանում (տես Die Genealogie der Bagratiden, Caucasica, Fase. 6, 2 Teil, Leipzig 1930, եջ 25—26):

Նոր այս ուսումնասիրությամբ պարզվում ե այժմ, վոր բացի Բազրուտից և Բազուձորից Արտազ գավառում ե գտնվել նաև Piana di Falconeti կոչված «բազեավորսի դաշտ»-ը։ Նրանց տեղադրությունը վորոշվում ե սակայն վհչ թե կոգովիտի արևելյան սահմանում, ինչպես յենթադրել ե Մարկվարտը, այլ Պետինգերյան քարտեզի Catispi-Gobdi ճանապարհագծի վրա և վերոհիշյալ Տայ-գավար դաշտում կամ Նրա մոտ գտնվող շրջաններում։

«Բազրուտ» տեղանունը նշանակում ե պարսկերեն «բազեների գետ», իսկ «Բազուձոր»-ը, հավանորեն, «բազեների ձոր»։ Վերջին այս բարդության քերականական ստույգ ձկը պետք ե լիներ, անշուշտ, «բազէաձոր» կամ «բազէձոր» (հմմտե «բազէակալ» և «բազէկիր»)։ Սակայն այս անկանո-

նությունը լեզվական հատուկ մի խնդիր է, վորը պետք է պարզեն մասնագետ լեզվաբանները:

10. Վերև մեջ բերված Ղեռնդի միենույն վկայության մեջ հիշատակված են նաև «Եղբարք սարակ»-ը, վորի անունը նույնացրել են Թ. Ավդալբեգյանը «Եղջերք» լեռների անվան հետ (տես «Բանասէրի օրագրից», Հանդ. Ամս. 1926, թ. 7—8, եջ 384—387):

Թ. Ավդալբեգյանի կարծիքով, վերոհիշյալ «Եղբարք»-ը համապատասխանում են «Եղջերք»-ին, վորը հիշատակված են Փափառության մեջ.

Փափառության V, գլ. ԽԳ, եջ 259 (Վեհսետիկ 1889):

«Եւ գային հասանէին լրտեսքն, և դիտէին զՄանուէլ զի էր բանակ նոցա ի Բագրաւանդ գաւառի ի Բագրաւան աւանի, որ էր մօտ յաւերակն Զարեհաւանդ քաղաքի: ... Եւ չու արարեալ կատարել զգործն՝ յոր փութացեալ կամէր հասանել [Մերուժան], և էին ի վայրուն՝ ընդ որ գալ էր գնդին ընդ ճանապարհն՝ լերինք ինչ որում ի բնակչացն Եղջերք կոչեն: Եւ մինչդեռ գայր Մերուժանն ի ճանապարհի գնդաւն իւրով, դիպեցան նմա ուղևորք. յորս հարցանէր Մերուժանն և ասէր, եթէ ճանապարհն ի Բագրաւանդ ընդ որ երթայ: Եւ ուղևորացն տուեալ պատասխանի, ասացին. Ճանապարհ ընդ Եղջերս է: Եւ մեծապէս խտրեաց Մերուժանն ընդ միտս իւր. տրտմեցաւ ընդ բանն, սակայն տայր հրաման չարաչար քարշել զուղեորսն և ծծել»:

Այս վկայության մեջ Ավդալբեգյանը՝ համարելով «Եղջերք»-ը աղճատված՝ ուղղել են «Եղբարք», կարծելով վոր սրմաք միենույն լեռն են, վորը գտնվել են «Կողովտով Բագրեանդ տանող ճանապարհի վրա»:

«Արծունի իշխանի կարծիքով—ասում են Ավդալբեգյանը—անցորդներն ուղել եյին ասել, թե նրա ճանապարհը, նրա ուղիղ ճանապարհը վհչ թե պարսիկների հետ լինեն են, այլ յուրայինների, հայրենակիցների, հայ յեղբայրների հետ լինեն են» (եջ 387):

Ավդալբեգյանի մեկնությունը չե կարող, ինչպես կը տեսնենք, ճիշտ լինել վորովհետև նա աչքաթող ե արել, վոր «Եղջերք»-ը և «Եղբարք»-ը գտնվել են տարբեր տեղեւրում:

«Եղբարք սարակ»-ը, վորի մոտ դարանամուտ եր յեղել Թեռուրոս Ռշտունին իր հեծելազորքով, չեր կարող, իհարկե, գտնվել «Կողովտով Բագրեանդ տանող ճանապարհի վրա», վորովհետև արարական զրագունդը, ինչպես պարզ յերեւրում ե Ղեռնդի վկայությունից, մտնելու յեր Կողովիտ Արտապ գափառի կողմից:

Ղեռնդի և Սերեսուի վկայություններից (գլ. Լե, եջ 138, Ս. Պետերբուրգ 1879) հայտնի յե նույնպես, վոր Պոլկոպ զորավարը՝ Թեռուրոս Ռշտունու հեռանալուց հետո՝ հրամայել եր իր զորքերին «Ելանել ի վերայ թշնամեացն» և վոր նրա զորքերի կոտորածը տեղի յեր ունեցել Մարդուցայքում: Յեկ կոտորածից հետո միայն արարական զորքերը յեկել եյին Կողովիտ հանգստանալու նրանց բանակում:

Միանգամայն սխալ ե, ուրեմն, Ավդալբեգյանի յեղբակացությունը, վոր իբր թե «Հորրորդ և յոթերորդ դարերում կատարված անցքերի աշխարհագրական միջավայրը նույնն ե»: «Եղջերք» լեռները, վորոնք գտնվել են Կողովիտից Բագրեանդ տանող ճանապարհի վրա, չեն կարող, անշուշտ նույնը լինել «Եղբարք սարակ»-ի հետ, վորովհետև այս վերջինի տեղը վորոշվում ե վհչ թե Կողովիտ-Բագրեանդ, այլ կամ Արտազ-Կողովիտ և կամ Մարդուցայք-Կողովիտ ճանապարհերի վրա:

11. Anteba-Արտազ կայարանից մինչև այժմյան Խոյը Պետինգերյան քարտեզում նշանակված են յերկու կայարան՝ Anteba 24 Nasabi 17 Gobdi (Ռավիննացու մոտ՝ Gobdie):

Ցեղուպական գիտնականները բոլորն ել համամիտ են, վոր այս կայարաններից վերջինը համապատասխանում ե այժմյան Խոյին: Կոնրադ Միլլերի կարծիքով՝ Gobdi կամ Gobdie անվան ուղիղ ընթերցումը կարող ե յեղած լինել *Gobai (տես Itineraria Romana, եջ 781), իսկ Մարկվարտի

յենթադրությամբ՝ *Chobde (տես Հյուսիսային Տիգրիսի աղբյուրների մասին, էջ 420):

Նոր պարսկերեն Շհօյ-ը ծագել ե ըստ Մարկվարտի հնագույն *Շհօյ-ից, իսկ հայերեն Հերը կամ Խերը՝ միջին պարսկերեն (մելքական) *Հեծ-ից կամ *Շհեծ-ից (տես նույնը, էջ 209): Հայերեն այս տեղանունը կոստանդինի Ծիրանաձինի մոտ անվանված է հունարեն փոչ թե Հեր կամ Cher, այլ Chert (De administr. imp. c. 44, 191, 15 և 192, 4):

Վոր Գօբդի կայարանը համապատասխանում ե, իրոք, այժմյան Խոյին՝ այդ յերեսում ե, ինչպես վերև տեսանք, նաև Պետինգերյան քարտեզի միջկայարանային հեռավորություններից:

Ուշագրավ ե, բացի այդ, վոր Գօբդի կայարանի և այժմյան Խոյի նույնացմամբ վորոշվում ե Nasabi կայարանը, վորի հեռավորությունը Գօբդի-Խոյից Պետինգերյան քարտեզում ցույց ե տրված 17 հոռմեական մղոն կամ մոտ 25 կիլոմետր:

Թե անունով և թե տեղադրությամբ Nasabi կայարանը համապատասխանում ե ըստ իս Հեր գավառում և Պարսկական Հայաստանի սահմանում գտնվող նուարսակ գյուղին, ուր 484 թվին ընդունել եր Նիխորը Վահան Մամիկոնյանի առաջարկած հաշտության պայմանագիրը:

Վոր այս նուարսակ գյուղը գտնվել ե, իրոք, Հերից Հայաստան տանող ճանապարհի վրա՝ այդ պարզ ու վորոշ հաստատում են Ղազար Փարպեցու հետեւյալ վկայությունները.

1. Ղազար Փարպեցի, Տիգիս 1904, III, գլ. Զթ, էջ 160:
«Եւ եկեալ Նիխոր յաշխարհն Հայոց՝ ոչ իշխեաց միջամիել ի Հայոց տեղիսս, այլ դադարեալ ի գաւառին որ կոչէր Հեր, ի գեօն որում անուն էր Նուարսակ, առաքեաց նա պատգամաւորս առ Մամիկոնեանն Վահան . . .»:

2. Նույնը, III, ՂԱ, էջ 164:
«Եւ եկեալ Մամիկոնեանն Վահան ի գաւառն որ կու-

չի Արտագ՝ ի գեօն որ անուանեն Եղինդ՝ դադարէր անդ ինքն և ամենայն գունդքն որ էին ընդ նմա. և առաքէր առ Նիխոր և զիւր եկն տայր գիտել նմա»:

Այս վկայություններից, ինչպես տեսնում ենք, դժվար չե հետևցնել, վոր Նուարսակ գյուղը գտնվել ե Հեր գավառի և Պարսկական Հայաստանի սահմանում և այն հին ճանապարհի վրա, վորը Խոյից գնում եր Պարսկական Հայաստան Արտազի միջով: Նույն հենց ճանապարհի մոտ գտնվել ե նաև յերկրորդ վկայության մեջ հիշատակված Եղինդ գյուղը՝ Սղոնցի այժմյան Երինդը (տես «Արմենիա և Էպոխի Յուսինանա, էջ 316»՝ ուր յեկել եր Վահան Մամիկոնյանը և, զգուշանալով Նիխորից ու ուղարկելով նրա մոտ հատուկ պատգամավորություն՝ պահանջել եր նրանից պատանդներ):

Թե ինչու Նուարսակ գյուղի անունը Պետինգերյան քարտեզում գրված ե Nasabi՝ այդ դժվար չե բացատրել:

Հին այս քարտեզի արտագրողները, ինչպես հայտնի յե, նմանահնչյուն անունները շփոթել են հաճախ իրանց ծանոթ տեղանունների հետ: Հավանական ե, ուրեմն, վոր Նուարսակը կարող եր շփոթված լինել հին Մծրինի հետ, վորը Պետինգերյան քարտեզում անվանված ե Nisibi: Ուշագրավ ե, վոր արտագրողների հենց այս սխալի պատճառով Խանզադյանի հրատարակած 17-րդ դարի քարտեզում Արտաշատ-Նասաբի ճանապարհի ուղղությունը ցույց ե տրված փոչ թեպի Եկբատանա, այլ գեպի Մծրին (տես «Atlas historique», Paris 1920, carte № 9, planche V):

Վոր այս Nasabi-ն, վորը գտնվել ե Խոյից մոտ 25 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք, նույնացվելու յե Նուարսակի հետ, այդ, ինչպես տեսնում ենք, ավելի քան հավանական ե, վորովհետեւ Նուարսակի տեղը ևս վորոշվում ե պարզապես միևնույն ճանապարհի վրա և Հեր գավառի ու հարեւն հին Արտազի սահմաններում:

12. Gobdi—Խոյից հետո Պետինգերյան քարտեզում նըշանակված են հետեւյալ կայարանները՝ Gobdi (Խավեննացու-

մոտ՝ Gobdie) 24 Filadelfia 20 Tris peda (*Խավինսացու մոտ՝ Tarspedo*) 45 Paresaca:

Աշխարհագրական ուսումնասիրություններից հայտնի յե, վոր Խոյից այս ճանապարհը կարող եր լինել յերկու ուղղությամբ՝ կամ այժմյան Մարանդի և Թավրիզի մոտով և կամ Տասվիջի վրայով ու Ուրմիա լճի արևելյան ափերի յերարությամբ:

Կոնրադ Միլերը Պատինգերյան քարտեզի այս Gobdi-Paresaca ճանապարհագիծը վորոշել ե, ինչպես վերև տեսանք, այժմյան Մարանդի մոտով դեպի Թավրիզ: Սակայն ավելի հավանական ե, իմ կարծիքով, յերկրորդ ուղղությունը, վորը, ինչպես վկայում են ճանապարհորդները, ավելի կարճ ե և հարմար (տես «Ուղեգրություններ», հատոր Զ, Յերևան 1934, եջ 227): Ուշագրավ ե, բացի այդ, վոր հենց այս յերկրորդ ճանապարհի վրա կարելի յե յենթադրել Tris peda կամ Tarspedo կայարանի հավանական տեղադրությունը:

Tris peda կամ Tarspedo կայարանի անունն ակներևար աղճատված ե (tris=լատ. «յերեք» և pes, pedis=լատ. «վոտք»): Բայց կարեռ ե և հետաքրքրական, վոր այս կայարանի տեղը Պատինգերյան քարտեզում ցույց տրված տարածությունների համաձայն (Gobdi-ից մինչև Tris peda՝ 44 հոռմեական մղոն կամ մոտ 65 կիլոմետր) վորոշվում ե գրեթե ծշտիվ այժմյան Դիզա Տասվիջի մոտ: Այժմյան տարածության նկատմամբ կարեռ ե Զեյմս Մորիերի վկայությունը (տես «Ուղեգրություններ», Զ, եջ 259—260), վորը Տասվիջի հեռավորությունը Խոյից հաշվում ե մոտավորապես 36 անգիստական մղոն կամ մոտ 58 կիլոմետր: Պարզ ե, ուրեմն, վոր տարածությունը մինչև Դիզա Տասվիջ, վորը գտնվում ե Տասվիջից մի քանի կիլոմետր դեպի հարավ-արևելք, կը լինի, իրոք, ավելի քան վաթսուն կիլոմետր:

Արդ՝ ի նկատի ունենալով տարածությունների վերաբերյալ վերոհիշյալ դիտողությունները՝ դժվար չե կուհել, վոր Tris peda կամ Tarspedo կայարանի անունը կարող ե աղավաղում լինել այժմյան Տասվիջ (տես Կիպերտի Nouvelle

carte générale-ի և ոռուսական տասը վերստանոց քարտեզների վրա՝ Tasouidj և Tascvich), Տասուջ (տես Լինչի քարտեզի վրա՝ Tasuj) կամ Տերսուջ (տես գեներալ Գարդանի ուղեգրության մեջ՝ Tersoucht)¹ գյուղի հասպույն անվան:

Յեթե հարավոր լինի պարզել, վոր Տասվիջ գյուղի հին անունը յեղել ե *Տարսունջ՝ այդ գեպքում Tarspedo-յի—րեծո վերջավորությունը կարող ե թարգմանությունը լինել հայերեն «ունջ» վերջածանցի, վորն ըստ Հյուբշմանի նշանակել ե «հատակ, արմատ, ստորոտ, վոտք»² (տես «Հին Հայոց տեղւոյ անունները», թարգմ. Պիլեզիկճյանի, եջ 284): Այս վերջին յենթադրությունը մենք անում ենք, իհարկե, մեծ վերապահությամբ, թողնելով ինդրի վերջնական լուծառումը, ինչպես և Tarspedo և Տասվիջ տեղանունների բացատրությունը, ավելի հմուտ լեզվաբան մասնագետների:

Tris peda կամ Tarspedo կայարանի անվան ու տեղադրության մեր նոր լուսաբանությամբ վորոշվում ե նաև Filadelfia կայարանի տեղը: Պատինգերյան քարտեզի մղոնաթվերի համաձայն Filadelfia տեղը պետք ե լիներ, հավանորեն, Ուրմիա լճի հյուսիսային ափերի մոտ, ինչպես այդ ճիշտ յենթադրել ե Կարլ Մյուլլերը (տես նրա «Tabulae in Claudi Ptolemaei geographiam» քարտեզը, վորն արտատպահված և Մարկվարտի «Das Itinerar von Artaxata nach Ar-mastica» աշխատության մեջ):

13. Tris peda—Tarspedo-յին հաջորդող Paresaca կայարանից հետո, վորը գտնվել ե Tarspedo—Տասվիջից 45 հոռմեական մղոն կամ մոտ 67 կիլոմետր հեռավորության վրա՝ միջկայարանային հեռավորությունները նշանակված են Պետինգերյան քարտեզում պարսկական պարասանգներով:

Ուշագրավ այս փաստից, վորով բացատրվում ե Հայաստանի պատմական աշխարհագրության կարևորագույն խըն-

¹ «Ուղեգրություններ», հատոր Զ, եջ 109.

² Հմմտե «յունջ բերդին», Փաւատ. III, Գլ. ԺԼ, եջ 132 (Վենետիկ 1889).

դիրսերից մեկը, մինչև այժմ գեռ չեն արվել համապատասխան ու անհրաժեշտ հետեւությունները:

Մղնաչափերի փոփոխությունը մի պարզ ակնարկ է ըստ իս, վոր ճանապարհագիծը մինչև Paresaca գտնվել է Արշակունյաց Հայաստանում, իսկ Paresaca-ից հետո՝ Սասսանյան Պարսկաստանում: Կարելի յե նույնիսկ յենթադրել վոր հիշյալ կայարանն անվանվել է Paresaca (=հավանորեն, Պարսք), վորովհետև նա գտնվել է Պարսկաստանի կամ «Պարսք»-ի սահմանում:

Իսկ այս լուսաբանությունից ինքնին արդեն հետեւում ե, վոր ըստ Գևտինգերյան քարտեզի, վորը կազմված եր չորրորդ դարի յերրորդ քառորդում, Արշակունյաց Հայաստանի սահմանը վորովհելու յե Tarspedo—Տասվիջից 45 հռոմեական մղոն կամ մոտ 67 կիլոմետր դեպի հարավ-արևելք՝ այժմյան Աջի-չայ գետի մոտ:


Նոր այս յեզրակացության դեմ գլխավոր առարկությունը կարող ե, անշուշտ, այն լինել վոր աշխարհագրական բոլոր նորագույն ուսումնասիրություններում Արշակունյաց Հայաստանի ու Պարսկաստանի սահմանը յենթադրվում է Ատրպատականի Գանձակ քաղաքի մոտ¹: Այս յենթադրությանը հիմք են ծառայել ինչպես հայտնի յե, Փավստոսի վկայությունները:

Ճիշտ են արդյոք մեկնված Փավստոսի այդ վկայությունները:

Ինձ թվում ե, վոր Փավստոսի հաղորդած տեղեկությունները վնչ միայն չեն հակասում վերոհիշյալ մեր յեզրակացությանը, այլ նրանք ուշադիր ու նոր քննությամբ ստանում են տարբեր իմաստ և հաստատում Գևտինգերյան քարտեզի ցուցումը:

Այս ինդիրն այնքան հետաքրքիր ե ու կարեոր Հայաստանի պատմական աշխարհագրության համար, վոր մենք

¹ Տե՛ս Matquart, Erānschahr, Berlin 1901, եջ 109. Հյուրշման, «Հին Հայոց տեղույթ անունները», թրգմ. Պիլեգիկյանի, եջ 90—91. Ածոնց, Արmenia Յուստինիանա, եջ 226 և ուրիշ:



անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Փավստոսի բոլոր համապատասխան վկայությունները:

1. **Փաւստոս, Վենետիկ 1889, III, գլ. է, եջ 16՝**

«Եւ ելն լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց. քանդեցին, գերեցին, առհասարակ աւերեցին. սփռեցան տարածեցան զահնմանօքն, լի և լի ծաւալեցան մինչև ի փոքր քաղաքիկն Սատաղու, և մինչև ի Գանձակ սահմանս Ատրպատական . . .»:

2. **Նույնը, IV, գլ. ԻԱ, եջ 141՝**

«Իսկ սահմանապահքն թագաւորին Հայոց [Արշակայ], որ նստէին ի Գանձակ Ատրպատականի, վաղ աղդ առնէին նմա զիրսն մինչ չև հասեալ էր նա ի սահմանս Ատրպատականի»:

3. **Նույնը, V, գլ. Ա, եջ 191՝**

«Իրբե գայր առաջապահն հասանէր ի միջնաշխարհն Հայոց՝ սպանանէր Մուշեղ զգօրագլուխն Պարսից զկարէնն և Զիկն, և զամենայն զգօրսն արկանէր ի սուր սուսերի իւրոյ, և ոչ մի զոք ապրեցուցանէր։ Եւ մինչև ի բուն ի սահմանսն ի Գանձակ Ատրպատականի զերկիրն յիւր վտարեալ, բռնացեալ ունէր»։

4. **Նույնը, V, գլ. Դ, եջ 202՝**

«Ապա զիետ լինէին փախստէիցն զօրքն Հայոց, և մինչև ի Գանձակ յԱտրպայական ի սահմանս Հայոց հալածէին զգօրսն Պարսից. ընդ փախուցեան զրագումս սատակէին զճանապարհայն»։

5. **Նույնը, V, գլ. Ե, եջ 205՝**

«Ապա ստրատն Յունաց կազմեաց զօրս իւր՝ որ ընդ իւրով ձեռամբ էին, և խաղացոյց տանել գնալ ի սահմանս Հայոց ի Գանձակէ կուսէ յԱտրպայական տանէ»։

6. **Նույնը, V, գլ. ԼՇ, եջ 241՝**

«Խորհէր ևս [Մուշեղ] ընդ իշխանսն Յունաց, և նոքոք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շնուր յերկիրն Հայոց. ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս-երկուս ամուր պարսպաւորս զօրա-

նիստս հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց, մինչեւ ի Գանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր»։

Այս վկայությունները հասկանալու համար պետք ե ի նկատի ունենալով, վոր բացի «Գանձակ Ատրպատականից», Փավստոսը հիշում ե նաև մյուս Ատրպատականը, վորը պատկանել ե Արշակ Բ-ին։ Հյուսիսային այս Ատրպատականը, վորի միջով անցել ե Պետինգերյան քարտեզի Gobdi-Pare-saca ճանապարհագիծը, հիշատակված ե նրա հետեւյալ վկայության մեջ։

Փաւստոս, V, գլ. Ը, եջ 213՝

«Ապա իրրե դադարեաց պատերազմն ի կողմանցն Պարսից, և յապահովեցան իրք ճակատուն յայնմ կողմանէ, և այնուհետեւ սկսանէր սպարապետն Հայոց Մուշեղ հարկանէր զայնոսիկ՝ որք ապստամբ եղեն ի թագաւորութենէն Արշակունյաց։ Նախ հարկանէր զտուն թագաւորին Հայոց, որ յԱտրպայականին էր. զամենայն երկիրն զաւառացն Ատրպատամացն աւերէր, և առնոյր գերէր բազում գերութիւն ի նոցանէ. և զննացորդմն նուանէր և ի հարկի կացուցանէր, և առնոյր զբազում պանդանզս ի նոցանէ»։

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, Փավստոսի մոտ հիշատակված են պարզ կերպով յերկու Ատրպատական՝ մեկն իրբե Հայաստանի մաս, իսկ մյուսը՝ Սասանյան Պարսկաստանի։ Միանգամայն պարզ ե, բացի այդ, վոր հարտվային Ատրպատականը, վորն անհրաժեշտ եր տարբերել հյուսիսային Ատրպատականից, Փավստոսի վկայություններում անվանված ե «Գանձակ Ատրպատական»։ Այս վերջինը «Գանձակ Ատրպատական» ե կոչվել, անշուշտ, Գանձակ քաղաքի անունով, վորը յեղել ե այս յերկրի կենդրոնավայրը»։

Վոր Փավստոսի պատմության մեջ «Գանձակ»-ը կամ «Գանձակ Ատրպատական»-ը վհչ թե քաղաքի, այլ հարտվային Ատրպատականի անունն ե՝ այդ պարզ ու վորոշ մատնանշված ե վերոհիշյալ գրեթե բոլոր վկայություններում։

Յեկ հատկապես վեցերորդ վկայության մեջ պարզ շեշտված է, վոր «Գանձակ սահման երկիրն» «Պարսից կուսէ էր»:

Արդ կարելի՞ յե միթե վերոհիշյալ վկայություններից վորևս կերպ հետևյնել, վոր Աստրապատականի Գանձակ քաղաքը գտնվել ե Արշակունյաց Հայաստանում, ինչպես յեն թագրել են Մարկվարտը, Հյուբշմանը և Աղոնցը:

Ըստհանրացած ու սովորական այս պնդումը, վորը հիմնված ե վերոհիշյալ յերկրորդ վկայության վրա, իմ կարծիքով, ակներև մի թյուրիմացություն ե:

Եերկրորդ այդ վկայության մեջ, ինչպես և Փավստոսի մյուս հատվածներում, «Գանձակ»-ը, անշուշտ, վոչ թե քաղաքի անունն ե, այլ այն «Գանձակ սահման երկիրն» ե, վորի մոտ են գտնվել «սահմանապահ»քն թագաւորին Հայոց: «Նստէին ի Գանձակ Աստրապատականի» նշանակում ե ըստ իս ճնառտէին ի [սահմանս] Գանձակ Աստրապատականի»: Իսկ սովորական ու ընդունված մեկնությունը, վոր իրը թե «Հայոց թագավորների սահմանապահները կընստեյին» Գանձակ քաղաքում՝ վոչ միայն անհավանական ե, այլ հայտնապես սխալ:

Վոր մեր մեկնությունն ե ճիշտ՝ այդ անուղղակի կերպով հաստատում են հենց մեկնույն հեղինակի յերկու հետեւյալ վկայությունները, վոր վերաբերվում են ին Թավրիզ քաղաքին:

1. Փաւստոս, Վենետիկ 1889, IV, գլ. իԵ, եջ 149:

«Ապա զօրաժողով լինէր Արշակ արքայ Հայոց, և կուտէր առ ինքն գօրս բազում իրրե զաւազ բազմությամբ, և խաղայր, ի վերայ աշխարհին Պարսից: Ապա առնոյր Վասակ զգունդն Հայոց, և զգոնսն հանդերձ Աւանոքն կոչել յօգնականութիւն, և հասանէր դիմէր յօգնականութիւն թագաւորութեանն Հայոց ի վերայ Պարսից: Այլ թագաւորն Պարսից հանդերձ ամենայն իւրովք զօրօքն ի ժամանակի անդ յայնմիկ՝ քանզի և նա իսաղեալ գայր ի վերայ Հայաստան երկրին ընդդէմ սոցա, ապա սոքա փութացեալք հասանէին յԱստրապատա-

կան, և գտանէին զբանակն արքային Պարսից ի թաւրէշ բանակեալ:

2. Նույնը, IV, գլ. լԹ, եջ 157:

«Յետ այսորիկ Բոյեկան մեծ նախարար Պարսից, և քառասում բեւր ընդ նմա, գային հասանէին յԱստրպատական. Կամէին ասպատակ առնել յերկիրն Հայոց: Ապա զառածեօք անգանէր Վասակ իւրով Հայաստան գնդաւն, հարկանէր զզօրսն ամենայն Պարսից, և զԲոյեկանն սպանանէր ի թաւրէժն: Եւ այրէր անդ զպատկեր թագաւորին Պարսից, նետաձիգ եղեալ՝ նետալից առնէր, Բայց միայն փախչեր Մերուժանն ընդ նոսա եկեալ:

Այս յերկու վկայությունների մեջ Փավստոսը, ինչպես տեսնում ենք, պարզ վկայում ե, վոր Թավրիզը գտնվել և Սասանյան Պարսկաստանի սահմաններում:

Ուրեմն՝ ինքն ըստ ինքյան հետեւում ե հենց այս վկայություններից, վոր Աստրապատականի Գանձակ քաղաքը, վորը գտնվում եր Թավրիզի հարավում և նրանից մի քանի հարյուր կիլոմետր հեռավորության վրա՝ չեր կարող լինել Արշակունյաց Հայաստանում:

Պատինգերյան քարտեզի Gobdi—Paresaca ճանապարհագծի լուսաբանությամբ վոչ միայն պարզվում ե աշխարհագրական կարևոր այս ինդիբը, այլ և վորոշվում ե ճշտիվ Արշակունյաց Հայաստանի սահմանն Աստրապատականում:

Ըստունելով այդ սահմանագիծը Տասվիջից մոտ 67 կիլոմետր դեպի հարավ-արևելք և այժմյան Աշխ-շայ գետի մոտ՝ Թավրիզի տեղը լինելու յեր, իրոք, Սասանյան Պարսկաստանում, ինչպես այդ վկայում ե նաև Փավստոսը:

Յեկ ինձ թվում ե, վոր յերկու հիմնական աղբյուրների այս համերաշխությունն ինքնին արդեն հաստատում մի նեցուկ ե մեր յեզրակացությունների հավանականության և միաժամանակ ուշագրավ մի ապացույց ե, վոր Փավստոսի վկայությունները սխալ են յեղել մեկնված աշխարհագրական նախորդ աշխատություններում:

14. Մեր այս նոր ուսումնասիրությամբ ճշգրվում են,
ինչպես տեսնում ենք, թե Artaxata—Gobdi—Paresaca հա-
նապարհագծի ուղղությունը և թե այդ հանապարհի վրա
գտնվող կայարանների մեծագույն մասը՝

Artaxata=Արտաշատ.

Catispi= *Ortispi Կամ *Ortispu=Որտսպու.

Sorvae Կամ Sorue—մնում ե անորոշ.

Anteba= *Artaza=Արտազ.

Nasabi=Նուարսակ.

Gobdi (Իավեննացու մոտ՝ Gobdie)=Եղի.

Filadelfia—մնում ե անորոշ.

Tris peda (Իավեննացու մոտ՝ Tarspedo)=Տառիկ
(Տառուջ, Տերուջ).

Paresaca=Պարսք (?)։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԴՎԻՆ—ՊԱՐՏԱՎ ՀԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

5. Դվին—ՊԱՐՏԱՎ ՀԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆ:

1. Դվինից Պարտավ տանող հին ճանապարհի մասին, թեև ոռւսերեն իմ աշխատության մեջ (“О торговле и городах Армении”, Эривань 1930, № 168 և 172) հակիրճ կերպով բերված եյին ընդհանուր մի քանի դիտողություններ, սակայն այդ աշխատության մեջ ինձ չեր հաջողվել հաստատուն կերպով վորոշել այդ ճանապարհի ուղղությունը և հանգամանորեն ճշտել կայարանների անունները և տեղերը:

Սույն ուսումնասիրության մեջ մանրամասն քննված են այժմ ու վորոշված այդ ճանապարհի բոլոր կայարանները: Ցեղ ինձ թվում ե, վոր վիճելի խնդիրները լուսաբանված են այժմ ավելի հիմնավոր կերպով, քան այդ արված ե աշխարհագրական նախորդ աշխատություններում:

Թե Դվինը և թե Պարտավը, ինչպես հայտնի յե, առետրական խոշոր կենդրոններ են յեղեւ գլխավորապես, արաբական տիրապետության շրջանում. ուստի և հասկանալի յե, թե ինչու այդ ճանապարհը հիշատակված ե միայն Բագրատունյաց շրջանի մատենագրական յերկերում:

Նրա մասին հաղորդված տեղեկություններից առանձնապես կարեոր ե, անտարակույս, իստախրիի ընդարձակ վկայությունը նրա աշխարհագրական հայտնի յերկում, վորը գրված ե տասերորդ դարում (տես Livre des routes et des royaumes, ed. de Goeje, Bibl. Geogr. Arab. I, № 193): Բացի այդ, խիստ հետաքրքրական ե, ինչպես կըտեսնենք, նույն ճանապարհի համառոտ հիշատակությունը հայկական «Մղնաչափք»-ում, վորը հրատարակված ու քննված ե վեր-

Զեռս Խոշենացու մասին իմ նոր ուսումնասիրության մեջ (տես «Խորենացու առեղծվածի լուծումը», Յերևան 1934, էջ 84—89):

2. Խստախրիի վերոհիշյալ հատվածում¹ և հայկական «Մղնաչափք»-ում մատնանշված են Դվին-Պարտավ ճանապարհագծի հետեւյալ կայարանները:

1. Н. А. Карапулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербайджане, тես Сборник материалов для описания местностей и племен Кавказа, XXIX, 1901, էջ 33—34²

„Բարձա՛ 9 (ֆարс.) Կալյկատս 13 Մետրիս 12 Դամիս 16 Կիլ-Կոյ 16 Սիսադյան 16 Դաբիլ³։ Ծանոթություններ Կարասուլովի։ — Բոլոնիայի որինակում՝ Կիլ-Կոյ-ը գրված ե առանց կետերի, Բերլինի որինակում՝ Կիլ-Կորը, իբն Հասուքալի մոտ՝ Կ-հ-կլուն, Պարսկական տարբերակում՝ Կիլիկյան, Մուքադասին՝ Կիլվայ, Յաքուտը՝ Կիլ-Կոյ։

2. Նույնը ըստ Մարկվարտի (հատվածը, ըստ յերկութիւն, վերականգնված ու ուղղված ե), տես Das Itinerar von Artaxata nach Armastica, Wien 1928, էջ 56⁴

«Barda^c a 9 (Fars.) Թալանգատս 13 Մարիս 12 Դամիս 16 Գելակուն 16 Սիսայան 16 Դուբիլ⁵։

Ծանոթություններ Մարկվարտի։ — Յաքուտը գրում ե Մարիս Փիլ. Մարիս։

3. «Մղնաչափք», տես «Խորենացու առեղծվածի լուծումը», էջ 86⁶

«Ի Դունա ի Բերդկումս կ. անտի ի Պարտաւ Ճկ։

Ծանոթություններ Աղուէսագրքում» (Մարտիլիսայ 1683) «ի Բերթկումսն»։

¹ Խստախրիի բնագրի de Goeje-ի հրատարակությունը, դժբախտաբար, մենք չենք կարողացել ճարել Հայաստանի գրադարաններում։ Նրա համապատասխան հատվածը մենք հարկադրված ենք սեղ բերել Կարտուզի և Մարկվարտի աշխատություններից։

Սեն-Մարտենի մոտ (Mémoires II, էջ 396)⁷ «De Tovin à Therthgois il y a 60, de là à Bardav 140»։

Կայարանների անունների մոտ զրված թվերը ցույց են տալիս տարածությունները մի կայարանից մյուս կայարան արարական փարսախներով կամ մղններով (փարսախը = 5752,8 մետր և մղոնը = 1917,6 մետր, տես իմ աշխատությունը «Երատութենեսի ստաղիոնը և Պարսից ասպարեսը», Յերևան 1934, էջ 9—12):

3. Վերոհիշյալ վկայություններում առաջին կայարանը Դվինից հետո մատնացույց ե արված Խստախրիի մոտ Սիսադյան-ը կամ Sīsağān-ը, իսկ «Մղնաչափք»-ում՝ Բերդկումը։

Ուրեմն՝ ճանապարհի ուղղությունը վորոշելու համար անհրաժեշտ ե ճշտել նախ այս կայարանների տեղերը։

Բերդկում կամ Բերդկումք անունով գյուղեր, ինչպես հայտնի յե, հիշատակված կան Հին Հայաստանում զանազան շըրջաններում և գալաններում՝ Սյունիքում, Տայքում, Բագրեվանդում և Մազագում (տես Հյուրշման, «Հին Հայոց տեղույ անունները», թրգմ. Պիլեղիկճյանի, էջ 323—324): Սակայն «Մղնաչափք»-ի Բերդկումքին, վորը գտնվել ե Դվինից 60 արարական մղոն կամ մոտ 115 կիլոմետր հեռավորության վրա՝ կարող ե համապատասխան լինել, անշուշտ, միմիայն Մազագ գավառում գտնվող Բերդկումքը, վորը հիշատակված ե Հովհաննես կաթողիկոսի պատմության հետեւյալ հատվածում։

«Եւ զինի նորա [Խորայելի] Սահակ կայ յաթոռ հայրապետությանն, որ հայրենիօք էր ի Զորափորոյ յարքունաշէն գեղջէ և մայրենիօք ի Մազագ գաւառէ ի գեղջէ Բերդկաց»⁸ (Տիգիս 1912, էջ 93):

«Մղնաչափք»-ում հիշված Բերդկումքի տեղը վորոշել համար պեսաք ե, ուրեմն, քննել ու ճշտել նախապես Մա-

¹ Ալիշանը վկայում ե, վոր «այլ գրիչք պէսպէս գրեն, ևս և Բերդկաց, Բերդկանց, Բըթըկնոց» (տես «Այրարատ», էջ 352):

զազ գավառի տեղադրությունը, վորը, ինչպես կըտեսնենք, սխալ ե վորոշված գիտական նորագույն յերկերում:

4. Մի ամբողջ գավառի տեղադրության ճշտումն ինքն արդեն կարևորագույն մի ինդիր ե, անշուշտ, Հայաստանի պատմական աշխարհագրության ուստի և ավելի քան անհրաժեշտ ե մանրամասն քննության առնել նորից մատենագրական այն բոլոր տեղեկությունները, վոր վերաբեր վում են այս գավառին:

Մազագ գավառը, ինչպես հայտնի յե, հիշատակված ե Բագրատունյաց և ավելի ուշ շրջանի մատենագրական միայն մի քանի վկայություններում: Բայց նրա տեղադրության վորոշվանը հիմք են ծառայել վոր այդ տեղեկությունները, այլ Խորենացու հայտնի վկայությունը Գառնի-Գեղամի մասին:

Համապատասխան այդ վկայությունները, վոր կարու են վերաքննության, մեջ ենք բերում առանց կրծատումների.

1. Խորենացի I, ԺԲ, եջ 40—41 (Տփղիս 1913):

«Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զհարմայ յԱրմաւիր. և թողեալ զհարմայ յԱրմաւիր հանդերձ որդուվք բնակել, և ինքն գնաց զմիւս լերամբն արևելքան հրւսիսոյ, յեզր ծովակի միոյ: Շինէ զեզր ծովակին, և թողու անդ բնակիչս. և յիւր անուն և սա զիեանն անուանէ Գեղ, և զշէնսն՝ Գեղարքունի, որով կոչի և ծովս»:

2. Նույնը ։, ԺԲ, եջ 41։

«Բայց ինքն Գեղամ դառնայ անդրէն ի դաշտ անդր, և առ ոտամբ նորին լերինն ի ձորակի միում ամրոջ շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնիկայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի»:

3. «Աշխարացոյց Մովսէսի Խորենացւոյ», Վեհետիկ 1843, եջ 610։

«Այրարատ ի մէջ կայ յառաջասացեալ աշխարհացդ. և գաւառք են ի նմա քսան..... Կոտայք, Մազագ.

Վարաժնունիք, ոստանն Դըւնայ՝ մինչև ցղաշան Եարուր»:

4. Հովհաննես կաթողիկոս, Թիֆլիս 1912, եջ 113։

«Յետ սորա [Յովսեփայ] Դաւիթ ի գաւառէ Մազագայ ի գեղջէ կակազոյ յաջորդէ զաթոռն սուրբ»:

Հմնտե նաև կիրակոս Գանձակեցի (Թիֆլիս 1910), եջ 72։ «ի գեղջէ կակազայ» և Ասողիկ II, Բ, եջ 106։ «ի գեղջէ կակազայ»:

5. Նույնը, եջ 354։

«Իսկ Բշրն այն, վոր յետ ընդ կրունկն թողաւ՝ ժողով սպայակոյտ զօրու բազմի գումարտակ արարեալ, եւ լանէ զկողմամբք գեղամաց շէն գաւառին Մազագայ՝ քինսախնդիր լինելով Շահանն կոչեցելոյ շահ վասն ոչ հնազանդելոյ նմա նոցաւ: Եւ վասն զի նա յանմարտնչելի ամրոցին ի Սևան կղզուղ առկայանայր, և Բշրն, զոր խնդրէր՝ այնմ ոչ եհաս, այնուհետև խորհէր ձեռն զգաւառոքն արկանել և զսակաւամանեայ մնացորդս մարդկանն գերել և աւար հարկանել և ճարակ սրոյ տալ»:

6. Մտեփանոս Որբելյան, Թեփլիս 1910, գլ. Լէ, եջ 174։

«Եւ գնեալ [մեծ թագուհին Մարիամ] ի հագարացի մարդկանէ զգեօղն Շողուագայ ընդ 60,000 դրամի ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ ընծայէ ի սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն. նմանապէս և գեօղ մի ի Մազագ գաւառի ընդ 3000 դահեկանի գնէ և տայ ի սուրբ եկեղեցին. որոյ անուն գեղջն Գնէր»:

7. Նույնը, գլ. Ծ, եջ 264—265։

«և կազմեցին [իշխանքն Սիսական] կառս ի սպիտակ ջորլոց. և կողորս արծաթիս արարեալ՝ եղին ի նմա զնշխարս սրբոյն և բարձին սաղմոսիւք և օրհնությամբ. և տաճիկ նժուզոք՝ սրավար երիվարօք իբր օղապարիկ թեօք թոռւցեալ անցին ընդ լայնածիր ասպարէզ երկայն ոահին, և հասին ի բնիկ սահմանս իւրեանց

տէրութեանն ի Մազագ գաւառ և անցեալ ընդ
Գեղամ մտին ի Վայոց ձոր. զի դէմ եղեալ էր տանել
ի Սիւնիս յարքունական գահոյս իւրեանց»:

5. Մեջ բերված վկայություններից կարեոր ե համար-
վել և ուշադրության ե առնվել հատկապես Հովհաննես կա-
թողիկոսի վերոհիշյալ հինգերորդ վկայությունը, վորի մեջ
Մազագ գավառն անվանված ե «գեղամաշէն»:

Ցեղակետ ընդունելով, գիխավորապես, այս ցուցումը և
հիմնվելով նաև Խորենացու վկայությունների վրա (տես վե-
րև վկ. առաջին և յերկրորդ), Մազագ գավառի տեղը վորո-
շել են աշխարհագրական յերկերում կամ Սևանա լճի մոտ և
կամ Գառնիի շրջանում, վոր Խորենացու մոտ մատնացույց
են արված իրրև «գեղամաշէն»:

Ալիշանի կարծիքով (տես «Այրարատ», եջ 13 և 331—
333), վորն այժմ տիրող ե հանդիսանում և վորը ընդունելի
յեն համարել նաև Ագոնցը, Մարզվարտը և Հյուրշմանը¹, հին
Մազագ գավառը գտնվել ե այժմյան Գառնիի և Գեղարդի
շրջանում: Այստեղ կարելի յե յենթագրել Ալիշանի ասելով,
վերոհիշյալ «Բերդկաց» կամ «Բերդկանց» գյուղը, վորի ա-
նունը նա համապատասխան ե համարում Գեղարդի վանքի
մոտ գտնվող Պորտիկ գյուղի անվան (տես «Այրարատ», եջ
352):

Ուշագրավ ե սակայն, վոր նույն գավառի տեղն Ալիշա-
նից առաջ Շահիսաթունյանցը յենթագրել ե վհչ թե Գառնիի
ձորում, այլ Սևանա լճի արևմտյան ափերի մոտ:

«Այս [Գեղարքունի] գաւառ—ասում ե Շահիսաթու-
նյանցը—ըստ յառաջբերեալ բանիցն Հին Հայաստանի
պարունակէ յինքեան զշորեսին կողմանսն շուրջ զծովա-
կաւն, բայց գտանին դարձեալ յայնմ մասնաւոր գա-
ւառք՝ Մազագ՝ որ որպէս նկատի ի գրուածոցն Զ. Յովհ-
հաննու կաթուղիկոսի, անկանի յարևմտեան եզր ծովա-

¹ Տես Արմենիա և էպօխ Յօստինիանա, եջ 302, Հյուրշման, «Հին
Հայոց տեղույ անունները», Վիեննա 1907, եջ 252 և 329 և Markwart,
Das Itinerar von Artaxata nach Armastica, Wien 1928, եջ 11.

կին ի միջոցս Սևանայ, Վարածնունեաց և Կոտայից.
քանզի յարձակումն Բշրայ ոստիկանի ի վերայ կղզույն
Սևանայ անցանելոց է ընդ Կոտայս գաւառ և ընդ ա-
րևելյան սահմանս Վարածնունեաց և այնպէս հասանել
ի Սևան» (տես «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի
և հինգ գաւառացն Արարատայ», Եջմիածնի 1842, Բ,
եջ 235—236):

Նույն այս կարծիքը հայտնել ե նաև Մեսրովը արքե-
պիսկոպոս Սմբատյանցը, թեև նրա մոտ ավելի քան վիճելի
յեն Մազագ գավառի սահմանների ծզգրիտ վորոշումը, ինչ-
պես և նրա մեջ գտնվող այժմյան գյուղերի ճշտումները, վոր
մանրամասն մատնանշված են հատուկ ցուցակում (տես «Տե-
ղագիր Գեղարքունի ծաղկազարդ գաւառի», Վաղարշապատ
1895, եջ 283—289):

6. Մազագ գավառի տեղադրության մասին միանգամայն
ճիշտ ե, ինչպես պարզ յերեւում ե վերոհիշյալ հենց վկայու-
թյունների ցուցումներից, վհչ թե գերիշխող առաջին կար-
ծիքը, այլ Շահիսաթունյանցի յենթագրությունը, վորն ան-
տես ե արվել աշխարհագրական նորագույն յերկերում:

Ուշագրավ ե նախ, վոր Մազագ գավառը հիշատակված
ե «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ Կոտայ-
քից հետո և Վարածնունիքից առաջ: Ուրեմն՝ վորոշ հիմք
են ունեցել Շահիսաթունյանցը և Սմբատյանցը յենթագրե-
լու, վոր նա սահմանակից ե յեղել Կոտայքին ու Վարած-
նունիքին:

Մազագի և այս վերջին գավառների սահմանակցությու-
նը, ինչպես և նույն գավառի տեղադրությունը Սևանա լճի
արևմտյան ափերի մոտ, հաստատվում ե, բացի այդ, ինչ-
պես մատնանշել ե Շահիսաթունյանցը, նաև Հովհաննես կա-
թողիկոսի վերոհիշյալ հինգերորդ վկայությամբ: Հովհաննես
կաթողիկոսը, նկարագրելով արարական Բիշր զորավարի ար-
շավանքն Աշոտ Յերկաթի դեմ, վորը գտնվում եր Սևան
կղզում «անմարտնչելի ամրոց»-ում՝ հարակից շրջանն ան-

վանում ե, ինչպես տեսանք, «կողմունք գեղամաշէն գաւառին Մազագայ»:

Ավելի ևս պարզ ե ու վորոշ Ստեփանոս Որբելյանի վերոհիշյալ յոթերորդ վկայությունը:

«Իշխանքն Սիսական», վկայում ե Որբելյանը, գնացել ելին կառքով «ընդ լայնածիր ասպարէզ երկայն ուահին», հասել ելին նախ «ի բնիկ սահմանս իւրեանց տէրութեանն ի Մազազ գաւառի», այդտեղից անցել ելին «ընդ Գեղամ» և մտել «ի Վայոց ձոր»: Այս վերջին գավառում նրանց ճանապարհը մատնացույց ե արված «Սուլեմայ» ձորով, այսինքն՝ այժմյան Սելիմի լեռնանցքով և «Խարաշկօնք» գյուղի վըրայով, վորի տեղը պետք ե յենթադրել ըստ իս այժմյան չորս գյուղի մոտ:

Միանգամայն պարզ ե ու անվիճելի, վոր այս ճանապարհի ուղղությունը մինչև Մազազ պետք ե լիներ այժմյան Յերևան – Յելենովկա հարսմար գծով գեպի Բերդկունք կայարանը, վորը գտնվում եր, ինչպես տեսանք, Մազազ գավառում: Բերդկունքից նրանք անցել են «Գեղամ», վորը սահմանակից եր Մազազին հարավից, և այնուհետև «Գեղամ»-ում գտնվող Կոթ գյուղի մոտից մտել են Վայոց ձոր, բարձրանալով այժմյան Սելիմի լեռնանցքով, վորն Որբելյանի մոտ անվանված ե «Սուլեմայ» ձոր» (տես Ծ, եջ 265):

Որբելյանի մատնանշած ճանապարհի ուղղությունը չերկարող, անշուշտ, լինել Գառնիի ձորով ու Ալիշանի յենթադրած Մազազով, վորովհետև այդ կողմով հնարավոր չերգալ կառքով վոհ Գեղամ և վոհ ել Վայոց ձոր:

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, Որբելյանի վերոհիշյալ վկայությամբ պարզ ու վորոշ հաստատվում ե, վոր Մազազ գավառի տեղը լինելու յեր, իրապես, վոհ թե այժմյան Գառնիի շրջանում, այլ Սևանա լճի արևմտյան ափերի մոտ:

7. Այս յեզրակացությունը պարզ կերպով հաստատվում ե այժմ և «Մղոնաչափք»-ի վերոհիշյալ վկայությամբ:

Դվին – Պարտավ ճանապարհի վրա «Մղոնաչափք»-ում մատնանշված ե, ինչպես վերև տեսանք, Բերդկունք կայա-

րանը, վորի հեռավորությունը Դվինից ցույց ե տրված 60 արաբական մղոն կամ մոտ 115 կիլոմետր (1917, 6×60= մոտ 115 կիլ.): Այդ կայարանը համապատասխանում ե, անտարակույս, Հովհաննես կաթողիկոսի հիշած «Բերդկաց» կամ «Բերդկանց» գյուղին, վորը գտնվել ե Մազազ գավառում:

Արդ ուշադրության առնելով Բերդկունքի վերոհիշյալ հեռավորությունը Դվինից՝ դժվար չե դարձյալ համոզվել վոր թե այս կայարանի և թե Մազազ գավառի տեղը լինելու յեր վոհ թե Գառնիի ձորում, այլ Սևանա լճի արևմտյան ափերի մոտ: Ուստի և հենց այս շրջանում պետք ե գտնվեր այն բերդավայրը, վորը կարող ե համապատասխան լինել հին Բերդկունք գյուղին:

Ինչպես հայտնի յե, այժմյան տարածությունը Դվին – Արդաշարից մինչև Յելենովկա մոտավորապես 90 կիլոմետր ե: Պարզվում ե ըստ այսմ, վոր Բերդկունք գյուղի տեղը, վորը գտնվել ե Դվինից մոտ 115 կիլոմետր հեռավորության վրա՝ պետք ե յենթադրել այժմյան Յելենովկայից մոտ 25 կիլոմետր դեպի հարավ: Յեկ հետաքրքիր ե, վոր ճշտիվ այս տարածության վրա գտնվում են Սևանա լճի արևմտյան ափերի մոտ միջնադարյան մեծ բերդի ափերակներ այժմյան Աղկալա գյուղում:

Այս բերդի, ինչպես և նրա շրջակայքի մասին, անհրաժեշտ տեղեկությունները հաղորդել ե մեզ Կուլտուրայի Պատմության Խնստիտուտի գիտական աշխատակից Ս. Բարխուդարյանը, վորը հարատարակելու յե շուտով իր ուսումնասիրությունն այս շրջանում գտնվող նախախալդական և խալդական բերդերի մասին:

Աղկալայի բերդը, նրա ասելով, միակ միջնադարյան բերդն ե Աղմաղանի լեռնաշղթայի արևելյան այս կողմերում:

Հիմնվելով «Մղոնաչափք»-ի վկայության վրա՝ կարելի յե, ուրեմն, վստահորեն յենթադրել վոր այժմյան Աղկալայի մոտ գտնվող ափերակների վայրը յեղել ե նշանավոր կենդրության վրա՝ Դվին – Պարտավ ճանապարհի վրա և վոր, հավա-

նորեն, այստեղ պետք ե լիներ հին Բերդկունք գյուղը, վորի հեռավորությունը՝ Դվինից ցույց ե տրված 60 արարական մղոն կամ մոտ 115 կիլոմետր:

8. Ի նկատի ունենալով, վոր մեր այս յեղբակացությունը Հայաստանի պատմական աշխարհագրության համար ունի խոշոր նշանակություն՝ ավելորդ չեմ համարում Աղկաւայի մոտ գտնվող ավերակների մասին, վորոնց մոտ գտնվել ե Բերդկունք կայարանը, մեջ բերել տեղագրական մանրամասն նկարագրությունները Շահնախթունյանցի, Սմբատյանցի և Ալիշանի յերկերից:

1. Շահնախթունյանց, «Ստորագրութիւն», եջ 242¹

«Եւ առ նմա [Հայր Ռհանավանքի] փոքր ինչ հեռագոյն ի հիւսիսակողմն է տեղի մեծի աւերակի մինչև կարծել իսկ քաղաքի. զի աւելի ընդարձակ էր տեղին՝ մինչև բաւական լինել աւելի քան երկու հազար գերդաստանաց. ի միջին տեղուջ այսր աւերածի ի փոքր ինչ բարձր դիրս կային կանգուն ուղղաբերձ որմունք քարամբք և կրով ձուլեալք. անմիջոց յեզերս ջուրց ծովակին հիմունք տանց և հովանոցաց և շէնք նոցին բոլորովին խոնարհեալ և քայքայեալ որոց տեսիլ և եթ գրաւէ զոյշ մարդոյ ի զարմանս և զոգի հայրենասէր ի հառաջանս հոգւոց ի խորոց սրտէ»:

2. Սմբատյանց, «Գեղարքունի», եջ 33¹

«Գեղարքունոյ հին քաղաքներն հեակեալք են. առաջինը Ազատ քաղաքը՝ որ Նոր-Պայազիտ քաղաքից դէպի հիւսիս 7¹ վերստաչափ հեռի է, Աղամիսան և Ալիշալու տանող ճանապարհ ներքել՝ ծովեզերքի վերայ, որոյ տանց ու կրպակաց, կարաւանոցաց և պանդոկաց աւերակներն ահագին տարածութեամբ փոռուած են դաշտի երեսին՝ դէպի ծովը խոնարհած զառիվայրում»:

3. Նույնը, եջ 438¹

«Վանքի [Հայրավանքի] շրջակայքը զարդարուած

¹ «Դէպի առևելք 15 վերստաչափ» ուղղել ենք համաձայն հեղինակի զուցման «դէպի հիւսիս 7 վերստաչափ», անս «Գեղարքունի», եջ 445.

էին խաչքարերով։ Աւերակաց ընդարձակ տարածութիւնը և քարաժայուերի վերայ մնացած քար ու կրով շինած որմանց կիսականգուն դրութիւնը, ցոյց էին տալի, որ երբեմն քաղաքատեղի է եղել. ինչպէս այժմ ես մերձակայ հայ և թուրք բնակիչքն հաստատելով՝ «Ազատ քաղաք» անուն տան տեղւոյս և «Կարմիր շէն»։

4. Ալիշան, «Սիսական», եջ 40¹

«մերձ ի Հայրուանս կայ Ազգալէ (Սպիտակ բերդ) բերդաւոր գեօլ 30 տամբք. Բովանդակ ցամաքակղղիս այս լի է աւերակօք մեծագործ հայկական դաստակերտաց. որպէս խնամով աղդէ և ուղենոր մի եւրոպացի» (տես Du Bois de Montpréoux, Voyage autour du Caucase (1833—1834), Paris 1839—43, հատ. III, եջ 312):

5. Նույնը, եջ 40¹

«և զաղաքատեղին աւերակ՝ Ազատ-քաղաք գիւղ, յորում նշմարին պարիսպք իջևանից կամ կարաւանատանց, անյիշատակք առ ի նախնեաց. Մարթ է և զմի ի տեղեաց աշտարակացն համարել Բերդ գիւղ, և զմին՝ Գեղաքունոյ բերդ, զոր ընդ գլխաւոր բերդորայս Սիւնեաց կարգէ պատմիչ աշխարհին»։

9. Վերոնիշյալ նկարագրություններից յերեսում ե, վոր այժմյան Աղկալայի և Հայրեվանքի մոտ գտնվող «Ազատ-քաղաք»-ը, վորը նրանց սահմանակից ե և գտնվում է Դվին-Պարտավ ճանապարհի վրա՝ յեղել ե նշանավոր մի մեծ կենդրոնավայրը. Նույն այս քաղաքը հիշատակված ե 18-րդ դարում նաև Սիմեոն կաթողիկոսի «Զամբռա-ուում» Հայրեվանքի վիճակ են յեղել «ի Գեղարքունոյ նահիէն», վկայում ե Սիմեոն կաթողիկոսը, «Բերթ»-ը և «Ազատ քաղաք»-ը (տես «Զամբռ», Վաղարշապատ 1873, եջ 284):

Սմբատյանցի և Ալիշանի վերոնիշյալ յերկրորդ և հինգերորդ հատվածներում ուղարքության արժանի յե հատկապես նաև այն, վոր նրանք «Ազատ քաղաք»-ում մատնանըշում են իջևանների կամ կարավանատների ավերակներ։

Դժվար չե, ուրիշն, յեղբակացներ, վոր «Մղոնաչափ»-ի

Բերդկունք կայարանի տեղը՝ թե ըստ իր հեռավորության Դվինից և թե ըստ տեղագրական վերոհիշյալ նկարագրությունների՝ վորոշվում ե հայտնապես Աղկալայի ու Հայրեվանքի մոտ գտնվող նշանավոր այս հին կենդրուսավայրում:

Ուշագրության արժանի յե վերոհիշյալ ավերակների վայրում, մասնավորապես, նաև Աղկալայի բերդը կամ ամրոցը, վորոշ, ինչպես վկայում են Սմբատյանցը և Լալայանը, շինված ե ծովեղերքում կարմիր սրբատաշ քարից (տես «Գեղարքունիք», եջ 432 և Յեր. Լալայան, «Նոր Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք», Աղգագր. Հանդ., XVIII, 1908 թ. № 2, եջ 124):

Հնարավոր չե արդյոք յենթադրել, վոր հենց այս բերդը կարող ե լինել հին «Գեղայոյ ամրոց»-ը, վորը հիշատակված ե Հովհաննես կաթողիկոսի վկայություններում:

Վերև մենք մեջ եյինք բերել Հովհաննես կաթողիկոսի վկայությունը Բիշր վոստիկանի արշավանքի մասին Աշոտ Յերկաթի գեմ: Հովհաննես կաթողիկոսն իր այդ վկայության շարունակության մեջ պատմում ե, վոր Բիշր վոստիկանը՝ պարտություն կրելով Սևան կղզու մոտ՝ «դէպ ուղիղ» գնացել եր «յամրոցն Գեղայոյ»:

«Իսկ Բշրն այն—ասում ե Հովհաննես կաթողիկոսը՝ ամօթ զանձամբ արկեալ՝ ջանայր վրէժս փոխանակ այնը պահանջել՝ և դէպ ուղիղ գնացեալ յամրոցն Գեղայոյ, զի թերես անզգուշաբար ի վերայ հասեալ՝ ըստնանել ինչ նմա մարթացէ, սակայն և անտի ևս ձեռս ի գլուխ ելանէր: Վասն զի Գէորգն այն, զորմէ նախն պատմեցաք վասն մարտի քաջության նորա, ըստ զիւպաց իմն յամրոցի անդ հանդիպեցաւ: Եւ իրեւ ետես զայն ամրոխ հասեալ մերձ ի դուռն ամրոցին՝ ապա վառեալս ի զէնս և ի զարդս և ի տէգ նիզակս, և այլ ևս արս սակաւս ընդ ինքեանս առեալ՝ արտաքս առ թշնամիսն յամրոցէն ելանէր: Եւ ապա միամարտեալ ընդ սպայակոյտ զօրում՝ նախ կարթակոտոր զերիվար Բշրայն առնէր նրանաւ սրոյն, մինչ զի հազիւ յայլ ձի-

աշտանսակեալ փախչէր. և ապա այլոցն ևս մարտակցացն աջակցեալ Գէորգայ՝ տապաստ արկանէին զյոլովս ի թշնամեացն և ի փախուստ զնոսա դարձուցանէին» (Թիֆլիս 1912, եջ 356—357):

Նույն այս «Գեղայոյ ամրոց»-ը, վորն անվանված ե նաև «Քեղեայ ամրոց» և «Գեղէ», հիշատակված ե դարձյալ թե Հովհաննես կաթողիկոսի և թե Ստեփանոս Որբելյանի հետեւյալ վկայություններում:

Հովհաննես կաթողիկոս, Թիֆլիս 1912, եջ 359—360^o

«Բայց բնակիչք ամրոցին Քեղեայ իբրև լուսն զգաւլուստ ոստիկանին [Նորայ] և ի մտի եղին զյոյժ մոմը ուռումն սպառնութեան առ ի նմանէն նոցա, զահի հարեալք և ահիւ ըմբռնեալք և կարծիս ի մտի եղեալ անհաստատ խորհրդով, թէ գուցէ մատնեսցի ամրոցն ի ձեռս ոստիկանին և այնպէս անհնարին տանջանաց և մահու մատնեսցին: Եւ ապա այսպիսի անզգուշալի երկիւղի զանձինս տուեալ՝ ամենէին բնաւին իսկ ունայնացուցեալ լքին ի բաց զամրոցն ի բնակչաց անտի»: Ստեփանոս Որբելյան, Թիֆլիս 1911, գլ. ԿԶ, եջ 399^o

«Ապա եկեալ [սուլտանն Խորազմաց Զալալադինն] յԱրաբատեան գաւառ՝ բանակ հարկանէր անդ. վասն որոյ ժողովեալ իվանէ Աթաբէկին զամենայն զյոյժ և զօրութին Հայոց և Վրաց՝ կամէր մարտիւ պատահել նոցա: Եւ կացուցանեն զոմանս դէտ և ազդարար ինքեանց՝ զնալուէ ոմն և զ Գրիգոր կանչող. որք տեսեալ յոյժ նուազ զգօրն Խորասանի կանչեն և ազդեն մերոց զօրացս եթէ՝ եկայք: Իսկ նա որ Տէրն է յաղթութեանց, կամելով կամէր եղծանել զանօրինեալ և զամբարշտեալ ժողովուրդն, փոխարկեաց զձայն աղդարարացն յականճռ սոցա եթէ՝ փախիք: Որք և թողեալ անդէն զկարասիս իւրեանց և զվրանս՝ աճապարեալք յերիվարսն փախեան և իբր խելացնորեալք, առանց սրոյ և զօրութեան նա և պատերազմի վիթեալք ընդ փրթուածս մեծ քարին, որի խրամին Գառնւոյ, առ հասարակ հոսեալ կործանեւ-

ցան. և Աթարէկն իվանէ 10 արամբք զերծեալ անկանի յամուրն Գեղէ»:

10. Բոլոր այս վկայություններում «Գեղայոյ» կամ «Քեղեայ ամրոց» և «ամուր Գեղէ» պարզապես միևնույն բերդի անուններն են, վորի տեղն աշխարհագրական և տեղագրական նորագույն յերկերում ցույց ե տրվում սովորաբար կամ այժմյան Միլլի-չայի ձորում և կամ Ղարաղալայում:

Ընդունելով, վոր «Գեղամաշէն» Մազագ գավառը գըտնվել և Գառնիի ձորում, նաև ի նկատի ունենալով, վոր այժմյան Միլլի-չայի ձորը ձեռագիր Ավետարանների յերկու հիշատակարանում անվանված ե «ձոր Քեղոյ» կամ «ձոր Քեղայ», Ալիշանը «Գեղայոյ» կամ «Քեղեայ ամրոց»-ի տեղը յենթադրել ե հենց այս «Քեղոյ» կամ «Քեղայ ձոր»-ի մոտ՝ այժմյան Գյոլայսորում (=ըստ Ալիշանի՝ Քեղա Այսորի) և կամ «Գալէ տիպի»-յում (տես «Այրարատ», եջ 354 և 359—360): Նույն կարծիքին ե նաև Գարեգին Հովսեփյանը, վորն իր «Խաղբակյանք կամ Պռոշյանք» աշխատության մեջ (Վաղարշապատ 1928, եջ 65—67) անվերապահ ու կըտրական կերպով մատնանշում ե, վոր վերոհիշյալ վկայությունները վերաբերվում են Քեղված ձորի անմատչելի հինքերին, վոր այժմ կոչվում ե Ղալադիպի:

Հակառակ Ալիշանի ու Հովսեփյանի յենթադրության Սմբատյանցը («Գեղարքունի», եջ 292) և Լալայանը (տես Նրա կազմած նորմայակիտ գավառի քարտեզը, Ազգագր. Հանդ. XVIII, 1908 թ. № 2) «Գեղայոյ» կամ «Քեղեայ ամրոց»-ի տեղը մատնացույց են արել այժմյան Ղարաղալայում, վորը գտնվում ե Աղմաղան լեռների ստորոտում:

Այս յենթադրություններից ավելի հիմնավորված ե, անշուշտ, առաջինը, վորովհետև «Գեղոյ» կամ «Քեղայ ձոր»-ի անունը մոտավորապես համապատասխանում ե, իրոք, «Գեղայոյ» կամ «Քեղեայ ամրոց»-ի անուններին:

Իսկ թվում ե սակայն, վոր նույնիսկ այս վերջին լուծածումը դժվար ե ընդունել իբրև վերջնական ու անվիճելի:

Ուշագրավ ե նաև, վոր «Քեղ» և «Գեղաձոր» տեղա-

նունները հանդիպում են չին Հայաստանի նաև ուրիշ շըրջաններում¹. ուստի և վերոհիշյալ տեղանունների նմանությունը չե կարող, իհարկե, հաստատուն մի կովան լինել վճռական յեղակացության:

Կարելի յե առարկել, բացի այդ, վոր «Գեղայոյ» կամ «Քեղեայ ամրոց»-ի տեղը, ինչպես յերեսում և Հովհաննես կաթողիկոսի վերոհիշյալ առաջին վկայությունից, լինելու յեր, ըստ յերեսութիւն, վհչ թե Եվինի հյուսիս-արևելակողմում, այլ, հավանորեն, Սևան կղզու հարեւան շրջաններում: Հենց նույն այս տպավորությունը ստացվում ե, իմ կարծիքով, նաև Ստեփանոսի Որբելյանի վերոհիշյալ վկայությունից:

Որբելյանի պատմելով՝ իվանե աթարեկը, վորը 1225 թվին պարտություն եր կրել Գառնիի մոտ, կարողացել եր «10 արամբք» փախչել «ի յամուրն Գեղէ»: Դժվար ե ըստ իս համաձայնիլ, վոր իվանեն այնքան անզգույշ կըլիներ, վոր փախչեր Ղալադիպի, վորը գտնվում ե Գառնիից մոտ 12 կիլոմետր հեռավորության վրա: Ալիշ հավանական ե թվում ինձ, վոր նա փախած կըլիներ Աղմաղան լեռնաշրջայի հյուսիսային ճանապարհով դեպի Աղկալայի ամրոցը, վորի մոտ եր գտնվում Հայաստանից Վրաստան տանող ճանապարհը:

Այս դիտողությունները, վոր յենթադրական միայն կոահումներ են, թեև չեն լուծում վերոհիշյալ հարցը, սակայն ցույց են տալիս, վոր «Գեղայոյ» կամ «Քեղեայ ամրոց»-ի տեղադրությունը, հակառակ Ալիշանի ու Հովսեփյանի յեղակացության, գեռ մութ ու անորոշ մի խնդիր ե, վորը կարոտ ե, անտարակույս, մանրամասն ու հատուկ քննության նոր ու ավելի դրական փաստերի ոգնությամբ:

11. «Մղնաչափք»-ի Բերդկունքի տեղը վորոշվում ե, ինչպես տեսանք, այժմյան Աղկալայի մոտ գտնվող այն ա-

¹ Տես Հյուքշման, «Հին Հայոց տեղւոյ անունները», թրգմ. Պիլեղիկճյանի, եջ 169 և 421.

վերակների վայրում, վորը շրջակա գյուղերի բնակիչներն անվանում են «Ազատ քաղաք»:

Բացատրության կարոտ ե, ուրեմն, և այս «Ազատ քաղաք» անունը:

Ինչպես հայտնի յե, «Ազատ քաղաք» են անվանվում այժմ նաև այն ավերակները, վորոնք գտնվում են դարձյալ Դվին-Պարտավ ճանապարհի վրա հին Մաքենիս վանքի մոտ: Այս ավերակների մասին Ալիշանը և Սմբատյանցը տալիս են հետեւյալ տեղեկությունները:

1. Ալիշան, Սիսական, Վենետիկ 1893, եջ 66¹

Գղըլ-Վանք երկու մղոնաւ ի վերոյ (ի հարաւոյ) առ գետովն, 45 տամրք նոցին: Զամուրլու մղոնաւ ի Մ. Հր. նորին 25 տամրք. և մերձ ի գետաբերանն Գըրգ պուլագ, որ նորաշէն թուի, հայաբնակ, 50 և ավելի տամրք: Հանդէպ նորին յաջմէ գետոյն նշանակի աւերակ գեօղ Գղըլ-Դաշ, թերևս Կարմիրշէնն Սիմէոնի կաթողիկոսի: Ըսդ մէջ գեօղից յիշեցելոց երևին ընդարձակ տեղիք աւերակաց, պարսպօք և աշտարակօք և եկեղեցեաւ, զոր տեղացիքն ասեն՝ ի հնումն Ազատ քաղաք կոչեցեալ ըստ գրության ինչ Պետրոսեան Պօղոս վարդապետի, որում ասէին Սեւանեցիք՝ ազատագիր ևս ունել ի Շահից Պարսից վասն ապահարկութեան տեղույն, և պահիւր յէջմիածին»:

2. Սմբատյանց, «Գեղարքունիք», եջ 597²

«Այս յիշեալ [Դեօղակբուլաղի շուրջը] ցիրուցան աւերակ գիւղատեղերն ի միասին առած՝ տեղացիք անուանում են Ազատ քաղաք, բայց թէ այս և Ազատ քաղաքը, թէ նոր-Բայազիտի մօտ՝ ծովեղերքում եղած Ազատ խարաբայն է, չկարացի ստուգել, ըստ որում գրով կամ արձանագրով ապացոյց չկա»:

Ալիշանի և Սմբատյանցի նկարագրած ավերակների հենց այս վայրին ե վերաբերվում, հավանորեն, Մովսես Կաղանկատվացու ուշագրավ մի վկայությունը, վորի մեջ

Մաքենիսի մոտ գտնվող նշանավոր այս տեղն անվանված ե «մեծ Մաքենացւոց մայրաքաղաքն»:

«Եւ անտի ի միւս տարին—վկայում ե Կաղանկատվացին—էանց Բաբան ի գաւառն Գեղարքունի և Էարկի սուրբ զբնակիչն ոգիս իրբե տասն և հինգ հազարս. և զեծ Մաքենացւոց մայրաքաղաքն այրեաց, մնաց միայն ջրաղացն և այլ ոչ ինչ. և էր թիւն հայոց երկու հարիւր եօթանասուն և վեց» (III, գլ. ի, եջ 263, Մոսկվա 1860):

Մեջ բերված տեղագրական նկարագրությունների մեջ մատնանշված են, ինչպես տեսնում ենք, «Ազատ քաղաք»-ների ավերակների ընդարձակությունը, բերդապարիսպի և ամրոցի հետքերը և տեղական միենույն ավանդությունը, վորի համաձայն այս վայրերը համարվում են քաղաքատեղի և անվանվում «Ազատ քաղաք»-ներ: Ալիշանի վերոհիշյալ վկայության մեջ հատուկ ուշագրության արժանի յե նաև նրա հաղորդած ավանդությունը, վոր Մաքենիսի մոտ գրտնովող «Ազատ քաղաքն» ունեցել ե ազատագիր Պարսից Շահից և ճանաչվել ե իրբե ապահարկի:

Ցեթե ի նկատի ունենանք, բացի այդ, վոր «Ազատ քաղաք»-ներից այս յերկրորդը Կաղանկատվացին անվանում ե «մեծ Մաքենացւոց մայրաքաղաքն»՝ դժվար չի լինի ըստ իս յեղակացնել վոր վերոհիշյալ «Ազատ քաղաքներ»-ը, վորոնք գտնվում ելին Դվին-Պարտավ ճանապարհի վրա, յեղել են նշանավոր միջնադարյան կենդրոնավայրեր և ունեցել են քաղաքային հատուկ իրավունքներ ու արտոնություններ: Իմ կարծիքով, «Ազատ քաղաք» անունները վիչ թե տեղանուն են, այլ սոցիալական հատուկ մի տերմին, վորով մատնանշվում ե վերոհիշյալ վայրերի ազատ լինելը վորով հարկերից և նրանց քաղաքային արտոնյալ դրությունը:

Վոր Հին Հայաստանում գոյություն են ունեցել իրոք, քաղաքավար նման կենդրոնավայրեր՝ այդ, ինչպես մատնացույց ենք արել «Ֆեոդալիզմը Հին Հայաստան»-ում մեր

աշխասության մեջ (Յերևան 1934, էջ 232), ակնարկված են Հովհաննես կաթողիկոսի պատմության ուշագրավ մի հատվածում:

Զվարթնոց յեկեղեցու շինության մասին իսուսելիս՝ Հովհաննես կաթողիկոսը հաղորդում է, վոր Ներսես Գ. կաթողիկոսը՝

«պարապ անձին գտեալ՝ զարտաքոյս հրաշակերտ եկեղեցոյն, զոր իւր իսկ էր շինեալ՝ շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ ինմա յարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քարամբք: Այլ և կարգեալ կացուց անէր ինմա ամբոխութիւնս երգումարդաց ըստ պայմանի քաղաքականաց» (Թիֆլիս 1912, էջ 88):

Ինքն ըստ ինքեան հասկանալի յե, վոր նման կենդրուավայրեր, վորոնց տրված են յեղել արտօնություններ «ըստ պայմանի քաղաքականաց», կարող ելին լինել վհչ միայն Սյունիքում և Այրարատում, այլ նաև ֆեռողալական Հայաստանի ուրիշ շրջաններում:

Սակայն այս մի նոր ինդիք ե, վորը կարուտ ե հատուկ լուսաբանության:

Ինձ թիւմ ե, վոր յելակետ ունենալով «Ազատ քաղաք» անունների վերոհիշյալ մեր բացատրությունը՝ անհրաժեշտ ե հետագյում ուսումնասիրել մատենագրական աղբյուրների այն վկայությունները, վորոնք վերաբերվում են պատմական Հայաստանի «Ազատ» կոչվող և «քաղաքագիւղ» կամ «գիւղաքաղաք» անվանվող տեղանուններին:

Միանքամայն հնարավոր ե ըստ իս, վոր նման կենդրոնատեղերը, վորոնք գտնվել են առևտրական հին ճանապարհների մոտ՝ կարող են նույնպես ունեցած լինել իրավունքներ «ըստ պայմանի քաղաքականաց»:

12. Դվին-Պարտավ ճանապարհի վրա «Մղոնաչափք»-ում հիշատակված ե միմիայն Բերդունք կայարանը, վորի տեսքը վորոշվում ե, ինչպես տեսանք, այժմյան Աղկալայի և

Հայրեվանքի մոտ գտնվող «Ազատ քաղաք» ավերակների մոտ:

Մյուս կայարանների և ճանապարհի շարունակության մասին մինչև Պարտավ ունեն կարևոր տեղեկություններ աւրաբական աղբյուրները և, գլխավորապես, արաբական աշխարհագիր իստախրին:

Համաձայն իստախրիի վկայության Դվինից հետո հետեւյալ յերկու կայարաններն են յեղել Սիսականը և Կիլեկույլ՝ Դվին 16 Սիսաջան 16 կիլոմույց (Մարկվարտը կարդում ե Գելակունի):

Միջկայարանային տարածությունները նշանակված են այստեղ արաբական փարսախներով: Ուրեմն՝ Սիսաջանի հեռավորությունը Դվինից ցույց ե տրված 16 արաբական փարսախ կամ մոտ 92 կիլոմետր ($5752,8 \times 16$), իսկ Կիլոմետրի հեռավորությունը Դվինից՝ 32 արաբական փարսախ կամ մոտ 184 կիլոմետր (1 փարսախը = $5752,8$ կիլոմ., տես «Երատութենեսի ստադիոնը և Պարսից ասպարեսը» իմ աշխատության մեջ էջ 9—12):

Այս հեռավորությունների նկատմամբ անհրաժեշտ ե աչքի առաջ ունենալ, վոր տարածությունները մատնաշված են արաբական աղբյուրներում կլոր թվերով վհչ թե ճշտիվ, այլ մոտավոր կերպով (տես իմ աշխատությունը „Օ торговле и городах Армении“, էջ 168):

Վերոհիշյալ կայարանների տեղադրության ինդիքը լուսաբանել ե վերջերս Մարկվարտը «Das Itinerar von Artaxata nach Armastica» աշխատության մեջ (էջ 56): Գելակունի (= Գեղարքունի) և Տիսայան (= Սիսական, Սիւնիք) կայարանները, ասում ե Մարկվարտը, լինելով նախասկիզբ համապատասխան գավառների, անվանվել են հենց նրանց անունով: Սակայն կայարանների հաջորդականությունը նահամարում ե շփոթված և կարծում, վոր Դվինից հետո առաջին կայարանը լինելու յեր Գեղաքունին և ապա Սիսականը:

Գելակունի կայարանի տեղը Մարկվարտը յենթադրում է՝

համաձայն վերոհիշյալ տարածության՝ Դվինից 16 արաբական փարսախ կամ մոտ 96 կիլոմետր հեռավորության վրա Սևանա լճի ափին՝ մոտավորապես, ուրեմն, այժմյան Յեղնովկայում։ Իսկ Սիսականը գտնվելու եր հետեարար Գեղաքունի այս կայարանից 16 արաբական մղոն կամ մոտ 96 կիլոմետր (ըստ Մարկվարտի) հեռավորության վրա։

13. Մարկվարտի յենթագրությունը կայարանների այս տեղադրության, ինչպես և Գեղաքունի գավառի և Սիսականի ծայրասկզբը սահմանների մասին, վոչ միայն անհավանական ե, այլ պարզապես սխալ։

Վերև մենք արդեն տեսանք, վոր Դվին-Պարտավ ճանապարհի վրա՝ այժմյան Յեղնովկայից նոր-Բայազիտ տանող ճանապարհագծի մոտ և հին Մազազ գավառում՝ վորոշվում և ճշտիվ «Մղնաչափ»-ի Բերդկունք կայարանի տեղը։ Հասկանալի յե, ուրեմն, վոր Գեղաքունի գավառասահմանը, վորը ինչպես ասացինք, գտնվում եր Մազազ գավառի և Բերդկունքի հարավակողմում, չեր կարող լինել այժմյան Յեղնովկայի մոտ Բերդկունքի հյուսիսակողմում։

Մի պարզ թյուրիմացություն ե, անտարակույս, նաև Մարկվարտի յենթագրությունը Սիսական գավառի տեղադրության մասին։ Սիսականը կամ Սյունիքը, ինարկե, վոչ թե հատուկ գավառի, այլ արևելյան այն յերկրի անունն ե, վորի մեջ գտնվում եր նաև Գեղաքունի գավառը։

Իմ կարծիքով, Մարկվարտի սխալ յեղակացությունների գլխավոր պատճառն այն է, վոր նրա ուշադրությունից վրիպել ե խիստ կարևոր մի հանգամանք։ Դվինից գեպի Պարտավ գոյություն են ունեցել, ինչպես հայտնի յե, յերկու հին ճանապարհներ, մեկը՝ այժմյան Յեղնովկայի ու հին Բերդկունքի վրայով, իսկ մյուսը՝ այժմյան Բաշնորաշենի վրայով ու Սելիմի լեռնանցքով։

Արաբական աղբյուրների մատնանշած Դվին-Պարտավ ճանապարհագիծը վորոշվում ե, ինչպես կըտեսնենք, վոչ թե հայկական «Մղնաչափ»-ի Դվին-Բերդկունք գծով, այլ հաստատապես Դվին-Բաշնորաշեն մյուս ճանապարհով։

Ճանապարհի հենց այս յերկրորդ ուղղությունը միանամայն ճիշտ մատնացույց ե արել Կարառուլովը վերոհիշեալ իր թարգմանություններին կցված հատուկ քարտեզում։ Կարառուլովը յենթադրում ե նաև, վոր Խստախրիի Սիսաջան կայարանը համապատասխանում ե, հավանորեն, այժմյան Կիսաջանին, վորը գտնվում ե, ինչպես հայտնի յե, հենց ճշտիվ Շարուր գավառի և հին Սիսականի սահմանում և վորը ի հեռավորությունը Դվին-Արդաշարից պոստային ճանապարհով կըլինի այժմ մոտավորապես 70—75 կիլոմետր։

Հիմնական առարկությունն այս յենթագրության դեմ կարող ե, ինարկե, այն լինել վոր Կիսաջանը չե հիշատակված մատենագրական հայ աղբյուրներում։ Սակայն յեթե անգամ ընդունելի չլինի Կիսաջանի նույնացումը Սիսաջան կայարանի հետ՝ կարելի յե այսուամենայնիվ վստահորեն յենթագրել, վոր Սիսաջանի տեղադրությունը լինելու յեր Շարուրից Վայոց ձոր տանող ճանապարհագծում, հավանուրեն, Բաշնորաշենից Արփա գնացող գծամասում։ Իսկ Վայոց ձորը, ինչպես հայտնի յե, հին Սիսականի կենդրունական շրջանն եր Խստախրիի ժամանակ, վորի աշխարհագրական յերկը գրված ե՝ 951 թվին, և հենց այստեղ «Եղեգիք գիւղաքաղաք»-ում եյին գտնվում Սյունյաց գահազլուխ իշխանների «արքունական ապարանք»-ները (տես Ստեփանոս Որբելյան, Թիֆլիս 1911, գլ. լի, եջ 199)։

Ուրեմն՝ Սիսաջան-Սիսականը, յեթե ընդունելու լինենք ըստ Մարկվարտի վոր նա յերկրի անուն ե, գտնվելու յեր, անշուշտ, այստեղ և, ինչպես միանգամայն ճիշտ վկայում ե Խստախրին, Դվինից 16 արաբական փարսախ կամ մոտ 92 կիլոմետր հեռավորության վրա և նախ քան Կիլ-Կույ կամ Գելակոն կայարանը։

14. Սիսաջանից հետո նշանակված ե Խստախրիի մոտ Կիլ-Կույ կայարանը (ըստ Մարկվարտի՝ Գելակոն), վորի հեռավորությունը Սիսաջանից ցույց ե տրված 16 արաբական մղոն կամ մոտ 92 կիլոմետր։

Ինչպես վերև ասացինք, Կարառուլովի թարգմանության

լակնուից ցույց ե տրված 16 արարական փարսախ կամ մոտ 92 կիրումետր:

Այս կայարանի շրջա արարական անունը, վորն ըստ իս աղճատված ե, պետք ե, իմ կարծիքով, ուղղել և կարդալ աղջիք։ (Տ= է և բ= ի) *Zaučis: Իսկ այս վերջինը պարզ կերպով համապատասխանում ե հայերեն Սոտք, Սոդք կամ Սոթք տեղանվան, վորի նոր անունն ե այժմ Զոտ կամ Զոթ։

«Սաւտք»-ը, ինչպես հայտնի յե, Գեղաքունիի արևելակողմում գտնվող հարեւան գավառի անունն ե, վորի իշխանանիստ համանուն հին կենդրունը Սերեսուի մոտ անվանված ե «Սաւտք քաղաքագիւղ» (տես Սերեսու, Ս. Պետերբուրգ 1879, գլ. Զ, եջ 49):

Այս տեղանվան մեկնությունը, վորը ժողովրդական մի ստուգաբանություն ե, մատնանշված ե Ստեփանոս Որբելյանի մոտ։

«Սօթից գաւառ—ասում ե Որբելյանը— որ սակա հանապաղորդեան բքոց և դառնաշունչ օդոցն կոչեցաւ Սոթք» (Թիֆլիս 1911, գլ. Գ, եջ 12):

Իսկ, իրապես, ինչպես ուղիղ դիտել են Մարկվարտը և Ագոնցը¹⁾, «Սաւտք» տեղանունը ծագել ե, անշուշտ, այս կողմերում ապրող «Ծաւէցացւոց» կամ «Ծաւէից» հին ցեղի անունից, վորը հիշատակված ե Ագաթանգեղոսի, Յեղիշեյի և Խորենացու պատմություններում (տես Ագաթանգեղոս, Տփղիս 1909, գլ. Ճժի, եջ 414, Յեղիշե, Վենետիկ 1864, եջ 18, 86 և Խորենացի, Տփղիս 1913, II, գլ. Ը, եջ 113):

Ինձ թվում ե, վոր արարական այս կայարանը ևս, ինչպես և վերոհիշյալ Սիսականն ու Գեղաքունին, դարձյալ համապատասխան գավառի անունն ե, վորի մեջ *Zaučis-ի (=հա-

¹⁾ Արարական տառերի նման շփոթութեր մատնանշել են Մառը և Մարկվարտը. տես Mapp, Крещение армян, грузин, абхазов и аланов, СПБ 1905, եջ 185, 205, 207 և Marquart, Erānschahr, Berlin 1901, եջ 32, ծան. 3.

²⁾ Տես Markwart, Erānschahr, եջ 158 և Adonci, Армения в эпоху Юстиниана, եջ 424.

վանորեն Սաւտք) տեղադրությունը հավանական կը լինի յենթադրել վհչ թե «Սաւտք քաղաքագիւղ»-ում, այլ հատուկ մի այլ կարավանավայրում։

Վոր Դվին-Պարտավ ճանապարհի ուղղությունը լինելու յեր, իրոք, հենց այս գավառի միջով՝ այդ յերեսում ե Սերեսուի պատմությունից, վորի մեջ Հայաստանից Աղվանք տանող միենույն հին ճանապարհը հիշատակված ե հետեւյալ վկայության մեջ։

«Իսկ Ատատն Խորխոռունի և Սամուէլն Վահեունի գաւրաւքն իւրեանց փախստական գնացին ընդ քաղաքագիւղն կոչեցեալ Սաւտք, հասանէին յաշխարհն Աղուանից ի Հոնս դէմս արարեալ, և անցեալ ընդ գետով՝ որ կոչի Կուր, բանակէին առ գետեզերբն» (Ս. Պետերբուրգ 1879, գլ. Զ, եջ 49):

16. *Zaučis-ից հետո իստախրիի մոտ նշանակված ե Մետրիս կայարանը (ըստ կարառութի՝ Metris, իսկ ըստ Մարկվարտի՝ Mairis և ծանոթության մեջ Mitrīs համաձայն Յաքուտի): Հեռավորությունը *Zaučis-ից մինչև Մետրիս ցույց ե տրված 12 արարական փարսախ կամ մոտ 69 կիլոմետր (5752,8×12):

Մարկվարտը յենթադրում ե, վոր այս կայարանի Mai-rīs անվան հետ կարելի յե համեմատել Ստեփանոս Որբելյանի հիշատակած «Մայրի ամուռ»-ի անունը, վորը գտնովել և Սրեմիք գավառում (Թիֆլիս 1911, գլ. Գ, եջ 13 և գլ. ՀԴ, եջ 521): Մարկվարտն աչքաթող ե արել, իմ կարծիքով, վոր այս կայարանի անունը ևս աղճատված ե, ինչպես և Նախորդ Daumis-ը (=*Zaučis):

Մետրիս, Mairīs կամ Mitrīs տեղանվան արարերեն աշխատական կամ աշխատական ընթերցվածը պետք ե ուղղել ըստ իս և կարդալ շալ (Hatrīs): Արարական շ (m) և ս (h) սկզբնատառերի շփոթություններն այնքան սովորական են, վոր մեր սրբագրությունը չե կարող համարվել քմահաճ ու բռնի:

Իսկ այս ուղղումից հետո Hatrīs-ը, վորի հեռավորությունը *Zaučis-ից ցույց ե տրված 12 արարական փարսախ

կամ մոտ 69 կիլոմետր, համապատասխան կըլինի ճշտիվ հայերեն Հաթերք (սեռ. Հաթերից) տեղանվան, վորը գտնվում էր, իրոք, մոտավորապես հենց այս տարածության վրա վերոհիշյալ Սոտք զավառից:

Hatrīs-ի 18 վերջավորությունը հասկանալու համար պետք է ի նկատի ունենալ Հաթերք տեղանվան —ից վերջավորությունը թեք հոլովներում: Ընդունելով վոր վերջավորությունը՝ Հաթերք հոլովներում: Ընդունելով վոր վերջավորությունը՝ «Սաւտից» գավառն արաբական աղբյուրներում անվանված է *Zauṭis (=«Սաւտից»)՝ միանգամայն հասկանալի յե, վոր նաև «Հաթերից» գավառը կոչվելու յեր նույն աղբյուրներում Hatrīs (=«Հաթերից»): Ուշադրության արժանի յե, վոր 12-րդ և 13-րդ դարերի արձանագրություններում Հաթերք անվան սեռական հոլովն ունի տարրեր վերջավորություն՝ Հաթերք-ոյ կամ Հաթերք-ու (տես Կ. Կոստանյանց, Վիմական տարրեգիր, Մ.—Պետերբուրգ 1913, եջ 34, 44, 46, 56, 84): Սակայն Բագրատունյաց շրջանում նույն անվան սեռականը կարելի յե յենթադրել, անշուշտ, Հաթերից (հմտե Այլաբերք—Այլաբերից, Արտագերք—Արտագերից ևն):

Դժվար չեն նմանապես կուահել, վոր այս կայարանի անունը ևս, ինչպես և վերոհիշյալ Sīsağān-ը, Gēlakūnī-ն և *Zauṭis-ը, վհչ թե Հաթերք գյուղի, այլ գավառի անունն ե, վորի մեջ գտնվել ե արաբական կայարանը հատուկ կարավանավայրում:

17. *Zauṭis-ից հետո մինչև Պարտավ Իստախրի մոտ հիշատակված են Կալկատուս և Պարտավ կայարանները՝ *Hatrīs 13 Qalqātūs (ըստ Մարկվարտի՝ Qalanqātūs) 9 Barða'a: Տարածությունը *Hatrīs-ից մինչև Qalqātūs ցույց է տրված 13 արաբական փարսախ կամ մոտ 75 կիլոմետր, իսկ այս վերջին կայարանից մինչև Պարտավ՝ 9 արաբական փարսախ կամ մոտ 52 կիլոմետր:

Qalqātūs կամ Qalanqātūs կայարանի անունը համապատասխանում ե, ինչպես մատնանշված ե Մարկվարտի և իմաշխատություններում (տես «Das Itinerar von Artaxata nach

Armastica», եջ 56 և „Օ торговле и городах Армении“, եջ 169), հին «Կաղանկատոյք»-ին, վորը հիշատակված ե Մովսես Կաղանկատվացու Աղվանից աշխարհի պատմության հետեւյալ վկայություններում»:

1. Մովսես Կաղանկատվացի, Թիֆլիս 1912, II, գլ. Ժ, եջ 150:

«Իսկ իրը եկն եհաս զօրն Հոռվմայեցւոց անթիւրագմութիւն յոյժ՝ բնակեցան յՈւտի գաւառի առ հեղեղատովին, որ ի մէջ սահմանաց գեղջն Կաղանկատուոց. և կոխեցին քանդեցին զգեղեցիկ զստացուածս այգեստանեայց և գեօղատանեայց ընդ որս անցանէին, և անտի չուեալ բանակեցան առ հեղեղատովն Տրտուայ մօտ ի գիւղն Դիւտական»:

2. Նույնը, II, ԺԱ, եջ 155:

«Իրը իրազգած եղեն թշնամիքն եղելոցն՝ պնդեցան զհետ փախստէից և հասեալ ի մասն ինչ նոցա առ ըստորոշով լերին՝ որ է յանդիման գեղջն մեծի Կաղանկատուաց, որ ի նմին յՈւտի գաւառի՝ յորմէ և ես, ի նսեմանալ աւուրն ոչ կարացին ժամանել ի բազում ինչ ի վնաս . . . »:

Այս վկայություններից, ինչպես տեսնում ենք, յերեվում ե, վոր Կաղանկատոյք մեծ գյուղը գտնվել է «Դիւտական գիւղ»-ի և Տրտու կամ այժմյան Թարթառ գետի մոտ Ուտի գավառում (հմտե Մակար յեպիսկ. Բարխուդարյան, «Պատմութիւն Աղուանից», Վաղարշապատ 1902, եջ 31):

Այս գյուղը ևս, ինչպես դժվար չեն հետեւյալ Կաղանկատվացու յերկու այլ վկայություններից, յեղել ե, հավանորեն, իշխանանիստ հին կենդրոնավայրը: Յոթերորդ դարի սկիզբներում «Աղուէն»-ի կանոնագիր ժողովին մասնակցել ե, ինչպես հաղորդում ե Կաղանկատվացին, «Բակուր Կաղանկատուց նահապետ»-ը (Թիֆլիս 1913, I, գլ. ԻԶ, եջ 98): Իսկ ութերորդ դարի սկիզբներում, նույն հեղինակի վկայությամբ, բնակություն եր հաստատել «յաւանին Կաղան-

կատուոց» «Խոստոմ ի Վարագ Աքոյեան, որք ի Ստահը գաւառէ Պարսից» (III, գլ. Ժ, եջ 349):

«Կաղանկատոյք»—Qalanqâtus-ը (= Կաղանկատուոց) գլունվել ե ըստ Խստախրիի վերոհիշյալ վկայության 9 արարական փարսախ կամ մոտ 52 կիլոմետր ($5752,8 \times 9$) հեռավորության վրա հին Պարտավից, վորի տեղը վորոշված ե արդեն այժմյան Բարձրագույն մոտ, ուր ֆացել են մինչև այժմ նրա ընդարձակ ավերակները:

18. «Մղնաչափք»-ի և Խստախրիի վերոհիշյալ վկայությունների քննությամբ Դվին-Պարտավ ճանապարհը վորոշվում ե, ինչպես տեսանք, յերկու տարբեր ուղղությամբ՝ Բերդկունք-Աղկալայի և Բաշնորաշեն-Արփայի ճանապարհագծերով: Այդ յերկու ճանապարհների միացման կետը պետք ելիսեր, ինչպես և այժմ, Աղփաման և Ղարանլըխ գյուղերի շրջանում: Խսկ այսուհետև մինչև Պարտավ ճանապարհի շարունակությունը պարզ կերպով վորոշվում ե Սևանա լճի հարավային ափերով, Սոտք, Հաթերք գավառների միջով և Կաղանկատոյք գյուղի մոտով:


Մեր այս ուսումնասիրությամբ պարզվում ե վոչ միայն ճանապարհի այս ուղղությունը, այլ նաև նշտվում են այդ ճանապարհի վրա գտնվող կայարանները, վորոնք մատնանշված են թե հայկական «Մղնաչափք»-ում և թե Խստախրիի ճանապարհացույցում՝

1. Դվին-ավերակների վայրը Արդաշար գյուղի մոտ.
2. Բերդկունք-Աղկալայի և Հայրեվանքի մոտ գլունվող «Ազատ քաղաք»-ի ավերակների վայրում.

3 Սիսաջան=Սիսական (հավանորեն, համապատասխան յերկրի անունն ե).

4. Կիլ-Կույ (ըստ Կարառուլովի՝ Կիլ-Կույ, ըստ Մարկվարտի՝ Gēlakūnī)=Գեղաքունի (հավանորեն, համապատասխան գավառի անունն ե).

5. Դավմիս (ըստ Կարառուլովի՝ Դամիս, ըստ Մարկվարտի՝ Daumis)=*Zauñis=«Մաւտք», սեռ. «Մաւտից» (հավանորեն, համապատասխան գավառի անունն ե).



6. Մետրիս (ըստ Կարառուլովի՝ Մետրիս, ըստ Մարկվարտի՝ Mairis, Յաքուտի մոտ՝ Mitrīs)=*Hatrīs=Հաթերք, սեռ. Հաթերից=(հավանորեն, համապատասխան գավառի անունն ե).

7. Կալկատուս (ըստ Կարառուլովի՝ Կալկատուս, ըստ Մարկվարտի՝ Qalanqātūs=Կաղանկատույք, սեռ. Կաղանկատուց).

8. Պարտավ—այժմյան ավերակների վայրում Բարդագուղի մոտ:

Կայարանների տեղերը հավանական ե յենթադրել, գըլխավորապես, հատուկ կարավանատներում, վորոնք գտնվել են Սիսական իշխանների շրջանում և Գեղաքունի, Սոսք ու Հաթերքի գավառներում:

Սակայն այս խնդիրը, ինչպես և հին այս ճանապարհի ուղղությունը տեղագրական բոլոր իր մանրամասնություններով պետք ե, իհարկե, քննեն ու ստուգեն տեղում գիտական հատուկ արշավախմբերը:

Ց Ա Ն Կ

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՑԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

- Աբաղյի դաշտ** 158.
Աբաս գյուղ 51.
Աբաս թագավոր Կարուց 128.
Աբասպյոլի լեռնանցք 24. 37.
Աբասթուման 129. 132.
Աբարան 119. 122. 126. 129.
Աբուլ 130.
Աբրահամ 31.
Ազաթանգեղոս 198.
Ազարակ գյուղ 41.
Ազգային 185.
Ազմիման 184.
Ազիման 202.
Ազիջելազ 20. 46.
 Adconfluentes 17. 19—21. 48. 49.
 59. 61—63. 81. 132.
 Ad Mercurium, Ad *Mercurium
 117. 118. 131—135.
Ազոնց 9. 18. 43. 64. 71. 72. 102.
 103. 152. 163. 170. 180. 198.
 Ad fontem felicem 117. 118. 132.
 134. *անս և* Fonteflice.
 Aegea 17. 19—21. 66. 76—80.
 82. *անս և* Egea.
Ազատ Մասիս. ա. Մասիս.
Ազատ քաղաք 184. 185. 190—193.
 202.
Ազոր 132.
Աժգահակ 32.
 As'asəλxayt' 71.
Ալադաղ 110.
Ալանք 170.
Ալակերտ 38. 44—49. 50. 59.
Ալջա 21. 67.
Ալիշան 23. 24. 54. 56. 119. 122.
 125. 148. 158. 177. 180. 182.
 184. 185—191.
Ալիչալու 184.
 Almaly 87.
 Altı-Bajezid 87.
Ալիսալան 126.
Ախալքալաք 126. 129—131. *Առ*
 քաղաք 130.
Ախալյան 131. 132. 135.
 Achachmet, Ar-Axmet 140.
Ախամար 88.
Ախաթ 107.
Ախուրյան 124.
Ակիմսենե, 'Առևլուց' 69. 71. 73.
 77. 'ԱՇԽԱՌՎՈՒՇ' 71.
Ակն 71.
Ակոփ 45.
Աղովիս 106. 111. 144. 145.
Աղորսք 98.
«Աղիւն» 71.
Աղալա 183—186. 189. 192. 202.
Աղճիք 92.
Աղմաղան 183. 188. 189.
«Աղուէն» 201.
Աղրաֆ, Aschraf 20.
Աղվանք 128. 144. 199.
Աղվերան 20. 46.

Աղբի-գաղ 31. 48. 53. 140.
Աղքենդ 196.
Աճառյան Հր. 36.
Ամսսիխ նահապետ 28. 35.
Ամիանոս Մարկելինոս 66. 82.
Այլաբերք 200.
Այրարատ 44. 144. 178. 192.
«Այրարատեան գաւառ» 123. 129.
«Այրարատեան լերինք» 33—35.
տես և «Այրարադայ երկիր».
Անանիխ վարդապետ 56.
Անանուն 22.
Անանուն Ռազեննացի. տես Ռազենացի.
Andaga 17. 19—21. 49. 54—57.
59. 81. 121.
Andacas 17. 54—56. 81. 121.
Անդափ, Անթափ 54. 152.
Անդուկ 56. 81.
Անդրոնիկոս 64.
Anzit 110.
Անկյուրիխ 19.
Անոյչ՝ կին Աժդահակայ» 33.
Անտաք Թնդեկ 54. 56. 81. 121.
Anteba 85. 89. 107. 139. 140.
150. 152. 161. 172.
Անտիոք քաղաք 6. 56.
Անտիպատոր՝ վորդի Սիսիդի 69.
Աշխիւսէին» գյուղ 41.
Աշկալա 20. 21. 46. 61. 64. 66—
68. 75.
Աշնակ 28.
Աշոս 24.
Աշոտ Յերկաթ 181. 186.
Աշոտ՝ հայր Սմբատի 128.
Աշոտ՝ վորդի Դերանկի 99.
Աշոցք 127. 129.
Աշտարակ 119—121. 123. 129. 135.
Autisparate 17. 20. 21. 62. 81. 82.
Աղահոնիք 64. 90. 93. 94. 98—
102. 104. 105. 111.

Ապում, Apolum 117. 118. 129.
130.
Ապուղամը 126.
Ապունձիպ 26.
Աջե-չայ 166. 171.
Առեստ, «Առեստաւան» 146.
Առին 20.
Ասիս 5.
Ասանրուի լեռնանցք 24. 37.
Ասողիկ 66. 75. 91. 96. 104. 105.
125. 127.
Ասորեստան 144.
Aspeñdi 21.
Ասպինչա 131. 132.
Ազարյալ 142. 152. 153. 154. 156.
Ազգաբեկյան Թաղ. 145. 146.
160. 161.
Ազերքաղաք 20.
Ատատ Խորխոռունի 199.
Ատպատական 96. 105. 141.
144—146. 158. 158. 166—171.
«Ատրպատացն գաւառ» 169.
Ատրպայական 168. 169.
Արաբ-դիզե 20. 147.
Arablarmezar 20.
Արագած 28. 32. 129.
Արագածոտն 26. 28. 119.
Արագ 39. 62.
Arachia 86. 98. 108. 111—114.
152.
Արածանի 36. 38. 40. 43. 44. 62.
90. 92. 99. 102. 107. 110. 112.
Արտմանար» 52—56. 81.
Արամենակ 99.
Արամեան բնակութիւն» 126.
Արայի դաշտն» 32.
Արարադայ երկիր» 98. **Արարա-**
տյան դաշտ 35. 37. 40. 44
Արարատյան լեռներ 141. **Ա-**
րատեան գաւառ» 187. **անս և**
Այրարատ.

Արաքս 19. 21. 26. 39. 40. 42—
45. 48. 60. 61—63. **անս և ե-**
րասխ».
*Արշաւարչաբէչ 74.
Արգիշտի I 123. 125.
Արդահան 118. 131. 135.
Արդաշար 118. 140. 183. 195. 202.
«Արդեանք» 28.
Արկիք գավառ 199.
Aretissa, **Արետիսսա** 108. 111.
122.
Arethusa 108.
Arzanene 92.
Արզն 87. 88.
Arzôn 92. 114. Arzan 114.
Արիստակես Լաստիվերացի 54.
59. 60. 101.
Արիք 153.
Archene 108—114.
Արծափ 44. 144. 145. 146. 148.
Արծունիք 160.
Արձնի գյուղ 99.
Արձե 37. 101. 105. 106. 107.
110. 122.
Armanas 17. 19—21. 49. 52—54.
81.
Արմատիկա 11.
Արմակիր 28. 29. 36. 118—120.
135. 178. Արմաօւթք, Արմաօրթա
120.
Արմենիա 37.
Արնիս 20.
Արշակ R. 32. 168. 169. 170.
Արշակաւան» 32.
Արշակոնիք 7. 45. 106. 119. 120.
125. 169.
Արշակոնյաց Հայաստան 9—11.
166. 170. 171.
Արշարոնիք 52.
Արուճ, Арудж 25—28. 35. 36.
46. 81.

*Arrhene 109. 110.
Արսանիսս, Arsanias, Arsanâs 92.
109. 110.
Արսենիս, 'Արտի'նի 110. 111. *'Ար-
տիտին' 111.
Arsînos գետ 92.
Արտակերք 200.
Artagigarta 74.
Արտազ 32. 141—143. 150—159.
161. 162. 172. *Artaza 150.
152. 172.
Արտաշատ 10—12. 17—25. 27. 28.
31. 35—37. 42—46. 49. 57. 58.
78. 81. 85. 86. 89. 106. 107.
114. 117—120. 127. 139. 141.
154. 172. **անս նակ** Artaxata.
Արտաշես Բ. 32.
«Արտաւազդ Արտաշէսեան» 33.
Արտավազդ Ա.՝ վորդի Տիգրանի
43.
«Արտավազդ Մամիկոնեան» 127.
129.
Artaxata 17. 20—22. 46. 56. 57.
76. 77. 81. 85. 97. 107. 114.
117—121. 123. 124. 126. 131.
135. 139. 140. 141. 144. 149.
152—154. 156. 163. 172. **անս**
նակ **Արտաշատ.**
Արփա 195. 202.
